ՍՈՒՐԲ ԱՆՏՈՆ ՄԵԾ

# ԽՐԱՏՆԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2007

Armenian Church Library http://hygradaran.weebly.com

# ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

## Ա

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Armenian Church Library   http://hygradaran.weebly.com

ՀՐԱՄԱՆԱՒ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տպագրվում է մեկենասությամբ՝

**ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՍԱՐՈ, ՐԱՖՖԻ ՄԱՐՈՒՔՅԱՆՆԵՐԻ**

Սուրբ Անտոն Մեծի
կյանքի և գրվածքների մասին

Ա

ՀՏԴ 25
ԳՄԴ 86.37
Ս – 970

**Ս. ԱՆՏՈՆ ՄԵԾ**
Ս – 970 Խրատներ: - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007.- 320 էջ:

ԳՄԴ 86.37

ISBN 978-99930-75-50-9
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.



ուրբ Անտոն Մեծի՝ անապատաբնակության հիմնադիրի կյանքը միաժամանակ և՛ իդեալ է, և՛ ճանապարհի, որը պետք է անցնի փրկության ձգտող յուրաքանչյուր քրիստոնյա: Դեռևս մանուկ հասակից հայտնի եղավ, որ սուրբ Անտոնին Աստված է ընտրել այն գործի համար, որը նա պիտի կատարեր հետագայում: Միայնության հակված նրա խաղաղ, սրտաբուխ խառնվածքը նրան կտրում էր մանկական չարաճճիություններից և պահում էր տանը, ծնողների աչքի առաջ, որոնք աչքի լույսի պես փայփայում էին նրան: Այդպես մեծացավ նա՝ տանից միայն եկեղեցի գնալով: Շատ բնական է, որ նա վաղ զգաց Աստծով ապրելու քաղցրությունը և, ինչպես ասում է սուրբ Աթանասը, ջերմացավ Աստվածային ցանկությամբ:

Տանը խոչընդոտներ չունենալով այդպիսի կյանքի համար, քանզի ծնողները ևս նույն ոգով էին ապրում, սուրբ Անտոնը ոչ մի ցանկություն չէր հայտնում հեռանալու տնից, քանի դեռ

ծնողները ողջ էին և նրան ազատում էին ապրուստի ապահովման անխուսափելի հոգսերից: Բայց երբ նրանք Աստծո մոտ գնացին, նա պետք է իր վրա վերցներ տան կառավարման և քրոջը կերակրելու հոգսերը: Դա անմիջապես էլ թույլ տվեց զգալու Աստծո մեջ ապրելու և առօրեական հոգսաշատ կյանքի միջև եղած մեծ տարբերությունը և սկզբից դրեց նրա վճռական ցանկությանը՝ ամեն ինչ թողնելու և ապրելու միայն հանուն Աստծո: Բաժանելով իր ամբողջ ունեցվածքը՝ նա սկսեց ապրել միակ Աստծո համար:

Սուրբ Անտոնը աշխարհից հրաժարյալ կյանքի առաջին տարիները ապրեց այնպես, ինչպես ապրում էին այն ժամանակվա մյուս հայտնի ճգնակյացները:

Ճգնավորական կյանքի սկիզբը հնազանդությունն է, որի էությունը սրտի մեջ քրիստոնեական առաքինություններ հաստատելն է և ճգնավորական կյանքի կարգերը յուրացնելը ամենափորձառուների ղեկավարությամբ: Սուրբ Անտոնը քրիստոնեական առաքինությունները արդեն իսկ կրում էր իր դաստիարակությամբ. Իսկ այժմ հարկ էր իմանալ, թե Աստծո մեջ ապրելու նախանձախնդիրներին ինչ սխրագոր-



ծություններ են անհրաժեշտ և ինչպես պետք է կատարել դրանք: Դրա համար նա գնաց այն ժամանակվա հայտնի ճգնակյացների մոտ, իմացավ ինչը ինչպես կատարել: Ինչպես նկարագրում է սուրբ Աթանասը, նա իմաստուն մեղվի նման ամեն տեղից իր համար հոգևոր մեղր էր հավաքում և ամբարում իր սրտի մեջ, ինչպես մեղուն՝ փեթակի մեջ: Նա մեկից ընդօրինակում էր կերակրի մեջ ժուժկալության խստությունը, չոր հողի վրա քնելը, երկարատև հսկումը, մյուսից ուսանում էր աղոթքի մեջ անխոնջությունը, խորհուրդների նկատմամբ ուշադրությունն ու Աստվածխոհությունը, երրորդից՝ աշխատասիրության կանոններին հավատարիմ մնալու և համբերության օրինակ էր վերցնում, իսկ բոլորից միասին փոխառում էր Քրիստոս Տիրոջ մեջ ամուր հավատի և բոլորի նկատմամբ սիրո նույն ոգին՝ ջանալով իր մեջ համադրել այն ամենը, ինչով առանձնապես աչքի էր ընկնում իր տեսած հայրերից յուրաքանչյուրը:

Առանց իր կյանքը ուրիշների կյանքով ստուգելու և առանց ուրիշների ղեկավարության՝ ոչ ոք ճգնակեցական կյանքի Բարձրագույն կարգերի չի հասել: Սուրբ Անտոնը իր կյանքը ստուգում էր այդ ծերերով և նրանց ղեկավարությամբ

անշեղ ուղու վրա կանգնած՝ քայլում էր դեպի կատարելություն: Նա այդ հնազանդ դաստիարակությամբ անցկացրեց տասնհինգ տարի:

Թե այդ ժամանակ ինչպես է ընթացել նրա կյանքը, հիշենք Սոզոմենի վկայությունը, որը սուրբ Անտոնի մասին գրում է. «Զգալով, որ Բարի կյանքը սովորույթի ուժով հաճելի է դառնում, չնայած սկզբում դժվար էլ է լինում, նա մշակում էր ճգնավորական կյանքի ավելի ու ավելի խստակյաց փորձեր՝ օր օրի դառնալով ավելի ժուժկալ և նոր ուժ տալիս ջանադրությանը, ասես ամեն անգամ նորովի սկսելով, մարմնավոր ցանկությոններըը զսպում էր աշխատություններով, հոգու կրքերի դեմ սպառազինվում աստվածային ատելությամբ: Նրա կերակուրը հացն էր աղի հետ, ըմպելիքը՝ ջուրը, իսկ ճաշի ժամը՝ մայրամուտը. Ի դեպ, հաճախ էր լինում, որ երկու-երեք օր առանց կերակրի էր մնում, կարելի է ասել, արթուն անցկացնելով՝ լուսաբացը դիմավորում էր աղոթքի մեջ, իսկ եթե ննջում էլ էր, ապա ընդամենը մի պահ, մեծ մասամբ պառկում էր չոր գետնի վրա և միայն գետինն էր նրա անկողինը:

Սուրբ Անտոնը այսպիսի դժվարագույն ճանապարհով էր քայլում: Բայց, ինչպես հայտնի



է, այդպիսի կյանքը առանց մաքառման չի լինի: Եթե մեր մեջ մեղք չլիներ, ապա մեր մեջ միայն Բարին կհայտնվեր և անարգել կբազմանար: Բայց քանի որ և՛ մեկը, և՛ մյուսը կան և երկուսն էլ իրենց իրավունքներն են ներկայացնում մեր նկատմամբ, ապա ոչ ոք չի խուսափել դրանց դեմ պայքարից:

Սուրբ Աթանասը հանգամանորեն նկարագրում է այդ պայքարը: Թշնամին սկզբում փորձեց նրան տատանել ափսոսանքով, որ թողել է աշխարհը՝ հիշեցնելով, որ նրա տոհմը անվանի էր, հարստություն ուներ, որ նա, իբր, իզուր կորցրեց այդ ամենը, որ քրոջը դատարկաձեռն ուրիշին հանձնեց: Թշնամին ցույց էր տալիս նրա ընտրած կյանքի դժվարությունն ու տաժանակրությունը, որ դա անտանելի է տկար մարմնի համար: Թշնամին այդ ներշնչումներով, խորհուրդների ուժով փոթորիկ էր բորբոքում, բայց սուրբ Անտոնը իր տոկունությամբ ոչ միայն հետ մղեց նրա հարվածները, այլև հաղթեց այն մեծ հավատով, որ իր թողած ամենայն ինչը և իր կրած նեղությունները ոչինչ են այն բոլոր բարիքների համեմատությամբ, որոնք Աստված պահում է աշխարհից հրաժարյալ սխրագործների համար:

Այդ կողմով պարտված թշնամին երիտասարդ սխրագործի վրա հարձակվեց մեկ ուրիշ կողմից, որտեղից սովոր է տապալել երիտասարդությունը. սկսեց պայքարել մարմնավոր ցանկությամբ՝ նրա հոգին խռովելով գիշերը և տագնապ հարուցելով ցերեկը: Պայքարը այնքան անողոք և երկար էր, որ աննկատ չմնաց նույնիսկ կողմնակի մարդկանց համար: Թշնամին անմաքուր խորհուրդներ էր հարուցում, իսկ սուրբ Անտոնը դրանք հետ էր վանում աղոթքով, թշնամին գիշերը կնոջ կերպարով էր երևում, ամեն կերպ ջանալով հրապուրիչ կրքեր հարուցել՝ իսկ սուրբը խաբուսիկ հրապուրանքը ցրում էր ավելի մեծ ջերմեռանդությամբ: Այդ անվերջ զազրելի հարձակումները սխրագործի մեջ վերջին հաշվով այնպիսի արգահատանք առաջացրին ամենայն անմաքուր շարժման նկատմամբ, որ թշնամին զրկվեց նրան մոտենալու և թեկուզ հեռվից ինչ-որ կերպ գայթակղելու և այդ կողմից նրան տագնապի մեջ գցելու հնարավորությունից:

Բայց մարդատյացի ոչ բոլոր նետերն էին սպառվել: Երիտասարդ սխրագործի վրա տեսնելով Աստծո հովանին և իմանալով, որ այդ հովանին պաշտպանում է միայն խոնարհներին,



թշնամին մտքին դնում է այդ հովանիից զրկել սրբի մեջ ամբարտավանություն և ինքնահավանություն բորբոքելով: Նա հայտնվում է մի թխահեր դեռահաս տղայի կերպարանքով և շինծու նվաստացումով ասում է սուրբ Անտոնին. - Դու ինձ հաղթեցիր, - ենթադրելով, որ սուրբը ինքն իր մասին մեծ-մեծ բաներ կմտածի և դրանով իսկ կհարուցի Աստծո բարկությունը: Բայց սուրբ Անտոնը նրան հարցնում է. - Դու ո՞վ ես: Վերջինս պատասխանում է. - Ես անառակության ոգին եմ, որի պարտականությունն է գրգռել և մարմնավոր մեղքի մեջ գցել: Առաքինության ուխտ ընդունածներից շատերին եմ գայթակղել, երկար ժամանակ իրենց մարմինը մեռցնողներից շատերին եմ անկման հասցրել, բայց դու իմ բոլոր ցանցերը քանդեցիր և նետերը կոտրեցիր, և ես տապալված եմ: Այդժամ սուրբ Անտոնը, գոհություն հայտնելով Աստծուն՝ իր Փրկչին, կանչեց. - Տերը իմ օգնականն է և ես կտեսնեմ վախճանն իմ թշնամիների (Սաղմ. 117, 7), այնուհետև առանց վախի նայելով թշնամուն, ասաց. - Իմ Աստվածը թողեց, որ դու սև կերպարանքով հայտնվես ինձ ի նշան քո չարանենգ մտքերի սևության, իսկ պատանու հասակով գալդ նրա համար է, որ հայտնի դառնա քո ան-

զորությունը: Դրա համար էլ դու ամենայն արհամարանքի ես արժանի: Ոգին այդ խոսքերից ասես կրակով բռնկված՝ փախավ և այլևս երանելի Անտոնին չմոտեցավ:

Կրքերի նկատմամբ հաղթանակը մարդուն մոտեցնում է անկրքությանը: Իսկ անկրքությունը որ չափով որ հաստատվում է, այդ չափով էլ իր հետ բերում է հոգևոր խաղաղություն, իսկ հոգևոր խաղաղությունը սրտի մեջ հոգևոր ջերմություն է հարուցում, որը, իր մեջ հավաքելով հոգու և մարմնի բոլոր ուժերը, ներս է մտցնում մարդուն: Մտնելով ներս՝ մարդը անդիմադրելի պահանջ է զգում մեն-մենակ մնալու միակ Աստծո հետ: Ներս մտնելու այդ անդիմադրելի մղումը Աստծո առջև հոգևոր առաջադիմության երկրորդ կարգն է: Հենց այդ կարգին էլ հասավ սուրբ Անտոնը: Եվ եթե նախկինում նա մեծամասամբ մենակ էր, ապա դրանից հետո սուրբ Անտոնի ոգին սկսեց խստագույն միայնություն պահանջել, որպեսզի ոչ մի բան ո՛չ տեսնի, ո՛չ էլ լսի:

Ինչպես նշվեց, հոգին դրան հասնում է ինքն իրենով, ճգնակեցության ուղղակի ճանապարհով. բայց այդ շրջադարձը արագացնում և դրա համար վճռական ազդակ են հանդիսանում ինքնազոհողության ուժեղ պոռթկումները: Սուրբ Անտոնի համար այդպիսի ազդակ եղավ դևերի ակնհայտ հարձակումը նրա վրա: Դևերը, զրկվելով մաքրված հոգու վրա խորհուրդների միջոցով ներգործելու հնարավորությունից, սկսում են հայտնվել տեսանելիորեն, սադրանքներ են նյութում, հուսալով սասանել սխրագործի բարի մտքերը: Բայց Աստծո շնորհը թողնում է, որ ճգնակյացը այդ ամենին հաղթի իր առաջադիմությամբ, դրանով նրա առաջ դուռ բացելով դեպի բարձրագույն կարգը, միաժամանակ ասես ինչ մի իրավունք տալով հետագայում իշխանություն ստանալու բուն փորձիչ ոգիների վրա: Հենց այդպես էլ եղավ սուրբ Անտոնի հետ:

Այստեղ ամենակարևոր պահն այն է, որ երբ սուրբ Անտոնը շենում ուշքի գալով եկեղեցու գավթում և տակավին հազիվ շնչելով, իր ընկերոջն ասաց. - Ինձ կրկին իմ մենարանը տար: Քանզի դրանով նա այն միտքը հայտնեց, որ իրեն մահվան է մատնում հանուն կյանքի՝ գտնելով, որ միայն դա է հաճո Աստծուն: Դա նույնն էր նշանակում, ինչ իրոք մեռնելը հանուն Տիրոջ, քանզի սուրբը լիովին պատրաստ էր դրան:

Հանուն Տիրոջ մեռնելու և Նրան հաճո լինե-

լու պատրաստակամությունը ամենահաղթ զենքն է, քանզի էլ ինչո՞վ կարելի է գայթակղել կամ երկյուղ ներշնչել այդ զենքն ունեցողին: Այդ պատրաստակամությունն էլ հենց համարվում է սխրագործության հիմնարար սկզբունքը և պատվարը: Տերը և Փրկիչը՝ մեր Նախասխրագործը, Իր երկրային կյանքի բոլոր օրերին Իր առջև միշտ տեսնում էր մահը, բայց Գեթսեմանիի պարտեզում Նա, աղոթական մաքառումով մահվանը վերջնականապես հաղթեց մարդեղությամբ. չարչարանքները և խաչելությամբ մահը կատարեցին այն, ինչ ասված է այնտեղ: Դրան հաջորդեց եռօրյա շաբաթապահությունը նախքան փառավոր հարությունը: Այդ ճանապարհն անցնում են Տիրոջ հետքերով քայլող բոլոր հոգիները: Ընդ որում առաջին քայլը անձնազոհողությունն է, բայց որքան փոքր հատիկներից էլ կայացած լինի այն, միևնույնն է՝ մահվան պատրաստակամությունը միշտ իր բաժինն ունի նրա մեջ: Որքան աճում է ինքնազոհողությունը, նույնքան էլ աճում է այդ պատրաստակամությունը, կամ այդ պատրաստակամությունը ինքնազոհողության հոգին է: Ով հասնում է պատրաստակամության այդ կարգին, որն ուներ Փրկիչը պարտեզում, նրան անմիջապես սպասում է հոգով խաչ բարձրանալը, իսկ դրանից հետո՝ հոգևոր շաբաթապահությունը, որին հետևում է նաև հոգևոր Հարությունը ի փառս Հիսուս Տիրոջ: Ահա հենց դա էլ կատարվեց սուրբ Անտոնի հոգու մեջ:



Դևերի հարուցած չարչարանքներից հազիվ ուշքի եկած՝ սուրբ Անտոնը անապատ շտապեց, որ շեներից հեռու էր երկու կամ երեք օրվա ճանապարհի չափ և այնտեղ միայնացավ մի հին, լքված մեհյանում, որտեղ ջրհոր կար, իսկ կես տարին մեկ սրբին հաց էր տանում նրա ընկերը: Ի՞նչ աշխատություններ կատարեց նա այնտեղ և ի՞նչ սխրանքներ գործեց ու ինչե՞ր եղան նրա հետ՝ ոչ ոք չի տեսել: Բայց, դատելով այն բանից, թե նա ինչպիսին ելավ այնտեղից, կարելի է եզրակացնել, որ դա Սուրբ Հոգու կողմից նրա հոգու արարման ժամանակն էր: Աստծո Հոգին անզամ սուրբ Անտոնի համար աննմանալիորեն նրա մեջ նոր մարդուն արարեց նրա Արարչի պատկերով և նմանությամբ: Երբ արարումի ժամանակը լրացավ, նրան կարգադրվեց դուրս գալ ծառայելու հավատացյալներին: Եվ նա դուրս եկավ Սուրբ Հոգու բազում բարեբեր շնորհներով զարդարված:

Ինչպես Քրիստոսը հարություն առավ մեռել-

ներից Հոր փառքի մեջ, այդպես էլ սուրբ Անտոնը ապրեց հոգով նորացված կյանքով:

Դրանով ավարտվեց սուրբ Անտոնի հոգու կայացումը: Նրա հետագա ամբողջ կյանքը այլ բան չէր, քան այն ամենի պտղաբերումը, ինչը սերմանվել էր նրա կյանքի առաջին երկու շրջաններում: Սուրբ Անտոնի ծառայությունը ի պայծառություն Եկեղեցու երրորդ շրջանն էր, որն ասես նրա Առաքյալությունն էր: Թե որքան բազմաբեղուն և լայն էր այդ ծառայությունը, կարելի է իմանալ նրա վարքագրությունից, որը գրել է սուրբ Աթանասը: Նա ծառայում էր բոլոր բարեբեր շնորհներով: Ինչ շնորհ ասես չուներ նա՝ հրաշագործության շնորհ, դևերի, բնության ուժերի և կենդանիների նկատմամբ իշխանության շնորհ, մտքերը կարդալու, հայտնությունների և տեսիլների շնորհ: Բայց այդ բոլոր շնորհներից ամենապտղաբերն ու գործադրման առումով առավել լայնը խոսքի շնորհն էր: Եվ առավելապես հենց այդ շնորհով էլ ծառայում էր կրտսեր եղբայրներին:

Սուրբ Աթանասը գրում է, որ Աստված սուրբ Անտոնին տվել էր սրտի խորքերից եկող խոսքի շնորհ: Եվ նա կարող էր այնպիսի ուժով խոսել յուրաքանչյուրի օգտին, որ շատ անվանի մար-



դիկ՝ զինվորականներ և աշխարհիկներ, ունևոր մարդիկ, իրենց վրայից վայր էին դնում աշխարհիկ ծանրությունները և վանական էին դառնում: Նրա մոտ տխուր սրտով գնացողները բոլորն էլ թեթևացած էին վերադառնում: Բարկությամբ գնացողները հեզությամբ էին դուրս գալիս: Ծուլության մեջ ընկած վանականը, նրա մոտ գնալով, կրկին նախանձախնդիր և տոկուն էր դառնում սխրագործություններ կատարելու մեջ: Ո՞ր երիտասարդը, սուրբ Անտոնին տեսնելով, չէր հրաժարվում մարմնավոր հաճույքներից և չէր սկսում սիրել առաքինությունը: Արդեն փեսացուներ ունեցող որքա՜ն կույսեր, հեռվից միայն տեսնելով Անտոնին, դառնում էին Քրիստոսի հարսնացուներ:

Այս վկայությունից երևում է, որ սուրբ Անտոնը չէր փակում իր Աստվածաշնորհ տեսության աղբյուրը: Նրա մոտ մեծամասամբ գալիս էին ճշմարիտ խոսքը լսելու, ընդունելու և ճիշտ ուղեցույց գտնելու համար: Եվ նա առաքելաբար ուսուցում էր, մերկացնում, աղոթում: Նրա խոսքը երբեմն հորդում էր առատ հորձանքով, ինչպես նրա վարքագրության մեջ պահպանվածը, որը գրի է առել սուրբ Աթանասը: Նա առավել հաճախ սահմանափակվում էր իմաստով և զորութ-

# 1

## Մեր սուրբ հայր Անտոն Մեծի՝ Քրիստոսով ապրելու խրատները, քաղված նրա կյանքի՝ սուրբ Աթանասի գրառած պատմությունից, որ բովանդակում են 20 ուղերձ և 20 պատգամ

# 1.

յամբ լեցուն, սակայն համառոտ ճառերով, որոնք հետագայում շուրթից շուրթ էին անցնում, մի տեսակ ասես ճգնավորության շրջաբերական դրույթներ դառնալով: Սուրբ Անտոնը երբեմն նաև ուղերձներ էր հղում իր հոգեզավակներին, տարբեր վանքերի միաբաններին, որոնցում կյանքի ընդհանուր գծեր էր պատկերում Հիսուս Քրիստոսի վերաբերմամբ, կամ էլ բուժում էր եղբայրներին հաճախակի պատահող տկարությունը:

Սուրբ Անտոնի ճառերը և բոլոր գրվածքները հարուստ սնունդ են մատակարարում խրատ փնտրող հոգուն: Բացի ընդարձակ ճառերից՝ զետեղված նրա վարքագրության մեջ, մեզ են հասել 20 ուղերձներ՝ հղված վանականներին, 20 կարճառոտ դրույթներ առաքինությունների և արատների մասին, 170 գլուխներ բարոյականության վերաբերյալ, վանականների համար գրված կանոնադրույթք՝ երկու հավելվածներով, ինչպես նաև բազում խրատական և ուսուցողական ճառեր:



*Թող որ մեր բոլորի ընդհանուր հոգսն այն լինի, որպեսզի սկսելով չտկարանանք և ճգնությունների մեջ չտրտմենք և չասենք, թե ահա երկար ժամանակ ճգնությամբ ենք հարատևում, այլ լավ կլինի, ասես ամեն օր նոր սկիզբ դնելով, ավելացնենք մեր նախանձախնդրությունը: Գալիք հավիտյան ժամանակների համեմատ մարդկային ողջ կյանքը խիստ կարճ է, և մեր ամբողջ ունեցածը ոչինչ է հավիտենական կյանքի հանդիման: Ինչպես աշխարհում յուրաքանչյուր իր վաճառվում է, և ամենքն էլ փոխանակում են հավասարը հավասարի հետ, ապա հավիտենական կյանքի խոստումը գնվում է չնչին գնով: Քանի որ*

*գրված է. «Մեր կյանքի օրերի թիվը յոթանասուն տարի է, կամ առավելագույնը ութսուն տարի, որոնց մեծ մասը չարչարանքով ու հեծությամբ է անցնում» (Սաղմ. 89, 10): Այսպիսով, եթե ամբողջ ութսուն կամ նույնիսկ հարյուր տարի ճգնության մեջ լինենք, ապա ոչ թե ուղիղ հարյուր տարի կթագավորենք, այլ հարյուր տարվա փոխարեն՝ դարեդար կթագավորենք: Ընդ որում, ճգնելով երկրի վրա՝ մենք խոստում ունենք ոչ թե երկրային ժառանգություն ստանալու, այլ՝ երկնային: Ընդսմին թողնելով մարմինը ապականված՝ մենք այն պիտի ընդունենք անապական: Ուրեմն չտրտմենք՝ տրտնջալով և չխորհենք, իբր թե երկար մնացինք ճգնությամբ և կամ մի մեծ գործ ենք արել. «Քանզի այս ժամանակի չարչարանքները արժանի չեն բաղդատվելու գալիք փառքի հետ, որ հայտնվելու է մեզ» (Հռոմ. 8, 18):*

*2. Ինչպես նաև, նայելով աշխարհին՝ չմտածենք, թե հրաժարվել ենք մի ինչ-որ մեծ բանից, քանի որ այս ամբողջ երկիրը շատ փոքր է ամբողջ երկնքի դիմաց: Ուստի, եթե անգամ համայն երկրի վրա տերեր լինեինք և հրաժարվեինք ողջ երկրից, ապա*



*դա ևս ոչինչ կլիներ Երկնային Արքայության արժեքի համեմատությամբ: Քանզի ինչպես նա, ով դեն է գցում մի դրահմանոց պղնձադրամը հարյուր դրահմ արժողությամբ ոսկեդրամ ձեռք բերելու համար, այդպես էլ նա, ով, լինելով ողջ երկրի տերը, հրաժարվում է նրանից, փոքրը թողնում է, բայց փոխարենը հարյուրապատիկն է ստանում: Իսկ եթե ողջ երկիրը չնչին է երկնքի համեմատ, ապա փոխարենը մի քանի դեսյատին հող թողողը ասես թե ոչինչ չի թողնում: Ընդ որում, եթե նա անգամ և՛ տուն, և՛ շատ ոսկի է թողնում, այդ ժամանակ էլ չպիտի պարծենա կամ փոքրոգություն անի: Մյուս կողմից պետք է խորհել, որ եթե մենք ամենայն առաքինության համար չթողնենք մեր ունեցածը, միևնույն է՝ հետո մեռնելով, թողնելու ենք ինչպես հաճախ թողնում ենք անգամ նրանց, ում որ չէինք ցանկանա, ինչպես դեռևս Ժողովողն է հիշատակում (Ժող. 4, 8): Ինչու՞ ուրեմն ի սեր առաքինության չհրաժարվենք դրանից՝ փոխարենը ժառանգելով Երկնային Արքայությունը:*

*3. Նույն այս պատճառով էլ մեզանից որևէ մեկը իր մեջ չպիտի սնուցի հայթայթե-*

լու ցանկությունը: Քանզի ի՞նչ օգուտ այն ամենը ձեռք բերելուց, ինչը մեզ հետ չենք տանելու: Ուրեմն ավելի լավ չէ՞ ձեռք բերենք այն, ինչը կարող ենք տանել մեզ հետ, այն է՝ խոնհեմությունը, արդարությունը, ողջախոհությունը, արիությունը, կչռադատությունը, սերը, աղքատասիրությունը, Քրիստոսի սերը, անչարությունը, օտարասիրությունը: Վաստակելով այս առաքինությունները՝ մենք դրանք կգտնենք մեզանից առաջ այնտեղ՝ հեզերի երկրում,մեզ համար հանգրվան հարդարելիս:

4. Թող այսպիսի խորհրդածություններով յուրաքանչյուրը համոզի ինքն իրեն փոքրոգի չլինել, մանավանդ, եթե խելամուտ լինի, որ ինքը Տիրոջ ծառան է և պարտական է աշխատելու իր Տիրոջ համար: Ինչպես որ ծառան չի համարձակվի ասել. «Քանի որ ես երեկ աշխատել եմ, ուրեմն հիմա չեմ աշխատելու», և աշխատած ժամերը հաշվելով չի դադարում աշխատելուց նաև հաջորդող օրերին, այլ ամեն օր, ինչպես գրված է Ավետարանում, նույն ջերմեռանդությունն է ցուցաբերում իր տիրոջ բարեհաճությունը շահելու և փորձանքի մեջ չընկնելու համար,



այդպես նաև մենք, ամեն օր պետք է համբերությամբ ճգնության մեջ մնանք ՝ իմանալով, որ եթե անգամ մի օր էլ մնանք անփութության մեջ, Տերը մեզ չի ների ի հաշիվ անցյալում աշխատածի, այլ կբարկանա մեզ վրա այդ հեղգության համար: Այսպես է ասում նաև Եզեկիելը. «Երբ արդարն իր ճանապարհից շեղվի և անիրավություն գործի, ապա կմեռնի իր գործած անիրավության մեջ» (18, 26): Այսպես և Հուդան մի գիշերում խորտակեց անցած ժամանակի ողջ վաստակը:

5. Այսպիսով, ճգնություններին ձեռնարկենք և չձանձրանանք: Քանի որ սրանում մենք գործակից ունենք նաև Տիրոջը, ինչպես գրված է. «Բարին ընտրողների համար Աստված գործակից է նրանց բարիքի համար» (Հռոմ. 8, 28): Դրա համար էլ, որպեսզի չթուլանանք, բարվոք է նաև մտաբերել առաքյալի հետևյալ խոսքը. «Ամեն օր մահանում եմ» (Ա Կորնթ. 16, 31): Քանզի, եթե մենք սկսենք ապրել որպես թե ամեն օր մեռնողներ, ապա չենք մեղանչի: Ահա թե որն է ասվածի իմաստը՝ այն, որ ամեն օր արթնանալով խորհենք, թե մինչև երեկո չենք ապ-

րի, և դարձյալ՝ քնելու պատրաստվելիս մտածենք, որ չենք արթնանալու, որովհետև մեր կյանքի սահմանն էլ է անհայտ մեր բնության պատճառով, անհայտ է նաև այն, թե ամեն օրվա համար ինչ չափ է դնում Նախախնամությունը: Այսպես տրամադրվելով և ամեն օր այսպես ապրելով՝ մենք ո՛չ կմեղանչենք, ո՛չ էլ որևէ բանի կիրք կունենանք, ո՛չ զայրույթով կբորբոքվենք որևէ մեկի նկատմամբ, ո՛չ էլ երկրի վրա մեզ գանձեր կդիզենք: Այլ որպես ամեն օր մահ ակնկալողներ, ժուժկալ կլինենք, և ամենքին ամեն ինչ կներենք. մեր մեջ նույնիսկ մի ակնթարթ կին չենք ցանկանա կամ որևէ այլ անմաքուր հաճույք չենք պահի, այլ նույն պահին կշրջվենք դրանից՝ որպես մի ինչ-որ վաղանցուկ բանից՝ միշտ մնալով որպես թե մահվան հոգեվարքի մեջ և դատաստանի օրվա տեսությամբ: Քանի որ սաստիկ վախն ու չարչարանքներից երկնչելը ոչնչացնում է հեշտության հաճույքը և վեր է բարձրացնում դեպի անկում գնացող հոգին:

6. Ուրեմն, սկիզբը դնելով փրկության գործին և ոտք դնելով առաքինության ճանապարհը, առավել ձգտենք դեպի առջևում ե-



ղածը՝ դրան հասնելու համար (Փիլ. 3, 14): Եվ թող ոչ ոք հետ չշրջվի Ղովտի կնոջ նման, առավել ևս այն խոսքի համար, որ Տերն ասաց. «Ոչ ոք իր ձեռքը մաճի վրա կդնի և ապա հետ կնայի, եթե հարմար է Աստծո արքայության համար» (Ղուկ. 9, 62): Հետ դառնալն այլ բան չի նշանակում, քան զղջալ (որ թողել ենք աշխարհը) և սկսել դարձյալ աշխարհայինը իմաստասիրել:

7. Մի՛ սարսափեք՝ առաքինության մասին լսելով, և այս անվան համար մի՛ զարմացեք: Քանի որ այդ գործը մեզնից հեռու չէ և ոչ էլ մեզնից դուրս, այլ մեզ հետ է, և հարմար է, եթե միայն ցանկանանք: Հելլենները օտար երկրներ են մեկնում և ծովեր են անցնում գիտություններ ուսանելու համար: Բայց մենք կարիք չունենք օտար ափեր ուղևորվելու Երկնային Արքայության համար, ոչ էլ պետք է ծովագնացության ելնել առաքինության համար, քանզի Տերը դա կանխեց, ասելով. «Աստծո Արքայությունը ձեր իսկ ներսում է» (Ղուկ. 17, 21): Դրա համար էլ առաքինության համար միայն պետք է, որ մենք այն ցանկանանք, քանզի այն մեր մեջ է և մեզնով է կազմավորվում: Քանզի երբ

բանական հոգին իր բնական կարգի մեջ է լինում, ապա այդ նույն ժամանակ էլ մեր մեջ է առաքինությունը: Հոգին գտնվում է իր բնական կարգի մեջ, երբ մնում է այնպիսին, ինչպիսին որ արարված է: Իսկ Նա արարված է լիովին բարի և արդար: Որի համար էլ Հեսու Նավեն ժողովրդին ուղղված խոսքում ասում է. «Շիտակ արեք ձեր սրտերը Իսրայելի Տեր Աստծու դիմաց» (Հեսու 24, 23), իսկ Հովհաննես Մկրտիչն էլ ասում է. «Պատրաստեցեք Տիրոջ ճանապարհը» (Մատթ. 3, 3): Իսկ հոգին արդար է լինում, երբ նրա բանականությունը իր բնական կարգի մեջ է լինում: Իսկ երբ խոտորվում է և բնությամբ պահանջվող կարգից ընկնում է, ապա դա կոչվում է չարություն հոգու մեջ: Այսպիսով, առաքինության գործը դժվարին չէ, քանի որ եթե մենք մնում ենք այնպես, ինչպես ստեղծված ենք, ապա գտնվում ենք առաքինի վիճակում: Իսկ երբ վատն ենք մտահղանում, դրանով էլ մեզ արդարև չար են անվանում: Եվ թե արտաքուստ կարիք լիներ այդ գործը (առաքինություններ ձեռք բերելը), ապա, իհարկե, այն դժվարին կլիներ, իսկ եթե այն մեր մեջ



կա, ուրեմն մեզ հետ պահենք վատթար մտածումներից և մեր հոգին պահենք Տիրոջ համար, իբրև Նրանից ընդունած առհավատչյա, որպեսզի Նա այն ճանաչի որպես Իր արարածը՝ տեսնելով, որ այնպիսին է, ինչպիսին Ինքը ստեղծել է:

8. Մարտնչենք (ինքներս մեր հետ), որպեսզի մեզ վրա զայրույթը չբռնանա, և հեշտասիրությունը չիշխի, քանի որ գրված է. «Մարդու բարկությունը Աստծու արդարությամբ չի գործում»: Եվ՝ «Ցանկությունը հղանալով մեղք է ծնում, մեղքն էլ հասունանալով մահ է ծնում» (Հակ. Ա, 20 15): Բայց այսպես կենցաղավարելով պետք է զգոնությամբ զոտեպնդվենք և, ինչպես որ գրված է. «Ամենայն զգուշությամբ պահի՛ր» (Առակ. 4, 23): Քանզի ունենք սարսափելի և ամենանենգավոր թշնամիներ՝ չար դևեր:

9. Եվ նրանց դեմ է մեր պատերազմը, ինչպես ասաց սուրբ առաքյալը. «Մեր պատերազմը մարմնի և արյան հետ չէ, այլ իշխանությունների հետ և պետությունների հետ, և այս խավար աշխարհի տիրակալների հետ և երկնքի տակ եղող չար ոգիների հետ» (Եփես. 6, 12):

Մեզ շրջապատող օդում նրանց ամբոխը մեծ է, և նրանք հեռու չեն մեզանից: Մեծ է նաև դրանց միջև եղած տարբերությունը: Բայց դրանց բնության և տարբերության մասին խոսքը շատ երկար կլիներ, մանավանդ որ այդ մասին առավել պատշաճում է խոսել նրանց, ովքեր մեզանից առավել բարձր են: Իսկ մեզ հիմա անհապաղ անհրաժեշտ է միայն իմանալ այդ չար ոգիների սադրանքները մեր դեմ:

10. Այսպիսով, առաջինը՝ գիտենք, որ դևերը այն վիճակով չեն ստեղծվել, որի համար դևեր են կոչվում: Քանի որ Աստված ոչ մի չար բան չի արարել: Բարի էին ստեղծված նաև դրանք, սակայն երկնայինի իմաստասիրությունից ընկնելով և արդեն պտտելով երկրի շուրջը, հելլեններին խաբեցին ուրվականներով, իսկ մեզ՝ քրիստոնյաներիս, նախանձելով՝ ամեն ինչը շարժման մեջ են դնում՝ ցանկանալով խոչընդոտել դեպի երկինք մեր վերանալուն, որպեսզի մենք չհասնենք այնտեղ, որտեղից իրենք ընկան: Ուստի պետք է թե՛ շատ աղոթել, թե՛ ճգնել, որպեսզի Սուրբ Հոգուց ստանալով «հոգիների զանազանության» պարգևը (Ա Կորնթ. 12,



10), կարելի լինի նրանց առնչությամբ իմանալու, թե նրանցից որոնք են առավել չար և որոնք՝ պակաս չար, ինչ գործ է կատարում նրանցից յուրաքանչյուրը, և նրանցից ամեն մեկին ինչպես կարելի է պարտության մատնել և վռնդել: Քանզի շատ են նրանց խարդավանքները և որոգայթների հնարքները: Երանելի Առաքյալն ու նրա հետևորդները գիտեին դա, երբ ասում էին «անտեղյակ չենք նրա մտադրություններին» (Բ Կորնթ. 2, 11): Իսկ մենք ինչով որ նրանցից փորձվել ենք, դրանում պարտավոր ենք փոխադարձաբար միմյանց զգուշացնել: Ահա և ինքս, մասնակիորեն փորձված լինելով նրանց դավերից, ձեզ ասում եմ որպես մանուկների:

11. Նրանք հենց որ տեսնում են որևէ քրիստոնյայի կամ ճգնության մեջ հարատևող և առաջադիմող վանականի, ապա ամենից առաջ հանդգնում են և փորձում գայթակղություններ դնել ճանապարհին: Նրանց գայթակղություններն էլ բուն չար մտածումներն են: Սակայն հարկ չէ, որ մենք վախենանք նրանց այդ ներշնչանքներից, որովհետև աղոթքներով, պահքով և Տիրոջը հավատալով թշնամիներն անմիջապես տա-

պալվում են: Ընդ որում նաև ընդոտնված լինելով, նրանք չեն հանգստանում, այլ անմիջապես նորից գրոհում են նենգությամբ և խորամանկությամբ: Երբ չեն կարողանում սիրտը հրապուրել ակնհայտ պիղծ ցանկություններով, ապա նորից այլ կերպ են հարձակվում: Մասնավորապես՝ նյութում են տարբեր ստապատիր տեսիլներ, որպեսզի վախեցնեն, որի համար ձևանում են տարբեր կերպարներով և ընդունում են կանանց, գազանների, սողունների, հսկաների և ռազմիկների բազմության կերպարանքներ: Բայց պետք չէ վախենալ անգամ այդպիսի ուրվականներից, որովհետև նրանք ոչինչ են և անմիջապես անհետանում են, երբ մեկը հավատքով և խաչի նշանով պատսպարում է իրեն: Սակայն նրանք հանդուգն են և չափազանց աներես: Ուստի եթե այստեղ ևս պարտվում են, ապա դարձյալ ուրիշ կերպ են հարձակվում՝ գուշակների կերպարանք են առնում և կանխագուշակում են, թե ինչ կլինի մի քանի օր հետո, ինչպես նաև իրենց մեծարելիներ են ցույց տալիս, որպեսզի ում որ չկարողացան պատրել խորհուրդներով, որսան գոնե այդպիսի սուտ տեսիլներով:



Բայց չլսենք դևերին, որպես մեզ օտարների, չսկսենք լսել նրանց, անգամ եթե մեզ աղոթքի դրդեն, եթե անգամ պահքերի մասին խոսեն, այլ ուշադիր նայենք մեր ճգնության նպատակին և չենք գայթակղվի նրանցից, որ ամեն ինչ նենգությամբ են անում: Իսկ նրանցից վախենալ պետք չէ, եթե անգամ մեզ վրա հարձակվող թվան, եթե մահով սպառնան, որովհետև նրանք անզոր են և ուրիշ ոչինչ չեն կարող անել՝ սպառնալուց բացի:

12. Անհրաժեշտ է, որ ամբողջ հոգածությունը առավելապես լինի հոգու, այլ ոչ մարմնի համար և մարմնին հնարավորինս քիչ ժամանակ տրամադրել, իսկ մնացած ամբողջը հատկացնել հոգուն և փնտրել նրա օգուտը, որպեսզի նա չտարվի մարմնավոր վայելքներով, այլ մանավանդ մարմինը հպատակեցնի իրեն: Դա է նշանակում Փրկչի ասածը. «Ձեր կյանքի համար հոգ մի՛ արեք, թե ինչ պիտի ուտեք կամ ինչ պիտի խմեք և ոչ էլ ձեր մարմնի համար, թե ինչ պիտի հագնեք» (Մատթ. 6, 25): «Եվ դուք մի՛ մտահոգվեք, թե ինչ եք ուտելու կամ ինչ եք խմելու և մի՛ մտատանջվեք, որովհետև

այդ ամենը աշխարհի հեթանոսներն են, որ փնտրում են: Իսկ ձեր Հայրը գիտե, որ այդ ամենը պետք է ձեզ: Այլ դուք հետամուտ եղեք Աստծո արքայությանը և այդ ամենը ավելիով կտրվի ձեզ» (Ղուկ. 12, 29-31):

13. Հավատա Աստծուն և սիրիր Նրան, քեզ հեռու պահիր անմաքուր մտածումներից և մարմնական հաճույքներից և, ինչպես գրված է առակներում. «Մի՛ լինիր հարբեցող և մի՛ նախանձիր իրենց մարմինը մսով պարարտացնողներին» (Առակ. 24, 15), փախիր սնափառությունից, անդադար աղոթիր, քնելուց առաջ և քնելուց հետո սաղմոս երգիր, սովորիր Սուրբ Գրքում քեզ տրված պատվիրանները, մտապահիր սրբերի գործերը, որպեսզի հոգիդ, հիշելով պատվիրանները, իր առջև օրինակ ունենա սրբերի ջերմեռանդությունը: Հատկապես ջանա կատարել առաքելական պատգամը. «Արեգակը ձեր բարկության վրա թող մայր չմտնի» (Եփես. 4, 26) և մտածիր, որ սա ասված է ընդհանրապես յուրաքանչյուր պատգամի մասին, որպեսզի արեգակը մայր չմտնի ոչ միայն մեր բարկության, այլ նաև մյուս մեղքերի վրա: Քանզի լավ է և անհրաժեշտ, որ մեզ



ո՛չ արեգակը դատի ցերեկվա հանցանքի համար, ոչ լուսինը՝ գիշերվա մեղքի և անգամ վատ մտածումների համար:

14. Որպեսզի մեզ հեռու պահենք դրանից, լավ է լսել և պահել առաքելական խոսքը. «Քննեցե՛ք դուք ձեզ» (Բ Կորնթ. 13, 5): Դրա համար թող յուրաքանչյուրը իրեն հաշիվ տա իր ցերեկային և գիշերային արարքների համար: Իսկ եթե մեղանչել է, թող դադարի մեղք գործելուց, եթե չի մեղանչել, թող չպարծենա դրանով, այլ թող բարու մեջ հարատևի և անհոգության չտրվի և՛ մերձավորին չդատելով, և՛ իրեն արդար չհամարելով. «Մինչև գա Տերը՝» (Ա Կորնթ. 4, 5) գաղտնին քննողը: Հաճախ նաև մեզանից է ծածկված լինում այն, ինչը որ մենք ենք անում, սակայն Աստված տեսնում է ամեն ինչ: Այդ պատճառով, դատաստանը թողնելով Աստծուն, կարեկից լինենք մեկս մյուսի նկատմամբ, սկսենք կրել մեկս մեկի բեռը (Գաղատ. 6, 2) և ստուգենք ինքներս մեզ և լրացնենք այն, ինչի մեջ թերի ենք:

15. Մեզ մեղքից պատսպարելու համար պահենք նաև հետևյալը: Թող ձեզանից յուրաքանչյուրը նկատի և գրի առնի իր ա-

*րարքները և հոգու շարժումները, կարծես թե մտադրվելով դրանք հաղորդել մեկը մյուսին, և վստահ եղեք, որ մերկացվելուց ամաչելով՝ անպայման կդադարենք մեղանչելուց և անգամ որևէ վատ բան մտքում պահելուց: Քանզի ո՞վ է, որ մեղանչում է և ցանկանում է, որ տեսնեն այդ: Կամ ո՞վ մեղանչելով՝ չի ուզենա ավելի լավ է ստել, միայն թե թաքցնի մեղքը: Ինչպես մեկս մեկին հետևելով պոռնկություն չենք անի, այնպես էլ, եթե գրառենք մեր խորհուրդները՝ մտադրվելով դրանք հայտնել մեկս մյուսին, մեզ դյուրությամբ հեռու կպահենք անմաքուր խորհուրդներից՝ ամաչելով բացահայտվելուց: Ուրեմն թող գրառումը մեզ համար փոխարինի մեր եղբայրների աչքերին, որպեսզի գրառելու ժամանակ նույնպիսի ամոթ զգալով, ինչպիսին զգում ենք, երբ նայում են մեզ, նաև մտքում որևէ վատ բան չպահենք: Եթե մեզ այդպես կարգավորենք, ապա ի զորու կլինենք հպատակեցնելու մեր մարմինը ու գոհացնելու Աստծուն և ոտնահարելու թշնամու խարդավանքները:*

*16. Մտածում եմ, որ Աստծո Հոգու շնորհը առավելապես իջնում է նրանց վրա, ով-*



*քեր ողջ սրտով սկիզբ են դնում ճգնությանը և սկզբից ևեթ վճռում են տոկալ և ոչ մի դեպքում տեղի չտալ թշնամուն ոչ մի գոտեմարտում, մինչև չհաղթեն նրան: Ընդ որում, երբ Սուրբ Հոգին կանչում է նրանց, սկզբում ամեն ինչ մատչելի է դարձնում, որպեսզի այդ կերպ քաղցրացնի ապաշխարության ճգնության մեջ մտնելը, իսկ հետո ցույց է տալիս այդ ճանապարհի բոլոր դժվարությունները ողջ ճշմարտացիությամբ: Ամեն ինչում օգնելով նրանց ՝ դրոշմում է, թե ինչպիսի ապաշխարության տքնություններ գործադրեն և կանոններ ու կարգ է տալիս ինչպես մարմնի, այնպես էլ հոգու համար, մինչև որ չհասցնի նրանց կատարյալ դարձի դեպի Աստված, դեպի իրենց Արարիչը: Դրա համար նրանց միշտ դրդում է հոգնեցնել թե՛ իրենց մարմինը, թե՛ հոգին, որպեսզի և՛ մեկը, և՛ մյուսը, հավասարապես սրբագործվելով, հավասարապես արժանանան նաև հավիտենական կյանքի ժառանգության: Մարմինը հնազանդեցնել մշտական պահքով, տքնությամբ և հաճախակի հսկումներով, իսկ հոգին՝ հոգևոր վարժանքներով և մարմնի միջոցով*

կատարվող բոլոր ծառայությունների (նաև հնազանդությունների), մեջ մեծ ջանքեր գործադրելով: Դրա համար (որպեսզի ոչ մի բան չանենք անփութորեն, այլ ամեն ինչ ջանասիրությամբ և Աստծո երկյուղով), հարկավոր է ջանք թափել մարմնով կատարվող բոլոր գործերում, եթե ցանկանում ենք, որ այն պտղաբեր լինի:

17. Աստծո Հոգին զղջացողին ճգնության ճանապարհի վրա դնելով և նրան ապաշխարության կոչելով՝ տալիս է նաև իր մխիթարությունը և սովորեցնում է նրան հետ չդառնալ և աշխարհի ոչ մի իրի չկառչել: Դրա համար Նա բացում է հոգու աչքերը և հնարավորություն է տալիս տեսնելու մաքրության գեղեցկությունը, որն ապաշխարության ջանքերով է ձեռք բերվում և դրա միջոցով նրա մեջ բորբոքում է մարմնի հետ միասին կատարյալ մաքրության նախանձախնդրություն, որպեսզի երկուսն էլ մաքրությամբ մեկ դառնան: Քանզի այդ է Սուրբ Հոգու ուսուցողական առաջնորդության նպատակը, որպեսզի նրանց կատարելապես մաքրի և հասցնի այն նախնական վիճակին, որում նրանք գտնվում էին նախքան



անկումը, նրանց մեջ սատանայական նախանձով խառնված ամեն ինչ այնպես ոչնչացնելով, որ թշնամական ոչինչ չմնա: Այդ ժամանակ մարմինն ամեն ինչում կսկսի ենթարկվել մտքի հրամաններին, որը նրան տիրաբար սահմաններ կտա կերակրի, ըմպելիքի և քնի համար, Սուրբ Հոգուց մշտապես սովորելով Սուրբ Պողոս Առաքյալի օրինակով. «Ճնշել սեփական մարմինը և հպատակեցնել» (Ա Կորնթ. 9, 27):

18. Գաղտնիք չէ, որ մարմնի մեջ երեք տեսակի մարմնական շարժումներ են լինում: Առաջինը՝ նրա բնատուր, բնական շարժումն է, որը, սակայն, խիղճը ծանրաբեռնող ոչ մի մեղանչական բան չի անում առանց հոգու համաձայնության, այլ միայն զգացնել է տալիս, որ այն մարմնի մեջ կա: Մարմնի մեջ մյուս շարժումն առաջանում է մարմինը առատ կերակրով և ըմպելիքով չափազանց սնուցելուց, երբ դրանից առաջացող արյան տապը մարմնի մեջ պայքար է բարձրացնում հոգու դեմ և նրան մղում անմաքուր ցանկությունների: Այդ պատճառով էլ Առաքյալն ասում է. «Մի՛ հարբեք գինով, որի մեջ պոռնկություն կա»: Ինչպես նաև

*Աստված Ավետարանի մեջ Իր աշակերտներին պատվիրում է. «Զգո՛ւյշ եղեք ինքներդ ձեզնից, գուցե ձեր սրտերը ծանրանան գեխությամբ և հարբեցողությամբ» (Ղուկ. 21, 34): Իսկ ովքեր նախանձախնդիր եղան սրբության և մաքրության կատարյալ չափին հասնելու ճգնակեցական կարգում, հատկապես իրենց միշտ այնպես պիտի պահեն, որ հնարավոր լինի Առաքյալի հետ ասել. «Ճնշելով ամրացնում եմ իմ մարմինը և հպատակեցնում այն» (Ա Կորնթ. 9, 27): Երրորդ շարժումը չար ոգիներից է լինում, որոնք նախանձելով՝ դրանով են գայթակղում, և ջանում են տկարացնել սրբություն փնտրողներին (արդեն ճգնակյացներին), կամ ճանապարհից շեղել նրանց, ովքեր ցանկանում են մտնել մաքրության դռնով ներս (այսինքն՝ դեռ նոր մտնել ճգնակեցության մեջ):*

*19. Սակայն, եթե մարդը զինվի համբերությամբ և պատվիրանները կատարելու վճռականությամբ, որոնք Աստծուց են, ապա Սուրբ Հոգին նրա մտքին կուսուցանի, թե հոգին և մարմինը ինչպես մաքրել այդպիսի ազդեցություններից: Իսկ եթե նա երբևէ տկարանա զգայությամբ և իրեն թույլ տա արհամարհել լսած պատվիրաններն ու հրամանները, ապա չար ոգիները կսկսեն իշխել նրան, կպարուրեն մարմնի ողջ շինվածքը և նրան կապականեն այդ շարժմամբ այնքան, որ տանջահար հոգին չիմանա, թե ուր կորչի, հուսահատության մեջ չտեսնելով, թե որտեղից կգա իրեն որևէ օգնություն, և այն բանից հետո միայն, երբ զգաստանալով, կդառնա նորից պատվիրանների կատարմանը և դրանց լուծը վերցնելով (կամ գիտակցելով ուխտի զորությունը), կհանձնի իրեն Աստծո Հոգուն, նա նորից փրկարար տրամադրությամբ կլցվի: Այդ ժամանակ էլ արդեն նա կհասկանա, որ ինքը հանգիստ պետք է փնտրի միայն Աստծո մեջ և միայն այդ կերպ է իր համար հնարավոր խաղաղություն:*

*20. Անհրաժեշտ է նաև ապաշխարության ջանքերը միանման և հավասարապես իրագործել և՛ հոգով, և՛ մարմնով՝ ձգտելով կատարյալ մաքրության: Եվ երբ միտքն արժանանա այդպիսի շնորհի, որ առանց ինքն իրեն խղճալու անզիջում պայքարի մեջ մտնի կրքերի հետ, այդժամ նրան անհրա-*

*ժեշտ են Հոգու ներշնչանքը, ցուցումներն ու զորացումները, որոնց օգնությամբ նա հաջողությամբ սկսում է հոգուց վանել սրտի ցանկություններից առաջացող բոլոր պիղծ հուզումները: Այդ Հոգին, լծակցելով մտքի (կամ մարդու հոգու)հետ հանուն իմացյալ պատվիրանները խստիվ կատարելու վճռականության՝ նրան ուղղում է այն բանին, որ վանի հոգուց բոլոր կրքերը՝ իբրև մարմնի կողմից նրան խառնվածների, նմանապես նաև իր սեփական կրքերը, որ նրա մեջ կան անկախ մարմնից: Նրան սովորեցնում է մարմինն ամբողջովին կարգի մեջ պահել ՝ գլխից մինչև ոտքերը. աչքերը, որպեսզի մաքրությամբ նայեն, ականջները,որպեսզի լսեն խաղաղությամբ և հաճույք չստանան զրպարտություններ, բամբասանքներ և անարգանքներ լսելուց, լեզուն, որպեսզի միայն բարին խոսի՝ յուրաքանչյուր բառ կշռադատելով և թույլ չտալով, որ խոսքի մեջ որևէ անմաքուր և կրքոտ բան խառնվի, ձեռքերը, որպեսզի նախ շարժման մեջ դրվեն միայն աղոթքների և գթասրտության ու առատաբաշխության գործեր կատարելու համար, որովայնը, որպեսզի մնա կերակուր*



*և ըմպելիք օգտագործելու անհրաժեշտ սահմանների մեջ, որքան հարկավոր է միայն մարմինը պահելու համար՝ թույլ չտալով, որ ցանկությունը և հեշտասիրությունը իրեն հրապուրեն այդ չափից դուրս, ոտքերը, որպեսզի ընթանան արդարությամբ և Աստծո կամքի համաձայն քայլելով՝ ուղղվեն դեպի բարի գործերով ծառայությանը: Այսպիսով ողջ մարմինը վարժվում է ամենայն բարության և փոփոխվում է՝ ենթարկվելով Սուրբ Հոգու իշխանությանը, այնպես որ վերջապես որոշ չափով բաժնեկից է դառնում հոգևոր մարմնի այն առանձնահատկություններին, որոնք ստանալու է արդարների հարության ժամանակ:*

*21.Հոգին, ինչպես ասվեց, ունի իր սեփական կրքերը՝ հպարտություն, ատելություն, նախանձ, բարկություն, վհատություն և նման ուրիշ բաներ: Երբ հոգին իր ողջ զորությամբ իրեն հանձնում է Աստծուն, այդ ժամանակ Ամենաառատն Աստված նրան տալիս է ճշմարիտ ապաշխարության հոգի և մաքրում է նրան այդ բոլոր կրքերից՝ սովորեցնելով չհետևել դրանց և զորություն տալով հաղթահարելու դրանք և պարտության*

մատնելու թշնամիներին, որոնք նրա առջև անընդհատ խոչընդոտներ են դնում՝ ջանալով փորձությունների միջոցով նորից հափշտակել նրան: Եվ եթե նա հաստատուն մնա և չրջվելով դեպի ապաշխարութուն ուսուցանող Սուրբ Հոգին և բարի հնազանդության մեջ լինի, ապա ողորմած Արարիչը կգթա հանուն նրա հանձն առած ջանքերի, որոնք նա գործադրում է ամենայն նեղություններով ու զրկանքներով, երկարատև պահքերով, հաճախակի հսկումներում, Աստծո խոսքը ուսանելու, անդադար աղոթքներով, ամեն տեսակի մարմնական հաճույքներից հրաժարվելով, բոլորին մաքուր սրտով ծառայելով, հոգով խոնարհվելով և աղքատանալով, և եթե հաստատուն մնա այս ամենի մեջ, Ամենաառատը, ողորմած աչքով նայելով, նրան կազատի բոլոր փորձություններից և իր ողորմածությամբ կփրկի թշնամու ձեռքից:

22. Հայր Աստվածը, Իր ողորմությամբ «չխնայեց» Իր Միածին Որդուն (Հռոմ. 8, 32), այլ Նրան մեզ տվեց մեր մեղքերից և մեր իրավությունից ազատելու համար: Եվ Աստծո Որդին, հանուն մեզ Իրեն նվաստաց-



նելով, բժշկեց մեզ մեր հոգեկան հիվանդություններից և մեզ համար մեր մեղքերից փրկություն պատրաստեց: Ուրեմն խնդրում եմ ձեզ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով, իմանալ և միշտ մտքում պահել Աստծո այդ մեծ տնօրինությունը, այսինքն, որ Բան Աստված մեզ համար ամեն ինչում նմանվեց մեզ՝ բացի մեղքից: Ուստի ովքեր օժտված են իմացականությամբ, պատշաճ է, որ իմանան սա՝ խելամտորեն նախանձախնդիր լինելով, որպեսզի իսկապես ազատ լինեն մեղքերից Տիրոջ գալստյան զորությամբ: Նրանք, ովքեր այդ տնօրինությունից օգտվել են ինչպես հարկն է, նրա ճշմարիտ ծառաներն են: Բայց այդ կոչումը դեռ կատարելությունը չէ: Կատարելությունը մտցնում է որդեգրության մեջ և այն սրբագործությունն է, որը գալիս է իր ժամանակին: Այսպես, երբ մեր Տեր Հիսուս Քրիստոսը տեսավ, որ Իր աշակերտները արդեն մոտեցել են որդեգրության և Սուրբ Հոգու ուսուցմամբ ճանաչել են Իր են, ասաց նրանց. «Այլևս ձեզ ծառաներ չեմ կոչում, այլ ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետև այն բոլորը, ինչ Իմ Հորից լսեցի, հայտնեցի ձեզ» (Հովհ. 15, 15):

Եվ ովքեր իմացան, թե ինչ են իրենք դարձել Հիսուս Քրիստոսով, բարձրաձայն այսպիսի խոսքեր ասացին. «Չստացաք ծառայության Հոգին վերստին երկյուղի մեջ ընկնելու համար, այլ ստացաք որդեգրության Հոգին, որով աղաղակում ենք՝ Աբբա Հայր» (Հռոմ. 8, 15): Իսկ ով (մեղքից) դուրս գալու համար լիակատար և եռանդուն պատրաստակամություն չցուցաբերի, թող իմանա, որ Ամենափրկիչ Տիրոջ գալուստը դատաստան կլինի նրա համար: Ուստի և Սիմոնն սկզբից ևեթ ազդարարեց. «Ահա Սա Նա է, որ պատճառ է դառնալու Իսրայելի մեջ շատերի անկման ու բարձրացման և նշան՝ հակառակության» (Ղուկ. 2, 34): Իսկ հետո նաև Առաքյալները հռչակեցին. «Ոմանց մահվան հոտ, որ տանում է դեպի մահ և ոմանց՝ կենդանության բույր, որ տանում է դեպի կյանք» (Բ Կորնթ. 2, 16):

23. Ձեզ անհայտ չէ, որ ճշմարտության թշնամիները անդադար ջանում են ճշմարտությունը ոչնչացնել: Իսկ Աստված միշտ այցելում է Իր արարածներին աշխարհի արարումից ի վեր, և ովքեր ամբողջ սրտով մոտեցել են իրենց Արարչին, նրանց սովորեց-



րել է ինչպես պետք է Իրեն պաշտել: Բայց երբ մարմնի կրքերի և մեր դեմ պայքարող թշնամիների չարության պատճառով հոգու բարի մղումները ուժը կորցրեցին և մարդիկ չկարողացան հասկանալ նույնիսկ այն, ինչն իրենց բնորոշ է ըստ իրենց բնության և կոչման, այլ ոչ միայն ազատվել մեղքերից, որպեսզի իրենք իրենց բարձրացնեին նախաստեղծ դրության, այդ ժամանակ Աստված ողորմություն արեց նրանց և գրավոր օրենքի միջոցով նրանց սովորեցրեց ճշմարիտ Աստվածապաշտությունը: Երբ դա էլ չօգնեց, այդ ժամանակ Աստված, տեսնելով, որ վերքը մեծանում է և պահանջում է հիմնովին բուժում, որոշեց ուղարկել Իր Միածին Որդուն, Որն էլ մեր միակ Բժիշկն է:

24. Հաղթվելով Հիսուս Քրիստոսի սիրուց՝ ես, նայելով մեր ժամանակին, մե՛կ ուրախություն եմ վերապրում, մե՛կ վիշտ: Մեր սերնդից շատ շատերը զգեստավորվեցին Աստվածպաշտության հագուստով, բայց նրանցից միայն մի քանիսը այդ արեցին ամբողջ սրտով և արժանացան ստանալու Հիսուս Քրիստոսի գալստյամբ եղած ազատագրումը: Եվ այդ քչերը նրանք են, որոնց

համար ես ուրախանում եմ։ Իսկ մյուսները, արհամարհելով (իրենց ուխտի) զորությունը, գործում են մարմնի կամքով և իրենց սրտի հակումներով, որով էլ Տիրոջ գալուստը նրանց համար դատապարտություն է։ Եվ այդ մյուսները նրանք են, որոնց համար ես տրտնջում եմ։ Վերջապես ոմանք էլ, մտածելով ճգնության երկարատևության մասին, հոգով վհատվեցին, որի հետևանքով իրենց վրայից մի կողմ գցեցին Աստվածպաշտության հանդերձը և դարձան որպես թե անասուններ, որոնց համար ողբում եմ, քանզի մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալուստը նրանց համար դատապարտություն եղավ։

25. Ես բոլոր ուժերով աղոթում եմ Աստծուն ձեր համար, որպեսզի Նա ձեր սրտերի մեջ կրակ գցի, որի համար մեր Տեր Հիսուս Քրիստոսը եկավ. «Երկրի վրա կրակ գցելու» (Ղուկ. 12, 49), որով և թող կարողանաք արդարությամբ կառավարել ձեր մտադրություններն ու զգայությունները և զանազանել բարին չարից։

26. Այն ժամանակ, երբ քամին փչում է համաչափ, ամեն մի ծովագնաց կարող է



բարձր կարծիք ունենանալ իր մասին և պարծենալ իրենով, բայց միայն քամու հանկարծակի փոփոխմամբ է հայտնի լինում փորձառու նավավարների հմտությունը։

27. Ով երկյուղում է Աստծուց և կատարում է Նրա պատվիրանները, Աստծո ծառան է։ Բայց այդ ծառայական վիճակը, որի մեջ գտնվում ենք, ստրկություն չէ, այլ որդեգրության տանող արդարություն։ Մեր Տերը ընտրեց Առաքյալներին և նրանց վստահեց Ավետարանի քարոզչությունը։ Նրանց միջոցով տրված պատվիրանները մեզ համար սահմանեցին շնորհազարդ ծառայական դրություն, որպեսզի իշխենք բոլոր կրքերի վրա և կատարենք առաքինության բարեզարդ ծառայությունը։ Բայց երբ մենք ավելի մոտենանք շնորհին, մեր Տեր Հիսուս Քրիստոսը նաև մեզ կասի, ինչպես ասաց Իր Առաքյալներին. «Այլևս ձեզ ծառաներ չեմ կոչում, այլ ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետև այն բոլորը, ինչ իմ Հորից լսեցի, հայտնեցի ձեզ» (Հովհ. 15, 15)։ Շնորհին մոտեցողները փորձառությամբ ճանաչում են Սուրբ Հոգու շարժումները և հասկանում իրենց հոգևոր տնօրինությունը, իսկ այդ

հասկանալով և ճանաչելով՝ կանչում են՝ ասելով. «Քանի որ չստացաք ծառայության հոգին վերստին երկյուղի մեջ ընկնելու համար, այլ ստացաք որդեգրության հոգին, որով աղաղակում ենք՝ Աբբա Հայր» (Հռոմ 8, 15):

28. Աստված բոլորին կառավարում է Իր շնորհի ներգործություններով: Որի համար էլ մի՛ ծուլացեք և մի՛ վհատվեք՝ գիշեր ու ցերեկ Աստծուն կանչելով, որպեսզի շարժեք Հայր Աստծո գթությունը, որ ձեզ ի վերուստ օգնություն առաքի իմանալու, թե ինչպես վարվեք: Մի՛ տվեք. «Քուն ձեր աչքերին և նինջ՝ ձեր թարթիչներին» (Սաղմ. 131, 4), նախանձախնդիր լինելով ինքներդ ձեզ անարատ զոհ մատուցելու Աստծուն, որպեսզի տեսնեք Նրան, որովհետև առանց մաքրության ոչ ոք չի կարող տեսնել Աստծուն (Եբր. 12, 14), ինչպես ասում է Առաքյալը:

29. Բոլոր սրբերը, երբ տեսնում են, որ մենք ծուլանում ենք և անհոգ լինում, ողբում են և տրտմում, իսկ երբ տեսնում են, որ դառնում ենք կարգապահ և աճում ենք կատարելության մեջ, ուրախանում են և ուրախությամբ ու խնդությամբ մեր մասին



անդադար բազում աղոթքներ են հղում Արարչին: Եվ այդ ժամանակ Տերը սփոփվում է մեր բարի գործերով, ինչպես նաև սրբերի վկայություններով և աղոթքներով և առատացնում է մեզ ամեն տեսակ պարգևներով:

30. Ով ամբողջ սրտով ատելություն չունենա այն ամենի կանդեպ, ինչը բնորոշ է նյութական և երկրային ապականացու մարմնին և նրա բոլոր մղումներին և գործողություններին և իր միտքը չհառի վեր՝ ամենքի Հորը, նա չի կարող փրկություն ստանալ: Ով որ դա անի, մեր Տերը կողորմի նրան իր ջանքերի համար և կպարգևի անտեսանելի և աննյութական կրակը, որը կայրի նրա մեջ բոլոր կրքերը և կատարելապես կմաքրի նրա միտքը: Այդ ժամանակ կբնակվի նրա մեջ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հոգին և կմնա նրա հետ, սովորեցնելով նրան Աստծուն վայել երկրպագություն: Բայց քանի դեռ մենք հաճեցնում ենք մեր նյութական մարմինը, տակավին թշնամի ենք մնում Աստծուն, Նրա հրեշտակներին և բոլոր սրբերին: Ուրեմն աղաչում եմ ձեզ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով, անհոգ մի՛ եղեք ձեր կյանքի ու փրկության մասին և

թույլ մի՛ տվեք այս ժամանակին՝ խլելու ձեզանից հավիտենականությունը, և այս ապականացու մարմնին՝ զրկելու ձեզ անսահման և անճառելի լույսերի թագավորությունից: Իրավ հոգիս չփոթվում և միտքս կարկամում է, երբ տեսնում եմ, որ մեզ ազատություն է տրված ընտրելու և կատարելու սրբերի գործեր, մինչդեռ մենք, գինուց հարբածների պես կրքերից արբեցած, չենք ուզում մեր մտքերը վեր համբառնալ և փնտրելով գտնել երկնային փառքը, չենք ուզում ընդօրինակել սրբերի գործերը կամ գնալ նրանց շավիղներով, որպեսզի, դառնալով նրանց գործերի ժառանգորդները, նրանց հետ ստանանք նաև հավիտենական ժառանգությունը:

31. Դուք մեծ բարիքի եք արժանացել ստանալով շնորհը, որը ձեր մեջ կա: Սակայն ձեզ անհրաժեշտ է առանց ծուլության ճգնել հանուն Նրա, Ով «Մեզ համար բարձունքից այցելող արեգակն է» (Ղուկ. 1, 78), որպեզի Նրա համար դառնաք սուրբ և անարատ զոհ: Մենք գիտենք, թե մեր բնությունն ինչպես ընկավ իր բարձունքից ստորացման և աղքատության խորքը և ինչպես այցելեց



նրան ողորմած Աստված Իր օրենքներով՝ Մովսեսի և մյուս մարգարեների միջոցով, իսկ վերջին ժամանակում դա արեց Իր Միածին Որդու միջոցով, Որն էլ մեր քահանայապետերի գերագույն Առաջնորդն է և մեր ճշմարիտ Բժիշկը, Միակը, որ կարող է բժշկել մեր հիվանդությունները, և Ով մեր մարմնով զգեստավորվեց, և Ինքն Իրեն մահվան մատնեց մեր և մեր մեղքերի փոխարեն: Նրա մահով ենք մենք փրկված: Ուրեմն խորամուխ եղեք և խնամքով քննեք մեր Արարչի տնօրինությունը և Նրա՝ մեզ արած այցելությունը ըստ ներքին և արտաքին մարդու այն բանից հետո, երբ մենք, բանական լինելով, անմիտ դարձանք՝ ենթարկվելով ստության հոր, չարագործի, թշնամու կամքին:

32. Որքա՛ն շատ են չար դևերի բազմությունները և որքա՛ն անթիվ են նրանց հնարքների տեսակները: Երբ նրանք տեսան, որ մենք, մոտենալով մեր կրքերի և մեր պատվազուրկ վիճակի ճանաչմանը, արդեն ջանում ենք խուսափել չար գործերից, որ հրահրում են մեզ կատարել և ականջ չենք դնում չար խորհուրդներին, որ ներշնչում են մեզ, չընկրկեցինք, այլ գործի անցանք

հուսահատ ջանքով, իմանալով, որ նրանց վիճակն արդեն վերջնականապես որոշված է և որ նրանց ժառանգությունը դժոխքն է՝ ծայրահեղ չարության և Աստծուց հեռանալու համար: Թող Աստված բացի ձեր սրտի աչքերը, որպեսզի դուք տեսնեք, թե որքան բազմաթիվ են դևերի հնարքները և թե նրանք որքան շատ չարիք են պատճառում մեզ ամեն օր և թող ձեզ արթուն սիրտ և դատողության հոգի տա, որպեսզի կարողանաք ինքներդ ձեզ կենդանի և անարատ զոհ մատուցել Աստծուն՝ ամեն ժամանակ զգուշանալով դևերի նախանձից և նրանց չար խորհուրդներից, նրանց ծածուկ խարդավանքներից և անհասկանալի չարությունից, նրանց խաբուսիկ ստերից և հայհոյական մտքերից, նրանց աներևույթ ներշնչումներից, որ նրանք մեր սրտի մեջ ամեն օր բարկություն և բամբասանք են դնում, հրահրում են, որ բամբասենք մեկս մյուսին՝ միայն ինքներս մեզ արդարացնելով, իսկ մյուսներին դատապարտելով, որպեսզի միմյանց չարախոսենք կամ քաղցր լեզվով խոսելով՝ ծածկենք մեր սրտերի դառնությունը, որպեսզի մերձավորին դատենք արտաքի-



նով՝ մեր ներսում գիշատիչ ունենալով, որպեսզի իրար մեջ վիճենք և միմյանց հակառակ գնանք՝ ցանկանալով պնդել մերը և ազնվագույն երևալ: Յուրաքանչյուր մարդ, ով հեշտանում է մեղսալի խորհուրդներով, կամովին ընկնում է, երբ ուրախ է լինում թշնամիների կողմից իր մեջ հարուցվող ամենայն ինչով, որ դրվում է թշնամիներից, երբ մտածում է իրեն արդարացնել միայն երևութականորեն կատարվող գործերով՝ ներքուստ չար ոգու բնակարան լինելով, որը նրան ամենայն չարն է սովորեցնում: Այդպիսի մարդու մարմինը կլցվի ամոթալի խայտառակություններով, որովհետև նրան տիրում են դիվային կրքերը, որոնց նա չի վանում իրենից: Դևերը տեսանելի մարմիններ չեն, բայց մենք նրանց համար մարմին ենք լինում, երբ մեր հոգիները նրանցից ընդունում են խավարային մտածումներ, որովհետև այդ մտածումներն ընդունելով՝ մենք ընդունում ենք հենց իրենց՝ դևերին, և նրանց երևելի մարմիններ ենք դարձնում:

33. Մտավոր և անմահ բնությունը մեր ապականացու մարմնի մեջ նրա համար է ծածկված, որ նրա մեջ և նրա միջոցով ցույց

տա իր գործողությունները: Այսպես, այդ մարմինը դարձնելով խնկարկման զոհասեղան, նրա վրա դրեք ձեր բոլոր մտքերն ու վատ խորհուրդները՝ դրանք դնելով Աստծո դիմաց, սրտով,մտքով վեր բարձրացեք առ Աստված և աղաչելով Նրան, որ ի վերուստ ձեզ առաքի Իր աննյութական կրակը, որն էլ կայրի այն ամենը, ինչը գտնվում է այդ զոհասեղանի վրա և կմաքրի այն: Եվ կվախենան ձեր հակառակորդները՝ բահաղի քահանաները և կկործանվեն ձեր ձեռքով՝ ինչպես Եղիա մարգարեի ձեռքով (Գ Թագ. 18, 25): Այդ ժամանակ դուք կտեսնեք Աստվածային Ջրերից դուրս եկող մարդուն նա այնպես կտնօրինի, որ ձեր վրա անձրև տեղա, հոգևոր անձրև, այսինքն՝ Մխիթարիչ Հոգու ցողը:

34. Իր երկնային կարգից հպարտության պատճառով վայր ընկած սատանան անդադար ջանում է Տիրոջը ողջ սրտով մոտենալ ցանկացողներին կործանման տանել այն նույն ճանապարհով, որով և ինքը ընկավ, այսինքն՝ հպարտությամբ և ունայն փառքի սիրով: Դևերը մեզ հաղթում են հենց դրանով, հենց դրանով և դրա նման ուրիշ բաներով են մտածում մեզ հեռացնել Աստծուց: Ավելին՝ իմանալով, որ իր եղբորը սիրողը սիրում է նաև Աստծուն, նրանք մեր սրտերում այնքան ատելություն են դնում միմյանց նկատմամբ, որ ոմանք չեն կարող տեսնել իրենց եղբորը կամ նրա հետ մի խոսք փոխանակել: Շատերն առաքինությունների մեջ իրոք շատ տքնություններ կրեցին, սակայն իրենց անմտությամբ կործանեցին իրենց: Զարմանալի չէ, որ ձեր մեջ էլ այդպես լինի, եթե, օրինակ, փրկության գործից սառելով, դուք մտածեք, թե արդեն առաքինությունների տեր եք: Որովհետև ահա դրանով դուք արդեն ընկաք այդ դիվային հիվանդության (կասկածի) մեջ՝ խորհելով, թե մոտեցել եք Աստծուն և լույսի մեջ եք կենում, մինչդեռ իրապես խավարի մեջ եք: Մեր Տեր Հիսուս Քրիստոսին ի՞նչը մղեց հանել հանդերձները, մեջքին սրբիչ կապել և լվացարանի մեջ ջուր լցնելով՝ (Հովհ. 13, 4) լվանալ Իրենից ցածրերի ոտքերը, եթե ոչ այն, որ մեզ խոնարհություն սովորեցնի: Այո, այն ժամանակ իր արածով Նա մեզ խոնարհության օրինակ ցույց տվեց: Եվ իրոք, բոլոր առաջին կարգի մեջ մտնել ցանկացող-

ներն այլ կերպ չեն կարող հասնել դրան, եթե ոչ միայն խոնարհությամբ, քանզի սկզբից ևեթ այն, ինչը վայր գցեց երկնքից, հպարտության շարժումն էր: Հետևաբար, եթե մարդու մեջ ծայրագույն խոնարհություն չլինի, խոնարհություն ամբողջ սրտով, ամբողջ մտքով, ամբողջ հոգով, ամբողջ հոգով և մարմնով, ապա նա Աստծո արքայությունը չի ժառանգի:

35. Եթե անկեղծորեն ցանկանում եք մոտենալ մեր Արարչին, ապա անհրաժեշտ է ճգնել մեր հոգիները կրքերից ազատելու՝ ըստ հոգևոր օրենքի: Քանզի մեր իմացական ուժը մեր չար գործերից, կրքերով հեշտանալուց, դիվային փորձությունների բազմությունից տկարացել է և մեր հոգիների բարի շարժումները անգործ են դարձել, մենք արդեն մեր հոգևոր բնության գեղեցկությունը և պահանջմունքները չենք կարողանում ճանաչել կրքերի պատճառով, որոնց մեջ ընկնում ենք, և մեզ ոչ մեկից փրկություն չկա, բացի մեր Տեր Հիսուս Քրիստոսից, ինչպես գրում է Պողոս Առաքյալը. «Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, նույնպես և Քրիստոսով ամենքը պիտի կենդանանան» (Ա



Կորնթ. 15, 22): Մեր Տեր Հիսուս Քրիստոսը Իր պատկերի նմանությամբ ստեղծված բոլոր բանական արարածների կյանքն է:

36. Մենք կոչված ենք սրբերի անուններով և նրանց հանդերձով ենք զգեստավորված, որով գովաբանվում ենք անհավատների առաջ, իսկ գործերով նրանց նմանվելու ոչ մի ջերմեռանդություն չունենք: Վախենում եմ, որ մեզ պատշաճի Առաքյալի ասածը. «Մարդիկ, որ ունեն աստվածապաշտության կերպարանքը, սակայն ուրացել են նրա զորությունը» (Բ Տիմ. 3, 5): Թող Տերը ձեզ հասկանալ տա, թե ինչ է ձեր ստացած կյանքը, որպեսզի Նրա Հոգով գործելով, արժանի դառնաք ստանալ անտեսանելի ու աներևույթ ժառանգությունը: Ինչքան ուժ ունենք, այնպես անենք, որ մեր գործերը համաձայն լինեն Տիրոջ կամքին. ահա թե ինչ ենք պարտավոր անել, որովհետև դա բնորոշ է մեր բնությանը, և դրանից ավելի ոչինչ չի պահանջվում մեզնից՝ բացի առաքինությունից: Ով ծառայում է Աստծուն և իր ամբողջ սրտով փնտրում է Նրան, նա գործում է իր բնությանը համապատասխան, իսկ ով ինչոր մեղք է գործում, նա արժանի է կշտամ-

բանքի և պատժի, որովհետև դա օտար է նրա բնությանը:

37. Այն ժամանակվանից ի վեր, ինչ իմ Տերը Իր շնորհով արթնացրեց իմ միտքը մահվան քնից, չափազանց էր իմ լացն ու անմխիթար հառաչանքը: Ինքս ինձ մտածում եմ՝ ինչ ենք տալու Տիրոջն այն ամենի համար, ինչ Նա արեց մեզ համար: Նա Իր Հրեշտակներին ստիպեց ծառայել մեզ, Մարգարեներին՝ մարգարեանալ, Առաքյալներին՝ Ավետարանը քարոզել: Այլև Իր Միածին Որդուն ուղարկեց մեր փրկության համար, մի բան, որ ամեն ինչից առավել է: Ուրեմն բորբոքեցե՛ք ձեր սրտերում Աստծո երկյուղը: Իմացե՛ք, որ Հովհաննես Մկրտիչն ու Նախակարապետը մեզ ապաշխարության մկրտեց ջրով՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մկրտությունը նախապատրաստելու համար, Ով մկրտում է Սուրբ հոգով և հրով, Ով էլ բարի գործերի նախանձախնդրության հուրն է: Ուրեմն ջերմագին պատրաստակամություն հանդես բերենք՝ մեզ հոգով և մարմնով մաքրելու և ընդունելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի մկրտությունը, նախանձախնդիր լինենք բարի գործերի, որպեսզի



ինքներս մեզ հաճելի զոհ մատուցենք Նրան: Մկրտության ժամանակ մեր ընդունած Մխիթարիչ Հոգին մեզ սրբությամբ գործելու ուժ է տալիս, որպեսզի մեզ նորից բարձրացնի առաջին փառավոր դրությանը և արժանի դարձնի ստանալ հավիտենական ժառանգությունը: Իմացե՛ք, որ ովքեր Քրիստոսով են մկրտվում, Քրիստոսով են զգեստավորվում՝ ստանալով Սուրբ Հոգու շնորհը, ինչպես Առաքյալն է ասում (Գաղատ. 3, 27-28): Ընդ որում, ինչպես ծառան, այնպես էլ ազատը, ինչպես տղամարդը, այնպես էլ կինը, հենց ստանում են այս շնորհը, այդ մարմնական հատկանիշները անմիջապես դադարում են ուժ ունենալուց: Եվ երբ Սուրբ Հոգին նրանց տալիս է հավիտենական երկնային արքայությունը ժառանգելու առհավատչյան, միևնույն ժամանակ սովորեցնում է, թե ինչպես պետք է երկրպագել Հորը հոգով և ճշմարտությամբ (Հովհ. 4, 23):

38. Ես աղոթեցի ձեր համար, որ դուք էլ արժանանաք ստանալու այդ մեծ հրեղեն Հոգին, Որը ստացա ես: Եթե ցանկանում եք այնպես ստանալ, որ Նա ձեր մեջ մնա, նախ մարմնական ջանքեր ու սրտի խոնարհութ-

յուն մատուցեք, և ձեր խորհուրդները, երկինք բարձրացնելով գիշեր ու զօր արդարությամբ փնտրեք այդ հրեղեն Հոգին և Նա կտրվի ձեզ: Այս կերպ Նրան ստացան Եղիա Թեզբացին և Եղիսեն մյուս մարգարեների հետ: Ով իրեն այդպիսի մշակումով (սխրագործություններով) է ճոխացնում, Նրան այդ Հոգին կտրվի ընդմիշտ և հավիտյան: Աղոթքի մեջ եղեք ձեր ամբողջ սրտով, տրտմագին որոնումով, և կտրվի ձեզ,որովհետև այդ Հոգին բնակվում է արդար սրտերի մեջ: Եվ նա, երբ ընդունված լինի, կբացի ձեզ երկնային գաղտնիքները, կվանի ձեզանից մարդկանց և գազանների վախը և ձեր մեջ գիշեր ու զօր երկնային ուրախություն կլինի և այս մարմնով կնմանվեք նրանց, ովքեր արդեն գտնվում են երկնային արքայության մեջ:

39. Եթե մարդը ուզում է ստանալ Աստծո սերը, ապա պետք է ունենա Աստծո երկյուղը, իսկ երկյուղը ծնում է նաև լաց, իսկ լացը ծնում է արիություն: Երբ այս բոլորը հասունանում է հոգում, ապա նա կսկսի ամեն ինչում պտղաբերել: Եվ Աստված, տեսնելով հոգու այս գեղեցիկ պտուղները, Նրան Իր



մոտ է գրավում ինչպես ընտիր, անուշահոտ խունկ, Հրեշտակների հետ ամեն ժամանակ ուրախանում է նրանով, նաև նրան լցնելով ուրախությամբ և պահպանում է նրան բոլոր ուղիներում, որ նա անվտանգ հասնի իր հանգստավայրը: Այդ ժամանակ սատանան, տեսնելով նրան պարսպող Բարձրագույն Պահապանին, չի հարձակվում նրա վրա, վերին զորության պատճառով վախենում է անգամ մոտենալ նրան: Ունեցե՛ք ձեր մեջ այդ ուժը, թող վախենան ձեզանից դևերը, թող թեթևանան ձեր հանձն առած ճգնությունները և թող հաճելի լինի ձեզ Աստվածայինը: Աստվածային սիրո այս քաղցրությունը շատ ավելի քաղցր է մեղրահացի քաղցրությունից: Վանականներից և կուսակրոններից շատերը, ապրելով միաբանությունների մեջ, դույզն-ինչ չճաշակելով Աստվածային սիրո այս քաղցրությունը և Աստվածային զորություն չստանալով, մտածեցին, որ արդեն ունեն այն, բայց ոչ մի ջանք չթափեցին այն վաստակելու, ապա Աստված էլ չտվեց: Իսկ ով ջանում է ձեռք բերել այն, նա իրոք Աստծո ողորմությամբ կհասնի դրան, որովհետև Աստված չի նա-

յում երեսներին և անաչառ է: Երբ մարդը ցանկանա իր մեջ ունենալ Աստծո լույսը և Նրա զորությունը, արհամարհում է այս աշխարհի անարգանքը, նմանապես նաև նրա պատիվը, ատում է ամեն աշխարհայինը և մարմնի հանգստությունը և իր սիրտը մաքրում է բոլոր չար խորհուրդներից, Աստծուն անդադար պահք և հանապազօր արցունքներ է ընծայում, նմանապես և մաքուր աղոթքներ, այդժամ Աստված լիացնում է նրան այդ ուժով: Նախանձախնդիր եղեք ահա այսպիսի ուժ ձեռք բերելու և ձեր բոլոր գործերը կկատարեք հանգիստ և դյուրությամբ, Աստծո առաջ մեծ համարձակություն կստանաք, և Նա կկատարի ձեր բոլոր հայցածները:

40. Աստված լսում է Իրեն սիրողներին և ամբողջ սրտով Իրեն փնտրողներին և բարեհաճ է վերաբերվում նրանց բոլոր խնդրանքներին: Իսկ նրանց խնդրանքներին, ովքեր ամբողջ սրտով չեն մոտենում Նրան, այլ երկատված սրտով և ինչ էլ որ անում են, ցուցադրում են՝ մարդկային գովեստ և փառք ստանալու ակնկալությամբ, չի լսում, այլ բարկանում է նրանց վրա, քանի որ նրանց



գործերը ցուցադրելու համար են: Եվ նրանց վրա կատարվում է սաղմոսի այն խոսքը, որն ասում է. «Աստված ցրելու է երեսպաշտների ոսկորները» (Սաղմ. 52, 6): Այս պատճառով Աստծո ուժը չի գործում նրանց մեջ, քանի որ նրանք հաստատուն սրտով չեն բոլոր գործերի մեջ, որ ձեռնարկում են: Եվ նրանք չգիտեն Աստվածային քաղցրությունը, նրա լռությունը և ցնծությունը: Մեր ցեղում շատ են այնպիսիները, ովքեր չեն ստացել այն ուժը, որը հոգուն քաղցրություն է պատճառում և օրեցօր ավելի ու ավելի է ուրախություն և ցնծություն լցնում նրանց մեջ և բորբոքում է Աստվածային ջերմությունը: Չար ոգին նրա համար է շողոքորթում նրանց, որ նրանք իրենց գործերն անում են ի ցույց մարդկանց: Իսկ դուք, ձեր աշխատանքի պտուղները դնելով Տիրոջ առաջ, ջանացեք խուսափել սնափառության ոգուց և անդադար մարտնչեք նրա դեմ, որպեսզի Տերը ընդունի ձեր պտուղները, որոնք դնում եք Նրա առաջ և առաքի ձեզ այն ուժը, որը տրվում է Նրա ընտրյալներին: Մի՛ դադարեք այդ չար ոգուն դիմակայելուց, քանզի  երբ մարդ ձեռնամուխ է լի-

նում բարի գործերի և բարեկրոն ճգնությունների, մոտ է վազում նաև այդ ոգին, որ նրա հետ բաժնեկից լինի կամ որպեսզի նրան բոլորովին շեղի այդպիսի ձեռնարկումներից: Նա չի հանդուրժում, որ մեկն արդար վարվի և հակառակում է բոլորին, ովքեր ցանկանում են Տիրոջը հավատարիմ լինել: Նա շատերին առհասարակ չի թողնում առաջինության հասնել, իսկ ուրիշների էլ գործերի մեջ է խառնվում և ոչնչացնում է նրանց պտուղները՝ նրանց սովորեցնելով բարեգործություններ և գթասրտության գործեր անել՝ դրանց սնափառություն խառնելով: Մարդիկ այդպիսիների մասին մտածում են, թե հարստացած են պտուղներով, մինչդեռ ոչ մի պտուղ չունեն, այլ նման են այն թզենուն,որին երբ հեռվից էին նայում, մտածում էին, որ նրա վրա բազում քաղցր պտուղներ կան, իսկ երբ մոտենում էին, ոչինչ չէին գտնում: Աստված նրանց ոչ միայն զրկում է Իր Աստվածային աննման քաղցրությունից, այլև չորացնում է նրանց, քանզի նրանց վրա ոչ մի բարի պտուղ չի գտնում: Բայց դուք, սխրագործությունների մեջ մտնելով, ջանացեք ընդդիմանալ սնա-



փառության ոգուն, հակառակվեք և կհաղթեք նրան: Կգա Աստծո ուժը, ձեզ օգնություն կբերի և ձեր հետ կլինի և ամեն ժամ ձեզ կտա նախանձախնդրություն և ջերմություն, որից թանկ ոչինչ չկա: Եթե ձեզնից մեկը տեսնի, որ օժտված չէ այդ ջերմությամբ, թող ջանա գտնելու և այն կգա իրեն փնտրողի մոտ: Այն նման է կրակի, որի վրա երբ մարդիկ ցանկանում են մի փոքր յուղ եփել, փչում են, մինչև որ բռնկվի, և ուրը վառվելով ստանում է իրեն բնորոշ բնական ուժը և եռացնում է՝ վեր բարձրանալով և այրելով: Նույն կերպ, երբ տեսնեք, որ ձեր հոգիները սառում են անհոգությամբ և ծուլությամբ, շտապեք արթնացնել նրանց՝ նրանց վրա արցունքներ հեղելով: Անկասկած կգա այդ կրակը և կմիավորվի ձեր հոգիների հետ և ձեռք բերելով այն, կեռա բարի գործերով: Ահա նաև Դավիթը, երբ նկատեց, որ իր հոգին ծանրացել է և սառել, այսպես ասաց. «Հիշեցի օրերն առաջվա, մտաբերեցի բոլոր գործերը քո, ձեռքերիդ ստեղծածների մասին խորհեցի: Դեպի քեզ կարկառեցի ձեռքերն իմ. հոգիս հողի պես ծարավ է Քեզ» (Սաղմ. 142, 5-6): Տեսնում

եք, երբ Դավթի սիրտը թմրեց, նա չափազանց շատ էր մտահոգված դրանով, մինչև նորից չբոցավառվեց իր սրտում կրակը այնքան, որ նա կանչեց. «Պատրաստ է սիրտն իմ, Աստվա՛ծ, պատրաստ է սիրտն իմ» (Սաղմ. 107, 2): Եվ նա հանապազօր ջանքերի և հոգածության շնորհիվ կրկին վերականգնվեց իր կարգի մեջ: Այդպես վարվեք նաև դուք, թող միակամ լինեք ձեր սիրտը նախապատրաստելու Աստվածային լույսի և հրի օգնությամբ:

41. Աղոթեցե՛ք, թող Աստված շնորհ տա ձեզ ամեն ինչ հստակ տեսնելու և ըմբռնելու, որպեսզի ճշտորեն կարողանաք տարբերել, ինչն է լավը և ինչը՝ վատը: Պողոս Առաքյալն ասում է. «Պինդ կերակուրը հասուն մարդկանց համար է» (Եբր. 5, 14): Խոսքը նրանց մասին է, ովքեր երկարատև և ջանադիր սխրագործություններով վարժեցրել են իրենց զգացումներն ու մտադրությունները չարի և բարու նկատմամբ, դարձել արքայության որդիներ և գրանցվել աստվածային որդեգրության: Եվ Աստված նրանց արիություն և դատողություն պարգևեց նրանց բոլոր գործերի մեջ, որպեսզի նրանց



չհրապուրեն ո՛չ մարդը, ո՛չ սատանան: Պետք է իմանաք, որ թշնամին հավատացյալներին փորձում է բարի տեսքով և շատերին կարողանում է գրավել այն պատճառով, որ նրանք դատողություն և արիություն չունեն: Ուստի երբ երանելի Պողոսը իմացավ բանականության այդ հարստությունները, որոնք պահված են հավատավորների համար և դրանց մեծությանը սահման չկա, գրեց եփեսացիներին. «Թող տա ձեզ Աստված իմաստության և հայտնության հոգի իրեն ճանաչելու համար: Նա լուսավոր պիտի դարձնի ձեր սրտի աչքերը, որպեսզի մենք հասկանանք, թե ինչ է Նրա կոչման հույսը, ինչ է Նրա ժառանգության փառքի մեծությունը սրբերի մեջ» (Եփես. 1, 17-18): Նա այդ արեց նրանց հանդեպ ունեցած իր չափազանց սիրո պատճառով՝ իմանալով, որ եթե նրանք հասնեն դրան, ապա ոչ մի բանի մեջ դժվարություն չեն ունենա և բնավ չեն վախենա սարսափելի բաներից, իսկ Աստծո ուրախությունը կմխիթարի գիշեր-ցերեկ և դժվարությունը ամեն օր նրանց համար հաճելի կլինի: Վանքերում ապրող վանականներից և կույսերից շատերը չեն հասնում

այդ չափին: Իսկ եթե դուք ցանկանում եք հասնել այդ չափին, որը կատարելության գագաթնակետն է, հեռու մնացեք բոլոր նրանցից, ովքեր կրում են այդ անունները, այսինքն՝ վանականության և կուսակրոնության անունները, սակայն այդ պայծառատեսությունը և դատողությունը չունեն, որովհետև եթե նրանց հետ հարաբերության մեջ մտնեք, ապա նրանք չեն թողնի, որ դուք առաջադիմեք, այլ նույնիսկ կմարեն ձեր ջերմեռանդությունը, որովհետև նրանց մեջ ոչ մի ջերմություն չկա, այլ սառնություն է, որովհետև ջանում են ըստ իրենց ցանկության: Ուրեմն, եթե նրանք գան ձեզ մոտ և ձեզ հետ աշխարհային խոսակցություն սկսեն իրենց ցանկությունների համաձայն, մի՛ համաձայնվեք, որովհետև Պողոս Առաքյալը ասում է. «Մի՛ հանգցրեք Հոգին, մի՛ արհամարհեք մարգարեությունները» (Ա Թեսաղ. 5, 19-20): Իմացե՛ք, որ Հոգին ոչ մի բանից այնպես չի հանգում, որքան ունայն խոսակցությունից:

42. Ամեն մի բանական արարած, լինի տղամարդ թե կին, ունի սիրո գործարան, որով նրանք ընդունակ են բովանդակելու և՛



աստվածայինը, և՛ մարդկայինը: Ովքեր Աստծունն են, սիրում են Աստծունը, մարմնավորները սիրում են մարմնավորը: Աստծուն սիրողները իրենց սրտերը մաքրում են բոլոր ապականություններից և այս անցավոր աշխարհի գործերից, ատում են աշխարհը և իրենց սեփական հոգիները և վերցնելով խաչը՝ կհետևեն Աստծուն՝ ամեն ինչում գործելով Նրա կամքի համաձայն, որով էլ Աստված բնակվում է նրանց մեջ և պարգևում քաղցրություն և ուրախություն, որը սնում, հագեցնում և աճեցնում է հոգիները: Ինչպես ծառերը, եթե չջրվեն բնական ջրով, չեն կարող աճել, այդպես էլ, եթե հոգին չընդունի երկնային քաղցրությունը, չի կարող աճել: Աճում են միայն այն հոգիները, որոնք ընդունել են Հոգին և լիացած են երկնային քաղցրությամբ:

43. Ասացեք, որ դուք մեղավորներ եք և ողբացեք անհոգության վիճակում ձեր բոլոր արածները: Դրա համար Աստծո բարեհաճությունը ձեզ հետ կլինի և կգործի ձեր մեջ, քանզի Նա բարի է և թողություն է տալիս Իրեն դիմողների մեղքերին, ով էլ նրանք լինեն, այնպես որ այլևս դրանց մասին չի

*հիշի: Միայն Նա ուզում է, որ նրանք (ողորմության գտածները) իրենք հիշեն մինչ այդ կատարած իրենց մեղքերի ներման մասին, որպեսզի չլինի թե դրա մասին մոռանալով՝ իրենց վարքի մեջ թույլ տան այնպիսի բան, որի հետևանքով ստիպված լինեն պատասխան տալ նաև այն մեղքերի համար, որոնք արդեն ներվել են, ինչպես դա պատահեց այն ծառայի հետ, որին տերը թողեց ամբողջ պարտքը: Որովհետև երբ այդ ողորմության մասին մոռանալով՝ նա անարդար վարվեց իր ծառայակցի հետ, տերը նրանից պահանջեց նրա ունեցած ամբողջ պարտքը, որն արդեն ներվել էր, այն պատճառով, որ նա չխղճաց իր ծառայակցին և չթողեց նրան 100 դինարը՝ իրեն թողածի համեմատ չնչին այդ գումարը (Մատթ. 18, 23): Նայենք Դավիթ մարգարեին: Երբ նա մեղանչեց Ուրիայի կնոջ հետ, Նաթան մարգարեն նրան հանդիմանեց դրա համար և Դավիթ մարգարեն, լսելով հանդիմանությունը, անմիջապես զղջաց և խոնարհվեց: Ուստի Նաթան մարգարեն նրան ասաց. «Աստված արդեն ներեց քո մեղքերը» (Բ Թագ. 12, 13): Բայց Դավիթը, մեղքերի թողություն ստանալով, չէր մո-*



*ռանում դրանց մասին և դրանց հիշողությունը փոխանցեց սերունդներին: Դա արվեց սերնդեսերունդ հիշելու համար. «Անօրեններին կսովորեցնեմ քո ճանապարհը» (Սաղմ. 50, 15), ասում է նա, որպեսզի բոլոր մեղավորները սովորեն նրա օրինակից, նրա նման խոստովանեն իրենց մեղքերը և երբ ներում ստանան, չմոռանան դրանց մասին, այլ միշտ հիշեն: Նույն բանն ասաց Ինքն Աստված՝ Եսայի մարգարեի միջոցով. «Ե՛ս եմ, որ ջնջում եմ իմ հանդեպ կատարած քո անօրինությունները և քո մեղքերը այլևս չեմ հիշելու: Բայց դու հիշի՛ր» (Եսայի 43, 25-26): Նա ասաց նաև Երեմիա մարգարեի միջոցով. «Ինձ դարձի՛ր, ով Իսրայելի տուն, ձեր դեմ հավիտյան ոխ չեմ պահի, քանզի ողորմած եմ և քո վրա չեմ զայրանա հավիտյան: Բայց դու ամբարշտացար քո Տեր Աստծո դեմ և խոտորեցիր քո ճանապարհները, օտարների համար քո ճանապարհները տարածեցիր բոլոր սաղարթախիտ ծառերի տակ» (Երեմ. 3, 12-13): Այսպիսով, երբ Աստված ներում է մեր մեղքերը, մենք ինքներս մեզ չպիտի դրանք ներենք, այլ միշտ հիշենք՝ խոստովանությունը նորոգելու միջոցով:*

*44. Փառավոր է հոգևոր ճգնավորությունը, բայց շատ հակառակորդներ ունի: Ով ցանկանում է դրա մեջ կատարյալ լինել, նա ոչ մի վատ բանի չպետք է ծառայի: Ով ծառայում է ինչ-որ մի վատ բանի, նա հեռու է կատարելության սահմաններից:*

*45. Մեր Տեր Հիսուս Քրիստոսը Իր անըմբռնելի խոնարհության պատճառով ծածկեց Իր Աստվածությունը մարդեղությամբ այնպես, որ բոլորը Նրան նայում էին ինչպես մարդու, այն դեպքում, երբ Նա միայն մարդ չէր, այլ մարդեղացած Աստված, ինչպես գրված է. «Եվ Բանը մարմին եղավ և բնակվեց մեր մեջ» (Հովհ. 1, 14): Սակայն Տերը Իր Աստվածությունից դուրս չեկավ մարդեղանալու հետևանքով, ինչը Նրան անհրաժեշտ էր մեր փրկությունը կարգավորելու համար:*



*46. Շատերը իրենց անմտության պատճառով ասում են. «Մենք էլ ենք տեսել Հիսուս Քրստոսին, ինչպես առաքյալները». մինչդեռ երբ նրանք գտնվում են ինքնագայթակղման և հրապուրանքի մեջ և աչքեր չունեն, որպեսզի տեսնեն Աստծուն, ինչպես տեսան առաքյալները: Պողոս Առաքյալը տեսավ Աստծուն, ինչպես տեսել էին Նրա առաքյալները, որոնք Նրա հետ էին և որոնք հավատացին Նրան այն ժամանակ, երբ Նա քայլում էր երկրի վրա՝ ամբոխով շրջապատված լինելով հանդերձ, նայելով Նրան ինչպես մարդու: Երբ արյունահոսող կինը Նրան տեսավ սրտի աչքերով, հավատաց, որ Նա Աստված է, հավատով դիպավ Նրա հանդերձի ծայրին և անմիջապես ազատվեց հիվանդությունից: Նա հարցրեց՝ «Ո՞վ դիպավ ինձ» ոչ թե Նրա համար, որ չիմացավ, այլ որովհետև ցանկացավ ցույց տալ Նրա հավատը: Թեև Պետրոս Առաքյալն ասաց. «Ժողովուրդը սեղմում է Քեզ, իսկ Դու հարցնում ես, թե ով դիպավ Ինձ»: Բայց նա ինքը բացեց և խոստովանեց, թե ինչպես բժշկվեց: Այդ ժամանակ Աստված նրան ասաց. «Գնա՛, քո հավատը փրկեց քեզ» (Ղուկ. 8, 45-48): Աստծուն տեսան և՛ Պիղատոսը, և՛ Աննան, և՛ Կայիափան, բայց տեսան այնպես, ինչպես մնացած ամբոխը, որը Նրան նայում էր առանց հավատի, այլ այնպես, ինչպես նայում էին Նրան Առաքյալները, այդ պատճառով Նրան նայելուց ոչ մի օգուտ չստացան: Բայց Պողոս Առաքյալը տեսավ Նրան իր*

սրտի աչքերով և իր ուժեղ հավատքով, ինչպես Նրան տեսավ արյունահոսող կինը՝ հավատով դիպչելով Նրան և բժշկվելով:

47. Երբ մարդու մեջ դադարում է մեղքի թագավորությունը, այդ ժամանակ հոգու մեջ հայտնվում է Աստված և մաքրում է նրան մարմնի հետ միասին: Իսկ եթե մեղքի թագավորությունը ապրում է մարմնում, ապա մարդը չի կարող տեսնել Աստծուն, որովհետև իր հոգին գտնվում է մարմնի մեջ և նրա մեջ տեղ չկա լույսի համար, որը և Աստծո տեսությունն է: Դավիթն ասում է. «Երեսիդ լույսով ենք լույսը տեսնում» (Սաղմ. 35, 10): Դա ի՞նչ լույս է, որով մարդը տեսնում է լույսը: Դա այն լույսն է, որի մասին մեր Տեր Հիսուս Քրիստոսը հիշատակում է Ավետարանում, այսինքն որպեսզի մարդն ամբողջովին լուսավոր լինի և նրա մեջ խավարի ոչ մի մաս չլինի (Ղուկ. 11, 36): Աստված նաև ասաց. «Ոչ ոք չի ճանաչում Հորը, եթե ոչ Որդին և նա, ում Որդին ուզենա հայտնել» (Մատթ. 11, 27): Իսկ Որդին Իր Հորը հայտնի չի դարձնում խավարի որդիներին, այլ նրանց, ովքեր լույսի մեջ են և լույսի որդիներ են, որոնց սրտի աչքերը



Նա լուսավորել է պատվիրանների իմացությամբ:

48. Սաղմոսում գրված է. «Պիտի մտնեմ Աստծո տան սքանչելի հարկի տակ» (Սաղմ. 41, 5): Այդ «մտնեմ»-ը նշանակում է հետագա ճանապարհը և ցույց է տալիս մեզ հոգու կատարյալ տարիքը, որովհետև նա այստեղ արդեն մոտեցել է Աստծուն, մինչդեռ նրա առաջվա ճանապարհը դեռ շատ հեռու էր Աստծուց: Զգարմանանք, որ մեր ճանապարհը շատ հեռու է, որովհետև մենք տակավին հոգևոր մանկության մեջ ենք: Տեսնում ենք, որ նաև մեծ մարգարե Եղիային էլ ասվեց. «Վե՛ր կաց, կե՛ր, խմի՛ր և ամրապնդվի՛ր, որովհետև քո ճանապարհը դեռ երկար է» (Գ Թագ. 15, 17), (իսկ նա գնաց դեպի Աստվածատեսությունը): Այդ նույն երկար ճանապարհի մասին ասաց նաև Դավիթը. «Մեկն ինձ աղավնու թևեր տար, որ թռչելով բարձրանայի» (Սաղմ. 54, 7): Ուստի և պետք է այդ ճանապարհը անցնել ոչ թե անփութությամբ, տկարությամբ և ծուլությամբ, այլ ուշադրությամբ և եռանդով: Տիեզերական ուսուցիչ Պողոսը խորհուրդ է տալիս մեզ. «Այնպես վազեք, որ հասնեք», այ-

նուհետև ասում է. «Ճնշելով ամրացնում եմ իմ մարմինը և հնազանդեցնում այն» (Ա Կորնթ. 9, 27): Ուրեմն ջանանք, քանի դեռ ժամանակ ունենք, այս մարմնի մեջ հասնելու կատարելության, ինչպես հասավ դրան ինքը՝ սուրբ Պողոսը, որն ասում է. «Պատերազմեցի բարի պատերազմը, ավարտեցի ընթացքս, պահեցի հավատը: Եվ հիմա ինձ է սպասում արդարության պսակը» (Բ Տիմ. 4, 7-8):

49. Ինչպես մարմինը, քանի դեռ հոգին նրա մեջ է, երեք հասակ է անցնում, այն է՝ պատանեկություն, տղամարդություն և ծերություն, այդպես երեք հասակ է անցնում նաև մարմնում ծածկված հոգին, այն է՝ հավատքի սկիզբը, բարգավաճում և կատարելություն: Առաջին հասակում, երբ հոգին սկսում է հավատալ, նա ծնվում է Քրիստոսի մեջ, ինչպես ասվում է Ավետարանում: Սուրբ Հովհաննես Ավետարանիչը տվեց մեզ այդ նորածնության, ինչպես նաև միջին վիճակի և կատարելության նշանները, երբ ասաց. «Ես գրում եմ ձեզ՝ երեխաներ, գրում ձեզ՝ հայրեր, գրում եմ ձեզ՝ պատանիներ» (Ա Հովհ. 2, 12-14): Այդպես գրեց ոչ թե իր



մարմնավոր ընկերներին, այլ հավատացյալներին, արտահայտելով երեք վիճակներ, որոնցով անցնում են բոլոր նրանք, ովքեր ձգտում են մտնել հոգևոր ասպարեզ, որպեսզի հասնեն կատարելության և արժանանան շատ շնորհների:

50. Հոգևոր կյանքը սիրողները պետք է նմանվեն Հովսեփի մաքրությանը և ժուժկալությանը, պետք է իրենց կարգավորեն մտահայեցությամբ, զինվեն բոլոր վատ ցանկությունների դեմ՝ ուժգնորեն պաշտպանվելով խորամանկ թշնամուց, նրա մասին ասելով Հոբի խոսքերով. «Ահա նրա ուժը մեջքին է, զորությունը՝ որովայնի պորտի շուրջը» (Հոբ. 40, 11): Ուստի այն բոլոր մարմնական ցանկությունների դեմ պայքարողն ու զինվողը, որոնք սովորաբար առաջանում են ուտելիքի և ըմպելիքի ավելորդությունից, պետք է գոտեպնդվի խիստ ժուժկալությամբ, որպեսզի մաքրության մեջ մնա: Գրված է, թե Հակոբի հետ մենամարտող հրեշտակը ուժով սեղմեց նրա ազդրի ջիղը, ինչի պատճառով նրա մարմինը թմրեց և տկարացավ և նա կոչվեց Իսրայել, այսինքն՝ Աստծուն տեսանող (Ծննդ. 32, 25-

32)։ Նմանապես և մենք պետք է մեր մարմինը թմրեցնենք, որպեսզի սպանենք և հանգցնենք ցանկությունը, քանի որ մարմնի թմրեցումը մեզ հնարավորություն է տալիս կատարելության հասնել մաքրության առաքինության մեջ։ Երբ մարմինը ուժասպառ է լինում, հոգին ամրապնդվում է։ Ուրեմն նրբացնենք մեր մարմինը, որպեսզի մեզ կարգի մեջ պահելու ուժ ունենանք, որովհետև եթե խոնարհեցնենք մարմինը և ծառայեցնենք հոգուն, ապա մարմնավոր խորհուրդները, որոնց նկատմամբ սերը թշնամություն է Աստծո հանդեպ, մեռած կլինեն մարմինը մեռցնելու միջոցով։ Այդ ժամանակ կլուսավորվի հոգին և կդառնա Աստծո տաճար։ Ով ջանում է մաքուր լինել իր բոլոր անդամներով, նա իսկապես հոգևոր սխրագործ է։ Հենց նա էլ իր բոլոր զգացմունքները վարժեցնողն է, որ դրանց թույլ չի տալիս իշխել իր վրա, այլ կասեցնում է դրանք և մեծ մաքրությամբ խոնարհում Աստծո լծի տակ։ Նա իր աչքերին չի թույլատրում որևէ վատ բան տեսնել կամ ցանկությամբ նայել կնոջը, իր ականջներին չի թույլատրում բամբասանք կամ դիվային



խորհուրդներ և սատանայի ներմուծած մտքեր լսել, այլ իր շուրթերին կնիք է դնում և իր լեզվին թույլ չի տալիս դատարկ բաներ խոսել, իր ձեռքերը մեկնում է ուրիշներին գթասրտություն և օժանդակություն ցույց տալու համար, նրա ոտքերը ավելի արագ են Աստծո խոսքը կատարելու մեջ. «Եթե մեկը քեզ հարկադրի մի մղոն ճանապարհ անցնելու, նրա հետ երկու՛ էլ գնա» (Մատթ. 5, 41), որովայնն ու կուրծքը այնպես է պահում, որ դրանց պատճառով չսկսի սողալ գետնի վրա՝ որովայնի և կրծքի վրա սողացող օձի նման։ Այդպիսին է, եղբայրներ, վանականի ապրելակերպը։

51. Ով ցանկանում է դառնալ իսկական հոգևոր վանական, պետք է ջանա հեռու պահել իրեն աղմկոտ բազմությունից և չմոտենալ նրան, որպեսզի մարմնով, սրտով և մտքով դուրս լինի մարդկային իրարանցումից և շրջապտույտից, որովհետև որտեղ մարդիկ են, այնտեղ էլ իրարանցումն է։ Մեր Տերը ցույց տվեց մեզ մարդկանցից առանձնանալու և միայնության օրինակը, երբ միայնակ գնաց լեռն աղոթելու։ Անապատում նույնպես Նա հաղթեց սատանային, ո-

րը համարձակվում էր Նրա հետ մարտի մեջ մտնել: Իհարկե, Նա ի զորու էր սատանային հաղթելու նաև բազմության մեջ, բայց այդպես արեց, որպեսզի սովորեցնի մեզ, որ մենք առանձնության և լռության մեջ կարող ենք ավելի հեշտորեն պարտության մատնել թշնամուն և հասնել կատարելության: Տերը իր փառքը ևս աշակերտներին ցույց չտվեց մարդկանց մեջ, այլ բարձրացրեց լեռան վրա և այնտեղ ցույց տվեց: Մինչև Իսրայելին հայտնվելը Հովհաննես Նախավկան նույնպես անապատում էր: Աշխարհի մեջ թշնամու համար հեշտ է ճնշել մեզ իր ներքին և արտաքին միջոցներով. այնտեղ իր կողմը գրավելով որոշ մարդկանց, որպես իրեն լսող գործակիցներ և հպատակներ, նրանց միջնորդությամբ պայքար է մղում հավատացյալների դեմ: Մի որևէ խիստ անամոթ կին նրա համար շատ հզոր զենք է դառնում՝ լայն տարածելով իր հրապուրիչ ցանցերը: Երբ Եզեկիելը տեսավ չորս կենդանիներին, որոնք չորս դեմք ունեին և բոլորին ցույց էին տալիս Աստծո փառքը, ո՛չ քաղաքում էր, ո՛չ էլ գյուղում, այլ դուրսը՝ դաշտում, որովհետև Աստված



ասաց նրան. «Վե՛ր կաց, դու էլ այն դաշտը ելիր, այնտեղ քեզ հետ խոսելու եմ» (Եզեկ. 3, 22): Եվ ընդհանրապես այդպիսի տեսիլքներն ու հայտնությունները սրբերին հայտնվում էին ոչ այլ տեղերում, քան լեռներում և անապատներում: Երեմիա մարգարեն նույնպես իմանալով, թե ինչքան հաճելի է Աստծուն առանձնությունը, ասաց. «Մարդու համար լավ է, եթե իր մանկությունից կրի խոնարհության լուծը: Միայնակ ու լռիկ նա կնստի իր տանը (Ողբ 3, 27-28): Լավ իմանալով նաև, թե մարդկային համբավը որքան վնաս է բերում նրանց, ովքեր ցանկանում են հաճելի լինել Աստծուն, իրեն չզսպեց, որ չասի. «Ով կտար ինձ անապատում մի խղճուկ օթևան, որ ես թողնեի իմ ժողովրդին և հեռանայի նրանցից» (Երեմ. 9, 2): Եղիա մարգարեն նույնպես արժանացավ հրեշտակից ուտելիք ստանալու և դա ժողովրդի բազմության մեջ չեղավ, ո՛չ քաղաքում, և ո՛չ շենում, այլ անապատում: Սրբերի հետ կատարված այս և նման բաները գրված են մեզ համոզելու, որ նմանվենք նրանց, ովքեր սիրեցին միայնությունը, որովհետև դա մեզ կմոտեցնի Աստծուն: Ուս-

տի և ջանացե՛ք հաստատվել դրա մեջ ինչպես հարկն է, որպեսզի հասնեք Աստծո տեսությանը, որն էլ ամենահոգևոր հայեցությունն է:

52. Ուզում եմ ձեզ ասել նաև, թե ինչի է նման այն հոգին, որի մեջ բնակվում է Աստծո հուրը: Նման է երկթև թռչնի, որը շատ վեր է սլանում երկնային օդով թռչելով: Բոլոր արարածներից միայն թռչուններին են հատուկ թևերը, որպես նրանց առանձնահատկություն, իսկ Աստծուն հնազանդվողների հոգու թևերը Աստծո հուրն են, որոնցով նա կարող է ճախրել վեր՝ դեպի երկինք: Իսկ եթե զրկվի այդ թևերից, ապա վեր սլացնող այդ կրակին անհաղորդ՝ ի վիճակի չի լինի երկինք բարձրանալ, քանզի կլինի իր թևերից զրկված թռչնի նման, որը չի կարող թռչել: Բացի դրանից, մարդու հոգին թռչունի է նման նաև այն դեպքում, որ թռչունի ծնվելու պատճառը ջերմ արյունն է, որովհետև եթե թռչունը թուխս չնստի ձվերի վրա և չտաքացնի, ապա դրանցից կենդանի թռչուններ դուրս չեն գա, որովհետև նրանք այլ կերպ չեն կարող առաջանալ, քան ջերմության միջոցով: Այդպես էլ Աստված,



գրկելով և տաքացնելով, նրանց զարթնեցնում է հոգևոր կյանքի համար: Հասկանալով, որ հոգին Աստծուն փարվելով և Նրան հնազանդվելով նմանվում է թռչունի, որի գոյության աղբյուրը ջերմությունն է, ոչ մի դեպքում թույլ մի՛ տվեք զրկվել այդ ջերմության ուժից: Իմացե՛ք, որ Աստծուց ձեզ պարգևված այդ հրի պատճառով ձեզ համար սատանան շատ մարտեր է պատրաստում, որպեսզի ձեզ զրկի դրանից՝ լավ իմանալով, որ քանի դեռ ձեր մեջ այդ կրակը կա, նա ոչ մի կերպ ձեզ հաղթել չի կարող:

53. Սատանային հակառակ կանգնեք և ջանացեք ճանաչել նրա խարդավանքները: Նա իր դառնությունը սովորաբար ծածկում է քաղցրության անվան տակ, որպեսզի չբացահայտվի և արտաքինից տարբեր տեսակի գեղեցիկ խաբկանքներ է սարքում, որոնք, սակայն, գործնականում բոլորովին էլ այդպիսին չեն, որպեսզի գրավի ձեր սրտերը՝ խորամանկությունը նմանեցնելով ճշմարտությանը, որը չափազանց հրապուրիչ է: Այդ նպատակի համար են նրա բոլոր հմտությունները, որպեսզի ամբողջ ուժով հակառակ կանգնի Աստծուն լավ ծառայող

յուրաքանչյուր հոգուն: Նաև բազում և ամենատարբեր կրքեր է առաջացնում հոգու մեջ Աստվածային հուրը մարելու համար, որի մեջ է ամբողջ զորությունը, հատկապես նվաճում է մարմնի հանգստությամբ և դրա հետ կապված մյուս բաներով: Իսկ երբ վերջապես տեսնում է, որ նման ամեն ինչից զգուշանում են և իրենից ոչինչ չեն ընդունում և ոչ մի հույս չեն տալիս, որ երբևէ կլսեն իրեն, ամոթով հետ է քաշվում նրանցից: Այդ ժամանակ բնակվում է նրանց մեջ Աստծո Հոգին: Իսկ երբ նրանց մեջ Աստծո Հոգին է բնակվում, ապա նրանց հանգստություն է տալիս կամ հանգիստ վայելել բոլոր գործերում և քաղցր է դարձնում Աստծո լուծը կրելը, ինչպես գրված է Ավետարանում. «Ձեզ համար հանգիստ պիտի գտնեք» (Մատթ. 11, 29), թեև նրանք վերցրել են և կրում են Նրա լուծը: Այդ ժամանակ նրանք անձանձիր կդառնան ինչպես առաքինության գործերի, այնպես էլ հնազանդության և գիշերային հսկումների մեջ, չեն բարկանա մարդկային զրպարտությունների դեպքում, ոչ ոքից չեն վախենա՝ ո՛չ մարդուց, ո՛չ գազանից, ո՛չ ոգուց, որովհետև



Աստվածային ուրախությունը զօրուգիչեր նրանց մեջ կլինի, կպայծառացնի նրանց միտքը և կկերակրի նրանց: Հոգին այդ ուրախությամբ կաճի և ամեն ինչի համար պիտանի կլինի կամ կատարյալ և նրանով երկինք կբարձրանա:

54. Տեսնում ենք, որ երեխան սկզբում մեծանում է մայրական կաթով, այնուհետև ուրիշ ուտելիքով, իսկ վերջապես այն ամենով, ինչով սովորաբար սնվում են բոլոր մարդիկ: Այդպես նա դառնում է ամուր, արիանում է և նրա սիրտը համարձակորեն հանդիպում է թշնամիներին, երբ ցանկանում են հարձակվել նրա վրա: Բայց եթե մանուկ ժամանակ ինչ-որ հիվանդության մեջ է ընկնում, ապա նրա սնուցումն ու ամրապնդումը բարեհաջող չի լինում, նա թույլ է դուրս գալիս և յուրաքանչյուր թշնամի հաղթում և պարտության է մատնում նրան: Որպեսզի նա առողջ լինի և թշնամուն հաղթելու ուժ ստանա, հարկավոր է օգուտ քաղել փորձառու բժշկի օժանդակությունից և հոգատարությունից: Այդպես էլ մարդկային հոգին, եթե նրա մեջ չկա աստվածային ուրախություն, թույլ է լինում և բազում վերքեր է

ստանում: Եթե նա ջանում է գտնել Աստծուն ծառայող և հոգևոր բժշկության մեջ փորձառու մի մարդու և կպչել նրան, ապա վերջինս նախ բուժում է կրքերից, այնուհետև վերակենդանացնում և սովորեցնում, թե ինչպես Աստծո օգնությամբ ուրախություն ստանա այն բանից, ինչը նրա կերակուրն է: Այդ ժամանակ նա հակառակ կկանգնի իր թշնամիներին, որոնք չար ոգիների էությունից են,նրանց կհաղթի և ոտնակոխ կանի նրանց խորհուրդները և կատարելագործվելով՝ նորից կցնծա ուրախությամբ:

55. Փախե՛ք չար սատանայի խորհուրդներից, երբ նա կգա ճշմարտախոսի տեսքով, որպեսզի գայթակղի ձեզ և մոլորության մեջ գցի: Թեկուզ գա լույսի հրեշտակի կերպարանքով, մի՛ հավատացեք և մի՛ լսեք նրան, որովհետև հրապուրում է ճշմարտության գրավիչ տեսքով: Անկատարները չգիտեն սատանայի տվյալ խորամանկության այն ամենի մասին, ինչ մշտապես գետեղում է նրանց մեջ, իսկ կատարյալները գիտեն, ինչպես ասում է Առաքյալը. «Իսկ պինդ կերակուրը հասուն մարդկանց համար է, որոնց զգայարանները, քանի որ նրանք չափահաս



են, վարժ են լավը և վատը որոշելու մեջ» (Եբր. 5, 14): Թշնամին նրանց չի կարող գայթակղել, բայց այն հավատացյալներին, որոնք քիչ ուշադրություն են դարձնում իրենց վրա, հեշտությամբ գայթակղում է իր արտաքին տեսքով հաճելի երևացող հրապուրանքով և գրավում է նրանց, ինչպես ձկնորսն է ձկանը որսում՝ կարթի ծայրին խայծ դնելով: Ձուկը չգիտի, որ կարթի վրա խայծ է դրված , այդ պատճառով լողալով մոտենում է, կուլ տալիս խայծը և անմիջապես գերի է ընկնում: Եթե ձուկը իմանար, որ այդ խայծով պիտի որսվի, անկասկած չէր մոտենա, այլ կփախչեր: Ինչպես ասացինք, թշնամին այդպես նաև անկատար հավատացյալներին է հրապուրում կատարյալ մատչելիության պատճառով, ինչպես ասում է Սողոմոնը. «Ճանապարհներ կան, որ մարդու աչքին ուղիղ են թվում, բայց նրանց վերջավորությունը տանում է դեպի դժոխքի հատակը» (Առակ 16, 25): Նաև Ամոս մարգարեն է գրում. «Տերն ասաց, - Ի՞նչ ես տեսնում, Ամոս: - Ես ասացի, - Թռչնորսների գործիք» (8, 2): Թռչունը գետնի վրա բռնվելու սարսափից օդ է բարձրանում և

հանգստի ու քնելու համար բույն շինում ամենաբարձր տեղերում, այնտեղ նա քնում է անվտանգ, իմանալով, որ ոչ ոք չի կարող հասնել կամ բռնել իրեն: Բայց հայտնի է, թե ինչպես է թռչնորսը կարողանում խաբել նրան. գալիս է այդ տեղը, ցանցը փռում և սերմի տեսքով ինչ-որ բան ցանում, այդ կերակուրով գայթակղում է թռչունին բարձրությունից, թռչունը իջնում է և որսվում: Նույնն է անում և սատանան, անկատար քրիստոնյաներին հրապուրելով իր խորամանկությամբ և նրանց իրենց բարձրությունից ցած գլորելով: Նա այդպես գործեց, երբ օձի կարպարանք ստացավ և ասաց Եվային. «Ձեք մահանա, որովհետև Աստված գիտե, որ այն օրը, երբ դրանից ուտեք, կբացվեն ձեր աչքերը և դուք կլինեք աստվածների նման՝ կիմանաք բարին և չարը» (Ծննդ. 3, 4-5): Այդ խոսքերը լսելով՝ Եվան սրտով համաձայնվեց նրա հետ և մտածեց, որ դա է ճշմարտությունը, որովհետև չմտածեց ինչպես հարկն է: Բայց երբ ինքը կերավ և տվեց Ադամին ուտելու, այդ ժամանակ նրանց հետ պատահեց այդ մեծ դժբախտությունը. նրանք երկուսով էլ ընկան իրենց բարձունքից: Սատանան նույն կերպ է վարվում նաև անկատար քրիստոնյաների հետ, երբ չիմանալով, թե ինչպես տարբերել բարին չարից, նրանք շարժվում են իրենց մտադրության համաձայն՝ բավարարվելով իրենց դատողությամբ և կարծիքով, երբ չարը բարուց տարբերող կատարյալ հայրերից չեն հարցնում, այլ հետևում են իրենց սրտի ցանկությանը, մտածելով, որ իրենք էլ են արդեն հասել կատարելության և ստացել հայրերի օրհնությունը: Այդպիսիները նման են այն թռչուններին, որոնք իրենց բույնը կառուցել են բարձունքի վրա, բայց ցած են իջել գետնի վրա, ընկել են թռչնորսների ցանցի մեջ և բռնվել: Նույնն է պատահում նաև նրանց հետ, որովհետև նրանք ինքնավստահության մեջ գործում են ըստ իրենց սրտի միտումների և կատարում են իրենց ցանկությունը, չլսելով հայրերին և նրանց հետ չխորհրդակցելով: Այդ պատճառով սատանան նրանց համար տեսիլքներ է սարքում և նրանց սիրտը հպարտությամբ է լցնում, երբեմն նրանց գիշերները երազ է ցույց տալիս, որը նրանց համար ցերեկը կատարվում է, որպեսզի նրանց մեծ խաբեության մեջ

գցի: Սա դեռ քիչ է, նա երբեմն գիշերները լույս է ցույց տալիս, այնպես, որ նրանց կեցած տեղը լուսավոր է դառնում և նման շատ բաներ է անում, նույնիսկ իբրև թե նշաններ: Այս ամենը նրա համար է անում, որ նրանք իր վերաբերյալ հանգիստ մնան՝ մտածելով, որ նա Հրեշտակ է, և ընդունեն նրան: Նրանք ինչքան շուտ են նրան ընդունում այդ իմաստով, նա այնքան շուտ է նրանց ցած գցում բարձունքից նրանց հպարտության ոգու պատճառով: Նա փորձում է նրանց պահել այն համոզմունքի մեջ, որ շատերից առավել մեծ և փառավոր են դարձել և կարիք չունեն դիմել հայրերին և լսել նրանց: Մինչդեռ նրանք, ըստ գրվածի, իսկապես շողշողուն ողկույզի էությունից են, բայց խակ և տտիպ: Հայրերի խրատները նրանց համար ծանր են, որովհետև վստահ են, որ իրենք արդեն ամեն ինչ գիտեն:

56. Հաստատ իմացեք, որ չեք կարող առաջադիմել կամ աճել և կատարյալ դառնալ, ճշտորեն տարբերել բարին չարից, եթե չհնազանդվեք ձեր հայրերին: Ձեր հայրերը այդպես վարվեցին, հնազանդվեցին իրենց հայրերին և լսեցին նրանց խրատները, դրա



համար առաջադիմեցին, աճեցին և իրենք դարձան ուսուցիչներ, ինչպես գրված է Սիրաքի Իմաստության մեջ. «Մի՛ հեռացիր ծերերի պատմություններից, որովհետև նրանք էլ սովորել են իրենց հայրերից, դու էլ կսովորես նրանցից խոհեմություն և թե որ դեպքում է հարկավոր խորհուրդ տալ» (Սիրաք. 8, 11-12): Ուրեմն դուք էլ պետք է նմանվեք նրանց, ովքեր հնազանդ էին իրենց հայրերին և որոնց հայրերը Աստծո օգնությամբ սովորեցրին ամեն ինչ, որ սովորել էին իրենց հայրերից և ինչը հանձնեցին իրենց հնազանդ որդիներին: Այդպես Իսահակը լսեց Աբրահամին, Հակոբը՝ Իսահակին, Հովսեփը՝ Հակոբին, Եղիսեն՝ Եղիային, Պողոսը՝ Անանիային, Տիմոթեոսը՝ Պողոսին: Նրանք բոլորը և նրանց նմանները լսում էին իրենց հայրերին, կատարում նրանց կամքը և հետևում էին նրանց խորհուրդներին, դրա համար էլ ճանաչեցին ճշմարտությունը, սովորեցին արդարությունը և վերջապես արժանացան Սուրբ Հոգուն և այդ ձևով դարձան ամեն մի ճշմարտության նախագուշակ, ինչպես գրում է Եզեկիել Մարգարեն. «Ես քեզ դետ կարգեցի Իսրայելի այդ տանը. դու ին-

ձանից պատգամներ ես լսելու և իմ անունից սպառնալու ես նրանց» (Եզեկ. 3, 17): Ուրեմն, եթե ցանկանում եք առաջադիմել կատարյալ հասակով, ձեր սրտերի մեջ դարձեք անխռով և ոչ մի բանի մեջ սատանային ծաղրելի մի՛ եղեք , հնազանդվե՛ք ձեր Հայրերին և ամեն ինչում նրանց լսեցեք ու երբեք մի ընկրկեք:

57. Ես ձեզ մատնացույց կանեմ այն գործը, որը մարդուն դարձնում է բարու մեջ հաստատուն և սկզբից մինչև վերջ նրան այդպես է պահում, այն է՝ սիրեք Աստծուն ձեր ամբողջ հոգով, ձեր ամբողջ սրտով և մտքով և միայն Նրան ծառայեք: Այդ ժամանակ Աստված ձեզ մեծ զորություն կտա և Աստծո բոլոր գործերի ուրախությունը ձեզ համար մեղրի պես քաղցր կդառնա, բոլոր մարմնական դժվարությունները, մտավոր հոգսերը և հսկումները և Աստծո ամեն տեսակ լուծը ձեզ համար թեթև և հաճելի կլինի: Ի դեպ, Աստված մարդկանց հանդեպ Իր սիրո պատճառով երբեմն նրանց վրա հակառակություններ է ուղարկում, որպեսզի չմեծամտանան, այլ սխրագործությունների մեջ մնան. և նրանք արիության փոխարեն ծան-



րություն և թուլություն են զգում, ուրախության փոխարեն՝ տխրություն, հանդարտության և խաղաղության փոխարեն՝ վրդովմունք, քաղցրության փոխարեն՝ դառնություն, նման շատ ուրիշ բաներ են պատահում Աստծո սիրելիների հետ: Բայց պայքարելով դրանց դեմ և հաղթանակելով, նրանք ավելի ու ավելի ամուր են դառնում: Իսկ երբ վերջապես բոլորովին հաղթահարում են այդ ամենը, այդ ժամանակ Սուրբ Հոգին ամեն ինչում սկսում է նրանց հետ լինել, այդ ժամանակ նրանք այլևս չեն վախենում ոչ մի վատ բանից:

58. Սուրբ Հոգին անդադար հաճելի, քաղցր և մարդկային լեզվի համար անբացատրելի անուշահոտություն է բուրում: Բայց ո՞վ գիտե Հոգու այդ հաճելիությունը և Նրա քաղցրությունը, բացի նրանցից, ովքեր արժանացել են այն բանին, որ Նա բնակվի նրանց մեջ: Սուրբ Հոգին ապաշխարողների հոգում բնակվում է ոչ այլ կերպ, քան բազմաթիվ ջանքերից հետո: Նման բազմաթիվ բաներ ենք տեսնում նաև այս աշխարհում. օրինակ՝ թանկարժեք քարերը այլ կերպ չեն ձեռք բերվում, քան մեծ դժվա-

րությամբ: Փնտրելով այդ Հոգին՝ սրբերը գտան Նրան և հենց Նա է իսկական թանկարժեք մարգարիտը, ինչի մասին հիշվում է Սուրբ Ավետարանում (Մատթ. 13, 45-46), ազնիվ մարգարիտներ փնտրող վաճառականի առակի մեջ, որը, մի թանկարժեք մարգարիտ գտնելով, գնաց, վաճառեց իր ունեցվածքը և գնեց այն: Դարձյալ՝ երկնքի արքայության մասին է ասվում արտում թաքցված գանձի առակի մեջ, որը գտնելով՝ մարդը թաքցնում է հողում և ուրախությունից գնում վաճառում է ամբողջ ունեցվածքը և գնում է այդ արտը (Մատթ. 13, 44): Գայթակղությունները ոչ ոքի վրա այնքան ուժգին չեն հարձակվում, որքան նրանց, ովքեր ստացել են Սուրբ Հոգին: Մեր Տերը ևս, երբ մկրտության ժամանակ Սուրբ Հոգին աղավնու տեսքով իջավ Նրա վրա և անապատ տարվեց սատանայից փորձվելու, որը փորձեց Նրան իր բոլոր գայթակղություններով, բայց Նրա դեմ ոչինչ չկարողացավ անել, ինչպես գրված է այդ մասին Ղուկասի Ավետարանում. «Եվ սատանան կատարած լինելով բոլոր փորձությունները՝ Նրանից միառժամանակ հեռու մնաց» (Ղուկ. 4, 13): Իսկ



Տեր Հիսուսը վերադարձավ Գալիլեա Հոգու զորությամբ: Այդպես էլ Հոգին ընդունածներին, պայքարողներին և հաղթողներին Սուրբ Հոգին ամրապնդում և զորություն է տալիս հաղթահարելու բոլոր գայթակղությունները:

59. Այն Սերովբեն, որին տեսավ Եզեկիել մարգարեն (Եզեկ. 1, 4-9), հավատարիմ հոգիների կերպարանքն էր, որոնք աշխատում են կատարելության հասնել: Նա չորս թևեր ուներ ու չորսն էլ լիքն էին աչքերով (Եզեկ. 1, 18): Ուներ նաև չորս կողմերը նայող չորս դեմք, մի դեմքը նման էր մարդու դեմքի, մյուսը՝ եզան, երրորդը՝ առյուծի, չորրորդը՝ արծվի: Սերովբեի առաջին դեմքը մարդկային դեմքն է, որ ցույց է տալիս հավատարիմներին, ովքեր, ապրելով աշխարհում, կատարում են իրենց վրա դրված պատվիրանները: Եթե նրանցից մեկը վանական է դառնում, ապա նմանվում է եզան դեմքին, որովհետև վանականության կանոնները կատարելու համար ծանր աշխատանք է կրում և կատարում է մարմնական առավել ծանր սխրանքներ: Իսկ ով, կատարելագործվելով միաբանության կարգի մեջ, մենաստան է

գնում և պայքարի մեջ է մտնում աներևույթ դևերի հետ, նա նմանվում է առյուծի՝ վայրի գազանների արքայի դեմքին: Իսկ երբ նա հաղթի աներևույթ թշնամիներին և իշխի կրքերի վրա և դրանք ենթարկի իրեն, այդ ժամանակ Սուրբ Հոգով վեր կբարձրանա և կտեսնի Աստվածային տեսիլքներ, նա կնմանվի արծվի դեմքին, նրա միտքը այդ ժամանակ վեց կողմերից կտեսնի այն ամենը, ինչ կարող է պատահել իրեն՝ դրանով նմանվելով աչքերով լցված չորս թևերին: Նա այդպես կդառնա լիակատար հոգևոր Սերովբե և կժառանգի հավիտենական երանությունը:

60. Մաքրությունը, անդադար և մշտական խաղաղությունը, կատարյալ գթասրտությունը և մյուս գեղեցիկ առաքինությունները, որոնք օրհնությամբ են պսակվում, Աստծո պատվիրանների էությունից են: Ջանացե՛ք կատարել Հոգու այդ պատգամները, որոնցով կվերակենդանանան ձեր հոգիները և որոնց միջնորդությամբ կնդունեք Աստծուն ձեր մեջ, դրանք են բուն անվտանգ ճանապարհները: Առանց մարմնի և սրտի մաքրության ոչ ոք չի կարող կատար-



յալ լինել Աստծո առաջ, ինչի համար Սուրբ Ավետարանում ասված է. «Երանի նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն (Մատթ. 5, 8): Կատարելությունը ծնվում է սրտի մաքրությունից: Սրտի մեջ բնակվում են բնական բարին և անբնական չարը: Չարությունից առաջանում են հոգու կրքերը, ինչպիսիք են ուրիշին դատելը, ատելությունը, մեծամտությունը և նման մյուս բաները: Իսկ բարին (բնական սերը) ծնում է Աստծո ճանաչումը (Աստծո երկյուղը) և սրբությունը կամ հոգու մաքրությունը բոլոր կրքերից (խիղճ): Եթե մարդը որոշում է ուղղվել և սկսում է փախչել ամեն տեսակի չարությունից, նրա դեմ զինվելով սխրագործություններով՝ լացով, տխրությամբ, հոգոցներով, պահքով, հսկումներով, աղքատությամբ և Աստծուն ուղղված բազմաթիվ աղոթքներով, ապա Աստված իր շնորհաբաշխությամբ կօգնի նրան և կազատի բոլոր հոգեկան կրքերից: Շատերը, երկար ժամանակ ապրելով վանականության և կուսակրոնության մեջ, չսովորեցին մաքրության այդ դասը, որովհետև արհամարհելով հայրերի խրատները՝ հե-

տևեցին իրենց սրտի ցանկությանը, ինչի պատճառով նրանց վրա իշխեցին չար ոգիները՝ հոգեառները՝ գաղտնի նետերով գիշեր-ցերեկ հարվածելով նրանց և ոչ մի տեղ հանգիստ չտալով, այնպես, որ նրանց սրտերը զբաղված են մե՛կ հպարտությամբ, մե՛կ մնափառությամբ, մե՛կ անմաքուր նախանձով, մե՛կ մեղադրանքով, մե՛կ վեճերով և ուրիշ բազմաթիվ կրքերով: Այդպիսիներին բաժին կհասնի այն,ինչ պատահեց հինգ հիմար կույսերի հետ, քանզի անմտորեն են անցկացնում իրենց ամբողջ ժամանակը, չեն սանձում իրենց լեզուները, իրենց աչքերն ու մարմինը մաքուր չեն պահում ցանկությունից և իրենց սիրտը՝ ապականությունից և լացի արժանի մյուս բաներից, որովհետև նրանք անմաքուր են, բավարարվելով միայն կտավատախոտ զգեստով, որը կուսակրոնության սոսկ արտաքին պատկերն է, ուստի զրկվում են նաև իրենց լապտերները վառելու համար երկնային յուղից և Փեսան նրանց առջև երբեք չի բացի Իր ապարանքի դռները և նրանց կասի, ինչպես ասաց հիմար կույսերի առակի մեջ. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում» (Մատթ.



25, 12): Այս գրում եմ ձեզ փրկելու ցանկությամբ, որպեսզի դուք դառնաք ազատ և հավատավոր և Քրիստոսի մաքուր հարսեր, Ով բոլոր հոգիների Փեսան է, ինչպես ասում է Պողոս Առաքյալը. «Ձեզ նշանեցի մի մարդու՝ որպես մի անբիծ կույս Քրիստոսին ներկայացնելու համար» (Բ Կորնթ. 11, 2):

61. Ոսկին բազմիցս մաքրվում է կրակով, որպեսզի սաստիկ մաքրվելու միջոցով այն ավելի լավը դառնա: Նույնպես և մեր Տերը Իր բարեգթությամբ մարդուն մաքրում է բազմաթիվ փորձություններով, փորձում է և հմուտ է դարձնում նրան սրտի պատերազմ մղելու համար, այնպես, որ նա մտքերով և հիշողությամբ այլևս չի վերադառնում այն անարդարությանը և անարգանքներին, որոնց ենթարկել են նրան մարդիկ, այլ խոնարհվում է Աստծո առաջ և Նրա վրա է դնում իր ողջ հույսը՝ միշտ պատրաստ լինելով հանդերձ Աստծո ամեն տեսակի բարի գործերի, ինչպես ասաց Դավիթ Մարգարեն. «Պատրաստ է սիրտն իմ, Աստված, պատրաստ է սիրտն իմ՝ օրհնելու և սաղմոսերգելու Քեզ իմ փառաբանությամբ» (Սաղմ. 107, 2): Մտքում պահեք, որ

դուք պիտի փորձվեք մի որևէ եղբոր կողմից անարգանքի և անարդարության միջոցով կամ նվաստացման ենթարվեք ձեր աշխատակիցներից: Այդ պատճառով, եթե ձեր հետ նման մի բան պատահի, ամուր կանգնե՛ք և մի՛ վախեցեք, մի՛ վհատվեք, այլ գոհություն մատուցեք Աստծուն այդ ամենի համար, որովհետև առանց Նրա ոչ մի նման բան տեղի չի ունենում, իսկ Նրա կողմից թույլ է տրվում այն պատճառով, որ Աստծո ծառաների համար անհրաժեշտ է փորձվել պատերազմով, որովհետև ով Աստծո ողորմածությամբ չփորձվի փորձություններով, աշխատանքներով, վշտերով և դժվարություններով, մինչև չսովորի բոլոր դեպքերում համբերությամբ հաստատուն մնալ բարու մեջ, Նրանից պատիվ չի ստանա:

62. Համբերությամբ կրեք դժբախտությունները ու վշտերը, ինչ որ ձեզ հետ պատահի և դրանց համար գոհություն հայտնեք Աստծուն մեծ խոնարհությամբ և կճաշակեք ձեր աշխատանքի ուրախությունը պատերազմի մեջ քաջ և երանելի Շուշանի նման, որը արհամարհեց այն երկու անօրեն ծերերի վավաշոտությունը և նրանց սուտ



գրպարտանքների պատճառով շատ դժբախտություններ ու վշտեր կրեց, բայց որին Աստված իր համբերատարության և աներերության համար Նրա սխրագործության վերջում վեր բարձրացրեց, իսկ իր թշնամիներին խոնարհեցրեց: Ճիշտ այդպես եղավ և Թեկղեի հետ,որ ավելի անվեհեր էր հոգով, որ չվախեցավ իր ծնողների պատճառած վերքերից, ո՛չ կրակից, ո՛չ մարմնի պատառոտվելուց, ո՛չ գազաններից և որին Աստված վերջապես պարգևեց սրտի ուրախություն և ջանքերին հատուցում, երբ Նրա անվեհեր հավատքը մարեց հուրհրացող կրակը, փակեց արյունարբու առյուծի բերանը և խայտառակեց Նրա բոլոր թշնամիներին. այդպես եղավ և Աստծո ու մարդկանց առաջ խոնարհ Հովսեփի հետ. երբ հայրը Նրան գերադասություն տվեց,եղբայրները, նախանձելով և ատելով Նրան, ցանկացան հեղել Նրա արյունը, սակայն Աստվածային օգնությունը փրկեց մահից: Նախանձից հաղթվելով՝ Նրանք ստրկության վաճառեցին Նրան, որտեղ տիրոջ կինը, որին ծառայում էր, շատ դժբախտություններ պատճառեց Նրան և այն աստիճանի հասցրեց, որ

նույնիսկ բանտ գցեցին, բայց Աստված չլքեց նրան: Քանզի նա ժուժկալ էր, հեզ, մաքուր էր հոգով և անարատ մարմնով ու այդ բոլոր դժբախտությունների ծանրությունից չընկավ Աստծո կողմից օրհնված լինելու շնորհիվ, կրեց այդ բոլորը համբերությամբ՝ հույսը դնելով Տիրոջ վրա: Եվ Աստված վերջապես մեծարեց նրան, դարձնելով Եգիպտոսի և նրա բոլոր մարզերի գլխավորը, և նրան ատող բոլոր եղբայրներին հնազանդեցրեց նրա ոտքերի առաջ: Այս հիշատակված անձինք և նրանց նմանները Աստծուց բնավ երբեք պատիվ չստացան իրենց սխրագործության սկզբում և պայքարի ժամանակ, այլ միայն այն բանից հետո, երբ Նա փորձեց նրանց, մաքրեց դժբախտություններով ու վշտերով և սովորեցրեց ինչպես հարկն է հաստատուն մնալ պատերազմի ժամանակ: Եվ երբ տեսավ, որ նրանք արիաբար կրում են դժբախտություններն ու վշտերը և Աստծո վրա են դնում իրենց հույսը, միայն այդ ժամանակ պատիվ տվեց նրանց Իր Աստվածային օգնությամբ, իսկ ատողներին խայտառակեց և հնազանդեցրեց նրանց առաջ:



63. Համբերատար եղե՛ք և թույլ մի՛ տվեք, որ ձեր սրտերը տկարանան ձեր դժբախտությունների ժամանակ, այլ գոհություն մատուցեք դրանց համար, որպեսզի Աստծուց հատուցում ստանաք: Թող ձեր բոլորի մեջ խաղաղություն, ճշմարտություն, Աստծո սեր և փոխադարձ բարեհաճ տրամադրություն լինի, և թող ձեր մեջ երկպառակություն չլինի, ո՛չ գրպարտություն, ո՛չ հակասություն, ո՛չ չար նախանձ և ո՛չ անհնազանդություն, ո՛չ հպարտություն, ո՛չ վիրավորանք որևէ մարդու, ո՛չ ծաղր, ո՛չ փոխադարձ անընկերասիրություն: Որ բնակատեղում այդպիսի գործեր են լինում, այդտեղ հայտնվում է Աստծո բարկությունը: Բացի դրանից, իմացե՛ք, որ մեր կյանքը այս աշխարհում շատ կարճ է, ուստի խնայեք այն և մի վատնեք անհոգության մեջ, որպեսզի այս կյանքից տեղափոխվելու ժամը վրա չհասնի այն պահին, երբ դուք բարկանում եք միմյանց վրա, հետևաբար, ըստ գրվածի պետք է մարդասպան համարվի. «Ամեն ոք, ով ատում է եղբորը, մարդասպան է» (Ա Հովհ. 3, 15): Գթացե՛ք միմյանց, թող ողորմի ձեզ Աստված: Քանզի դա հենց

Ինքն է ներշնչում, երբ ասում է. «Ներեցե՛ք և ներում պիտի գտնեք» (Ղուկ. 6, 37): Եթե ձեզանից մեկը գրպարտություն կրի, թող դա ուրախությամբ ընդունի և իրեն ամբողջովին Աստծուն հանձնի, Որը արդար Դատավոր է և Պարգևատու: Իսկ ով մերձավորի նկատմամբ գրպարտություն անի, թող չտապի խոնարհեցնել իրեն Աստծո առաջ և ներում խնդրի իր մերձավորից և Աստված կողորմի նրան: Թույլ մի՛ տվեք, որ արեգակը մայր մտնի ձեր բարկության ժամանակ, ինչպես ուսուցանում է մեզ Գիրքը (Եփես. 4, 26), այլ արմատախիլ արեք ձեր սրտերից ձեզ տանջող չար խորհուրդները, ինչպիսին ունեք միմյանց նկատմամբ, որպեսզի այդ կերպ ոչնչացնեք ամեն մի անընկերասիրության սաղմ, որի արմատները ատելությունն ու նախանձն են: Այս երկու կրքերը ամենաչար բաներն են՝ ատելի և՛ Աստծուն, և՛ մարդկանց, և ոչ մի կերպ հարիր չէ,որ դրանք լինեն հավատացյալներից կամ Աստծո ծառաներից որևէ մեկի վրա: Այդ պատճառով թող ձեզանից ոչ ոք չպարծենա իր չափազանց անմտության մեջ և թող չասի, թե եղբոր վրա իշխանություն է ձեռք բերել.



նրան ոչ մի ներում չի լինի: Թող այդպես ասողն ու մտածողն իմանա, որ իր հոգին հանձնել է մահվան ձեռքը և ժառանգությունը լինելու է լացը և ատամների կրճտոցը, անկուշտ որդը և անշեջ հուրը:

64. Արթնանանք քնից, քանի դեռ գտնվում ենք այս մարմնի մեջ, հառաչենք մեզ համար և գիշեր- ցերեկ ողբանք մեզ համար ամբողջ սրտով, որպեսզի ազատվենք այդպիսի սարսափելի տանջանքներից, հառաչանքներից, լացից և ծանրությունից, որոնց վերջ չի լինի: Զգուշանանք գնալ ընդարձակ դռնով և լայն ճանապարհով, որոնք դեպի կործանման են տանում, չնայած շատերն են գնում, այլ գնանք նեղ դռնով և անձուկ ճանապարհով, որ դեպի կյանք է տանում, չնայած շատ քչերն են գնում: Այդ վերջինով գնացողները իսկական մշակներ են, ովքեր ուրախությամբ կստանան իրենց ջանքերի վարձքը և կժառանգեն Արքայությունը: Իսկ ով տակավին պատրաստ չէ ներկայանալ այնտեղ, նրան խնդրում եմ չծուլանալ, քանի դեռ ժամանակը չի անցել, պետք եղած ժամանակ յուղ չունենա,ընդամին յուղ վաճառող էլ չգտնվի: Որովհետև

այդպես եղավ այն հինգ հիմար կույսերի հետ, որոնք չգտան մեկին, որից յուղ գնեին: Այդ ժամանակ նրանք լացով բացականչեցին՝ ասելով. «Տե՛ր, Տե՛ր, բա՛ց արա», իսկ նա պատասխանեց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում» (Մատթ. 25, 11-12): Եվ դա նրանց հետ պատահեց ոչ այլ պատճառով, քան ծուլության: Հետո նրանք թեև արթնացան և սկսեցին դես ու դեն ընկնել, բայց դա այլևս ոչ մի բանի չծառայեց, որովհետև տան Տերը եկավ և փակեց դռները, ինչպես գրված է: Ձեզ համար սրա նման նաև մի ուրիշ օրինակ բերեմ: Երբ Նոյը տապան մտավ իր որդիների, նրանց կանանց և մյուս բոլորի հետ, որ նրանց հետ էին և արարածների չարության համար ի վերուստ առաքված ջրհեղեղի պատճառով փակեց տապանի դուռը, ապա այլևս չբացեց և իր որդիներին թույլ չտվեց տեսնել այդ սարսափելի տեսարանը, որը մահապատիժ էր անօրենների համար,դռների փակ լինելու պատճառով առավել ևս չկարողացան այնտեղ մտնել չարերը,որ արդարների հետ լինեն, այլ աղետով բոլորը կործանվեցին ջրհեղեղից իրենց ծուլության և անհնազանդութ-



յան պատճառով: Որովհետև Նոյը այդ հարյուր տարվա ընթացքում, որ կառուցում էր տապանը, անդադար կոչ էր անում ավելի լավ կյանքի, բայց նրանք ուշադրություն չէին դարձնում և չէին լսում, դրա համար էլ կործանվեցին:

65. Պահպանե՛ք միաբանությունը և դա արե՛ք խաղաղությամբ, համախոհությամբ, խոնարհությամբ, Աստծո երկյուղով և աղոթքներով: Այդ ժամանակ կատարելապես ձեր մեջ կհայտնվեն Աստծո տան բարիքները և դուք կունենաք դրանք ուրախությամբ և ցնծությամբ: Բացի դրանից, թող զարդարի ձեզ հավատը, հույսը, սերը, խոնարհությունը, երկյուղը, դատողությունը, պատկառանքը, խաղաղությունը, եղբայրների սերը: Որովհետև ով այս ամենը ունենա, նա հարսանեկան զգեստներ հագած կլինի և կքայլի Հոգու պատվիրանների համեմատ: Եղեք ամեն տեսակի խոնարհության և համբերատարության մեջ, և ձեզանից կհեռանան կրքերը:

66. Ով կցանկանա քայլել Աստծո կամքի համաձայն,որը մեղրից ավելի քաղցր է և լի է ամեն տեսակի ցնծություններով, նրան

*անձամբ կօգնի և կամրապնդի և Նրա հոգուն թույլ կտա զարմանալի գործեր կատարել և նրանց առաջ հարդարել Աստծուն սիրելի բոլոր ուղիները և այդ ժամանակ ոչ մի թշնամի չի կարող դիմադրել նրան այն բանի համար, որ նա գնում է Աստծո կամքի համաձայն: Բայց ով քայլում է իր սեփական կամքով, նրան Աստված ոչ մի բանում օգնություն ցույց չի տա, այլ նրան կթողնի դևերի բաժին, որոնք գիշեր-ցերեկ նստած կլինեն նրա սրտում և հանգիստ չեն տա որևէ գործում, անուժ և տկար կդարձնեն բոլոր գործերի մեջ, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին և շատ այլ կործանարար և վնասակար բաներ կբերեն նրա վրա: Սատանան երբեմն նրանց մեջ ուրախություն և ցնծություն է մուծում, բայց դրա մեջ ուրախություն չի կարող լինել, այլ միայն ծանրություն և տխրություն: Եթե նույնիսկ լինում է ուրախության նման մի բան, ապա դրա մեջ ճշմարտություն չկա, այլ միայն պատրանք, որովհետև Աստծուց չէ: Իսկական ուրախությունը բխում է Աստծուց և տրվում է միայն նրան, ով ինքն իրեն միշտ ստիպում է մերժել իր կամքը և բոլորանվեր*



*կատարել Աստծո կամքը: Կամքը, որ գործում է մարդու սրտում, լինում է երեք տեսակ. առաջինը՝ սատանայից, երկրորդը՝ մարդուց, երրորդը՝ Աստծուց: Առաջին երկուսը Աստված բարեհաճ չի ընդունում, Նրան հաճո է այն,ինչ Իրենից է: Նայեք ինքներդ ձեզ և մերժելով ամենայն օտար բան՝ սիրեք միայն Աստծո կամքը, քանզի մարդու համար պակաս կարևոր չէ ամեն ինչում միշտ հասկանալ Աստծո կամքը: Հավատացնում եմ ձեզ, որ եթե մարդը չթողնի իր սրտի բոլոր ցանկությունները և ամեն ինչում չմերժի իրեն, իրենից դեն չնետի ամբողջ հարստությունը և ունեցվածքը և չհնազանդվի Աստծուն իր հոգևոր հորը ենթարկվելու միջոցով, ապա ո՛չ կարող է ճանաչել Աստծո կամքը, ո՛չ էլ կատարել այն և կզրկվի վերջին օրհնությունից:*

*67. Աստված մեզ չասաց, որ այստեղ հատուցում կլինի, այլ որ այստեղ փորձություններ կլինեն, նեղություններ, կարիքներ և վշտեր, իսկ այնտեղ՝ հատուցում: Այս կյանքը սխրագործությունների և փորձությունների ճանապարհ է:*

*68. Եթե համբերատար լինեք, ձեր հայրե-*

րին հնազանդ և խոնարհ,ապա Աստված ձեզ սքանչելի հատուցում կտա. դա է այն աշխատանքը, որը հիշվում է Աստծո առաջ: Ով հնազանդվում է իր հորը, նա հնազանդվում է Աստծուն, իսկ ով հնազանդվում է Աստծուն, նա հնազանդվում է նաև իր հորը:

69. Ամենից առաջ թող հավատանք մեր Տեր Հիսուս Քրիստոսին, թող խոնարհվենք նրան և հնազանդվենք և թող կատարենք Նրա կամքը ամեն ժամ և վայրկյան:

70. Քայլենք Աստվածային երկյուղով, քանի որ մեզ հրամանագրված է. «Ահով և դողով դուք ձեր փրկության համար աշխատեցեք» (Փիլ. 2, 12): Աստծո երկյուղը հոգուց արմատախիլ է անում ամեն նենգություն և մեղք: Իսկ ով չի վախենում Աստծուց, նա ձեռք է բերում բազմաթիվ չարիքներ: Աստծո երկյուղը պահպանում է մարդուն և խնամում, քանի դեռ իր վրայից չի հանել այս մարմինը, ինչպես գրված է. «Հղիացանք, երկունքով բռնվեցինք, ծնեցինք և երկրի վրա ստեղծեցինք փրկության քո ոգին» (Եսայի 26, 18):

71. Ով անհիշաչար է, նա կատարյալ է և աստվածանման: Նա լի է ուրախությամբ և



հանգստարան է Աստծո Հոգու համար: Ինչպես կրակը այրում է մեծ անտառը, երբ անուշադիր ենք լինում, այդպես էլ չարությունը,երբ ընդունում ես նրան սրտիդ մեջ, կործանում է քո հոգին, և պղծում է մարմինը, և քեզ բազում սխալ խորհուրդներ է բերում, վիճաբանություն,խռովություն, ասեկոսե, նախանձ, ատելություն և նման այլ չար կրքեր, որոնք ծանրացնում են մարմինը և հիվանդություններ պատճառում: Շտապեք ձեռք բերել սրբերի անմեղությունն ու պարզասրտությունը, որպեսզի մեր Տեր Հիսուս Քրիստոսը ընդունի ձեզ Իր մոտ և ձեզանից յուրաքանչյուրը կարողանա ուրախությամբ ասել. «Դու իմ անմեղության համար ընդունեցիր ինձ և հավիտյան հաստատեցիր Քո առջև» (Սաղմ. 40, 13):

72. Աստված մարգարեի միջոցով ասում է. «Ես ո՞ւմ եմ նայելու, եթե ոչ հեզերին և խոնարհներին և նրանց, ովքեր դողում են իմ խոսքից» (Եսայի 66, 2): Իսկ մեր Տերն այսպես է ասում Ավետարանում. «Սովորեցե՛ք ինձանից, որ հեզ եմ և սրտով խոնարհ և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք» (Մատթ. 11, 29): Ուրեմն խոնարհություն

*ձեռք բերեք և մի քայլեք հպարտ սրտով, որ սատանաներին է հատուկ: Ով քայլում է հպարտ սրտով, նա հաղորդակից է սատանային: Մեծամիտ մարդը բոլորին ատելի է, որովհետև նրա գործերը ամբարտավան են, դրանից էլ նա բազում մեղքերի մեջ է ընկնում: Բոլոր մեղքերը եղկելի են Աստծո առաջ, բայց ամենաեղկելին սրտի հպարտությունն է: Ով խրատում կամ խորհուրդ է տալիս հպարտին, նման է ծակ անոթի մեջ ջուր լցնողի կամ թուչող թռչունին խոսք ասողի: Սրտով հպարտները արհամարված են Աստծո առջև, իսկ խոնարհ և թախծոտ սրտերը Աստված չի անարգում: Ինքը՝ Աստծո սերը մեզ մոտ իջավ երկնքից՝ դառնալով ամենավերջին խոնարհը: Ուրեմն սիրենք խոնարհությունը, որպեսզի հնարավոր լինի աղաղակել. «Տե՛ս իմ նվաստացումն ու տառապանքը և թողություն արա իմ բոլոր մեղքերին» (Սաղմ. 24, 18):*

*73. Մի՛ գնացեք ձեր աչքերի ցանկության հետևից և մի՛ տկարացեք ձեր սրտերում, որովհետև չար ցանկությունը անբարոյացնում է սիրտը և մթագնում միտքը: Դրանից հեռու փախեք, թող ձեր վրա չբարկանա ձեր*



*մեջ ապրող Աստծո Հոգին: Սկսենք գործել մաքրությամբ նույնիսկ մինչև մահ և մեզ ամեն կերպ զերծ պահենք վատ ցանկություններից, դրա համար զգուշանանք նայել կնոջ գեղեցկությանը: Չլինենք ծառաներ անմաքուր կրքերի և անպարկեշտ ցանկությունների, որոնք ատում է Աստված: Աստծո անունը գրեք ձեր սրտի աչքերի առաջ, որպեսզի ձեր ներսում անդադար հնչի. «Կենդանի Աստծո տաճար եք դուք և Սուրբ Հոգու հանգստավայր» (Բ Կորնթ. 6, 16): Ով հրապուրվում է անմաքուր ցանկություններով, նա Աստծո առաջ նման է ամեն բանականությունից զրկված անասունի ըստ սաղմոսերգու սուրբ Դավիթ Մարգարեի խոսքի (Սաղմ. 48, 13): Հետևաբար, ատելով ատենք այդ ոչ պիտանի աչքը և արժանանանք մաքրության, քանի որ այն Աստծո հրեշտակների փառքն է: Բայց եթե սատանայի թելադրանքով ընկնենք, կանգնենք խոստովանության միջոցով և մոտենանք Նրան, Ով եկավ փնտրելու մեղքի մեջ թափառող ոչխարին (Ղուկ. 15, 4):*

*74. Ով չի կարող պահել իր բերանն ու լեզուն, թող գոնե հոգ տանի. «Շատ էլ չշա-*

ղակրատի» (Հոբ 11, 3)։ Զգո՛ն եղիր, մա՛րդ, իշխանությու՛ն վերցրու քո լեզվի վրա և մի բազմապատկիր խոսքերդ, որպեսզի չբազմանան մեղքերդ։ Մարդ, շրթունքներիդ և լեզվիդ սանձ դիր, որովհետև շատախոս մարդը իր մեջ տեղ չի թողնում Սուրբ Հոգուն։ Եթե սկսնակ մեկը, խոսելով քեզ հետ, քեզանից որևէ բան հարցնի իր հոգու փրկության համար, պատասխանիր նրան, իսկ եթե հարցնի այն բանի մասին, որից նրան օգուտ չկա, եղիր ինչպես խուլ, որը չի լսում և ինչպես համր, որը չի խոսում։

75. Ստիպենք մեզ ամուր փակ դնել մեր շուրթերին, որպեսզի որևէ մեկին ոչ մի վատ բան չասենք, որովհետև վատ խոսքը ավելի վատ է ամեն տեսակի թույնից։ Բոլոր վերքերը բուժվում են, բայց լեզվի վերքը բուժում չունի։ Անզգույշ պախարակող լեզուն, որ շարժման մեջ է դրվում սատանայի կողմից, օձից առավել թունավոր է, որովհետև վեճեր և դառնաղետ թշնամություն է հարուցում եղբայրների մեջ, խռովություն և չարագործություն է սերմանում խաղաղների մեջ և պառակտում է բազմամարդ համայնքը։ Այսպիսով, հեռու փախեք ուրիշներին վատա-



բանելուց և եռանդով փարվեք լռությանը։ Լռություն սիրողը մոտ է լինում Աստծուն և Նրա հրեշտակներին և Նրա երկնային տեղերին։ Աստված ասում է, որ Ինքը այն ժամանակ կպահպանի քո ճանապարհները, երբ դու զսպես քո բերանը (Առակ. 13, 3)։

76. Սուրբ Գիրքը հաստատում է, որ ամոթը երկու տեսակ է լինում՝ մեկը, որից ծնվում է մեղքը, իսկ մյուսը, որից փառք և շնորհ է ծնվում (Սիրաք. 4, 23-25)։ Մեղք գործելուց ամաչելը իսկական և փրկարար ամոթ է, իսկ ամոթը, որից մեղք է ծնվում, ամոթալի է, որը արգելք է Աստծո պատվիրանների կատարմանը։ Մի՛ ամաչիր անել այն, ինչ համաձայն է Աստծո կամքին, և ճշմարիտ գործերը մի՛ թաքցրու, մի՛ վախեցիր հայտարարել Աստծո ուսմունքը կամ իմաստության խոսքը և մի՛ ամաչիր քո մեղքերը հոգևոր հորդ հայտնելուց։

77. Մեր Տերը, կարեկից լինելով մեր հոգիներին, Սուրբ Ավետարանում ասում է. «Վայ ձեզ, երբ ձեր մասին կասեն և կփառաբանեն ձեզ, բայց Աստծուց եկող փառքը չեք որոնում» (Ղուկ. 6, 26, Հովհ. 5, 44)։ Ուրեմն աշխատենք նույնիսկ մինչև մահ հա-

*կառակ կանգնել սնափառությանը, կոտրել նրա չարագույն ճյուղերը, որպեսզի կործանման դուռը չհասնենք: Փախի՛ր սնափառությունից, որովհետև շատերը կործանվեցին դրանից: Այն դրդում է մարդուն բազում ջանքերի՝ պահքերի, աղոթքների, շատ անգամ գիշերային հսկումների, մարդկանց առջև տրվող ողորմության և նման բազում բաների, բայց այս ամենով նա ոչ մի ուրիշ բանի չի հասնում, բացի անպատվությունից և անարգանքից: Զջանաք ցույց տալ, որ ոմն մեկն ենք, կամ մի առանձին մեծ բան ենք, որպեսզի դրա պատճառով չկործանվենք և չմոլորվենք սնափառության բազմաթիվ ճյուղերի մեջ, որովհետև սնափառության դևերը չափազանց շատ են: Իսկ նախանձախնդիրները ձգտում են վաստակել սրբերի փառքը, ինչպես նաև նրանց աղքատությունը, որպեսզի Աստծուց ստանան այս հաճելի գովեստը. «Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. 5, 3):*

*78. Մեր Տեր Հիսուս Քրիստոսը Իր Ավետարանում ասում է. «Եվ ձեր համբերությամբ պետք է շահեք ձեր հոգիները» (Ղուկ.*



*21, 19): Նաև. «Ով մինչև վերջ համբերեց, նա պիտի փրկվի» (Մատթ. 10, 22: 24, 13): Ինչ եռանդով է հարկավոր ջանալ և համբերել, որպեսզի հասնենք այն ամենին, ինչ պատրաստված է մեզ համար երկնքում: Զպարծենանք, քանի դեռ արյան հեղմանը չենք հասել, որովհետև ոչ մի նկարիչ չի պարծենում իր ստեղծագործությամբ, մինչև որ չավարտի այն: Երանելի է կոչվում նա,ով համբերությամբ է վաստակել հաղթանակը: Իր ժամանակին նա կփառաբանվի երկնքում, ինչպես Ղազարոսը:*

*79. Սաղմոսերգու Դավիթն ասաց. «Որքան քաղցր են Քո խոսքերն իմ քիմքին՝ ավելի քաղցր, քան մեղրն իմ բերանին» (Սաղմ. 118, 103): Ու նաև. «Տիրոջ դատաստանները ոսկուց ու շատ թանկագին քարերից ցանկալի են» (Սաղմ. 18, 10-11): Հիրավի երանելի է նա, ով արթուն է մնում և կատարում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատգամները, մինչև իսկապես հասնի Նրա իմացությանը, որ կարողանա ասել. «Զարմանալի է քո իմացությունն իմ մասին» (Սաղմ. 138, 6): Վախեցիր անհավատ լինելուց, որպեսզի մեր Արարիչը չբարկանա քո վրա: Ով*

ճշմարտությունը քարոզում է անհավատին, հանդիմանում կամ սովորեցնում է նրան, նման է թանկարժեք մարգարիտները ծովի խորքը նետողի: Ընդհակառակը, ինչպես ջուրը գետնի թեքության պատճառով ցած է հոսում և թափով սահում է այնտեղ, այդպես էլ Աստծո խոսքը ներհոսում է հավատացյալի հոգու մեջ:

80. Արթուն մնանք և թող մեր մտքի տան մեջ միշտ բոցավառվի եռանդը, որպեսզի մեզ անհոգիներ և ծույլեր չանվանեն: Ջանասերների և արթունների վրա կրքերը երբեք չեն իշխի: Եթե երբեմն նույնիսկ ընկնում են փորձչի դավերի պատճառով, եռանդը և հսկումը անմիջապես վերականգնում են նրանց: Իսկ ասովածահաճության համար եռանդ չունեցողը, անհոգն ու ծույլը, եթե դիվային փորձության պատճառով ընկնում է, նույնիսկ չի նկատում իր գործած մեղքը, որովհետև նրա սիրտը կարծր է ինչպես քարը և նման է ջորու՝ ճնշված ու սանձված, որի վրա բոլորը նստում են առանց նրա կողմից հակառակության: Այդպիսի մարդկանց հետ սատանան կատարում է իր բոլոր ցանկությունները և իր բոլոր պղծութ-



յունը և նրանցից յուրաքանչյուրին քարշ է տալիս, ուր ուզում է, մինչև կատարվի իր անարդարությունը և նա մեռնում է հառաչանքներով և լացով: Ծույլը նմանվում է փլված և լքված սենյակներով տան, որը ոչ մեկի համար ոչ մի գին չունի, այլ ատելի է բոլորին, ասես անիծված լինի որպես օձերի, կարիճների և գազանների կացարան, ոչ ոք նրա համար հոգ չի տանում որպես փուլ եկածի և ամայացածի: Այդպիսին է անհոգի վիճակը: Հոգ տարեք պահպանել եռանդը և երբեք չընկնեք թշնամու իշխանության տակ: Երբ մարդու մեջ կա այդ հիասքնչ եռանդը և հոգացողությունը, ապա դա բոլոր անկումներից և վնասումներից վերականգնում և նախազգուշացնում է նրան, այնպես որ այդպիսի մարդը Սուրբ Հոգու հանգստարան է դառնում և երջանիկ կերպով անցնելով իր ճանապարհը, արժանանում է սրբերի հանգստին հանդերձյալ կյանքում:

81. Մենք լսեցինք, որ երանելի Պողոսը, երբ հասավ կուսության քննարկմանը, այսպես ասաց դրա մասին. «Տիրոջից հրաման չունեմ» (Ա Կորնթ. 7, 25): Նա հրաման չու-

ներ, որովհետև բոլորը չէ, որ կարող են կրել դրա ծանր լուծը, այդ պատճառով էլ այն թողնված է նրանց կամավոր ընտրությանը, ովքեր ի վիճակի են այն կրելու: Կուսակրոններից ոչ ոք թող չպարծենա կուսակրոնությամբ, քանի որ այն Աստծո շնորհն է: Կուսակրոնությունը հեռացնում է իրենից կանացի զգացմունքները, մարմնավոր խորհուրդները, սրտի հպարտությունը և սերը այն ամենի հանդեպ, ինչը սատանայից է, այն իրենից հեռու է վանում մաև անհամբերության տրտունջը, մարդկանց հանդեպ ատելությունը և աշխարհային փառքը, ջանասիրությամբ փարվում է ժամերգությանը, զսպում է լեզուն և որովայնը պատժում պահքերով: Երբ նա զարդարված է այս ամենով, ապա դառնում է անարատ և մաքուր զոհ: Եթե դու, կուսակրոն հոգի, հոգ տանես բազմաթիվ կերակուրների մասին և քայլես ինքդ քեզնով հիացած, ապա կհանդիմանվես քո բոլոր գործերի համար: Եթե չհսկես քո լեզվին, դատարկ կլինես քո ամբողջ կյանքի ընթացքում և ուրեմն իզուր ես մեծ գործերի ձեռնարկել:



82. Բարեպաշտությամբ քայլենք այն ճանապարհով, որով գնացին սրբերը, որոնց մասին գրված է. «Երանի նրանց, ովքեր անբիծ ուղի են բռնել և ընթանում են Տիրոջ օրենքով» (Սաղմ. 118, 1): Այսինքն՝ մարմնի մաքրությամբ, լեզվի մաքրությամբ, աչքերի մաքրությամբ, ձեռքերի մաքրությամբ, ականջների մաքրությամբ, ոտքերի մաքրությամբ, Աստծո առջև ուղիղ խորհուրդներով և միմյանց նկատմամբ մաքուր սրտով, ինչպես ասում ենք աղոթքի մեջ. «Իմ մեջ մաքուր սիրտ հաստատի՛ր, Աստվա՛ծ, և արդար հոգի նորոգի՛ր իմ որովայնում» (Սաղմ. 50, 12):

2.

Բարեպաշտության և սուրբ կյանքի խրատներ 170 գլուխներով

1.

Մարդիկ սովորաբար խելացի են կոչվում այս բառի սխալ գործածմամբ: Ոչ թե նրանք են խելացի, ովքեր ուսանել են հին իմաստունների ասույթներն ու գրվածքները, այլ նրանք, որոնց հոգին է խելացի, որոնք կարող են զանազանել, թե որն է բարին և որը՝ չարը, և չարից ու հոգեկործանից փախչում են, իսկ բարու և հոգեշահի համար իմաստնաբար հոգ են տանում և դա անում են Աստծուց մեծապես գոհանալով: Իսկապես միայն սրանք պետք է կոչվեն խելացի մարդիկ:

2. Իսկապես խելացի մարդը մի հոգս ունի միայն՝ ամբողջ հոգով հնազանդվել և գոհություն պատճառել ամենքի Աստծուն: Դրան և միայն դրան է նա վարժեցնում իր հոգին, թե ինչպես հաճո լինի Աստծուն՝ Նրանից շնորհակալ լինելով Նրա բարերար տնօրինության համար կյանքում պատահող



ամեն մի դիպվածի մեջ: Որովհետև պատշաճ չէ բժշկին շնորհակալ չլինել մարմնի բժշկության համար, թեև մեզ դառը և տհաճ դեղեր է տալիս, առավել ևս՝ Աստծուն, չնայած մեզ ուրախալի չի թվում անշնորհակալ մնալ՝ չգիտակցելով, որ ամեն ինչ լինում է Նրա տնօրինությամբ և մեր օգտի համար: Այսպիսի գիտակցության և առ Աստված այսպիսի հավատքի մեջ է հոգու հանգիստն ու փրկությունը:

3. Ժուժկալությունը, անչարությունը, ողջախոհությունը, ամրությունը, համբերությունը և սրանց նման մեծ առաքինությունները մենք Աստծուց ստացել ենք ասես իբրև զորական ուժեր, որպեսզի նրանք դիմադրեն և հակառակ կանգնեն մեզ հանդիպող տառապանքներին և մեզ օգնեն դրանց ժամանակ այնպես, որ եթե մենք վարժեցնենք այդ ուժերը և դրանք միշտ պատրաստ ունենանք, ապա մեզ հետ պատահող ոչ մի բան մեզ համար դժվարին կամ հիվանդագին, կործանարար և անտանելի չի լինի, որովհետև այդ ամենը կհաղթահարվի մեր մեջ եղած առաքինություններով: Ում հոգին իմաստուն չէ, նրանք այս բանը չեն հասկա-

նում, որովհետև չեն հավատում, որ ամեն ինչ լինում է մեր օգտի համար, որպեսզի պայծառանան մեր առաքինությունները և դրանց համար պսակ ստանանք Աստծուց:

4. Եթե հարստությունը և նրա պատճառած ամբողջ հաճույքը համարես միայն կարճատև ցնծություն և ունայնություն և իմանաս, որ առաքինի և աստվածահաճո կյանքը առավել է հարստությունից, ապա կհաստատվես այդ համոզմունքով գոտեպնդված և մտապահես այդ, ո՛չ կհակառակես, ո՛չ կողբաս, ո՛չ կտրտնջաս որևէ մեկի վրա, այլ ամեն ինչի համար գոհություն կհայտնես Աստծուն, երբ կտեսնես, որ քեզանից վատերը փառաբանվում են ճարտարախոսության կամ գիտնականության և կատարելության համար: Հարաբերությունների և հաճույքների անհագ ցանկությունները, փառասիրությունը և սնափառությունը, ճշմարտությանը անհաղորդ լինելը հոգու բուն ամենաչար կրքերն են:

5. Խելացի մարդը, քննելով ինքն իրեն, գիտակցում է, թե ի՞նչ է պետք և ի՞նչ է իրեն օգտակար անել, ի՞նչն է հարազատ իր հոգուն և փրկարար, և ի՞նչն է նրան օտար



և կործանարար: Եվ այդպիսով խուսափում է այն ամենից, ինչը վնասում է հոգուն՝ որպես նրան խորթ բան:

6. Որքան մեկը չափավոր է անցկացնում իր կյանքը, այնքան հանգիստ է լինում, որովհետև հոգ չի տանում շատ բաների՝ ծառաների, հողագործների (վարձու բանվորների) և անասուն ձեռք բերելու մասին: Իսկ երբ մենք հարում ենք սրանց, ապա դրանց պատճառով ենթարկվելով անհաջողությունների՝ հասնում ենք նրան, որ տրտնջում ենք ընդդեմ Աստծո: Այսպիսով, մեր ինքնակամ ցանկությունը շփոթությամբ է լցնում մեզ և մենք դեգերում ենք մեղավոր կյանքի խավարում՝ չճանաչելով ինքներս մեզ:

7. Պետք չէ ասել, որ մարդը չի կարող առաքինի կյանք վարել, բայց պետք է նշել,որ դա հեշտ չէ: Եվ իսկապես, դա ոչ բոլորի համար է դյուրահաս, այլ միայն բարեպաշտ և աստվածասեր միտք ունեցող մարդիկ են, որ մասնակից են դառնում առաքինասեր կյանքին: Ընդհանուր (սովորական) միտքը աշխարհիկ և անկայուն միտք է, այն տալիս է բարի և չար մտածումներ, փոփոխական է և հակված նյութականին: Իսկ աստվածասեր

միտքը պատժիչն է չարի, որը մարդկանց մեջ նրանց հոժարակամ անհոգությունից է:

8. Անկիրթներն ու գռեհիկները ծիծաղելի գործ են համարում գիտությունները և չեն ցանկանում լսել դրանց, որովհետև դրանցով բացահայտվում է նրանց տգիտությունը և նրանք ուզում են, որ բոլորը իրենց նման լինեն: Անզուսպ վարք ու բարք ունեցողները ևս հոգատարությամբ ուզում են, որպեսզի բոլորն իրենցից վատը լինեն՝ մտածելով դրանով մեղքերից արդարացում գտնել,պատճառաբանելով, թե շատ են չարերը: Հոգին կործանվում և ապականվում է մեղսալի չարից, որը բազմաբնույթ է և ներառում է իր մեջ շնություն, հպարտություն, անհագություն, զայրույթ, հանդգնություն՝ լկտիություն, մոլեգնություն, սպանություն, տրտունջ, նախանձ, վաշխառություն, գազանաբարոյություն, անհամբերություն, սուտ, հեշտասիրություն, ծուլություն, տրտմություն, երկչոտություն, ատելություն, ուրիշին դատել, հեղգացում, մոլորություն, տգիտություն, հրապուրանք, աստվածուրացություն: Սրանով և այսպես է խոշտանգվում Աստծուց հեռացած թշվառ հոգին:



9. Թե արդյո՞ք մեկը ճշմարտապես է ապրում իր ճգնավորական բարեհոժար և գովելի կյանքը, դրա մասին պետք է դատել ոչ թե շինծու ստանձնված վարք ու բարքով և ոչ էլ կենցաղավարության կեղծ կերպարանքով, այլ նրանով, երբ մեկը հմուտ գեղանկարչի և քանդակագործի նմանությամբ ցուցաբերում է իր բարեպաշտ և աստվածասեր կյանքը բուն գործով՝ հրաժարվելով ամեն տեսակի հեշտություններից՝ որպես ձկնորսական ցանցերից:

10. Հարուստ և ազնվազարմ ծագումով մարդը առանց հոգու կրթության և առաքինի կյանքի ուղղամիտ մարդկանց աչքին դժբախտ է երևում: Եվ հակառակը, ստացվածքով աղքատն ու ստրուկը երջանիկ է, եթե զարդարված է կրթությամբ և առաքինությամբ: Ինչպես որ պանդուխտներն են ճանապարհին մոլորվում (և կործանվում), այնպես էլ կործանվում են առաքինի կյանքի մասին չհոգացողները, ցանկություններից տարված լինելով:

11. Մարդաստեղծ պետք է կոչել նրան, ով կարողանում է բարվոքել անկիրթների բարքը և ստիպում է սիրել գիտությունն ու

*կրթությունը: Մարդասատեղծ են նաև նրանք, ովքեր անկարգ կյանքով ապրող մարդկանց դարձի են բերում դեպի աստվածահաճո և առաքինի կյանքը, որովհետև նրանք ասես նորովի են կերտում մարդկանց: Մարդկային հոգիների համար բուն երջանկության և բարու հույսը հեզությունն ու ժուժկալությունն են:*

*12. Հիրավի մարդիկ պետք է բարեվայել կերպով կարգավորեն իրենց կյանքը և վարքուբարքը: Երբ դա կշտկվի, այդժամ դյուրությամբ կճանաչվի նաև Աստված: Ողջ սրտով և կատարյալ հավատքով Աստծուն փառաբանողը Նրանից տնօրինաբար օգնություն է ստանում՝ սանձահարելու զայրույթն ու հեշտասիրությունը: Իսկ հեշտասիրությունն ու զայրույթը բոլոր չարիքների բուն պատճառն են:*

*13. Մարդ պետք է անվանել կա՛մ նրան, ով խելացի է (ըստ առաջին կետի), կա՛մ նրան, ով հանձն է առել ուղղել իրեն: Պետք չէ մարդ անվանել չուղղվողին, որովհետև դա (այսինքն անուղղելիությունը) անմարդկային գործ է: Նմաններից պետք է փախչել: Չարի հետ բնակակիցները երբեք չեն լինի*



*անմահների դասում (այսինքն՝ անմահությամբ երանացածների հետ):*

*14. Միայն մեր մեջ գործով որակվող բաներն են (առաջին հերթին) մեզ արժանի դարձնում մարդ կոչվելու, այդպիսի բաներ չունենալով՝ մենք անասուններից կտարբերվենք լոկ անդամների (հոդերի) դասավորությամբ և խոսելու պարգևով: Ուրեմն թող իմանա բանական մարդը, որ ինքը անմահ է, և թող ատի ամեն տեսակի աղտեղի ցանկությունները, որոնք մարդկանց համար մահվան պատճառ են դառնում:*

*15. Ինչպես յուրաքանչյուր նկարիչ ցուցադրում է իր արվեստը նրանով, որ ձեռքի տակ եղած նյութը փոխակերպում է գեղեցիկ ձևերի, որպես օրինակ՝ մեկը փայտից, մյուսը պղնձից, մեկ ուրիշը՝ ոսկուց և արծաթից, այդպես նաև մենք պետք է ցույց տանք, որ մարդ ենք ոչ թե նրանով, որ այդպես ենք կազմված մարմնով, այլ նրանով, որ իսկապես մտավոր ենք հոգով, այն բանով, որ հնազանդվում ենք բարի կյանքի օրենքին, այսինքն՝ առաքինագործ և աստվածահաճո կյանքին: Ճշմարտապես մտավոր և աստվածասեր հոգին գիտի այն ամենը, թե*

կյանքում ինչն ինչպես պիտի լինի, և սիրով է գթաշարժում Աստծուն և Նրան անկեղծորեն գոհություն հայտնում՝ Նրան ձգտելով ողջ ցանկությամբ և ողջ մտքով:

16. Ինչպես նավավարները զգուշորեն դեպի առաջ են ուղղորդում նավը, որպեսզի այն պատահաբար չբախվի որևէ ստորջրյա քարի կամ ապառաժի, այդպես էլ առաքինի կյանքի համար նախանձախնդիր եղողները թող ջանասիրաբար նայեն, թե ինչ պետք է անեն և ինչից փախչեն, օգտակար համարելով միայն այն, ինչ խրատում են իրական և Աստվածային օրենքները՝ հոգուց հեռացնելով նենգ խորհուրդները:

17. Ինչպես նավավարը և կառապանը խելամտությամբ և ջանադրությամբ հասնում են իրենց գործում ճշտապահ լինելուն, այնպես էլ նրանք, ովքեր նախանձախնդիր են արդար, առաքինի կյանքի, պետք է ուշադրությամբ կշռադատեն և հոգ տանեն, թե ինչպես ապրել արժանավայել և աստվածահաճո, որովհետև այդ ցանկացողը, եթե համոզվում է, որ հնարավոր է հասնել ցնակալիին, հավատքով հասնում է անապականության:



18. Ազատ մի՛ համարիր նրանց, որոնք ազատ են ըստ կարգավիճակի,այլ նրանց, որոնք ազատ են ըստ կյանքի և ըստ բարքի: Օրինակ, պետք չէ իսկապես ազատ կոչել անվանիներին և հարուստներին, եթե նրանք չար են և անժույժ,որովհետև այդպիսիք էությամբ զգայական կրքերի ծառաներ են: Հոգու ազատությունը և երանությունը իսկական մաքրության և ժամանակավորը արհամարհելու մեջ է:

19. Հիշեցրու՛ քեզ, որ դու պետք է քեզ միշտ խելացի հանդես բերես, բայց դա պետք է անել բարի կյանքով և բուն գործերով: Ծիշտ այնպես,ինչպես հիվանդներն են բժիշկներին որպես փրկարարներ ու բարեգործներ ընդունում ոչ թե խոսքով, այլ գործով:

20. Թե ում հոգին է իսկապես խելացի և առաքինի, հայտնի է դառնում հայացքից, քայլվածքից, ձայնից, ժպիտից, խոսակցությունից և վարվեցողությունից: Նրա մեջ ամեն ինչ փոխվում է և ընդունում բարեձև տեսք: Նրա Աստվածասեր միտքը, զգոն դռնապանի պես դուռը փակում է չար և ամոթալի խորհուրդների դեմ:

21. Նայիր քո շուրջը և իմացիր, որ նախարարներն ու տիրակալները իշխանություն ունեն միայն մարմնի վրա, այլ ոչ թե հոգու և միշտ այդ մտքումդ պահիր: Ուստի երբ նրանք հրամայում են, օրինակ, սպանել կամ մի ուրիշ անտեղի բան անել, անարդարորեն և հոգին վնասելով, պետք չէ նրանց լսել, թեկուզ տանջեն մարմինը: Աստված հոգուն ստեղծեց ազատ և ինքնիշխան և նա ազատ է վարվելու ինչպես ցանկանում է՝ լավ կամ վատ:

22. Խելացի հոգին ջանում է ազատագրվել մոլորությունից, ամբարտավանությունից, հպարտությունից, կեղծավոր ստից, նախանձից, հափշտակությունից և նման բաներից, որոնք դևերի և չար հոժարության բուն գործերն են: Այդ ամենը հոգատար ջանասիրությամբ և զգոն խորհրդածությամբ կարող է կատարել միայն այն մարդը, որի կամեցողությունը չի մղվում դեպի ստորին հաճույքները:

23. Նրանք, ովքեր կյանքն ապրում են սակավ և ոչ բարձր սխրագործությունների մեջ և ազատվում են վտանգներից, հատուկ նախազգուշությունների կարիք չեն ունե-



նում: Իսկ փախչելով բոլոր ցանկություններից՝ նրանք հեշտորեն գտնում են Աստծո մոտ տանող ճանապարհը:

24. Խելացի մարդկանց պետք չէ լսել ամեն տեսակի զրույցներ, այլ միայն այնպիսիք, որոնք օգուտ են տալիս, որոնք տանում են Աստծո կամքի ճանաչմանը, որովհետև Նա է ճանապարհը, որով մարդիկ նորից վերադառնում են կյանքին և հավիտենական լույսին:

25. Նրանք, ովքեր ջանում են ապրել առաքինի և աստվածասեր կյանքով, պետք է հեռանան մեծամտությունից և ամեն տեսակի դատարկ և սուտ փառքից և ջանան կյանքը և սիրտը ուղղել դեպի բարին: Աստվածասեր կայուն միտքը առաջնորդող և Աստծո մոտ տանող ճանապարհ է:

26. Ոչ մի օգուտ չկա գիտություններ ուսումնասիրելուց, եթե հոգին չունենա բարի և աստվածահաճո կյանք: Բոլոր չարիքների պատճառը մոլորությունն է, հրապուրանքը և Աստծուն չճանաչելը:

27. Բարի կյանքի մասին խորին մտածումը և հոգու մասին հոգածությունը ստեղծում է բարի և աստվածասեր այրեր: Աստ-

ծուն փնտրողը գտնում է Նրան՝ ամեն հեշտասիրություն հաղթահարելով, Նրան անդադար աղոթելով: Այդպիսիները չեն վախենում դևերից:

28. Երկրային բարիքներով գայթակղվողները, որ բառ առ բառ գիտեն, թե բարի կյանքով ապրողները ինչ է պետք անեն, նմանվում են նրանց, ովքեր դեղորայք և բժշկության միջոցներ են ձեռք բերել, բայց դրանցից օգտվել չգիտեն և նույնիսկ հոգ չեն տանում դրա մասին: Այսպիսով մեր գործած մեղքերի համար չմեղադրենք ո՛չ մեր ծագումը, ո՛չ ուրիշ որևէ մեկին, այլ միայն ինքներս մեզ, քանզի եթե հոգին հոժարակամ տրվում է հեղգության, ապա չի կարող հաղթող լինել:

29. Նա, ով չի կարողանում տարբերել՝ ինչն է բարի, և ինչը՝ չար, պատշաճ չէ դատել, թե մարդկանցից ով է բարի, և ով՝ չար: Աստծուն ճանաչող մարդը բարի է, իսկ երբ նա բարի չէ, ապա նշանակում է՝ չի ճանաչում Աստծուն և երբեք Նրա կողմից չի ճանաչվի, որովհետև Աստծուն ճանաչելու միակ միջոցը բարությունն է:

30. Բարի և աստվածասեր այրերը որևէ



վատթար բանի համար մարդկանց հանդիմանում են, երբ նրանք իրենց դիմաց են, իսկ բացականերին ոչ միայն անձամբ չեն հանդիմանում, այլև դա արգելում են բոլոր նրանց, ովքեր փորձում են նրանց մասին ինչ-որ բան ասել:

31. Զրույցների ժամանակ ոչ մի կոպտություն չպետք է լինի, որովհետև խելացի մարդկանց սովորաբար զարդարում է համեստությունը և ողջախոհությունը՝ առավել քան կույսերին: Աստվածասեր միտքը հոգին լուսավորող լույս է, ինչպես արևը մարմինն է լուսավորում:

32. Քո դեմ ապստամբող յուրաքանչյուր կրքի ժամանակ հիշի՛ր, որ ովքեր իսկապես իմաստանում են և ցանկանում են իրենց վիճակը դնել պետքական և ամուր հիմքի վրա, իրենց համար քաղցր են համարում ոչ թե ապականացու հարստություն ձեռք բերելը, այլ իրական փառքը երկնքում: Ահա թե ինչն է նրանց երանելի դարձնում: Հարստությունը կարող են քեզանից գողանալ, հզորները կարող են այն խլել, իսկ հոգու առաքինությունը միակ անվտանգ և անկողոպտելի ստացվածքն է, ընդ որում այնպի-

սին, որը մահից հետո փրկում է ձեռք բերողներին: Ովքեր այսպես են մտածում, հարստության և մյուս ուրախությունների ուրվականային խաբուսիկ փայլը նրանց չի կարող հրապուրել:

33. Անհաստատները և անկիրթները չպետք է փորձեն մտավոր այրերին: Մտավոր է նա, ով Աստծուն հաճո կյանք է վարում և ավելի շատ լռում է, իսկ եթե խոսում է, ապա խոսում է քիչ և միայն պիտանին և Աստծուն հաճելին:

34. Առաքինի և աստվածասեր կյանքի ձգտողները հոգևոր առաքինությունների նախանձախնդիր են լինում որպես այնպիսի ձեռքբերումների, որոնք կազմում են նրանց անխզելի սեփականությունը և հավիտենական մխիթարությունը: Իսկ ժամանակավորից նրանք օգտվում են միայն այնքան, որքան հարկավոր է և ինչպես տալիս և կամենում է Աստված, օգտագործելով այն ուրախությամբ և ամեն ինչի համար գոհություն հայտնելով, եթե նույնիսկ դա շատ չափավոր լինի: Որովհետև հարուստ սեղանը սնում է մարմինը որպես նյութականի, իսկ Աստծու ճանաչողությունը, ժուժկալությունը, բա-



րությունը, բարեգործությունը, բարեպաշտությունը և հեզությունը աստվածացնում են հոգին:

35. Այն իշխանները, որոնք հարկադրում են անպատեհ և հոգեվնաս գործեր կատարել, չեն իշխում հոգու վրա, որը ինքնիշխան է ստեղծվել: Նրանք կապում են մարմինը, բայց ոչ կամեցողությունը, որի տերը խելացի մարդն է,որը իր Արարչի շնորհիվ վեր է ամենայն իշխանությունից, հարկադրանքից և ամենայն ուժից :

36. Փող, կամ երեխաներ, կամ ծառաներ, կամ այլ ունեցվածք կորցնելը դժբախտություն համարողները թող իմանան, որ առաջին հերթին պետք է գոհ լինեն այն ամենի համար, ինչ Աստված տալիս է, իսկ հետո, երբ անհրաժեշտ է տրվածը վերադարձնել, ապա ընդհակառակը, վերադարձնեն պատրաստակամությամբ և բարեհոգաբար, վշտով չտանջվելով դրանից զրկվելու, կամ, ավելի ճիշտ կլինի ասել, հետ վերադարձնելու պատճառով, ճիշտ այնպես, ինչպես մարդը, օգտվելով ուրիշի ունեցածից, դա նորից հետ է տալիս:

37. Լավ հատկանիշերով օժտված մարդու

*գործն է չվաճառել իր ազատությունը հանուն հարստության ձեռքբերման, թեկուզ և ձեռքբերվելիքը շատ նշանակալի լինի, որովհետև երազի են նման կենցաղային բարիքները, և հարստությունը միայն խաբուսիկ փայլ ունի՝ անհաստատ և վաղանցուկ:*

*38. Իսկապես մարդկային արժանապատվության տեր մարդիկ (ըստ վերը շարադրվածի իմաստի), պետք է այնքան ջանան աստվածասեր և առաքինի կյանքի, որպեսզի իրենց առաքինի կյանքը մյուս մարդկանց մեջ փայլի ինչպես սպիտակ զգեստների վրա որպես զարդ գցված փոքր ծիրանին և բոլորին նկատելի լինի, քանզի հոգևոր առաքինությունները ձեռք բերելու նրանց նախանձախնդրությունը այդ կերպ ավելի հուսալի կլինի:*

*39. Խելամիտ մարդիկ պետք է զննեն իրենց ուժերը և միշտ կազմ ու պատրաստ պահեն հոգու առաքինությունները, որպեսզի միշտ պատրաստ լինեն Աստծո կողմից բնականորեն իրենց շնորհված և հոգու մեջ բույն դրած դրանց ուժով (առաքինությունների զորքով) դիմակայեն հարձակվող կրքերին, այն է՝ գեղեցկության և ամենայն հո-*



*գեվնաս ցանկության դեմ հանեն ժուժկալությունը, կարիքի և աղքատության դեմ՝ համբերությունը, սրտնեղության և չարամտության դեմ՝ բարությունը և այսպես շարունակ:*

*40. Միանգամից բարի և խելացի մարդ դառնալ անկարելի է, այլ դրան հասնում են ուշադիր քննելով, վարժանքներով, փորձերով, տևական սխրագործություններով և բարիք գործելու սաստիկ ցանկությամբ: Բարի և աստվածասեր, Աստծուն իսկապես ընդունող մարդը իրեն հանդիստ չի տալիս, առանց բացառության Աստծուն հաճելի ամեն ինչ անելով: Բայց այդպիսի սրբեր հազվադեպ են հանդիպում:*

*41. Ովքեր բարու հանդեպ բնական հակվածություն չունեն, պետք չէ հուսահատությունից ձեռքերը թուլացնելով արհամարհեն աստվածասեր և առաքինի կյանքը, կարծես թե այն իրենց համար անմատչելի և անհասանելի է, այլ պետք է մտածեն և կարողության չափով հոգան իրենց մասին: Քանզի թեև չեն կարողանա հասնել առաքինության բարձունքին և կատարելությանը, բայց ամեն կերպ մտածելով և հոգալով ի-*

րենց մասին, նրանք կա՛մ դառնում են լավագույնը, կա՛մ, ծայրահեղ դեպքում, չեն դառնում վատագույն, իսկ դա քիչ օգուտ չէ հոգու համար:

42. Մարդը մտքով կապված է Աստվածային անճառելի զորությանը, իսկ մարմնով նմանություն ունի կենդանիներին: Բայց քիչ են այնպիսիները, ովքեր որպես իսկական խելացի մարդ, ջանում են միտքն ուղղել Աստծո և Փրկչի կողմը և Նրա հետ նմանություն ունենալ և դա ցույց են տալիս գործերով և առաքինի կյանքով: Իսկ մարդկանց մեծամասնությունը, անմտացած հոգով թողնելով այդ Աստվածային և անմահ որդեգրության կոչումը, խոնարհվում են մեռյալ, թշվառ և վաղանցուկ մարմնի ազգակցությանը և ինչպես անբաններ իմաստասիրելով միայն մարմնավորը և հեշտասիրությամբ բորբոքվելով՝ իրենք իրենց հեռացնում են Աստծուց և հոգուն երկնքից տապալում, գցում են մարմնական չարչարանքների անդունդը:

43. Խելամիտ այրը, մտածելով Աստվածայինի հետ լինելու և հարատևելու մասին, երբեք չի կառչում երկրային կամ որևէ այլ



ցածր բանից, այլ իր միտքն ուղղում է դեպի երկնայինը և հավիտենականը՝ իմանալով, որ Աստծո կամքը՝ ամենայն բարիի պատճառն ու մարդկանց համար հավիտենական բարիքի աղբյուրն այն է, որ մարդը փրկվի:

44. Երբ հանդիպես մարդու, ով, սիրելով վիճաբանել, քո հետ մարտի է բռնվում հակառակ ճշմարտության և ակնհայտ իրողության, ապա դադարեցնելով վիճաբանությունը, խույս տուր նրանից՝ մտքով ամբողջովին քարացածից, քանզի ինչպես աղտեղի ջուրը միանգամայն անպիտան է դարձնում լավագույն գինիները, այնպես էլ չար զրույցները ապականում են կենցաղով ու բարքով առաքինի մարդկանց:

45. Եթե մենք ամեն ջանք ու միջոց գործադրում ենք մարմնական մահից խուսափելու համար, ապա առավել ևս պետք է ջանանք փախչել հոգու մահից, քանզի ով ցանկանում է փրկվել, դրա համար որևէ արգելք չկա, բացի հոգու հեղգությունից և ծուլությունից:

46. Ովքեր չեն սիրում ճանաչել՝ ինչն է իրենց օգտակար և ինչն է պետք բարի համարել, նրանց մասին կարելի է ասել, որ վատա-

ուղջ են, իսկ Նրանց մեջ, ովքեր ճանաչած լինելով ճշմարտությունը, անամոթաբար վիճաբանում են՝ Նրան հակառակվելով, մեռած է բանականը։ Նրանց բարքը դարձել է անասնական, նրանք չգիտեն Աստծուն և նրանց հոգին պայծառացած չէ լույսով։

47. Կենդանիների տարբեր ցեղերը Աստված Իր խոսքով արտադրեց մեր կարիքի համար,մի մասին՝ կերակրի մեջ օգտագործելու, մյուսներին՝ ծառայելու։ Իսկ մարդուն Աստված ստեղծեց, որպեսզի լինի Իր գործերի վկան և շնորհակալ մեկնիչը։ Սրա համար է անհրաժեշտ, որ մարդիկ խսկապես ջանան, որպեսզի անբան կենդանիների նման չմեռնեն՝ հասու չլինելով Աստծուն և չհասկանալով Նրա գործերը։ Մարդը կոչված է հասկանալու, որ Աստված ամեն ինչ կարող է։ Իսկ Նրան, Ով ամենակարող է, ոչ ոք չի կարող հակառակվել։ Ինչպես որ չգոյությունից ամենայն ինչ, որ կամեցավ, նա արարեց Իր խոսքով, այնպես էլ ամեն ինչ անում է մարդկանց փրկության համար։

48. Երկնային էակները անմահ են իրենց մեջ էացած բարությամբ, իսկ երկրավորները մահկանացու դարձան նրանց մեջ տեղ



գտած ինքնակամ չարության պատճառով, որն անիմացականների մոտ բազմապատկվում է ծուլանալուց և Աստծուն չճանաչելուց։

49 Հասկացող մարդկանց համար մահը անմահություն է։ Իսկ մահը չհասկացող տհասների համար մահ է։ Եվ այդ մահից պետք չէ վախենալ, այլ անհրաժեշտ է վախենալ հոգու կորստից, որը Աստծուն ուրանալն է։ Ահա թե ինչն է սարսափելի հոգու համար։

50. Մեղքն իր հենարանը գտել է նյութականի մեջ, և մարմինը դարձել է նրա աթոռը։ Սակայն խոհուն հոգին, դա հասկանալով, թոթափում է նյութեղենի լուծը և, դուրս ելնելով այդ լծի տակից, ճանաչում է ամենայնի Աստծուն և ուշադիր մարմնին հետևում է մարմնին՝ որպես թշնամու և հակառակամարտի չվստահելով նրան։ Եվ այդպիսով հոգին, հաղթելով չար կրքերը և նյութին, Աստծուց պսակ է ստանում։

51. Մեղքը, հասկացված լինելով հոգու կողմից, նրան ատելի է լինում որպես գարշահոտ մի գազան, մինչդեռ երբ հասկացված չէ, չհասկացածի համար սիրելի է լինում, ու

իրեն սիրողին ծառա դարձնելով գերության մեջ է պահում նրան: Իսկ այդ թշվառն ու աղքատը չի տեսնում, թե ինչն է իր համար փրկարար, նույնիսկ չի էլ մտածում դրա համար, այլ համարելով, որ մեղքը զարդարում է իրեն, ուրախ է դրանով:

52. Մաքուր հոգին, բարի լինելով, սրբագործվում և լուսավորվում է Աստծուց, և այնժամ միտքը խորհում է բարին և ծնում աստվածասեր մտադրություններ և գործեր: Սակայն, երբ հոգին պղծվում է մեղքով, ապա Աստված երես է դարձնում նրանից, իսկ ավելի ճիշտ՝ ինքը հոգին է իրեն հեռացնում Աստծուց, և խորամանկ դևերը, թափանցելով խորհուրդների մեջ, հոգուն ներշնչում են գործելու անվայել գործեր՝ շնություններ, սպանություններ, կողոպուտներ և սրանց նման դիվային չար արարքներ:

53. Աստծուն իմացողները լիացած են ամենայն բարի մտածումներով և բաղձալով երկնայինը, արհամարհում են առօրեականը: Սակայն այդպիսիները ոչ շատերին են համակրելի լինում, այնպես որ դրա համար նրանք ոչ միայն ատելի են լինում, այլև շատ անմիտներից նախատինքի են ենթարկվում:



Նրանք պատրաստ են տանելու ծայրահեղ աղքատությունը՝ գիտակցելով, որ շատերի համար շատ թվացածը իրենց համար բարիք է: Ով խորհում է երկնայինի մասին, նա հավատում է Աստծուն ու գիտի, որ ամբողջ արարչագործությունը Նրա կամքի բուն գործն է, բայց ով չի խորհում դրա մասին, նա երբևէ չի հավատում, որ աշխարհն Աստծո գործն է և արարված է մարդու փրկության համար:

54. Մեղքով լցվածները և անգիտությամբ արբեցողները չեն ճանաչում Աստծուն, քանի որ հոգով չեն զգաստանում՝ արթնանալով անմտության և մեղքի թմբիրից: Մինչդեռ Աստված իմանալի է, այսինքն՝ միայն արթուն մտքով կարող է ճանաչելի լինել: Չնայած նա անտեսանելի է, սակայն, անշուշտ, հայտնի է երևացածի մեջ,ինչպես հոգին մարմնի մեջ: Ինչպես մարմինը չի կարող ապրել առանց հոգու, այնպես էլ ամբողջ տեսանելին և ամենայն գոյը չի կարող հաստատ, կանգուն մնալ առանց Աստծու:

55. Ինչի՞ համար է ստեղծված մարդը: Նրա համար, որպեսզի Աստծու արարչագործությունը ճանաչելով՝հասու լինի Աստծուն,

և փառաբանի ամենայն ինչ մարդու համար Ստեղծողին: Սիրով Աստծուն փարված միտքը բարի կյանքի համար արժանավորներին Աստծուց պարգևված աներևույթ բարիք է:

56. Ազատ է նա, ով չի ստրկանում զգայական հաճույքներին, այլ տիրում է մարմնին խոհեմության և ողջախոհության միջոցով, և լիակատար շնորհակալությամբ բավականանում է նրանով, ինչը տալիս է Աստված, նույնիսկ եթե դա խիստ չափավոր լինի: Երբ աստվածասեր միտքն ու հոգին միաբան լինեն, այնժամ մարմինը, անգամ չուզենալով, զգաստանում է, որովհետև հոգին մտքի ներգործության միջոցով մարում է ամեն մարմնական շարժում:

57. Երբ մարդիկ ոչ միայն չեն բավարարվում այն ամենով, ինչ ունեն կյանքը պահպանելու համար, այլև ավելիին են ձգտում, իրենց ծառայեցնում են կքերին, որոնք խռովում են հոգին և նրանում ավելի ու ավելի վատթար մտադրություններ հղացնում՝ ասելով, թե ամեն ինչ վատ է, և որ, հետևաբար,պետք է ձեռք բերել նորը և ավելի լավը: Ինչպես որ չափազանց երկար զգեստները խանգարում են ճամփորդին, այդպես էլ



չափից ավելի ունեցվածքի ցանկությունը հոգուն թույլ չի տալիս բարիք գործելու և փրկվելու:

58. Ով ինչի մեջ ակամա և դժկամությամբ տրտնջալով է մնում, այն էլ նրա համար բանտախուց ու պատիժ է: Ուստի գոհ եղիր նրանով, ինչ ունես, այլապես այդ քո դրությունը ընդունելով առանց շնորհակալության և հոժարելով՝ դու ինքդ քո համար բռնակալ կդառնաս՝ անգամ չգիտակցելով դա: Բայց այս բանի ճանապարհը մեկն է՝ կենցաղային բարիքներն արհամարհելը:

59. Ինչպես որ մենք Աստծուց ունենք տեսողություն, որպեսզի երևացողը ճանաչենք՝ ինչն է սպիտակ և ինչն է սև, այնպես էլ բանականությունը մեզ տրված Աստծու պարգևն է, որպեսզի տարբերենք, թե ինչն է հոգուն օգտակար և ինչը՝ վնասակար: Ցանկությունը, դատողականությունից հրաժարվելով, զգայական հաճույքների հակվածություն է ծնում, իսկ դա հոգուն չի թողնում փրկվել կամ հաղորդվել Աստծուն:

60. Այն չէ մեղքը, ինչը կատարվում է բնության օրենքով, այլ այն է, երբ չարություն են գործում կամովին: Կերակուր ճաշա-

կելը մեղք չէ, բայց մեղք է Աստծուց չգոհանալով անժույժ և անխտիր ուտելը: Մեղք չէ պարզապես նայելը, բայց մեղք է նախանձով, հպարտությամբ, անհագուրդ նայելը: Մեղք չէ հանդարտորեն լսելը, բայց մեղք է բարկությամբ լսելը: Մեղք չէ լեզվին ստիպել շնորհակալություն հայտնել և աղոթել, բայց մեղք է ստիպել, որ լեզուն բամբասի և դատապարտի: Մեղք չէ ձեռքերին նեղություն տալ՝ ողորմություն խնդրելու, բայց մեղք է թույլ տալ հափշտակել ու սպանել: Այդպես, յուրաքանչյուր անդամ մեղանչում է, երբ մեր ազատ կամքով բարու փոխարեն չարն է գործում, հակառակ Աստծու կամքի:

61. Եթե կասկածում ես, որ քո ամեն գործ տեսանելի է Աստծուն, ապա ո՛վ մարդ ու հյուլե, խորհրդածի՛ր, որ եթե դու ցանկացած պահին կարող ես մտովի դիտել քեզ ծանոթ բոլոր վայրերը և խորհել դրանց մասին, ապա մի՞թե Իր կամքով ամեն ինչին կենդանություն տվող ու սնուցող Աստված որքան առավել է տեսնում ամեն ինչ, նույնիսկ մանանեխի հատիկը:

62. Երբ փակես քո բնակարանի դուռը և մենակ մնաս, իմացի՛ր, որ քեզ բնակակից է



ամեն մի մարդու համար Աստծուց կարգված հրեշտակը, որին հելլենները անվանում են տնային ոգի: Նա մշտարթուն է և միշտ քեզ մոտ լինելով, ամեն ինչ տեսնում է: Նրան անհնար է խաբել, և խավարը ոչ մի բան չի ծածկում նրանից: Նրա հետ միասին նաև Աստծուն իմացիր, որ ամենուր ներկա է և գո է ամեն ինչում: Քանզի չկա մի վայր կամ որևէ նյութ, որի մեջ չլինի Աստված, Ով բոլորից անպարագրելին է և ամեն ինչ բովանդակում է Իր ձեռքում:

63. Եթե զինվորները թագավորին հավատարիմ են մնում նրանից կերակուր ստանալու համար, ապա մենք որքան առավել շատ պիտի ջանանք անլռելի շուրթերով Աստծուն գոհություն հայտնելով, առանց դադարի հաճո լինել Նրան, որ ամեն ինչ ստեղծել է մարդու համար:

64. Աստծուց գոհանալն ու բարեպաշտ կյանքը Աստծուն մատուցված հաճելի պտուղ է: Բայց ինչպես երկրի պտուղները մի ժամում չեն հասունանում, այլ ժամանակ, անձրև և խնամք է պահանջվում, այդպես էլ մարդկային պտուղներն են պահանջում ճգնություն, դատողություն, խոհե-

*մություն, սպասում, ժուժկալություն, համբերություն, մինչև կհայտնվեն իրենց ամբողջ փայլով: Իմիջիայլոց, եթե դրանց համար դու երբեմն որևէ մեկին բարեկրոն ես համարվում*, մի՛ հավատա ինքդ քեզ, քանի դեռ այս մարմնի մեջ ես և ոչինչ մի համարիր լիովին Աստվածահաճո: Քանզի գիտցիր, որ մարդուն դյուրին չէ մինչև վերջ պահպանել անմեղությունը:*

*65. Մարդկանց մեջ խոսքից ավելի ազնիվ բան չկա: Խոսքն այնքան կարևոր է, որ մենք Աստծուն խոսքով և գոհություն հայտնելով ենք պաշտում: Անպիտան կամ անազնիվ խոսքեր օգտագործելով բացահայտում ենք մեր հոգու անպիտանությունը: Անմիտ մարդուն հատկանշական է իր մեղքերի համար մեղադրել իր ծագումը կամ ուրիշ ինչ-որ պատճառ բերել, երբ նա ինքնահոժար վատ խոսք է օգտագործում կամ անբարի գործ է անում:*

*66. Եթե ջանում ենք տարբեր մարմնական հիվանդություններ բուժել, որպեսզի մեզ վրա չծիծաղեն, ապա շատ ավելի անհրաժեշտ է ամբողջ հոգածությամբ ջանալ բժշկելու հոգու հիվանդությունները, որ-*



*պեսզի մարդիկ Աստծու առաջ, Ում դեմ հանդիման դատավճիռ ենք ստանալու անազնիվ և ծանակման արժանի չգտնվենք: Քանզի ինքնիշխանություն ունենալով, մենք կարող ենք, եթե ցանկանանք, վատթար գործեր չանել նույնիսկ այն ժամանակ, երբ փափագում ենք: Նույնպես և մեր իշխանության ներքո է Աստծուն բարեհաճո ապրելը, և ոչ ոք մեզ երբեք որևէ վատթար գործ անել չի ստիպի, եթե մենք չցանկանանք: Այսպես ճգնելով՝ կլինենք Աստծուն արժանի մարդիկ, ապրելով երկնքի հրեշտակների նման:*

*67. Եթե ցանկանում ես, կարող ես կրքերի ստրուկ լինել, և եթե ցանկանում ես, կարող ես ազատ մնալ, չկքել կրքերի լծի տակ,քանզի Աստված քեզ ինքնիշխան է ստեղծել: Մարմնավոր կրքերին հաղթողը անապականությամբ է պսակվում: Եթե չլինեին կրքերը, չէին լինի նաև առաքինությունները, ոչ էլ Աստծուց արժանի մարդկանց տրվող պսակները:*

*68. Օգտակարը չտեսնողները և բարին չիմացողները հոգով խարխափում են, և նրանց դատողությունը կուրացած է: Պետք*

չէ նրանց նայել, որպեսզի մենք ևս անակն-
կալ նույնին չենթարկվենք կույրերի պես:

69. Մեղանչողների վրա պետք չէ բարկա-
նալ, անգամ եթե նրանց կատարած արարք-
ները պատժի արժանի լինեն: Մեղավորնե-
րին, հանուն արդարության, պետք է դարձի
բերել դեպի ճշմարտության ճանապարհները
և եթե պահանջվի, պատժել կա՛մ մեր ձեռ-
քով, կա՛մ ուրիշների միջոցով, իսկ նրանց
վրա բարկանալու կամ նեղսրտելու կարիք
չկա, որովհետև բարկությունը գործում է
միայն կրքով, այլ ոչ արդարությամբ: Պետք
չէ խրախուսել նրանց, ովքեր չափազանց ո-
ղորմասիրտ են, բայց չարերին պետք է պատ-
ժել հանուն բարու և արդարության, այլ ոչ
բարկության կիրքը բավարարելու համար:

70. Միայն հոգու ստացվածքն է անվ-
տանգ և անկողոպտելի, որն էլ առաքինի և
աստվածահաճո կյանքն է, բարի գործերն ի-
մանալն ու կատարելը: Հարստությունը
կույր առաջնորդ է և անմիտ խորհրդական:
Ով հարստությունը վատությամբ, միայն իր
հաճույքի համար է գործածում, նա կործա-
նում է իր գեջացած հոգին:



71. Մարդկանց պատշաճ է կա՛մ ամենևին
ավելորդ ոչինչ չհայթայթել, կա՛մ, այն ունե-
նալով, հաստատ համոզված լինել, որ ամե-
նայն նյութականը ինքնին ապականացու է,
դրա համար էլ, եթե ինչ-որ կորուստ պատա-
հի, պետք չէ հոգով տկարանալ:

72. Իմացի՛ր, որ մարմնական հիվանդութ-
յունները բնականաբար հատուկ են մարմ-
նին, իբրև ապականացուի և նյութականի:
Այսպիսով, նման հիվանդությունների դեպ-
քում, բարուն վարժված հոգին պետք է գո-
հաբանությամբ արիություն և համբերութ-
յուն ցուցաբերի և չկշտամբի Աստծուն, թե
ինչու է ստեղծել մարմինը:

73. Օլիմպիական խաղերում հաղթողները
պսակ են ստանում ոչ թե մեկին կամ մյու-
սին, կամ երրորդին, այլ ասպարեզ մտած բո-
լորին հաղթելուց հետո: Այդպես և յուրա-
քանչյուրը, ով Աստծուց պսակվել է ցանկա-
նում, պետք է իր հոգին ողջախոհության
վարժեցնի ոչ միայն մարմնական կրքերի
հարձակումների դեպքում, այլ այն ժամա-
նակ, երբ գայթակղվում է շահասիրությամբ,
ուրիշինը գողանալու ցանկությամբ, նա-
խանձով, հեշտասիրությամբ, սնափառութ-

յամբ, կշտամբանքներով, մահացու վտանգներով և նման այլ ախտերով:

74. Թող բարի և աստվածասեր կյանքի նախանձախնդիր լինենք ոչ թե մարդկային գովասանքի համար, այլ ընտրենք առաքինական կյանքը հոգու փրկության համար, քանզի մեր մահը ամեն օր մեր աչքերի առջև է, և ամենայն մարդկայինը անհաստատ է:

75. Մեր կամքն է ողջախոհությամբ ապրելը, բայց հարուստ դառնալը մեր կամքով չէ: Ուրեմն ի՞նչ: Պետք չէ՞ արդյոք մեր հոգուն դատապարտել վաղանցուկ և սնոտի փայլ ցանկանալու համար, որը ձեռք բերելու իշխանություն չունենք: Մի՞թե չգիտենք, որ բոլոր առաքինություններից ամենաբարձրը խոնարհությունն է, ինչպես որ բոլոր կրքերից ամենամեծը որկրամոլությունն է և կենցաղային բարիքների անհագ ցանկությունը:

76. Խոհական մարդը անընդհատ պետք է հիշի, որ այս կյանքում փոքր և կարճառոտ դժվարություններ կրելով,հետմահու կստանա մեծագույն մխիթարություն և հավիտենական երանություն: Կրքերի հետ մարտնչողն ու Աստծուց պսակվել ցանկացողը, եթե



մեղքի մեջ ընկնի էլ, թող փոքրոգության չտրվի և այդ անկման մեջ չմնա՝ իր մեջ հուսալքվելով: Այլ դարձյալ ոտքի ելնելով՝ թող մարտնչի և հոգ տանի պսակ ստանալու, մինչև վերջին շունչը ոտքի կանգնելով պատահող անկումներից հետո: Մարմնական դժվարությունները իսկապես առաքինությունների գործիքներ են և փրկարար են հոգու համար:

77. Կենցաղային հարմարություններից զրկվելը արիակամ մարդկանց և մարտնչողներին դարձնում է Աստծո պսակներին արժանի: Այսպիսով, այս կյանքում պետք է մեռցնել ամենայն ինչ, որ երկրային է, քանզի մեռածը այլևս ոչ մի կենցաղային բանի մասին չի հոգա:

78. Մտավոր և ճգնող հոգին ցավալի դեպք պատահելիս չպետք է ընկճվի և վախենա, որպեսզի երկչոտության պատճառով ծաղրուծանակ չլինի: Հոգու առաքինությունները մեզ հավիտենական բարիքների են արժանի դարձնում, մինչդեռ մարդկային ինքնահոժար մեղքերը իսկապես հավիտենական տանջանքների պատճառ են:

79. Մտավոր մարդը հոգու կրքերի հարձակմանն է ենթարկվում մարմնավոր զգայությունների միջոցով, որոնք կան բանական արարածների մեջ: Մարմնական զգայությունները հինգն են՝ տեսողություն, լսողություն, հոտառություն, ճաշակելիք և շոշափելիք: Դրանց միջոցով ընկնելով իր սեփական չորս կրքերի ազդեցության տակ, խեղճ հոգին գերեվարության է ենթարկվում: Հոգու այդ չորս կրքերն են՝ սնափառությունը, վայելքի փափագը, զայրույթն ու վախը: Բայց երբ մարդն իմաստությամբ և խոհականությամբ հաջող պատերազմելով հաղթահարի կրքերը, այդժամ արդեն հարձակումների չի ենթարկվի, այլ հոգով կխաղաղվի և որպես հաղթող կպսակվի Աստծուց:

80. Հյուրանոցներում հանգրվանողներից ոմանք անկողիններ են ստանում, իսկ ուրիշները, անկողին չունենալով, պառկում են գետնին և նույնքան խորն են քնում, ինչպես որ նրանք, որոնք անկողիններում են քնում: Գիշերվա վերջին սպասելով, առավոտյան և՛ նրանք, և՛ սրանք թողնում են անկողինները, և բոլորն էլ հավասարապես ելնում են հյուրանոցից՝ տանելով իրենց հետ միայն իրենց



սեփականը: Այս նույն եղանակով էլ այս կյանքի ճանապարհներով ընթացողները, թե՛ նրանք, ովքեր ապրել են չափավոր ստացվածքով, և թե՛ նրանք, ովքեր ապրել են փառավոր և հարուստ՝ այս կյանքից ելնում են ինչպես հյուրանոցից, իրենց հետ ոչ մի բան չվերցնելով կենցաղային հեշտություններից և հարստությունից, այլ միայն իրենց իսկ կատարած գործերը, որ արել են այս կյանքում, բարի կլինեն դրանք, թե՝ չար:

81. Մեծ իշխանություն ունենալով՝ որևէ մեկին մահվամբ մի սպառնա՝իմանալով, որ դու էլ ես մահվան ենթակա, և որ ամեն հոգի, վերջին հանդերձի նման իրենից հանում է իր մարմինը: Սա պարզ հասկանալով՝ ճիգ արա հեզ լինել, բարիք գործելով՝ միշտ գոհություն հայտնիր Աստծուն: Ով անողորմ է, նա իր մեջ առաքինություն չունի:

82. Մահից խուսափել անհնար է և եղանակներ չկան: Իմանալով սա՝ ճշմարտապես խելամիտ մարդիկ, փորձառությամբ առաքինությունների և աստվածասեր մտածմանը վարժված լինելով, մահը դիմավորում են առանց անհույս ողբալու, մտքում ունենա-

լով, որ այն մի կողմից անխուսափելի է, իսկ մյուս կողմից ազատագրվում ենք չարիքներից, որոնց ենթակա ենք լինում այս կյանքում:

83. Բարի և աստվածահաճո կյանքը մոռացածներին և ճիշտ ու աստվածասեր ուսմունքին հակառակ իմաստասիրողներին պետք չէ ատել, այլ մանավանդ խղճալ որպես դատողականությունից պակասածների և սրտով ու բանականությամբ կուրացածների, քանզի չարը բարու փոխարեն ընդունելով, նրանք կործանվում են անգիտությունից: Երիցս անիծյալ և հոգով անմիտ լինելով, նրանք նաև Աստծուն չեն ճանաչում:

84. Ամեն մեկի հետ բարեպաշտության և բարի կենցաղվարության մասին զրույցի մի բռնվիր: Ոչ թե նախանձից եմ այսպես խոսում, այլ նրա համար, որ, ինչպես կարծում եմ, անմտագույնի առջև ծիծաղելի կերևաս: Նմանը նմանին է համակրում, իսկ այդպիսի զրույցների համար շատ չեն ունկնդիրները, կամ իսկն ասած, շատ քիչ են՝ հազվադեպ: Դրա համար էլ ավելի լավ է չխոսել, քանի որ դա չէ Աստված ցանկանում մարդու փրկության համար:



85. Հոգին չարչարակից, կարեկից է մարմնին, իսկ մարմինը հոգուն կարեկից չէ: Այսպես, երբ մարմինը խոշտանգում են, նրա հետ չարչարվում է նաև հոգին, և երբ մարմինը ամուր և առողջ է, հոգու զգայություններն էլ գվարթ են լինում: Բայց երբ հոգին խորհրդածում է, մարմինը նրա հետ չի խորհրդածում, այլ մնում է ինչպես որ կա ինքնին, հետ մնալով հոգու շարժումից: Քանզի խորհրդածությունը հոգու ցավագին զգայությունն է, ինչպես և անգիտությունը, հպարտությունը, անհավատությունը, շահախնդրությունը, ատելությունը, նախանձը, բարկությունը, փոքրոգությունը, երկչոտությունը, բարության անզգայությունը, իսկ այս ամենը հոգին է ծնում:

86. Խորհելով Աստծու մասին, եղիր բարեպաշտ, աննախանձ, բարի, ողջախոհ, հեզ, կարեցածի չափ մեծահոգի, կարեկից, չվիճաբանող, քանզի հոգու անկողոպտելի հարստությունն է այս ամենով Աստծուն հաճո լինելը, ինչպես նաև ոչ մեկին չդատելը և ոչ մեկին չվատաբանելը, այլ բարվոք է քննարկել, հետազոտել, հետախուզել քո վատթար գործերը և քո կյանքը քննել ինքդ

քո հետ. արդյո՞ք հաճելի է այն Աստծուն: Մեզ ինչ, որ մեկը ուրիշ լավը չէ:

87. Ճշմարիտ մարդը ջանում է բարեպաշտ լինել, բարեպաշտ է նա, ով օտար բանի չի ձգտում: Իսկ մարդու համար օտար է ամենայն արարվածը: Այսպիսով, արհամարհիր ամեն ինչ, քանի որ Աստծո պատկերն ես: Մարդը Աստծո պատկերն է լինում, երբ ապրում է արդար և աստվածահաճո, իսկ դա անհնար է լինում, եթե մարդը չհրաժարվի ամենայն ցանկալիից: Ում միտքն աստվածասեր է, նա փորձառու է այն ամենում, ինչը փրկարար է հոգու համար և իրենից պահանջվող ամեն տեսակ ջերմեռանդության մեջ: Աստվածասեր այրը ուրիշ մեկին չի մեղադրում, կշտամբում, որովհետև գիտի, որ նաև ինքն է մեղանչում, և սա փրկվող հոգու հատկությունն է:

88. Ովքեր մեծ ճիգով ջանում են ժամանակավոր ստացվածք ունենալ և, մոռանալով իրենց հոգու մահվան և կորստյան մասին, սիրում են չար գործերի հաճելի ցանկությունը, իսկ այն ամենի մասին, ինչն իրենց համար փրկարար է, հոգ չեն տանում, թշվառ են և մտքով չեն տեսնում, թե մար-



դիկ ինչ են հետմահու կրում չարիքից:

89. Աստված չարի պատճառը չէ: Նա պարգևել է մարդուն բանականություն, չարն ու բարին զանազանելու ընդունակություն և ինքնիշխանություն: Մինչդեռ չար կրքերը ծնվում են մարդկանց զանցառությունից, անփութությունից և անհոգությունից: Դրանց համար Աստված ամենևին մեղավոր չէ: Կամքի ազատ ընտրությամբ սատանաները չար դարձան, նույնպես և մարդկանց մեծ մասը:

90. Բարեպաշտ մարդը թույլ չի տալիս, որ չարը սողոսկի իր մեջ: Իսկ երբ հոգու մեջ չար չկա, ապա նա վտանգից զերծ և անվեհեր է լինում: Այդպիսիների վրա ո՛չ չարագնած դևը, ո՛չ դիպվածները իշխանություն չունեն: Աստված նրանց ազատագրում է չարիքներից և նրանք ապրում են անվնաս պահպանված, ինչպես աստվածանմանները՝ հրեշտակները: Երբ մեկն այդպիսի մարդուն գովի, նա ինքն իր մեջ ծաղրում է իրեն գովողներին, երբ անպատվում են, չի պաշտպանվում իրեն պախարակողների առաջ, չի տրտնջում դրա համար, որ նրանք իր մասին այդպես են խոսում:

*91. Չարիքը փակչում է բնությանը, ինչպես ժանգը պղնձին, և կեղտոտությունը՝ մարմնին: Բայց ինչպես որ ո՛չ պղնձագործն է առաջ բերել ժանգը և ոչ ծնողները՝ կեղտոտվածությունը, այդպես էլ Աստված չէ չարիքն առաջ բերել:*

*Նա մարդուն պարգևել է խորհրդական միտք, հասկացողություն և ճանաչողական լույս, որպեսզի խուսափի չարից, իմանալով, որ այն վնասակար է իր համար և իրեն տանջանք է պատրաստում: Ուշադի՛ր եղի՛ր, երբ նայելով տեսնես մեկին հարստությամբ և ուժով երջանկացած, որևէ կերպ նրանի մի՛ տուր նրան՝ սատանայի պատրանքին ենթարկվելով, փառավոր մի՛ համարիր, մի՛ մեծարիր: Այլ նույն այդ ժամին թող քո աչքերի առջև մահը լինի, և դու երբեք չես փափագի ոչ մի վատթար կամ կենցաղային բան:*

*92. Մեր Աստվածը նրանց, ովքեր երկնքում են, պարգևեց անմահություն, իսկ նրանց,ովքեր երկրի վրա են, ստեղծեց փոփոխվելու ենթակա: Բոլորին պարգևեց կյանք և շարժում և այդ ամենը՝ մարդու համար: Ուրեմն թող քեզ չգրավեն կենցաղային հրապույրները, երբ սատանան սկսի չար մտածումներ դնել քո հոգու մեջ, այլ նույնժամ հիշիր երկնային բարիքների մասին և ինքդ քեզ ասա. եթե ուզենամ, իմ իշխանության մեջ է հաղթել նաև կրքերի ընդվզումը, սակայն ես չեմ հաղթանակի, եթե ուզենամ բավարարել իմ ցանկությունը: Այսպիսի ահա ճիգով տքնիր, որը կարող է քո հոգին փրկել:*

*93. Կյանքը իմացականի, հոգու և մարմնի միավորումն ու զուգորդությունն է : Իսկ մահը ոչ թե կործանումն է այդ զուգորդվածների, այլ նրանց միության լուծարումն է: Այդ բոլորը Աստված պահպանում է նաև լուծարումից հետո:*

*94. Միտքը հոգին չէ, այլ հոգին փրկող Աստծո պարգևը: Աստվածահաճո միտքը ընթանում է հոգու առջևից և խորհուրդ է տալիս նրան արհամարհել ժամանակավորը, նյութականն ու ապականացուն, այլ փոխարենը սիրել հավիտենական, անապական և աննյութական բարիքները, այնպես որ մարդն, ապրելով մարմնում,թող մտաբերի և որպես թե հայելու մեջ՝ տեսնի երկնայինն ու Աստվածայինը: Այսպիսով, աստվածասեր*

*միտքը մարդկային հոգու բարերարն ու փրկիչն է:*

*95. Հոգին, տեղիք տալով մարմնին, մթագնվում է հաճույքով և կործանվում: Աստվածասեր միտքը գործում է դրան հակառակ: Նա վիշտ է պատճառում մարմնին և հոգին ազատում մարմինը վիրահատող բժշկի նման:*

*96.Այն հոգիները, որոնք չեն սանձահարվում իմացականությամբ և չեն կառավարվում մտքով, որը կկարգավորեր, կզսպեր և կուղղորդեր (ուր պետք է) նրանց կրքերը, այսինքն՝ ցավն ու հաճույքը, այդպիսի հոգիները կործանվում են անմիտ կենդանիների նմանությամբ, քանզի նրանց բանականությունը զբաղված է լինում կրքերով,ինչպես կառապանը՝ սանձակոտոր եղած ձիերով:*

*97. Հոգու համար մեծագույն ցավ է, հետին փորձանք և կործանում Աստծուն՝ ամենայն ինչ մարդու համար ստեղծողին և նրան միտք և խոսք պարգևողին չճանաչելը, որոնցով ավելի ու ավելի վեր բարձրանալով՝ նա կարող է հաղորդ լինել Աստծուն՝ փառաբանելով նրան:*

*98.Հոգին մարմնի մեջ է, հոգու մեջ՝ միտ-*



*քը, մտքի մեջ՝ խոսքը, որոնց միջոցով ճանաչվող և փառաբանվող Աստված անմահացնում է հոգին, պարգևելով նրան անապականություն և հավիտենական վայելք, քանզի Աստված Իր բարերարությամբ գոյություն պարգևեց բոլոր էակներին:*

*99. Աստված՝ որպես բարերար և շնորհատու, մարդուն արարելով ինքնիշխան, նրան հնարավորություն տվեց, որ եթե ցանկանա, հաճո լինի Աստծուն: Իսկ Աստծուն հաճո է, որ մարդու մեջ չարը չլինի, մարդը չարություն չունենա: Քանզի եթե մարդիկ գովաբանում են սուրբ և աստվածասեր հոգու լավ գործերն ու առաքինությունները, իսկ ամոթաբեր և չար գործերը դատապարտում են, ապա որքան առավել է դա անում Աստված, որ ցանկանում է փրկել մարդուն:*

*100. Մարդ բարին ստանում է Աստծուց ՝ որպես բարուց, իսկ չարին մարդ ենթարկվում է ինքն իրենից, իր մեջ եղած չարից, հեշտասիրությունից և անզգամությունից:*

*101. Անխորհուրդ հոգին,որ բնույթով անմահ է և մարմնի տերն է, զգայական հաճույքների հետևելով, դառնում է մարմնի ստրուկը՝չհասկանալով, որ մարմնի փափ-*

*կությամբ հեշտանալը հոգու կորուստ է: Սակայն, ընկնելով անզգայության մեջ և հիմարանալով, նա խնամքով հոգ է տանում այդ մարմնի հաճույքների բավարարման համար:*

*102. Աստված բարի է, իսկ մարդը՝ չար: Երկնքում չար չկա, իսկ երկրի վրա չկա ճշմարիտ բարի: Բայց հոգևոր մարդն ընտրում է լավագույնը, ճանաչում է ամենայնի Աստծուն, գոհաբանում է Նրան, մինչդեռ մարմնի նկատմամբ մինչև մահ քամահրանք է դրսևորում և նրա չար ցանկություններին թույլ չի տալիս իրականանալ, ճանաչելով դրանց կորստաբեր լինելն ու չար ներգործությունը:*

*103. Մեղսասեր մարդը սիրում է շատ ստացվածք հայթայթել, իսկ արդարության համար անհոգ է լինում, չխորհելով կյանքի անստույգության մասին և չհիշելով մահվան անկաշառության և անխուսափելիության մասին: Իսկ եթե այդպիսի անարգ և անխորհուրդ մեկը նաև ծերության մեջ է, ապա փտած ծառի նման ոչ մի գործի պիտանի չէ:*

*104 Մենք հաճույք և ուրախություն զգում ենք վիշտը ճաշակելուց հետո, քանզի*



*հաճույքով չի խմում նա, ով ծարավով չի պապակվել, հաճույքով չի ուտում նա, ով չի քաղցել, քաղցր չի քնում նա, ում սաստիկ ուժգին չի պարուրել քունը, ուժգին ուրախություն չի զգում նա, ով նախկինում սուգի մեջ չի եղել: Ճիշտ այդպես նաև հավիտենական բարիքներով չենք քաղցրանա, եթե չարհամարհենք ժամանակավորը:*

*105. Խոսքը մտքի ծառան է: Խոսքն արտահայտում է այն,ինչ միտքն ուզում է:*

*106. Միտքն ամեն ինչ տեսնում է, անգամ այն, ինչ երկնքում է, նրան ոչ մի բան չի մթագնում, բացի միայն մեղքից: Իսկ մտքի համար անըմբռնելի ոչինչ չկա, ինչպես նաև նրա խոսքի համար անճառելի ոչինչ չկա:*

*107. Մարդը մարմնով մահկանացու է, իսկ մտքով՝ անմահ: Լռելով՝ դու մտածում ես, ինչպես մտածելով՝ խոսում ես քո մեջ, քանզի լռության մեջ միտքը խոսք է ծնում: Իսկ Աստծուն մատուցվող գոհաբանական խոսքը մարդու համար փրկություն է:*

*108.Անմտաբար խոսողը միտք չունի, քանզի խոսում է՝ ոչինչ չմտածելով: Սակայն քննի՛ր, թե ինչն է քեզ օգտակար անել հոգու փրկության համար:*

109. Հոգեչահ և մտածված խոսքը Աստծո պարգև է: Ընդհակառակը, անհանճար խոսքը, որն ուզում է որոշել երկնքի և երկրի միջև չափն ու հեռավորությունը, արեգակի ու աստղերի մեծությունը, ընդունայն մարդու գյուտ է, որը կեղակարծ սնապարծությամբ փնտրում է այն, ինչը իրեն ոչ մի օգուտ չի բերում, ասես ուզենալով ցանցով ջուր հավաքել, քանզի դա մարդկանց համար անհնար է գտնել:

110. Երկինքը ոչ ոք չի տեսնում, բացի առաքինասեր կյանքի նախանձախնդիր մարդուց, որը գիտակցում և փառաբանում է մարդու փրկության և կյանքի համար երկինքն Արարողին: Այդպիսի աստվածասեր այրն անկասկած գիտի, որ առանց Աստծո ոչինչ չկա, որ նա ամենուր է և ամենագո՝ իբրև Աստված ոչնչով սահմանափակված չլինելով:

111. Ինչպես որ մայրական որովայնից մարդն է լույս աշխարհ գալիս, այդպես մարմնից հոգին է մերկ ելնում, և մեկը լինում է պայծառ և մաքուր, մեկը ՝անկումներից ապականված, մյուսը՝ բազում հանցանքներից սևացած: Ուստի և խոհեմ ու



աստվածասեր հոգին, հիշելով և խորհրդածելով հետմահու փորձանքների և վայրիվերումների մասին, բարեպաշտությամբ է ապրում, որպեսզի չդատապարտվի և չընկնի դրանց մեջ: Իսկ անհավատները չեն զգում և մեղանչում են՝ անմիտ հոգով արհամարհելով այնտեղ լինելիքը:

112. Ինչպես որովայնից ծնվելով չես հիշում, թե ինչ էր որովայնում, այնպես էլ մարմնից դուրս գալով չես հիշում այն, ինչ կար մարմնի մեջ:

113. Ինչպես որովայնից դուրս գալով՝ դու դարձար մարմնով ավելի լավը և ավելի մեծ, այնպես մարմնից մաքուր և անապական դուրս գալով՝ կլինես առավել լավն ու անապական՝ կենալով երկնքում:

114. Ինչպես մարմինը, կատարելապես զարգանալով մոր որովայնում, պետք է ծնվի, այնպես էլ հոգին, հասնելով Աստծուց կանխորոշված մարմնավոր կյանքի սահմանին, պետք է դուրս ելնի մարմնից:

115. Ինչպես դու կվերաբերվես հոգու հետ, քանի դեռ նա մարմնի մեջ է, այնպես էլ նա կվերաբերվի քո հետ՝ դուրս գալով մարմնից: Այստեղ լավ ծառայելով քո մարմ-

նին, նրան վայելքներ մատակարարելով՝ ինքդ քեզ վատթար ծառայություն կմատուցես հետմահու (ինչպես հայտնի է հարուստի և աղքատ Ղազարոսի առակից), քանզի անմտորեն դատապարտության կմատնես հոգիդ:

116. Ինչպես մոր արգանդից անկատար դուրս եկած մարմինը չի կարող ապրել, այնպես էլ մարմնից դուրս եկած հոգին, աստվածտեսության չհասնելով բարեպաշտ կյանքով, չի կարող փրկվել կամ Աստծո հետ հաղորդության մեջ լինել:

117. Մարմինը, միավորվելով հոգու հետ, լույս աշխարհ է ելնում որովայնի խավարից, իսկ հոգին, միավորվելով մարմնին, պարփակվում է մարմնի խավարում: Դրա համար հարկավոր է ոչ թե խղճալ, այլ սանձահարել մարմինը, որպես հոգու հակառակամարտի և թշնամու, քանզի կերակուրների բազմազանությունը և քիմքի համար հաճելին մարդկանց մեջ չար կրքեր են գրգռում, մինչ որովայնը զսպելը խաղաղեցնում է կրքերը և փրկում հոգին:

118. Մարմնավոր տեսողության գործարանը աչքերն են, իսկ հոգու տեսողության



գործարանը՝ միտքը: Ինչպես աչքեր չունեցող մարմինն է կույր, չի տեսնում ամբողջ երկիրն ու ծովը լուսավորող արեգակը, այնպես էլ շնորհակալ միտք և բարի կյանք չունեցող հոգին է կույր՝ չի հասկանում և չի փառավորում Աստծուն, բոլոր արարվածների Արարչին ու Բարերարին, ուստի և չի կարող արժանանալ Նրա անապականությանը և վայելել հավիտենական բարիքները:

119. Աստծուն չիմանալը հոգու անմտությունից և անզգամությունից է: Այդ չիմացությունից չարիք է ծնվում,իսկ աստվածիմացությունից մարդկանց բարին է գալիս և փրկում հոգին: Այսպիսով, եթե մնալով սթափ արթնության, զգոնության և աստվածիմացության մեջ, դու ջանում ես չիրագործել քո ցանկությունները, ապա քո միտքը ուղղված է առաքինություններին, իսկ եթե արբենալով Աստծո չիմացությամբ՝ քո հաճույքի համար ջանում ես քո չար ցանկությունները իրագործել, ապա կկործանվես անասունների նման, չմտաբերելով այն փորձանքները, որոնք հանդիպելու են քեզ հետմահու:

*120. Նախախնամության գործերից է նաև այն, ինչը լինում է երկրի համար Աստծու նախասահմանված անբեկանելի կարգով, ինչպես օրինակ այն, որ ամեն օր արևը ծագում և մայր է մտնում և երկիրը պտուղ է բերում: Եվ այս բոլորը մարդու համար է արարված:*

*121. Ինչը Աստված է արարում որպես Բարերար, մարդու համար է արարում, իսկ ինչը մարդն է անում, անում է ինքն իր համար, ինչպես բարին, այնպես և չարը: Որպեսզի չար մարդկանց բարօրության առնչությամբ թյուրիմացության մեջ չլինես, իմացի՛ր, որ ինչպես քաղաքները դահիճներ են պահում ոչ թե նրանց չարագույն հոժարությունը գովաբանելու, այլ նրանց միջոցով պատժի արժանացածներին պատժելու համար, այդպես էլ Աստված չարերին թույլ է տալիս գերիշխելու կենցաղայինի մեջ նրա համար, որպեսզի նրանց միջոցով պատժի ամբարիշտներին: Իսկ հետո հենց նրանց է դատաստանի մատնում, որովհետև նրանք մարդկանց չարիք էին պատճառում ոչ թե Աստծուն ծառայելով, այլ իրենց յուրահատուկ չարությանը ստրկաբար հագուրդ տալով:*



*122. Եթե կուռքեր պաշտողներն իմանային և սրտով տեսնեին, թե ինչ են պաշտում, ապա այդ թշվառները չէին խոտորվի բարեպաշտության ճանապարհից, այլ մտահայելով Աստծո արարչագործության ողջ վեհությունը, կարգն ու խորհուրդը, թերևս ճանաչեին այդ ամենը մարդու համար Արարողին:*

*123. Մարդը կարող է սպանել, մինչդեռ Աստված շարունակաբար կյանք է տալիս նաև անարժաններին: Լինելով աննախանձ (բոլորի նկատմամբ առատաձեռն) և էությամբ բարի՝ Նա կամեցավ, որպեսզի աշխարհը լինի, և այն եղավ և շարունակում է մնալ մարդու և նրա փրկության համար:*

*124. Հիրավի նա է մարդ, ով հասկացավ, թե ինչ է մարմինը, այսինքն, որ այն ապականացու և վաղանցուկ է: Այդպիսի մարդը նաև հոգին է հասկանում (ինչպես հարկն է), այսինքն, որ այն աստվածային է և անմահ և, լինելով Աստծո կենդանության շունչը, միավորված է մարմնին փորձվելու և բարձրանալով՝ աստվածանմանությանը հասնելու համար: Իսկ ով հոգին հասկացել է, ինչպես հարկն է, ապրում է արդարությամբ և Աստծուն հաճո կյանքով՝ չվստահելով մարմնին*

և չկատարելով Նրա քմահաճույքները:

Մտքով Աստծուն անդրադառնալով, նա մտովի տեսնում է նաև Աստծուց հոգուն տրվող հավիտենական բարիքները:

125. Աստված, լինելով բարի և առատաբաշխ, մարդուն չարի և բարու ընտրության ազատություն տվեց՝ որպես պարգև օժտելով բանականությամբ, որպեսզի, տեսնելով աշխարհը և այն ամենը, ինչ կա աշխարհում, նա ճանաչի ամենայն ինչ մարդու համար Արարողին: Սակայն անիրավը կարող է ուզենալ և չհասկանալ դա, կարող է նաև ի թշվառություն իրեն, չհավատալ և խորհել հակառակ ճշմարտության: Ահա այսպիսի ազատություն ունի մարդը չարի և բարու առնչությամբ:

126. Այդպիսին է Աստծո վճիռը, որպեսզի մարմնավոր աճի հետ հոգին կատարելագործվի մտքով, որպեսզի մարդը բարու և չարի համեմատությունից ընտրի մտքի համար պատշաճը, այն է՝ բարին, իսկ բարին չնտրող հոգին մտքից զուրկ է: Ուստի և չնայած բոլոր մարմնավորները հոգի ունեն, սակայն չի կարելի ասել, թե ցանկացած հոգի միտք ունի: Աստվածասեր միտքը լինում



է ողջախոհների, գերաշնորհների, արդարների, սրբվածների, մկրտվածների, ողորմածների և բարեպաշտների մեջ: Մտքի առկայությունը մարդուն զորավիգ է լինում Աստծու հետ Նրա հարբերություններում:

127. Մարդու համար միայն մի բան է անհնար՝ մահկանացու չլինելը: Նա կարող է Աստծո հետ հաղորդություն ունենալ, եթե հասկանա, թե ինչպես է դա հնարավոր: Քանզի ցանկության և (գործը) հասկանալու դեպքում, հանուն հավատի և սիրո, որը վկայվում է  բարի կյանքով, մարդը դառնում է Աստծուն զրուցակից:

128. Աչքը տեսնում է տեսանելին, իսկ միտքը հասնում է անտեսանելիին: Աստվածասեր միտքը հոգու լույսն է: Ով աստվածասեր միտք ունի, նա նվիրագործված է սրտով և իր մտքով տեսնում է Աստծուն:

129. Ոչ մեկը, որ բարի է, անարգ չէ: Ով բարի չէ, նա հարկավ և՛ չար է, և՛ մարմնասեր: Մարդու սկզբնական առաքինությունը զգայականը արհամարհելն է: Ժամանակավոր, ապականացու և նյութեղեն բարիքներից կամովին, այլ ոչ աղքատության պատճառով հրաժարվելը մեզ դարձնում է հավի-

տենական և անապական բարիքների ժառանգորդ:

130. Ով միտք ունի, նա գիտի ինքն իր մասին, թե ինքն իրոք ինչ է՝ ապականացու մարդ: Իսկ իրեն ճանաչողը գիտի նաև մնացած ամեն ինչի մասին, որ Աստծու արարչությունն է և ստեղծված է մարդու փրկության համար: Այսպես, մարդը կարողություն ունի ամեն ինչ իմանալու և ճշմարտապես հավատալու: Այդպիսի այրը հաստատապես գիտի, որ կենցաղային բարիքները արհամարհողները շատ մեծ չարչարանք են կրում, իսկ հետմահու մխիթարություն և հավիտենական հանգիստ են ստանում Աստծուց:

131. Ինչպես որ մարմինն առանց հոգու մեռած է, այնպես էլ հոգին առանց մարմնի անպտուղ է և Աստծուն որպես շնորհի ունենալ չի կարող:

132. Միայն մարդուն է Աստված լսում, միայն մարդուն է Աստված հայտնվում: Քանզի մարդասեր է Աստված, և ուր էլ որ մարդը լինի, այնտեղ կա նաև Աստված: Միայն մարդն է Աստծուն արժանի երկրպագու: Մարդու համար է Աստված կերպարանափոխվում:



133. Մարդու համար է Աստված ստեղծել աստղազարդ երկինքը, մարդու համար է ստեղծել երկիրը և մարդիկ իրենց համար են այն մշակում: Աստծո այդպիսի տնօրինությունը չզգացողները հոգով մոլորված են:

134. Բարին անտեսանելի է, ինչպես անտեսանելի է երկնքում եղողը, իսկ չարը տեսանելի է, ինչպես տեսանելի է երկրի վրա եղածը: Բարիքը համեմատություն չունեցող ինչ մի է, իսկ միտք ունեցող մարդը ընտրում է բարեգույնը: Միայն մարդն է ընդունակ ճանաչել Աստծուն և Նրա արարումները:

135. Հոգու մեջ գործում է միտքը, իսկ մարմնի մեջ՝ բնությունը: Միտքը աստվածացնում է հոգին, իսկ բնությունը քայքայում է մարմինը: Ամեն մարմնի մեջ գործում է բնությունը, բայց ոչ ամեն հոգու մեջ է միտք լինում, որի համար էլ ոչ բոլոր մարմիններն են փրկվում:

136. Հոգին աշխարհում կա որպես ծնյալ, իսկ միտքը աշխարհից վեր է որպես անծին: Այն հոգին, որն հասկանում է, որ կա աշխարհ և ուզում է փրկվել,անփոփոխ օրենք ունի՝ ամեն օր ինքն իր մեջ խորհելու, որ ա-

հա այս է մահացու գոտեմարտը և գործերի դատաքննությունը, որի ժամանակ չես դիմանա Դատավորի հայացքին, և ասես հոգին կործանվում է: Այսպես խորհելով, նա իրեն հեռու է պահում չնչին և անարգ հաճույքներից:

137. Աստված երկրի վրա ծնունդ ու մահ է սահմանել, իսկ երկնքում ամենայն ինչ կատարյալ և անխախտ է: Իսկ ամեն ինչ արարված է մարդու և նրա փրկության համար: Ոչ մի բարիքի կարիք չունենալով՝ Աստված մարդու համար կազմեց երկինքը, երկիրն ու տարերքները, դրանց միջոցով ընձեռելով, որ մարդը ամենայն վայելք ստանա բարիքներից:

138. Աստծո ողորմության և մարդասիրության շնորհիվ մահկանացուն ենթակա է անմահին և ծառայում է նրան. այն է `տարերքները ի սպաս են դրված մարդկանց

139. Վնասելու ուժ չունեցող աղքատամիտ տկարը չի դասվում գործնական բարեպաշտների կարգին: Սակայն ով կարող է վնաս պատճառել և չի գործադրում իր ուժը չար գործի համար, այլ Աստծո առաջ իր բարեհոժարությամբ խղճում է ընկածներին,



հետմահու բաժնեկից է լինում բարիներին տրվելիք պարգևներին:

140. Մեր Արարիչ Աստծո մարդասիրությամբ փրկության շատ ճանապարհներ կան, որոնք դարձի են բերում հոգիները և երկինք բարձրացնում: Մարդկային հոգիները առաքինության համար պարգևներ են ստանում, իսկ մեղքերի համար՝ պատիժներ:

141. Հայրը Որդու մեջ է, Հոգին՝ Որդու, Հայրը՝ երկուսի մեջ: Հավատով մարդ ճանաչում է ամենայն աներևույթը և այն ամենը, ինչը հասանելի է մտքին: Իսկ հավատը հոգու ազատ համոզումն է այն ամենի մեջ, ինչը հայտնվում է Աստծուց:

142. Ինչպես որ նրանք, որոնք ինչ որ կարիքներից դրդված և հանգամանքների բերմամբ ստիպված են լինում լողալով անցնել մեծ գետեր, եթե սթափ են լինում, ողջ են մնում, քանզի եթե անգամ ջրերի ուժեղ հորձանք պատահի, եթե անգամ նավակը ջրով լցվի, նրանք փրկվում են որևէ իրից բռնվելով, որ լինում է սովորաբար ափերի մոտ: Իսկ եթե հարբում են, ապա թեկուզ և բազում անգամ ջանան ափին հասնել, գինուց հաղթահարվելով խորասուզվում,

*ընկղմվում են ալիքների մեջ և ողջերի շրջանակից դուրս են մնում: Ճիշտ այդպես էլ հոգին, ընկնելով կյանքի ալիքների և շրջապտույտի մեջ, եթե դուրս չգա մարմնասիրության լծի տակից և չճանաչի ինքն իրեն, որ ինքը, լինելով աստվածային և անմահ, բազում մեղքերով է լի և սակավահավատ, նյութեղեն մարմնի հետ միավորված է միայն փորձության համար և, ի կործանումն իրեն, թույլ տա տարվելու մարմնավոր կրքերով, ապա որպես ինքն իրեն արհամարհող, անիմացությամբ արբեցած և իր մասին չհոգացող, կործանվում է և դուրս է մնում փրկվողների շրջանակից: Քանզի մարմինը գետի նման հաճախ մեզ կործանարար հաճույքների մեջ է ներքաշում:*

*143. Բարի մտադրության մեջ անսասան հաստատված խելամիտ հոգին բարկությունն ու հեշտասիրությունը՝ իր այդ անմտագույն կրքերը, սանձահարում է ինչպես ձիու և քանզի մարտնչում է դրանց դեմ, զսպելով և հաղթահարելով դրանք՝ պսակվում է և արժանանում երկնքում լինելու, իր Արարիչ Աստծուց դա (որպես վարձք ստանալով) ցանքի և աշխատությունների համար:*



*144. Ճշմարտապես խելամիտ հոգին չարերի երջանկությանը և անարժանների բարօրությանը նայելով, չի վրդովվում, խորհելով նրանց՝ այս կյանքում վայելած հաճույքների մասին, ինչպես դա անում են անխոհեմ մարդիկ: Քանզի այդպիսի հոգին հստակ գիտի և՛ երջանկության անհաստատությունը, և՛ այստեղ գոյություն ունենալու անհայտությունը, և՛ այս կյանքի կարճաժամկետ լինելը, և՛ դատարանի անաչառությունը և հավատում է, որ Աստված աչքաթող չի անում այն ամենը, ինչ անհրաժեշտ է իր կերակրվելու համար:*

*145. Մարմնասեր կյանքն ու այս կյանքում մեծ հարստությամբ և իշխանությամբ քաղցրանալն ու փափկանալը հոգու համար մահ է: Ընդհակառակը, աշխատությունը, համբերությունը, աղքատությունը գոհությամբ տանելը և մարմնի զրկանքը և մահացումը հոգու կյանքն է և հավիտենական մխիթարության ճանապարհը:*

*146. Խելամիտ հոգին, արհամարհելով նյութականի ձեռքբերումը և ժամանակավոր կյանքը, ընտրում է երկնային մխիթարությունը և հավիտենական կյանքը, որն էլ*

կստանա Աստծուց բարի կյանքի համար:

147. Կեղտոտ հագուստ կրողները կեղտոտում են ուրիշների զգեստները: Ճիշտ այդպես էլ չար բարքով և անուղղելի վարքով մարդիկ, հարաբերվելով առավել պարզամիտների հետ և անպատշաճ խոսքեր ասելով նրանց, ասես ցեխ քսելիս լինեն, լսողության միջոցով պղծում են նրանց հոգին:

148. Մեղքի սկիզբը հեշտասիրությունն է, որի միջոցով կործանվում է խելամիտ հոգին: Իսկ փրկության ու Երկնային Արքայության սկիզբը հոգու համար սերն է:

149. Ինչպես անուշադրության մատնված, դեն գցված և անհրաժեշտ հոգածությունից զերծ մնացած լինելով՝ պղինձն է վնասվում ժանգով, որը նրա վրա հայտնվում է երկար ընկած մնալու և չգործածվելու պատճառով անպետք է դառնում, այդպես էլ հոգին, անգործ մնալով և հոգ չտանելով բարի կյանքի և դեպի Աստծված դարձի գալու համար, իր չար գործերով իրեն զրկելով Աստծու հովանուց, վարակվում է այդպիսի անհոգության հետևանքով մարմնի նյութի մեջ առաջ եկած չարով, դրանով իսկ փրկության համար դառնալով անպտուղ և ոչ պիտանի:



150. Աստված բարի է, աննախանձ և անփոփոխ: Եթե մեկը ճշմարիտ խոստովանում է, որ Աստված չի փոփոխվում, սակայն անգիտանում է, թե նա, այդպիսին լինելով, ինչպես է բարիների համար ուրախանում, չարերից երես թեքում, մեղավորների վրա զայրանում, իսկ երբ նրանք զղջում են, ողորմած է, հայտնվում է նրանց, ապա սրա մասին պետք է ասել, որ Աստված ոչ ուրախանում է և ոչ էլ զայրանում, քանզի ուրախությունը և զայրույթը վատթար կրքեր են: Հիմարություն է մտածել, թե Աստված սարսվում է մարդկային գործերի հետևանքով: Աստված բարի է և միայն բարիք է արարում, միշտ միևնույնը մնալով, երբևէ որևէ մեկին չի վնասում: Իսկ մենք, երբ բարի ենք լինում, ապա հաղորդ ենք լինում Աստծուն ըստ Իր նմանության, իսկ երբ չար ենք դառնում, ապա բաժանվում ենք Աստծուց ըստ Նրան նման չլինելու: Բարեպաշտությամբ ապրելով՝ մենք Աստծունն ենք լինում, իսկ չարանալով՝ դառնում ենք Նրանից մերժված: Իսկ դա չի նշանակում, թե Նա բարկություն ունենացավ մեր վրա, այլ այն, որ մեր մեղքերը Աստծուն թույլ չեն

տալիս մեր մեջ պայծառանալու, այլ մեզ չարչարող դևերի հետ են միավորում: Իսկ եթե մենք հետո աղոթքներով և բարեգործություններով մեղքերից թողություն ենք գտնում, ապա դա չի նշանակում, որ Աստծուն բարերարել ենք և փոփոխել Նրան, այլ որ այդպիսի արարքների միջոցով և դեպի Աստված մեր դարձով մեր մեջ տեղ գտած չարից բժշկվելով, դարձյալ ընդունակ ենք դառնում ճաշակելու աստվածողորմածությունը՝ բարությունը: Այնպես ասել, թե Աստված երես է թեքում չարերից, նույնն է, թե ասել,որ արեգակը ծածկվում է տեսողությունից զրկվածներից:

151. Բարեպաշտ հոգին գիտի ամենայն ինչի Աստծուն, քանզի բարեպաշտ լինելը այլ բան չէ, քան Աստծու կամքը կատարելը, իսկ դա էլ նշանակում է ճանաչել Աստծուն, այսինքն՝ երբ մեկը ջանում է լինել աննախանձ, ողջախոհ, ըստ կարողության հեզ, առատաբաշխ, կարեկից, և անել ամեն ինչ, որ հաճո է Աստծու կամքին:

152. Աստծուն գիտենալը և Աստծո երկյուղը մարմնական կրքերի, ախտերի դեմ միակ բժշկությունն է: Որովհետև երբ հոգու



մեջ կա Աստծու չիմացություն՝ անգիտություն, այդժամ կրքերը չբժշկված մնալով, արատավորում են հոգին: Այդժամ նա ապականվում նրա մեջ ապրող կենդանի չարից, ինչպես երկար ժամանակ չբուժված վնասվածքից: Սակայն Աստված դրանում մեղք չունի, անպարտ է, որովհետև Նա մարդկանց պարգևել է իմացականություն և բանականություն:

153. Աստված մարդուն լցրել է իմացականությամբ և բանական մտքով, ջանալով մաքրել կրքերը և ինքնահոժար չարիքը, և Իր ողորմածությամբ ցանկանալով մահկանացուն անմահ դարձնել:

154. Մաքուր և աստվածասեր հոգու մեջ գտնվող միտքը ճշմարտապես տեսնում է Աստծուն՝ անծին, անճառելի, մաքուր սրտերի համար Միակ Մաքուրին:

155. Դժբախտությունը գոհությամբ տանելը անապականության, բարեպաշտության և մարդու փրկության պսակն է: Իսկ բարկության, լեզվի, որկորի, որովայնի և հեշտասիրության սանձահարումը մեծագույն օգնություն է հոգու համար:

156. Այն ամենը, ինչով պահվում է աշ~

խարհը՝ Աստծու նախախնամությունն է, և չկա անգամ մի տեղ, չկա և ոչ մի վայր, որի մեջ չհայտնվի այդ նախախնամությունը: Իսկ նախախնամությունը Աստծո ինքնաբուխ Խոսքն է, որը այս աշխարհը բաղկացնող նյութի ստեղծարարն է, ամենայն գոյի հաստիչն ու կերպարանավորողը: Հնարավոր չէ, որ նյութը կարողանա գեղեցիկ կազմավորում ստանալ առանց խոսքի դատողական ուժի, իսկ խոսքը Աստծո կերպարն է, իմաստությունը և նախախնամությունը:

157. Հիշողությամբ գրգռվող ցանկասիրությունը խավարին ցեղակից կրքերի արմատն է: Գտնվելով այդ հեշտալի հիշողության մեջ՝ հոգին իր մասին չգիտի, որ ինքը Աստծու շնչատրությունն է և նետվում է մեղքի մեջ, չխորհելով ծայրագույն աղետի մասին, որի մեջ ընկնելու է մահվանից հետո:

158. Հոգու ամենամեծ և անբուժելի հիվանդությունը և կործանումը Աստծուն մոռանալն ու սնապարծությունն է: Չարի ցանկությունն է մեզ զրկել բարուց: Իսկ մեր բարիքը հոժարությամբ ամենայն բարին գործելն է, որը հաճելի է ամենայն գոյի Աստծուն:



159. Միայն մարդն է ընդունակ Աստծուն ընդունելու: Քանզի միայն այս կենդանի արարածի հետ է խոսում Աստված, գիշերը՝ երազների, ցերեկը՝ մտքի միջոցով և ամենայն բաներով կանխատեսում է և նշաններ ցույց տալիս: Նա իրեն արժանի մարդկանց համար ապագա բարիք է:

160. Հավատացյալի և ցանկացողի համար ամենևին դժվար չէ Աստծուն ճանաչել: Իսկ եթե ուզում ես Նրան տեսնել, նայիր ամենայն ինչի բարեկարգությանը և ամեն ինչի նախախնամությանը, որը եղել և լինում է Նրա խոսքով: Եվ այս ամենը մարդու համար է:

161. Սուրբ է կոչվում նա, ով մաքուր է չարից և մեղքերից: Ուստի և հոգու մեծագույն կատարելությունը և Աստծուն իսկապես հաճելի գործն այն է, երբ մարդու մեջ չարություն չկա:

162. Անունը բազմության մեջ առանձին մեկի նշանակումն է՝ կոչականը: Սակայն անմտություն է մտածել, որ Աստված, Ով մեկն է, Անվանակից ունի, քանզի «Աստված» բառը ամեն ինչ մարդու համար ստեղծողի անունն է, որն անսկիզբ է:

*163 Եթե գիտակցում ես, որ վատթար գործեր ունես, կտրիր դրանք, դեն նետիր քո հոգուց բարու ակնկալությամբ, քանզի արդար ու մարդասեր է Աստված։*

*164. Աստծուն գիտի և Աստծուց ընդունված է լինում այն մարդը, որ ջանում է միշտ Աստծուց անբաժան լինել։ Իսկ Աստծուց անբաժան է լինում ամեն ինչում բարի մարդը և ամեն տեսակի զգայական հաճույքներից ժուժկալողը ոչ դրանց բավարարման համար միջոցներ չլինելու հետևանքով, այլ իր կամքով և ազատ պահեցողությամբ։*

*165. Աստծուն ընկեր կունենաս նաև քեզ վիրավորողի շնորհիվ։ Քո թշնամու մասին ոչ մեկի մոտ մի՛ շատախոսիր։ Ծգնիր սիրո, ողջախոհության, համբերության, ժուժկալության մեջ, քանզի Աստծուն գիտենալը այն է, երբ մենք խոնարհամտության և նման առաքինությունների միջոցով հետևենք Աստսծուն։ Բայց այդպիսի գործերը ոչ բոլորին են հատուկ, այլ միայն մտավոր հոգուն։*

*166. Հակառակ նրանց, որոնք հանդգնում են ասել, թե բույսերն ու խոտերը հոգի ունեն, այս գլուխը գրեցի ի գիտություն միտների։ Բույսերը ֆիզիկական կյանք ունեն, բայց հոգի չունեն։ Մարդը բանական էակ է կոչվում, որովհետև ունի միտք և ընդունակ է ձեռք բերելու ճանաչողություն։ Իսկ ձայն ունեցող մնացած կենդանիները՝ գետնի վրայինները և օդում ապրողները, շունչ ունեն և շնչավոր են։ Ամենայն ինչ, որ աճում և մեռնում է, կարելի է կենդանի կոչել, որովհետև ապրում և աճում է, բայց չի կարելի ասել, որ բոլոր այդպիսիները հոգի ունեն։ Կենդանի գոյերը չորս զանազան բնույթի են լինում։ Դրանց մի մասը անմահ է և ոգեղեն, ինչպիսիք՝ հրեշտակներն են, ուրիշները ունեն միտք, հոգի և շնչառություն, ինչպիսիք են մարդիկ, մյուսները ունեն շունչ և շնչավորություն, ինչպիսիք են կենդանիները, իսկ մյուսները միայն գոյություն ունեն, ինչպիսիք՝ բույսերը։ Կյանքը բույսերում պահպանվում է նաև առանց հոգու, առանց շնչառության, միտք և անմահություն ունենալու, բայց և մնացյալ ամեն ինչը առանց կյանքի չի կարող գոյություն ունենալ։ Ամեն մարդկային հոգի մտքի միջոցով է շարժման մեջ լինում։*

*167. Երբ տպավորությամբ հիշես ինչ-որ զգայական հաճույքի մասին, զգուշացիր, որ նույնժամ չտարվես դրանով, այլ փոքր-ինչ հեռացնելով դա քեզանից, հիշիր մահվան մասին և խորհիր,թե այդ պահին որքան լավ է քեզ գիտակցել որպես հեշտասիրությանը հաղթողի:*

*168. Աստված մարդկանց մեջ չարի դեմ պատշաճ արգելք է դրել նրանով, որ միտք, իմացականություն և բարին զանազանելու ունակություն է պարգևել նրանց, որպեսզի իմանալով, որ չարը վտանգում է մեզ, խուսափենք նրանից: Սակայն անմիտ մարդը գնում է չարի հետքերով և նույնիսկ մեծարվում է նրանով, և ցանցն ընկածի պես պատեպատ է խփվում նրա մեջ և, ուժ չունենալով երբևէ ցանցից դուրս գալու, որպեսզի տեսնի և ճանաչի Աստծուն, Ով ամեն ինչ ստեղծել է մարդկանց փրկության և աստվածացման համար:*

*169. Մահկանացուները պետք է հոգան իրենց մասին, կանխավ իմանալով, որ իրենց մահն է սպասում: Քանզի երանելի անմահությունը սրբազան, բարեպաշտ հոգու բաժինն է լինում, երբ նա բարի է լինում, և հավիտենական մահն է նրան հնձում, երբ նա չար է լինում:*



*170. Երբ ընկողմանում ես անկողնում, գոհությամբ հիշիր Աստծո բարերարությունններն ու նախախնամությունը: Այդժամ լցվելով բարի մտածումով՝ դու լիուլի կուրախանաս հոգով և քո համար քունը կլինի հոգու զգոնություն, և քո լռությունը, լցված լինելով բարու զգացմամբ, ողջ հոգով և ուժով փառաբանություն կմատուցի ամենայն գոյի Աստծուն: Քանզի երբ մարդու մեջ չար չկա, այդժամ լոկ շնորհակալությունն անգամ ամենաթանկ զոհից առավել հաճելի է Աստծուն: Նրան փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:*

# 3
# Անապատական կյանքի կանոնադրություն

## 1.

### Ա) Այդպիսի կյանքի արտաքին ընթացքն ու արտաքին կարգերը

*Այս կանոնները տալիս եմ, ինչպես որ Տերն իմ շուրթերով կասի, նրանց համար, ովքեր ցանկանում են մտնել մենակեցության ծանր լծի տակ: Պետք է հնազանդվել այս պատվիրաններին, և ով կխախտի սրանցից անգամ մեկը, նա փոքր կկոչվի Երկնային արքայության մեջ (Մատթ. 5, 19):*

### ա) Հեռացում մարդկանց հետ համակեցությունից և աշխարհից

*2. Ով ցանկանում է փրկվել (աշխարհից հրաժարված կենցաղավարությամբ), թող չմնա իր սեփական տանը և չապրի այն քաղաքում, որտեղ մեղանչել է: Նաև թող չայցելի իր ծնողներին և արյունակից մերձավորներին, քանի որ դրանից հոգուն վնաս է լինում և կյանքի պտուղները կործանվում են:*



*3. Մի՛ վերադարձիր այն քաղաքը, որտեղ ժամանակին մեղանչել ես Աստծո դեմ:*

*4. Մի՛ գնա տեսնելու՝ ինչպես են ապրում հարազատներդ և նրանց թույլ մի՛ տուր գալ տեսնելու, թե ինչպես ես դու ապրում, և նույնիսկ ոչ մի անգամ մի՛ տեսակցիր նրանց հետ:*

### բ) Անապատաբնակության ընտրություն

*5. Մեր հոգևոր հայրերը պնդում են, որ անապատը ամենահարմար վայրն է մահվան մասին խորհրդածության, և վստահելի ապաստան՝ մարմինը հանգստացնող աշխարհային բաներով չհրապուրվելու համար:*

*6. Անապատում լռության մեջ ապրողը ազատ է երեք պատերազմներից, որոնք ծագում են լսողության միջոցով, լեզվի միջոցով և այն ամենը տեսնելու միջոցով, ինչը կարող է խոցել նրա սիրտը:*

*7. Զգուշացի՛ր, որ քեզ պատրանքի մեջ*

չգցի այն չար խորհուրդը, թե անապատը զովանալու տեղ է:

### գ) Մենախցային առանձնացում

8. Հեռանալով կենցաղային աղմուկից՝ առանձնացի՛ր, և օտարական կլինես: Մենախցում նստելը քո համար նույնը կլինի, ինչ որ օտար կողմեր մեկնելը:

9. Երբ մի տեղ գնաս, ամեն ինչ արա շուտ վերադառնալու քո մենարանը, որպեսզի տրվես աղոթքներիդ:

10. Երբ հունձքի գնաս, այնտեղ մի՛ հապաղիր, այլ շուտով վերադարձիր քո մենարանը:

11. Որևէ եղբոր այցի գնալիս երկար մի մնա նրա մենախցում:

### դ) Մենախցային զբաղմունքն ու կարգերը

12. Մենախցում ունեցիր այս երեք զբաղմունքները՝ ձեռագործ, սաղմոսների ընթերցանություն և աղոթք:

13. Մենախցում զբաղվի՛ր այս երեք բաներով՝ Սուրբ Գրքի ընթերցանությամբ, Աստծուն աղոթելով և ձեռագործով:



14. Ամեն օր ծոմ պահի՛ր մինչև 9-րդ [15.00] ժամը, բացառությամբ շաբաթ և Տերունական օրերի: 9-րդ ժամին գնա քո մենախցի ներքին սենյակը և մինչև կերակուրը աղոթքդ արա: Կերակուր ճաշակելուց հետո հերթով մե՛կ ընթերցիր, մե՛կ աղոթիր:

### ե) Աղոթասացություն և ծնրադրություն

15. Աղոթի՛ր որոշակի ժամերի՝ ոչ մեկը բաց չթողնելով, որպեսզի դրա համար չդատապարտվես:

16. Աղոթքդ գիշերն արա՛ մինչև եկեղեցի գնալը:

17. Մինչև եկեղեցի գնալը աղոթի՛ր քո մենախցում:

18. Եղբայրների հետ ընդհանրական աղոթքներից առաջ և հետո միշտ աղոթիր նաև քո խցում և երբեք մի՛ ծուլացիր անել դա:

19. Հաճախակի ծնրադրի՛ր և մի՛ ծուլացիր, որ չար մահով չմեռնես:

20. Աղոթելիս ծուլություն թույլ մի տուր, քանզի ծույլի արած աղոթքը պարապ խոսք է:

*21. Աղոթելիս և Աստծուն հիշելիս քո վանականության ուխտին և հանդերձների նշանակությանը վայել եղիր թեթև ու բարձր ճախրող թռչունի նման:*

### զ) Ընթերցանություն և աստվածիմացական խորհրդածություն

*22. Միշտ պարապիր գրվածքների ընթերցմամբ, և նրանք քո մեջ արմատախիլ կանեն բոլոր աղտեղությունները (այսինքն՝ կցրեն անմաքուր խորհուրդները):*

*23. Եթե հարատևորեն և ջանասիրությամբ զբաղվես ընթերցվածքները կարդալով և կատարես պատվիրանները, ապա Աստծո գթասրտությունը քո հետ կլինի:*

*24. Խորհի՛ր Աստծո գործերի մասին և մի՛ ծուլացիր աղոթքում:*

*25. Մենախցում փակ շուրթերով նստած և Աստծուն չհիշող վանականը նման է քաղաքից դուրս գտնվող քանդված տան, որը միշտ լի է ամեն տեսակ աղտեղություններով, որովհետև բոլորը իրենց տան աղբը այնտեղ են տանում: (Այսինքն՝ շուրթերով լռում է, իսկ մտքով երազում է, գնում է*



*խորհուրդների հետևից և սրտով տարվում, որն էլ դևերի կողմից հոգու մեջ գցած մեղսալի աղբ է):*

### է) Ձեռագործը և առհասարակ աշխատանքը

*26. Անհրաժեշտ է մարմինը հնազանդեցնել և նվաճել երկարատև աշխատանքով:*

*27. Մենախցում որպես զբաղմունք քո համար որևէ չափավոր գործ ընտրիր և սիրտդ խոնարհ կլինի:*

*28. Քեզ ստիպի՛ր ձեռագործ աշխատանքի և քո մեջ կբնակվի Աստծո երկյուղը:*

*29. Ձեռագործական աշխատանքների մեջ ջանասեր եղի՛ր և քո վրա կիջնի Աստծո երկյուղը:*

*30. Մենախցում նստած տքնի՛ր ձեռագործությամբ, ընդ որում Աստծո անունը մի՛ թող քեզնից հեռանա, այլ անդադար Նրան մտաբերի՛ր, Նրան ճանաչի՛ր քո սրտում և գովաբանի՛ր Նրան քո լեզվով՝ ասելով՝ Տեր իմ Հիսուս Քրիստոս, ողորմի՛ր ինձ, կամ՝ Տեր Հիսուս Քրիստոս, առաքի՛ր ինձ Քո օգնությունը, կամ՝ փառաբանում եմ Քեզ, Տեր իմ Հիսուս Քրիստոս:*

### ը) Սնունդ

*31. Միշտ նույն ժամը կարգիր կերակուր ճաշակելու, և այն ընդունիր՝ մարմինը պահելու, այլ ոչ հաճույք պատճառելու համար:*

*32. Օգտագործի՛ր ամենապարզ և էժանագին կերակուրը:*

*33. Կերակուրդ լուռ ճաշակիր՝ հագենալուց զգուշանալով և տես, որ սեղանդ համեստ լինի:*

*34. Մի՛ կեր մինչև հագենալը:*

*35. Շատակեր մի՛ եղիր, որ քեզանում չնորոգվեն քո նախկին մեղքերը:*

*36. Չորեքշաբթի և ուրբաթ օրերի պահքը մի՛ լուծարիր:*

*37. Միս ամենևին մի՛ կեր:*

*38. Գինու հնձանին մի՛ մոտեցիր:*

*39. Հավաքույթների և հյուրասիրությունների մի՛ շտապիր:*

*40. Եթե մի տեղ գնաս, ուր ընդհանուր ճաշի հրավերք է կազմակերպված՝ ճաշակիր և գոհություն հայտնիր Աստծուն:*

*41. Գինու երեք բաժակին մի՛ ավելացրու չորրորդը, բացի միայն որևէ խիստ հիվանդության պատճառով:*



*42. Երբ քեզ որևէ բան են առաջարկում, անմիջապես ձեռքդ մի՛ երկարիր:*

*43. Եթե երիտասարդ ես, ձեռքդ մի՛ մեկնիր մնացածներից առաջ, քանի որ դա անհամեստություն է:*

### թ) Քունը

*44. Քնի՛ր քիչ և չափավոր, և հրեշտակները կայցելեն քեզ:*

*45. Երբ առողջ ես, պարեգոտդ մի հանիր:*

*46. Քնելիս ձեռքերդ վերմակի տակ (թերևս ծոցդ) մի՛ դիր, որ չիմանալով չմեղանչես:*

### ժ) Հագուստը

*47. Գիշեր-ցերեկ մնա՛ կնգուղով ու փարաջայով և բոլոր հանդերձներով՝ իբրև կալանավոր և բանտարկյալ:*

*48. Մի՛ հագիր այնպիսի հագուստ, որով կարող ես մեծարվել և գովասանք ստանալ:*

*49. Հագուստներդ խնամքով պահի՛ր, որպեսզի Դատաստանի օրը մյուսների հույլի մեջ մերկ չերևաս:*

50. Ունեցի՛ր որքան անհրաժեշտ է, ավելին մի՛ պահիր:

51. Աղքատությունն այլ բան չէ, քան ամեն ինչում չափավորությունը, կամ այնպիսի վիճակը, երբ բավարարվում են քչով:

52. Սիրի՛ր պատվից առավել անարգանքը, հանգստից առավել՝ մարմնի նեղությունները, և առատությունից անելի՝ պետքական իրերի պակասությունը:

## ի) Եկեղեցական աստվածպաշտությունը

53. Եկեղեցու և աստվածպաշտության կարգին հետևելը պետք է վստահվի հավատարիմ և Աստծուց երկնչող այրերի:

54. Կոչնակը հնչելիս մի՛ ծուլացիր նույն ժամին եկեղեցի գնալ:

55. Մի՛ թող Աստվածպաշտությունը, և թող դա քո համար գայթակղություն և որոգայթ չլինի:

56. Եկեղեցում բնավ մի՛ խոսիր:

57. Եկեղեցում մի՛ եղիր որպես բազմամարդ մի տեղում, որպեսզի հոգուդ մեջ աղմուկ և բազում մտածումների շփոթ չլինի:

58. Քո մեռելին եկեղեցում մի՛ թաղիր



(այսինքն՝ մի՛ զբաղվիր քո առօրյա գործերով):

## լ) Փոխհարաբերություններ

*ա) Առաջին հերթին և հիմնականում վանահորը, հոգևոր հորը, ծերերին և առհասարակ առաջադիմածներին*

59. Ինչ գործ էլ լինի, մի՛ ձեռնարկիր, առանց վանահոր հետ խորհրդակցելու:

60. Վանահոր և քեզանից ավագների առջև խոսքդ մի՛ երկարացրու:

61. Հնազանդ եղի՛ր քո հորը, և Աստծո երկյուղը կբնակվի քո մեջ:

62. Քո ճգնության կատարելությունը հնազանդությունն է, և մարդու համար բարիք է, երբ Տիրոջ լուծը կրում է պատանեկությունից, այն է՝ ծառայում և հնազանդվում է:

63. Անհնազանդ մի՛ եղիր, այլապես ամենայն չարիքի, ստության և անոթի գործիք կդառնաս:

64. Խոնարհությամբ և արտասուքով խնդրի՛ր քո հորը, որպեսզի քեզ ուսուցանի, ինչը չգիտես, և ամոթահար չես մնա:

65. Միշտ հիշի՛ր քեզ բարի գիտությամբ ուսուցանողին և ջանա նրանից իմանալ կենդանարար պատվիրանները, և Տիրոջ կամքով կյանքդ բարեհաջող կապրես, ինչպես ասում է երանելի Պողոս առաքյալը. «Այդ բանի վրա մտածի՛ր և հարատևի՛ր, որպեսզի քո առաջընթացը հայտնի լինի բոլորի համար» (Ա Տիմ. 4, 15):

66. Եթե պարանոցդ անկեղծորեն դրել ես հնազանդության լծի տակ, ուշադրությամբ լսի՛ր, ինչ որ քեզ ասվում է, և ապա այդ ամենը բարեխղճորեն կատարի՛ր պատվիրված լիակատար չափով:

67. Մի՛ թաքցրու քո հորից քո մեղքը:

68. Քո ավագներից հանապազօր առաքինի վարք սովորի՛ր:

69. Քո հոգևոր հայրերին սիրի՛ր մարմնավոր ծնողներիցդ առավել, քանի որ նրանք Աստծո համար են քեզ հոգ տանում:

70. Այնպես ապրի՛ր, որ վանական հայրերը՝ հոգևոր ծնողները քո փառքով ուրախանան սրբերի բույլի մեջ:

71. Ամեն կերպ հոգ տա՛ր,որ հանգչի քո վրա վանական հայրերի օրհնությունը:

72. Խորհուրդներդ բոլորին մի՛ հայտնիր,



այլ միայն նրանց, ովքեր կարող են բժշկել հոգիդ:

73. Խորհուրդներդ բոլորին մի՛ հայտնիր, որպեսզի քո եղբոր համար գայթակղություն չլինես:

74. Բոլորի նկատմամբ բարյացակամ եղի՛ր, բայց ոչ բոլորին քեզ խորհրդական ունեցիր:

### բ) Փոխադարձաբար բոլորին

75. Ջանա՛, որ բոլոր մարդիկ օրհնեն քեզ:

76. Վշտացի՛ր քո եղբոր հետ և բարի հոգով կարեկցի՛ր նրան:

77. Եթե եղբայրներից մեկը խնդրի օգնել իրեն, այդ ամբողջ օրը աշխատի՛ր նրա հետ:

78. Ընկերներին նախ ստուգի՛ր փորձելով և բոլորին քեզ մերձավոր մի՛ դարձրու, ամենքին մի հավատա, որովհետև աշխարհը լի է խաբեությամբ: Այլ ընտրի՛ր Աստծուց երկնչող մի եղբայր, և նրան ընկերակցիր ինչպես եղբայրը եղբոր հետ: Իսկ ամենալավը՝ Աստծուն փարվիր, ինչպես զավակը հորը, քանզի մարդիկ տարված են խաբեությամբ, բացառությամբ քչերի: Երկիրը լի է

*ունայնությամբ, փորձանքներով ու վշտերով:*

### գ) Ավագներին՝ այլոց նկատմամբ

*79. Եթե դադարել ես մեղք գործելուց, ապա խոսի՛ր հանուն Տիրոջ և խրատի՛ր նրանց, ում պատճառով հայհոյվում է Տիրոջ անունը , և ջանա՛, որ նրանք՝ իբրև մեռածներ և կենդանի Տիրոջից բաժանվածներ, հետ կանգնեն իրենց մեռելոտի գործերից, կենդանանան և արժանանան փառքը ստանալուն:*

*80. Անխնա հանդիմանի՛ր քո հոգևոր զավակներին, որովհետև քեզնից է պահանջվելու նրանց դատաստանը (այսինքն՝ եթե նրանք դատի արժանանան Ահեղ դատաստանի օրը):*

*81. Հանդիմանի՛ր անխնա, սակայն Աստծո երկյուղով: Որևէ մեկին, ով էլ լինի, աչառություն մի՛ արա և ձաղկի՛ր ճշմարիտ բառերով:*

*82. Եթե մի եղբայր քո մոտ գա և հայտնի իր մտքերը, զգույշ եղի՛ր, որ դրանք ոչ մեկին չվերապատմես, այլ աղոթի՛ր քո և նրա*



*համար, որ Տերը փրկի երկուսիդ էլ:*

*83. Քրիստոսի հավատքը փնտրողին մի՛ մերժիր:*

*84. Խրատ չընդունողին մի՛ խրատիր:*

*85. Որևէ մեկին ոչինչ մի՛ առաջարկիր որպես կանոն, քանի դեռ ինքդ չես կատարել դա գործերով:*

*86. Անկարգություններից մեծագույնն այն է, երբ ուրիշին պատվիրում ես անել այն, ինչը ինքդ չես անում, քանզի ոչ մի օգուտ չենք ստանա ուրիշների գործերից:*

### դ) Հիվանդներին

*87. Ամեն օր առավոտյան ելնելով՝ հոգա՛ ձեզ մոտ եղած հիվանդներին:*

*88. Այցելի՛ր հիվանդներին և ջուր լցրու՛ նրանց ջրամանները:*

*89. Ամեն բան, ամբողջ ավելցուկը բաժանի՛ր վանքի հիվանդներին:*

*90. Եթե քո վանահայրը քեզ նշանակի հիվանդներին սպասավորելու, սպասավորի՛ր ամբողջ սրտով, որպեսզի Աստծուց կրկնակի պարգև ստանաս հնազանդության և սիրով կատարելու համար:*

### ե) Օտարականներն

91. Եթե քեզ մի եղբայր այցելի , թեկուզ անպատեհ ժամի, ուրախությամբ ընդունի՛ր, որպեսզի նա Աստծուն գոհություն մատուցի և քո համար չվշտանա։

92. Եթե մի եղբայր գա քեզ մոտ, ամեն ինչում խոնարհ եղիր նրա առաջ, Տիրոջ սիրույն հյուրընկալություն ցուցաբերի՛ր նրան և վախեցի՛ր մեծամտանալուց։

93. Դեմքդ միշտ պետք է տխուր լինի, և ուրախ տեսք ընդունիր միայն այն ժամանակ, երբ քեզ մոտ պանդուխտ եղբայրներ գան։

### խ) Փոխադարձ վերաբերմունքը

94. Քո բոլոր արարքներում համեստ եղի՛ր։

95. Քո ամբողջ վարքի և փոխհարաբերությունների մեջ յուրացրու խեղճ մուրացիկի դրությունը։ Մի՛ մեծամտացիր ո՛չ գրույց վարելիս, ո՛չ Աստծուն հիմն և փառաբանական երգ երգելիս։ Եվ երբ հավաքվում եք եղբայրներով, թող քո խոսքերը անպաճույճ լինեն։



96. Մանկան և պատանու հետ զրույցի մի՛ բռնվիր, առավել ևս մտերմություն մի՛ արա և բնակակից մի դարձրու, որպեսզի սատանային տեղիք չտաս։

97. Մանկան հետ առհասարակ մի՛ զրուցիր, այլապես նա քեզ համար գայթակղություն կլինի։

98. Կողքիդ կանգնած եղբոր ձեռքը մի՛ բռնիր և մի՛ դիպիր նրա այտերին, անկախ նրանից՝ քեզանից տարեց կլինի նա, թե՞ կրտսեր։

99. Բոլոր կարողություններովդ հեռու մնա՛ հասկացողությունից, գիտությունից զուրկ և անխրատ մարդկանցից։

100. Եթե խաղաղ կյանք ես սիրում, մի՛ մտիր նրանց մեջ, ում ամբողջ հոգսը ունայն գործերն են, իսկ եթե պատահաբար նրանց մեջ ես ընկնում, քեզ այնպես պահի՛ր, ասես նրանց մեջ չես։

### ծ) Զրույցը և ընդհանրապես լեզվի օգտագործումը

101. Ձայնդ մի՛ բարձրացրու, խուցում միշտ լռիր ՝ բացի կանոնով սահմանված աղոթքների ժամանակ։

102. Փախի՛ր լեզվի հայհոյությունից (զսպի՛ր լեզուդ):

103. Մի՛ շատախոսիր, որպեսզի Աստծո Հոգին քեզնից չհեռանա:

104. Փառավոր գործ է լռություն պահպանելը՝ նմանվելով Տիրոջը, Ով լռություն պահպանեց՝ չնայելով Հերովդեսի աստիճանին:

105 Քո նման հավատարիմների հետ հավաքվելիս նախ ջանա լավ լսել և հասկանալ ուրիշների ասածները, պատրաստակամությամբ կատարել այն ամենը, ինչը օգտակար է փրկության համար:

106. Մեկին այցելության գնալիս, թող Աստծո երկյուղը քո սրտում լինի, և շուրթերդ փակ պահի՛ր, որ խաղաղությամբ վերադառնաս քո խուցը:

107. Իմաստուն այրը լավ գիտի՝ ինչպես իրեն պահի, ուստի և չի շտապում խոսել, այլ կշռադատում է՝ որտեղ է պետք խոսել և որտեղ՝ լսել: Սրան հակառակ անխրատ այրը լեզուն սանձելու և կառավարելու խորհուրդը չի պահպանում:

108. Երբ նստած ես եղբայրների հետ, չափազանց շատ մի՛ խոսիր, և եթե մի բանի



մասին հարցնելու լինես, հարցդ տուր խոնարհաբար, առանց երկարաբանելու:

109. Քո խոսքերը թող լինեն քաղցրությամբ և օգտաբեր: Հիշի՛ր, որ խոսքից է թե՛ փառքը, թե՛ նվաստացումը:

110. Մի՛ խոսիր զայրացած, այլ թող խոսքերդ,նմանապես և լռությունդ իմաստությամբ և խոհեմությամբ լինեն: Նմանվի՛ր մեր իմաստուն հայրերին, որոնց խոսքերը, նմանապես և լռությունը միշտ լի էին իմաստությամբ և խոհեմությամբ:

111. Թող լեզուդ հետևի խոհականությանը, որովհետև խոհեմությունից հեռացած խոսքերը սուր փշեր և ասեղներ են:

112. Փախի՛ր ստից, այլապես այն քեզանից կվանի Աստծո երկյուղը:

113. Քո շուրթերը միշտ պետք է խոսեն միայն ճշմարտությունը:

114. Քո զրույցների առարկան թող լինի Ամենաբարձրյալ Աստծո բարերարությունները, դրանով դու քեզ կարժանացնես Նրանից է՛լ ավելի մեծ բարիքներ ստանալու:

115. Մի՛ հարցրու չար գործերի մասին, այլ դրանցից հեռու պահիր քո ուշադրությունը:

*116. Պարապ զրույցներ մի՛ վարիր, և ականջ մի՛ դիր դատարկ խոսողներին, որպեսզի դրանցից հոգիդ չարիք չընդունի:*

*117. Ատի՛ր այն ամենի մասին ունայն խոսակցությունները, ինչը այս աշխարհից է:*

*118. Որքան կարող ես, խուսափի՛ր կատակներից և զվարճալի զրույցներից:*

*119. Մի՛ գոռա և բարձրաձայն ու արագ մի՛ խոսիր, քանզի գրված է. «Ով շատացնում է խոսքերը, նա անվնաս չի մեղքից» (հմմտ. Ժող. 10, 14):*

*120. Համառ մի՛ եղիր և մի՛ պնդիր քո ասածը, որպեսզի քո մեջ չարություն և սրտմտություն մուտք չգործի:*

*121. Մի՛ երդվիր Աստծով, ո՛չ այն դեպքում, երբ գործը կասկած չի հարուցում, առավել ևս ո՛չ էլ կասկածելի գործում:*

### կ) Բացակայելու դեպքերի համար

*122. Եթե հարկ լինի քաղաք գնալու, մենակ մի՛ գնա:*

*123. Երբ ջրի ես գնում կամ ճամփորդություն կատարում, հիշողությամբ սաղմոսի՛ր և խորհրդածի՛ր:*



*124. Եղբայրների հետ ճամփորդություն կատարելիս փոքր-ինչ հեռացիր նրանցից, որպեսզի լռություն պահպանես:*

*125. Ճանապարհով գնալիս մի՛ դիմիր աջ ու ձախ, այլ ուշադրությամբ քո սաղմոսները կարդա և մտքով Աստծուն աղոթիր: Հետո որտեղ էլ գնաս, տեղի բնակիչների հետ մի՛ մտերմացիր:*

*126. Մի՛ խառնվիր աշխարհիկ մարդկանց ամբոխին, բայց նաև մի՛ նմանվիր ամեն ինչ ցուցադրաբար անող փարիսեցուն:*

*127. Կնոջը թույլ մի՛ տուր քեզ մոտենալ, և մի՛ հանդուրժիր, որ նա մտնի քո կացարանը (սենյակը), որովհետև դրանից հետո կսկսվի մտքերի փոթորիկը:*

*128. Կնոջ հետ մեկտեղ մի՛ կեր, և դեռահասի հետ երբեք մտերմության մեջ մի՛ եղիր:*

*129. Երբ ստիպված լինես գիշերել մի տեղ, զգուշացի՛ր ուրիշ մեկի հետ նույն շորով ծածկվելուց:*

*130. Նույն խսիրի վրա մի՛ պառկիր քեզանից կրտսերի կետ:*

*131. Երկուսով միասին մի՛ քնեք մի խսիրի վրա, եթե դրա ծայրահեղ կարիքը*

Բ) Ներքին կյանքի կարգավորությունը

չկա, թեկուզ լինի հայր կամ եղբայր, և դա թույլ տուր մեծ երկյուղածությամբ:

132. Վանական հյուրանոցներում երկար մի՛ մնա:

## ա) Կյանքի բուն սկիզբը ջանադրությունն է

133. Նախանձախնդիր եղի՛ր առաքինություններ ձեռք բերելու, որպեսզի անհոգության մեջ չընկնես:

134. Վախեցի՛ր, որ աստվածային սերը չհանգի:

135. Ձեռնարկածդ բարի գործերից մի՛ հրաժարվիր:

136. Քո մենանալու ճանապարհից մի՛ հրաժարվիր:

137. Կիսատ մի՛ թող այն աշխատությունները, որոնք թափում ես հանուն առաքինության, որպեսզի ծույլ և անփույթ չլինես և վերջին ժամին չմեղանչես, այլ սիրի՛ր Տիրոջը մինչև վերջին պահը և ողորմություն կստանաս:

138. Ինչպես քաղաքից դուրս եղած ավերակները բոլորի համար դարշահոտ ապականության տեղ են ծառայում, այնպես էլ մենակեցական կյանքում ծուլությամբ և հեղգությամբ անցկացնողի հոգին բոլոր կրքերի և մեղսական աղտեղությունների կացարան է դառնում:

## բ) Կյանքի կանոնը Աստծո պատվիրաններում հայտնված կամքն է

139. Եթե քեզ Աստծուն ես հանձնել, պահպանի՛ր Նրա բոլոր պատվիրանները, ջանասիրությամբ արա քեզ հրամայվածը՝ ոչինչ բաց չթողնելով, որովհետև եթե մտածում ես որևէ բան բաց թողնել, ապա նախկին մեղքերդ չեն ներվի, իսկ եթե հաստատ ձեռնարկես բոլորը կատարելու (անգամ կյանքդ չխնայելով), ապա վստահ եղիր, որ նախկին մեղքերդ արդեն ներված են:

140. Մտքերդ միշտ պետք է զբաղված լինեն Աստծո պատվիրաններով, որոնք ջանա կատարել բոլոր ուժերով՝ ոչ մեկը բաց չթողնելով, այլապես հոգիդ բոլոր աղտեղությունների կացարան կդառնա:

141. Եթե մի գործ ես սկսում և դրա հա-

*մար չես տեսնում Աստծո կամքը, ոչ մի դեպքում մի՛ արա:*

### գ) Նպատակը Աստծո փառքն է

*142. Ամենայն հնարավորություն գործի դրի՛ր, որպեսզի քեզանով փառավորվի քո Հայրը, Որ երկնքում է (Մատթ. 5, 16):*

### դ) Հիշումները նախանձախնդրության բորբոքիչներն ու սատարողներն են:

#### *ա) Ուխտի և սկզբնական եռանդի մասին*

*143. Ապականացու իրերի համար մի՛ հեռացիր Աստծուց, այլ հիշի՛ր, թե ինչ խոստացար, երբ քո մեջ բորբոքված էր Աստծուն հաճելի լինելու եռանդը:*

*144. Ջանա չմոռանալ հագուստիդ նշանակությունը, որով հանդերձավորված էիր սկզբում: Հիշի՛ր նաև քո զղջման արցունքների մասին, որոնք հեղեցիր այն ժամանակ, և փութով հեռու փախիր ծածուկ սողոսկող անբարի մտածումներից, որպեսզի դրանցով չտարվես նաև բացահայտ գործելու:*



*145. Միշտ և անկեղծորեն ապաշխարի՛ր, և ոչ մի պահի չես տրվի տրտմության ու ծուլության:*

#### *2) Օրինակելի նախանձախնդիրների մասին*

*146. Օրինակ մի՛ վերցրու քեզանից թույլից, այլ՝ նրանից, ով քեզանից կատարյալ է:*

*147. Թող քո համար օրինակ ու տիպար լինեն նրանք, ովքեր ողջ սրտով սիրեցին Տիրոջը և միշտ հետամուտ են բարի գործերի: Մի՛ ամաչիր նրանցից կյանքի դասեր խնդրել, որովհետև նրանք առաքինությունների մեջ կատարյալ են:*

*148. Մի՛ նմանվիր նրանց, ովքեր աշխարհիկ թեթև կյանքի համար են հոգ տանում, այլապես և ոչ մի բանում չես հաջողի, այլ նմանվի՛ր նրանց, ովքեր հանուն Տիրոջ դեգերեցին և դեգերում են լեռներում և անապատներում (Եբր. 11, 38), և քո վրա ուժ կիջնի ի վերուստ:*

#### *3) Խոստացված բարիքների մասին*

*149. Եթե ողջ պատվիրվածը կատարես, ապա կստանաս այն ժառանգությունը, որը*

*աչքը չի տեսել, ականջը չի լսել և մարդկային սիրտը չի մտածել (Ա Կորնթ. 2, 9):*

*150. Քանի դեռ ժամանակ կա, ճանաչողության լույսը օգտագործիր արդարների շարքի մեջ մտնելու համար:*

*4) Մահվան և դատաստանի մասին*

*151. Հիշի՛ր, որ քո պատանեկությունն անցավ (ուժերդ նվաղեցին), իսկ տկարություններդ ավելացան, և արդեն մոտ է այս աշխարհից ելնելու ժամանակը, երբ բոլոր գործերիդ համար հաշիվ ունես տալու, և իմացի՛ր, որ այդժամ ո՛չ եղբայրը կփրկագնի եղբորը, ո՛չ էլ հայրը կազատի որդուն:*

*152. Միշտ հիշի՛ր մարմնից ելնելու և հավիտենական դատապարտության մասին: Եթե այդպես վարվես, ոչ մի ժամանակ չես մեղանչի:*

*153. Խորհի՛ր ինքդ քո մեջ և ասա՛՝ այսօրվանից չեմ մնալու այս աշխարհում, և երբեք չես մեղանչի Աստծո դեմ:*

*154. Ամեն օր ինքդ քո մեջ համարի՛ր, որ այս մի օրն է մնացել քեզ (ապրելու) այս աշխարհում և հեռու կմնաս մեղքերից:*



*155. Քո խուցը դարձրու բանտ, մտքում ունենալով, որ քո համար ամեն ինչ արդեն վերջացած է, և ուր որ է, հնչելու է այս աշխարհից քո հեռանալու զանգը:*

*156. Զգոն եղի՛ր, որպեսզի գալիք հանդերձյալում չմերժվես: Վա՛յ անհոգներին, որովհետև մոտեցավ նրանց վախճանը, և նրանք ո՛չ օգնական ունեն, ո՛չ էլ փրկության հույս:*

ե) Հաջողության ծնողները Աստծո շնորհաբաշխ օգնությունն ու սեփական ջանքերն են:

*1) Աղոթքով գրավվող երկնային օգնականությունը*

*157. Թող մեր Տեր Հիսուս Քրիստոս մեզ օգնական լինի, որ ամեն ինչ կատարենք այնպես, ինչպես հաճո է Իրեն:*

*158. Ամենից առաջ անդադար աղոթք հղի՛ր և միշտ գոհունակություն հայտնիր Աստծուն այն ամենի համար, ինչ կատարվում է քեզ հետ:*

*159. Ծիգ արա՛ անդադար արտասվալի աղոթքներ հղել, որպեսզի Աստված գթա քեզ և վրայիցդ հանի հին մարդուն:*

160. Մի՛ դադարիր աղոթական արտասուք հեղելուց, և Աստված կգթա քեզ, կթեթևացնի քո բոլոր ցավերը, որոնցով տառապում է հոգիդ:

161. Եթե ուզում ես Աստծուն հաճո լինել, հանձնվի՛ր Տեր Հիսուս Քրիստոսին, և Նա կազատի ու կպաշտպանի քեզ:

### 2) Ընդհանրապես անձնական ճիգերն ու ջանքերը

162. Ջանադիր եղի՛ր հետևյալ տքնություններ մեջ, որ կառաջարկեմ քեզ` աշխատության, աղքատության, պանդխտության, զրկանք (ընչազրկություն) և լռակեցություն: Դրանք քեզ խոնարհ կդարձնեն, իսկ խոնարհությունը քո մեղքերին թողություն կբերի: Խոնարհությունն էլ այն է,երբ մարդն իրեն մեղավոր համարի և մտածի, թե ինքն Աստծո առջև ոչ մի բարիք չի գործում,երբ հեզ լինի, լռության մեջ կենա և իրեն ոմն մեկը չհամարի, ոչ մեկի առաջ չհամառի` իր ասածի վրա պնդելով, մի կողմ դնի իր կամքը, դեմքը խոնարհեցնի, աչքի առաջ ունենա մահը, զգուշանա ստից, դատարկ խոսքեր չասի, վանահորը չհակաճառի, համ-



բերությամբ տանի վիրավորանքները և ստիպի իրեն բարեհոգաբար կրելու ամենայն դժվարություն և նեղություն: Ջանա՛, եղբայր, պահել այս կանոնները, որպեսզի քո կյանքը անարդյունք չլինի:

163. Հեռու վանե՛նք այն ամենն, ինչ հանգստություն է պատճառում մեր մարմնին` թուլացնելով այն, թող այս կյանքը նվազ արժևորենք, որպեսզի Աստծու համար ապրենք, Որը դատաստանի օրը մեզանից պահանջելու է, թե արդյո՞ք քաղցել ենք Իր անվան համար, ծարավե՞լ ենք արդյոք, մերկ մնացե՞լ ենք, սգացե՞լ ենք, ողբագին հառաչե՞լ ենք մեր սրտի խորքից, ինքներս մեզ փորձե՞լ ենք, թե արժանի ենք Աստծուն: Ուրեմն եկեք տրվե՛նք գետնամած ողբալուն և մեղքերի համար տրտմությանը, որպեսզի գտնենք Աստծուն, Նրան ունենալով` անտեսենք մարմինը, որպեսզի փրկենք մեր հոգիները:

164. Ընտրի՛ր քո համար տքնաջան աշխատանքը,որը պահքի, աղոթքի և հսկումների հետ կազատի քեզ բոլոր պղծություններից, որովհետև մարմնի տքնությունը բերում է սրտի մաքրություն, իսկ սրտի մաք-

րությունը այն է, երբ հոգին պտուղ է բերում:

165. Սիրի՛ր գթասրտությունը, զգեստավորվիր հավատքով, սրտիդ թույլ մի՛ տուր չարը խորհել, այլ ստիպի՛ր նրան բարին հատուցել չարի փոխարեն, փնտրի՛ր ողորմածություն և խաղաղություն, և նախանձախնդիր եղի՛ր ամենայն բարի գործեր կատարելու:

## գ) Հոգու՝ հաջողություն բերող տրամադրությունները

*1) Երկյուղով, զգոն արթնությամբ և մեղքից ու աշխարհից հրաժարվելով Աստծո մեջ կենալը:*

166. Թող հոգիդ ամեն ժամանակ Տիրոջ հետ լինի, իսկ մարմինդ թող որ երկրի վրա լինի իբրև արձան և ձեռակերտ:

167. Աստծո առջև միշտ կանգնի՛ր արդարությամբ:

168. Աստծո երկյուղը միշտ պետք է մեր աչքի առջև լինի, ինչպես նաև մահվան հիշողությունը և հրաժարումը ամենայն աշխարհայինից:

169. Մեռի՛ր ամեն օր, որպեսզի ապրես, քանզի ով վախենում է Աստծուց, նա կապրի դարեդար:

170. Անխոնջ և զգոն եղի՛ր, որպեսզի ծուլության և անհոգության մեջ չընկնես:

171. Ատի՛ր ամեն աշխարհայինը և հեռացրո՛ւ այն քեզանից, այլապես ինքը քեզ կհեռացնի Աստծուց:

172. Ատի՛ր այն ամենը, որի մեջ վնասակար բան կա հոգուդ համար:

*2) Համբերատարություն*

173. Ինչ էլ որ անես, արա համբերությամբ և Աստված քեզ կօգնի քո բոլոր գործերում և ամեն ինչի մեջ, ինչ որ քեզ պատահի:

174. Զգու՛յշ եղիր, որ չնեղսրտես:

175.Բարեհոգի՛ եղիր այն բոլոր գործերում, որոնք անում ես Աստծո կամքով:

176. Մի՛ տրտմիր խցում քո վրա հարձակվող խորհուրդների պատճառով՝ իմանալով, որ Տերը մոռացության չի մատնի Իր համար թափած քո ջանքերից ոչ մեկը: Դա կծառայի քո առաջընթացի համար և Աստծու շնորհը կօգնի քեզ:

177. Արիությունն այլ բան չէ, եթե ոչ ճշմարտության մեջ աներեր մնալը և թշնամիներին դիմադելը: Երբ չգիջես, նրանք կնահանջեն և այլևս երբեք չեն հայտնվի:

### 3) Ողբ ու լաց

178. Գիշեր - ցերեկ ցավի՛ր մեղքերիդ համար:

179. Կանթեղդ վառի՛ր արտասուքի յուղով:

180. Անդադար սգա մեղքերիդ համար, ասես քո խցում մեռյալ ունես:

181. Դեմքդ միշտ պետք է տխուր լինի, որպեսզի քո մեջ բնակվի Աստծո երկյուղը:

182. Քեզ ոմն մեկը մի՛ համարիր, այլ անդադար արտասուք թափիր մեղքերիդ համար:

### 4) Խոնարհություն

183. Սիրի՛ր խոնարհությունը, և այն կքավի քո բոլոր մեղքերը:

184. Կյանքիդ բոլոր օրերում խոնարհ եղի՛ր և հետամուտ եղի՛ր ամենայն բարեշնորհության:



185. Առաքինությունների մեջ քեզանից տկարին քեզ հավասար համարիր, իսկ առաքինությունների մեջ քեզ հավասարին գնահատիր կատարելությամբ քեզանից ավելի բարձր:

186. Վեր բարձրացողին մի՛ նախանձիր, այլ ավելի լավ է բոլոր մարդկանց համարես քեզանից բարձր, որպեսզի քո հետ լինի Ինքն Աստված:

187. Մի՛ քայլիր հպարտների հետ, այլ խոնարհների հետ (սա նմանվելու և ընկերակցության մասին է):

188. Ամեն ինչում խոնարհ եղիր՝ կեցվածքով, հագուստով, նստելիս, կանգնելիս, քայլելիս, անկողնում, խցի  և նրա բոլոր պիտույքների մեջ:

189. Եթե սկսեն գովաբանել քեզ քո գործերի համար, մի՛ ուրախացիր և դրանից վայելք մի՛ քաղիր, որքան կարող ես, թաքցրու՛ դրանք, որևէ մեկին թույլ մի՛ տուր դրանց մասին խոսել, և ամեն կերպ ձգտի՛ր,որ մարդիկ չգովեն քեզ:

190. Վախեցիր որևէ գործով անվանի դառնալուց:

191. Եթե մեկը չգործած մեղքի համար քեզ կշտամբի, խոնարհեցրու՛ քեզ և պսակ կստանաս:

192. Լեզվիդ սովորեցրու ասել՝ ների՛ր ինձ, և խոնարհություն կգտնես:

193. Վարժվի՛ր, որպեսզի լեզուդ բոլոր դեպքերում, ամբողջ ժամանակ և բոլոր եղբայրներին ասի՝ ներիր ինձ: Քանզի եթե միշտ ասես՝ ների՛ր ինձ, ապա շուտով կհասնես խոնարհության:

194. Պատրաստ եղի՛ր ցանկացած հանդիմանական խոսք լսելիս, ի պատասխան ասել՝ ների՛ր ինձ, որովհետև այդպիսի խոնարհությունը խափանում է թշնամու բոլոր դավերը:

195. Իմացի՛ր, որ խոնարհությունն այլ բան չէ, քան բոլոր մարդկանց քեզանից լավը համարելը: Մտքումդ պինդ պահի՛ր, որ շատ մեղքեր ես գործել, գլուխդ խոնարհված պահի՛ր, իսկ լեզուդ թող պատրաստ լինի քեզ վիրավորանք հասցնողին ասելու՝ ների՛ր ինձ, հայր իմ: Քո խորհրդածության մշտական նյութը թող լինի մահը:

196. Սիրի՛ր ամենայն տքնություն, քեզ խոնարհեցրու բոլորի առջև, շուրթերդ փակի



տակ պահի՛ր և կհասնես խոնարհության: Խոնարհությունը թողություն կբերի բոլոր մեղքերիդ:

197. Ամենից առաջ քեզ ոմն մեկը մի՛ համարիր և դա քո մեջ խոնարհություն կծնի, իսկ խոնարհությունը գիտություն կծնի (փորձառություն և ողջամտություն), գիտությունն էլ հավատք կծնի, հավատքն էլ կծնի ապավինություն, ապավինությունն էլ կծնի սեր, սերն էլ կծնի հնազանդություն, իսկ հնազանդությունը կծնի աներեր հաստատություն, կայունություն բարու մեջ:

## է) Մեղքի դեմ մաքառման սխրանքները

### *1) Նախ և առաջ խորհուրդների դեմ*

198. Քեզանից հեռու քշի՛ր չար մտածումները՝ հանձնվելով Աստծուն և Նա քեզ կպաշտպանի Իր աջով:

199. Մի՛ հետևիր քո ամեն մի մտածման:

200. Մի՛ կատարիր քո մտադրություններն ու ցանկությունները:

201. Ուշադիր եղի՛ր,որ մտքիդ թույլ չտաս տարվել նախկին մեղքերի հիշողութ-

յամբ, որպեսզի դրանք քեզանում չնորոգվեն:

202. Մի՛ անդրադարձիր երբեմնի կատարած մեղքերին, որպեսզի դրանք կրկին չնորոգվեն: Վստահ եղի՛ր, որ դրանք քեզ ներվել են հենց այն ժամանակ, երբ դու քեզ հանձնեցիր Աստծուն և ապաշխարությանը, և դրանում բնավ մի՛ կասկածիր:

203. Մի՛ վերհիշիր այն հաճույքներն ու զվարճությունները, որոնց տրվում էիր քո անփութության ժամանակ, և դրա մասին զրույցներ մի՛ վարիր և ասա՝ ես այս եմ արել կամ այս եմ խախտել, քանի որ դա կարող է ծառայել քո անկմանը:

204. Բնավ մի՛ հիշիր այն կրքերի մասին, որոնց դու ծառայում էիր աշխարհում, որպեսզի նույն ցանկությունները չարթնացնես և դա չծառայի քո գայթակղության համար:

### 2) Տարբեր արատավոր ցանկությունների դեմ

205. Հովհաննես առաքյալը մարդկային բոլոր հեշտությունները տեղավորում է երեք իրողությունների մեջ՝ ասելով. այն ամենը,



ինչ կա աշխարհի մեջ, մարմնի ցանկություն է, աչքի ցանկություն և այս կյանքի ամբարտավանություն (Ա Հովհ. 2, 16): Մարմնի ցանկությունը որկորը ամենայն համադամներով լցնելն է, որին հաջորդում է պոռնկական պղծությունը: Աչքի ցանկությունը իրեն առարկա ունի նյութական բարիքները, որոնց տիրանալիս աչքը կա՛մ պանծանում է, կա՛մ սրտի մեջ անմաքուր խորհուրդներ է դնում: Հպարտությունը աղմկալից փառքի աշխարհիկ սերն է (ինքն իր մասին բարձր կարծիքը, ինքնագովությունը և ուրիշներից գովաբանվելու մարմաջը), որը մեր մտքերում թագավորում է արտաքին սնոտի և անցավոր արժանիքների պատճառով:

206. Փախի՛ր ընչասիրությունից և անհնազանդությունից, առավել ևս շատակերությունից, որպեսզի ինքդ քեզ չխճճես քո ցանկությունների ցանցերով, քանի որ դրանք սրտից վտարում են Աստծո երկյուղը և դեմքից՝ ամոթը, իրենց սիրողին մատնելով ստոր և ամոթալի գործերի և օտարացնում են Աստծուց:

207. Մերկացի՛ր զայրույթից և զգեստավորվի՛ր հեզությամբ, մի կողմ նետի՛ր այլասերված աչքդ և ունեցիր քեզ պարզ (մանկական, մաքուր) աչք:
208. Հեռու՛ եղիր բարկությունից և քեզ հե՛տ պահիր վավաշոտությունից, նմանապես ամեն տեսակի մեղանչական ցանկություններից:

### 3) Մասնավորապես հեշտասիրության դեմ

209. Հեշտասեր (միայն հաճելին փնտրող) մարդը ոչ մի գործի պիտանի չէ:
210. Հեշտասեր մի՛ եղիր, քանի որ Աստված հեշտասերներին չի լսում:
211. Ատի՛ր մարմինը և նրա ցանկությունները, որովհետև դրանք լի են չարով:
212. Մարմինդ այնպե՛ս ճնշիր, որ նման լինի անկողնում պառկած հիվանդի:

### 4) Բարկության և նրա ծնունդների հետ

213. Եթե զայրույթը հարձակվի քո վրա, փութով հեռու՛ քշիր նրան քեզանից և պիտի ուրախանաս կյանքիդ բոլոր օրերում:



214. Երբեք որևէ մեկի վրա մի՛ վրդովվիր և բոլորին ների՛ր:
215. Եթե մեկը անտեղի կշտամբի քեզ, մի՛ բորբոքվիր:
216. Իմաստուն եղիր և քո մասին վատ խոսողների շուրթերը փակիր քո լռությամբ:
217. Մի՛ զարմացիր, եթե որևէ մեկը քո մասին վատ խոսի, որովհետև դա մեր չարագույն թշնամիների խորամանկություններից մեկն է, որոնցով նրանք մարդու համար արգելքներ են դնում ճշմարտությունը ճանաչելու:
218. Շուտ մի՛ բարկանա և չարություն մի՛ պահիր քեզ զայրացնողի դեմ:
219. Եթե վիրավորանք ստանաս, հակակրանք մի՛ ունեցիր քեզ վիրավորողի հանդեպ, այլ ասա. ես արժանի եմ, որ բոլոր եղբայրները արհամարհեն ինձ:
220. Մի՛ տրտնջա և ոչ մեկին վիրավորանք մի՛ հասցրու:
221. Մի՛ հատուցիր չարին չարով, ոչ էլ վիրավորանքին՝ վիրավորանքով, քանզի դրանով Տերն Ինքն է խոնարհեցնում քեզ՝ տեսնելով, որ դու ինքդ քեզ չես խոնարհվում:

222. Թող թե՛ կրտսերները, թե՛ մեծերը աղոթեն, որպեսզի իրենց թույլ չտրվի ընկնել բարկության բռնակալության ներքո:

223. Ով իր մի այտին ապտակողին մյուսն է դեմ անում, նա մխիթարված է իր նվաստացման մեջ: Մեր Տեր Հիսուս Քրիստոս նրան երբեք չի լքի, քանզի բարի է և օգնում է Իր համար տառապանքներ կրողներին և Իրեն փնտրողներին, ուժ և ամրություն տալով, մինչև որ նրանք ազատվեն կրքերից: Ուրեմն ուրախացի՛ր, երբ քեզ վիշտ ու նեղություններ են պատահում, քանզի դրանցից հետո գալիս են քաղցր պտուղներ:

224. Մի՛ վախեցիր մարդկանց չարաբանությունից:

*5) Սրտի այն մյուս արատավոր շարժումների դեմ, որոնք խափանում են հաջողությունը:*

225. Եթե տեսնես, որ եղբայրներից մեկը մեղանչել է, մի՛ արհամարհիր նրան, երես մի՛ թեքիր նրանից և մի՛ դատապարտիր, այլապես ինքդ կընկնես քո թշնամիների ձեռքը:

226. Ոչ մեկին չարություն մի՛ արա և ոչ մեկին մի՛ դատիր:



227. Ականջդ մի՛ դիր ուրիշների մասին վատը լսելու համար, այլ բարեհոգաբար ներողամիտ եղիր մարդկանց նկատմամբ և կյանք կունենաս:

228. Ոչ մեկին մի՛ դատիր, քանզի դա քո անկումը կլինի:

229. Մի՛ կշտամբիր քո եղբորը, անգամ եթե տեսնես, որ խախտում է բոլոր պատվիրանները, այլապես ինքդ կընկնես թշնամիներիդ ձեռքը:

230. Մահկանացուներից ոչ մեկին մի՛ դատիր, որպեսզի Աստված քո աղոթքները չանտեսի:

231. Ոչ մեկի ոչ մի թերությունը ոչ մի պատճառով ի ցույց մի՛ դիր:

232. Ոչ մեկին տկարության համար մի՛ կշտամբիր:

*6) Սնապարծության և ամբարտավանության դեմ*

233. Երբ ողորմություն ես անում, մի՛ արա ցուցադրաբար:

234. Եթե տրվում ես հոգևոր ճգնություններին, մի՛ պարծեցիր դրանով:

*235. Բարի գործի մասին, որը դու մտադիր ես անել, նախօրոք ոչ մեկին մի՛ պատմիր, այլ գործդ արա:*

*236. Բարի գործեր կատարելիս մի՛ մեծամտացիր և ինքդ քեզ մի՛ ասա, այս արեցի, այն արեցի, որովհետև եթե այդպես վարվես, իմաստուն չես լինի:*

*237. Մի՛ եղիր փառասեր և սրտիդ մեջ ինքնագովություն մի՛ պահիր՝ ասելով՝ այս արեցի, այն արեցի, այս գործում առաջադիմեցի, այս գործում հաջողեցի: Այդպիսի մտքերը սնափառությամբ են շնչում . դրանցով մարդը անմաքուր ոգիների կացարան է դառնում:*

7) Մարդահաճության և երեսպաշտության դեմ

*238. Աստծո կամքը մի՛ թող մարդկանց կամքը կատարելու համար:*

*239. Աստվածային պատվիրանները մի՛ խախտիր հանուն ընկերասիրության:*

*240. Երեսպաշտ կամ կեղծավոր մի՛ եղիր, առավել ևս՝ ստախոս:*

*241. Ոչ միայն մարդկանց առջև արդար եղիր, այլ ինքդ քո մեջ եղիր իմաստուն, հեզ, բարեհոգի, համբերատար, ջերմեռանդ, մարդասեր:*



8) Հպարտության դեմ

*242. Մի՛ մեծամտացիր քո գործերով, ինչպիսին էլ լինեն:*

*243. Մի՛ պանծացիր հպարտությամբ և մի՛ պարծեցիր:*

*244. Հպարտությունը հեռու քշիր քեզանից, իսկ մերձավորներիդ և բոլոր մարդկանց համարիր քեզանից լավը:*

*245. Չկա ավելի մեծ անպատվություն, քան մեկին վիշտ պատճառելը:*

*246. Քեզ իմաստուն մի՛ համարիր, այլապես հոգիդ սնափառության մեջ կընկնի, և դու կմատնվես թշնամիներիդ ձեռքը:*

*247. Քեզ ամենագետ մի՛ համարիր և իմաստուն (այսինքն՝ մի՛ ասա՝ ինքս գիտեմ, ինքս կարող եմ անել), այլապես տքնությունդ իզուր կլինի, և նավդ ամբողջ ժամանակ իզուր է շարժվել:*

# Վերջաբան

248. Ով ամբողջ գրվածը չկատարի, Աստծու զայրույթը կշարժի: Ես՝ Անտոնս, ճշմարտությունն եմ ասում քեզ: Ուրեմն ունկնդիր եղիր իմ խոսքերին և դրանք պահիր սրտիդ մեջ և իմացիր, որ այս պատվիրաններով քեզ հանձնում եմ Արարչին: Եթե պահպանես դրանք՝ պիտի ուրախանաս բոլոր հրեշտակների հետ, իսկ բոլոր չար ոգիներին ողբի կմատնես: Շարժվի՛ր, ուրեմն, այս պատվիրաններով, և Աստված քո հետ կլինի, և Նրա Հրեշտակները կուղեկցեն քեզ, քո հոգին էլ կլիանա սուրբերի անուշահոտությամբ, և դեմքդ երանելիների լույսով կփայլի, և Աստծո համար սրբարան կդառնաս, ինչպես բոլոր սրբերը, և, ի վերջո, Տիրոջը ընդառաջ կգնաս ուրախությամբ և ցնծությամբ և կլսես ձայնը, որ ասում է՝ «Ապրե՛ս, բարի և հավատավոր ծառա, որովհետև այդ քչի մեջ հավատարիմ եղար, շատի վրա քեզ կկարգեմ, մտի՛ր քո Տիրոջ ուրախության մեջ» (Մատթ. 25, 21):



249. Մի՛ հեռացիր այս խրատներից և ոչ մեկից, և մեր Տեր Հիսուս Քրիստոսը քեզ հանդիստ կտա քեզ և խաղաղությամբ կկատարի քո ձեռնարկած գործը: Մեր կատարյալ հայրերը և նրանց նմանվողները, դրանք կատարելով՝ դարձան կատարյալ:

250. Եթե ասվածին ցանկանաս ավելացնել բարի գործերից որևէ մեկը, ավելացրո՛ւ, և անդադար երախտագիտություն հայտնիր մեր Տեր Հիսուս Քրիստոսին:

251. Ամեն գիշեր քո արցունքներով ցողիր քո ննջարանը և թրջիր քո անկողինը և քեզ խոնարհեցրու Քրիստոս Տիրոջ առաջ, որպեսզի Նա ջնջի քո մեղքերը և հիմնովին նորոգի, քեզ օգնական լինի բարի գործեր կատարելու և ժառանգություն պարգևի Իր հավիտենական արքայությունը: Գովք Նրան, փառք ու երկրպագություն ամենաբարի Հոր և Սուրբ Հոգու հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

# 4.
# Սուրբ Անտոն Մեծի ասույթներ և պատումներ նրա մասին

1. Աշխարհից հրաժարվելու մասին

# 1.

*Ով ցանկանում է հաջողությամբ կատարել վանականության սխրագործությունը, նա պետք է բոլորովին հաշիվները մաքրի աշխարհի հետ և թողնի նրա բոլոր բարիքները, գործերով հեռանա նրանից և արմատահան անի ամեն մի ցանկություն նրա իրերի նկատմամբ: Սուրբ Անտոնը այս ճշմարտությունը տպավորիչ կերպով ներշնչեց եղբայրներից մեկին, որը, հրաժարվելով աշխարհից և իր ունեցած բոլոր իրերը աղքատներին բաժանելով, մի չնչին բան պահեց համենայն դեպս և եկավ սուրբ Անտոնի մոտ: Ծերը, նայելով նրան, իմացավ, թե ինչ կա նրա մեջ և ասաց . «Եթե ուզում ես վանական դառնալ, գնա այսինչ գյուղը, միս առ, այն բարակ կտրատիր, հագուստներդ հանիր և մսերը կախիր թևերիցդ և ուսերիցդ, և այդպես արի այստեղ»: Եղբայրն արեց, ինչպես պատվիրել էր ծերը և այդտեղ շները, թռչունները և բուերը վրա հասան և վերքերով պատեցին նրա ամբողջ մարմինը: Երբ նա նորից եկավ ծերի մոտ, ծերը հարցրեց նրան, թե արդյո՞ք այնպես արեց, ինչպես պատվիրված էր. նա գանգատվելով ցույց տվեց իր վերքերը: Այդ ժամանակ սուրբ Անտոնն ասաց. «Այդպես է պատահում նրանց հետ, ով, թողնելով աշխարհը, իր ունեցվածքից թեկուզ մի չնչին բան է պահում, դևերը նրան վերքերով են պատում և նա պատառոտված ընկնում է այդ գոտեմարտի մեջ»:*

*2. Այդ նույն բանը հիշատակվում է նաև հետևյալ պատմության մեջ, որը գրի է առել Քասիանոսը. Սուրբ Անտոնի մոտ մի եղբայր եկավ, որը մտածում էր, թե ոչ մի անհրաժեշտություն չկա հեռանալ աշխարհից և սկսեց խոսել. «Ավելի շատ վարձ ունի նա, ով աշխատում է քաղաքում կամ շենում, կատարելով այն ամենը, ինչ պահանջվում է հոգևոր կատարելություն ձեռք բերելու համար»: Սուրբ Անտոնը հարցրեց նրան. «Բայց դու որտե՞ղ և ինչպե՞ս ես ապրում»: Նա*

պատասխանեց. «Ապրում եմ ծնողներիս տանը, որոնք տալիս են ինձ ամեն հարկավոր բան: Դա ազատում է ինձ բոլոր գործերից և հոգսերից և ես անդադար զբաղվում եմ միայն ընթերցանությամբ և աղոթքով»: Սուրբ Անտոնը նորից հարցրեց. «Ասա՛ ինձ, որդի՛ս, արդյո՞ք դու նրանց հետ տխրում ես նրանց վշտերի ժամանակ և արդյո՞ք ուրախանում ես նրանց ուրախություններով»: Նա խոստովանեց և՛ մեկը, և՛ մյուսը: Այդ ժամանակ ծերն ասաց նրան. «Ուրեմն իմացիր, որ գալիք կյանքում ճակատագիրը կիսելու ես նրանց հետ, ում հետ այս կյանքում կիսում ես ուրախություններն ու վշտերը: Քո ընտրած ապրելաձևը քեզ վնասակար է ոչ միայն այն պատճառով, որ ամենօրյա կենցաղային դիպվածների փոփոխմամբ քո միտքը ծանրաբեռնում է երկրայինի մասին անդադար մտածումներով, այլ նաև այն պատճառով, որ քեզ զրկում է այն պտուղներից, որոնք կստանայիր, եթե ինքդ քո ձեռքերի աշխատանքով հայթայթեիր քո սնունդը Պողոս Առաքյալի օրինակով, որը Ավետարանի քարոզչության աշխատանքի հետ միասին իր ձեռքերով հայթայթեց պետքա-



կանը իր և իր հետ եղողների համար, ինչպես ասաց նա եփեսացիներին. «Դուք ինքներդ գիտեք, որ իմ և ինձ հետ եղողների կարիքները հոգացին այս ձեռքերը» (Գործք. 20, 34): Իսկ դա արեց որպես մեզ խրատ, որպեսզի մեզ օրինակ տա, ինչպես գրեց նա թեսաղոնիկեցիներին. «Եվ ոչ ոքի հացը ձրի չկերանք, այլ ջանքով և վաստակով զոր ու գիշեր աշխատում էինք՝ ձեզնից ոչ մեկի վրա ծանրություն չլինելու համար,ոչ թե նրա համար, որ իշխանություն չունենք, այլ որպեսզի մենք մեզ օրինակ դարձնենք ձեզ, որ մեզ նմանվեք» (Բ Թեսաղ. 3, 8-9): Ահա թե ինչու, հնարավորություն ունենալով օգտվել հարազատների օժանդակությունից, նախընտրում ենք ավելի լավ է մեզ համար կերակուր ձեռք բերել երեսի քրտինքով, քան մեզ ապահովենք ազգականների տված ստացվածքով: Մենք սիրով կընտրենք վերջինը, եթե կարողանանք այն ավելի օգտակար համարել: Ընդ որում իմացիր, որ եթե առողջ լինելով հանդերձ ապրում ես ուրիշների հաշվին, ապա ուտում ես աղքատների և կարիքավորների բաժինը:

## 2. Ընդհանուր պատասխաններ այն հարցին, թե ինչ անել

Աշխարհը թողնողը մտնում է կյանքի բոլորովին նոր ասպարեզ, որը, անշուշտ, թեև ոչ բոլորովին է անծանոթ լինում նրա համար, սակայն ունենում է շատ կողմեր, որոնք ակամա հարցեր են առաջացնում. «Իսկ ի՞նչ անել, ինչպե՞ս է պետք ապրել»: Սուրբ Անտոնին բազմիցս են ուղղել այսպիսի հարցեր և ահա նրա պատասխանը:

3. Այդ մասին նրան հարցրեց հայր Պամբոն և նա պատասխանեց. «Հույսդ մի՛ դիր քո արդարության վրա, ճշմարտապես զղջա՛ քո անցյալ մեղքերի համար, սանձի՛ր լեզուդ, սիրտդ և որովայնդ»:

4. Ահա թե ինչ ասաց նա այդ հարցի համար հայր Պիմենին. «Բոլոր գործերից առավել լավ գործը,որը կարող է կատարել մարդը, դա իր մեղքերն Աստծո և իր ծերերի առաջ խոստովանելն է, ինքն իրեն դատելը և մինչև վերջին շունչը պատրաստ լինելը հանդիպելու ամեն մի փորձության:

5. Ուրիշ մեկը հարցրեց նրան. «Ի՞նչ անեմ, որ հաճո լինեմ Աստծոն»: Սուրբ Անտո-



նը պատասխանեց. «Ուր էլ գնաս, միշտ աչքերիդ առաջ Աստծուն ունեցիր: Ինչ էլ անես, վկայություն ունեցիր Ս. Գրքից և որտեղ էլ որ ապրես, շուտ մի՛ հեռացիր այնտեղից: Պահի՛ր այս երեք պատվիրանները և կփրկվես»:

6. Նորից մի աշակերտի նա խրատեց. «Խորշի՛ր քո որովայնից, այս դարի պահանջներից,չար ցանկություններից և մարդկային պատվից, այնպես ապրիր, որ ասես չես ապրում այս աշխարհում և հանգիստ կգտնես»:

7. Ահա թե ինչ է ասել հայր Անտոնն իր մոտ եկող եղբայրներին, ինչպես գրում է սուրբ Աթանասը. «Ձեր աչքերի առջև միշտ երկյուղ ունեցեք, հիշե՛ք Նրան, Ով սպանում է և ապրեցնում (Ա Թագ. 2, 6): Ատե՛ք աշխարհը և այն ամենը, ինչ նրա մեջ է, ատե՛ք ամեն տեսակի մարմնավոր հանգստություն, մերժեք այս կյանքը, որպեսզի ապրեք Աստծո համար, հիշե՛ք այն, ինչ խոստացաք Աստծուն, որովհետև Նա կպահանջի մեզանից դատաստանի օրը: Քաղցե՛ք, ծարավե՛ք, հրաժարվե՛ք ինչքից, հսկումներ կատարե՛ք, լացե՛ք, ողբացե՛ք, ձեր սրտի մեջ

հոգոց հանե՛ք, փորձե՛ք ձեզ, թե արդյո՞ք արժանի էք Աստծուն, արհամարհե՛ք մարմինը, որպեսզի փրկեք ձեր հոգիները:

8. Թե ինչ պետք է անի վանականը,այս մասին նույն բանը մանրամասն ցույց է տալիս նաև սուրբ Քասիանոսը: Վաղուց, – ասում է նա, – գործածվում է երանելի Անտոնի այն հիանալի խրատը, որ վանականը, ձգտելով ամենաբարձր կատարելության, չպետք է սահմանափակվի առաջադիմող հայրերից որևէ մեկին նմանվելով, որովհետև ոչ մեկի մեջ չի կարելի գտնել բոլոր կատարյալ առաքինությունները: Այլ մեկը զարդարված է գիտությամբ, մյուսը սաստիկ ուշիմ է դատողության մեջ, մեկը տարբերվում է խոնարհությամբ, մյուսը ժուժկալությամբ, մեկը՝ սրտի բարեշնորհ պարզությամբ: Մեկը գերազանցում է մյուսներին մեծահոգությամբ, մեկ ուրիշը՝ գթասրտությամբ, մեկը՝ հսկումով, մյուսը՝ լռությամբ կամ աշխատասիրությամբ: Ուստի վանականը, ցանկանալով հոգևոր խորիսխ ստեղծել, պետք է իմաստուն մեղվի նման ամեն մի առաքինություն ընդօրինակի նրանից, ով առավելապես է խորացել դրանցում և դնի



այն իր սրտի անոթի մեջ, ուշադրություն չդարձնելով այն բանին, ինչը չունի որևէ մեկը, այլ աչքի առաջ ունենալ այն առաքինությունը և նախանձախնդրությամբ սեփականացնել այն, որով աչքի է ընկնում մեկ ուրիշը:

### 3. Այն զորությունը, որը մղում է սխրանքների և օժանդակում դրանց

Եթե թվարկենք բոլոր ասվածները, կստացվի բավականին ծավալուն բնագավառ սխրագործությունների համար: Հարց է ծագում, թե ջանասերին ի՞նչ զորություն է մղում սխրանքների և նրան պահում այդ մաքառման մեջ: Այդ զորությունը փրկության նախանձախնդրությունն է, որ հանուն Աստծո փառքի պատրաստ է ամեն ինչի: Եթե այդ նախանձախնդրությունը կա, ապա վանականի բոլոր սխրագործությունները ի գործ են դրված, եթե չկա, ապա ամեն ինչ կորած է:

9. Ուստի երբ մի անգամ մի եղբայր, ում մեջ պակասում էր այդ նախանձախնդրությունը, գալով սուրբ Անտոնի մոտ, խնդրեց

*նրան աղոթել իր համար, մեծ ծերը պատասխանեց նրան. «Ո՛չ ես, ո՛չ Աստված չենք գթա քեզ, եթե ինքդ չհոգաս քո համար և չաղոթես Աստծուն»:*

*10. Այդ նույն պատճառով նա խորհուրդ տվեց ուշք ու մտքով միշտ Աստծո հետ լինել, որպես մեծ առաքինություն գովաբանելով բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքի բոլոր օրերի ընթացքում անդադրում աշխատում է Աստծո համար և մինչև վերջին շունչը միշտ արթուն և զգոն են փորձչի որոգայթների դեմ:*

*11. Այդ պատճառով հորդորեց ոչ մի բանում ներողամիտ չլինել ինքն իր հանդեպ, այլ համբերությամբ միշտ պահել այդ նույն նախանձախնդրության ոգին՝ ասելով. «Վանականը, որը մի քանի օր աշխատում է, իսկ հետո ներողամտությամբ վերաբերվում իր անձի նկատմամբ, ապա նորից աշխատում է և նորից ծուլանում, այդպիսի վանականը միևնույնն է, թե ոչինչ չի անում և երբեք կյանքի կատարելության չի հասնի մշտական նախանձախնդրության և համբերատարության պակասի պատճառով»:*

*12. Ուստի և նա համարում էր,որ արտո-*



*նություններ փնտրողը չի հասկանում իր դիրքը և իր նպատակը, և վանականի ամբողջ անհաջողությունը բխեցնում էր տքնելու եռանդի պակասությունից: «Որովհետև, – ասում էր նա, – մենք չենք առաջադիմում, քանզի չգիտենք մեր դիրքը և չենք հասկանում, թե ինչ է պահանջում ձեռնարկած գործը, այլ ցանկանում ենք առաքինության հասնել առանց դժվարության: Դրա համար էլ հենց որ մի տեղում փորձության ենք հանդիպում, մի ուրիշ տեղ ենք գնում, մտածելով, թե մի տեղ կա, որտեղ սատանա չկա: Բայց ովքեր գիտեն, որ պատերազմ կա, նրանք իրենց չեն թուլացնում, այլ միշտ մարտնչում են Աստծո օգնությամբ»:*

*13. Այս մասին սուրբ Անտոնի խոսքը վերաբերում է նրանց, ովքեր մեկը չեն ուզում, մյուսը չեն կարող: Մի անգամ եղբայրներ եկան սուրբ Անտոնի մոտ և ասացին նրան. «Ավետարանում ասվում է՝ եթե մեկը քո աջ ծնոտին ապտակի, նրան մյուսն էլ դարձրու» (Մատթ. 5, 39): Նրանք ասացին նրան. «Մենք չենք կարող այդ անել»: Ծերն ասաց. «Եթե դուք չեք կարող դարձնել մյուսը, գոնե կրեք ապտակը մեկի վրա»: «Դա էլ չենք*

կարող», – պատասխանեցին նրանք: «Եթե դա էլ չեք կարող, գոնե մի հատուցեք ապտակին ապտակով», – ասաց ծերը: Եղբայրներն ասացին. «Դա էլ չենք կարող»: Այդ ժամանակ սուրբ Անտոնը իր աշակերտին ասաց. «Նրանց համար մի քիչ ապուր պատրաստիր, նրանք հիվանդ են: Եթե դուք մեկը չեք կարող, մյուսը չեք ուզում, ապա ես ձեր համար ինչ կարող եմ անել»: Պետք է աղոթել (եղբայրները՝ իրենք իրենց համար, կամ ուրիշները՝ նրանց համար), որպեսզի նրանց մեջ արթնանա նախանձախնդրության հոգին՝ բարոյական եռանդը»:

## 4. Նախանձախնդրության ղեկավարները

Բայց նախանձախնդրությունը ինքն իրենով երբեմն կույր է լինում և կարող է ընտրել մի այնպիսի ուղղություն,որը համապատասխան չլինի բռնած կյանքի նպատակին: Այդ պատճառով պետք է պաշտպանված լինի ղեկավարների կողմից: Իսկ ովքեր են այդ ղեկավարները: Սուրբ Անտոնը մատնանշում է երկուսը՝ սեփական դատողությունը և փորձառուների խորհուրդները:



### ա) Սեփական դատողությունը

14. Մի անգամ սուրբ Անտոնի մոտ հայրեր եկան, հարցնելու, թե ո՞ր առաքինությունն է բոլորից կատարյալ և ո՞րը կարող է վանականին պաշտպանել բոլոր թշնամական որոգայթներից: Նրանցից յուրաքանչյուրն ասաց այն, ինչը ճիշտ էր համարում: Ընդ որում մի քանիսը գովում էին պահքը և հսկումը, որովհետև դրանք կարգավորում են խորհուրդները, սուր են դարձնում միտքը և հեշտացնում են մարդու մերձեցումը Աստծուն, մյուսներն ավելի շատ խրախուսում էին աղքատությունը և երկրային իրերի նկատմամբ արհամարհանքը, որովհետև դրա միջոցով միտքը դառնում է հանգիստ, ավելի մաքուր և աշխարհային հոգսերից ազատ, մերձեցումը Աստծուն ավելի դյուրին կլինի, ոմանք ցանկանում էին բոլոր առաքինություններից առավելություն տալ գթասրտությանը, որովհետև Աստված պիտի ասի գթասիրտներին.«Եկե՛ք,իմ Հոր օրհնյալնե՛ր, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը» (Մատթ. 25, 34), ուրիշներն էլ այլ բաներ էին ասում:

Իսկ սուրբ Անտոնն ասաց. «Այն բոլոր առաքինությունները, որոնց մասին մենք հիշեցինք, շատ փրկարար են և չափազանց պետք են Աստծուն փնտրողներին, ովքեր բոցավառվում են Նրան մերձենալու բուռն ցանկությամբ: Բայց մենք տեսանք, որ շատերը հյուծեցին իրենց մարմինը չափից դուրս պահեցողությամբ, հսկումներով, անապատ քաշվելով, ջերմեռանդորեն նախանձախնդիր եղան նաև տքնության, սիրեցին աղքատությունը, այնքան մերժեցին աշխարհային հարմարավետությունները, որ իրենց թողեցին այնքան, որքան պետք էր մի օրվա համար, այլ ունեցածը բաժանեցին աղքատներին, բայց երբեմն եղավ, որ այս ամենից հետո նրանք հակվեցին դեպի չարը և ընկան ու զրկվելով այդ բոլոր առաքինությունների պտուղներից, արժանացան դատապարտության: Դրա պատճառը մի բան է՝ նրանք չունեին դատողության և ողջամտության առաքինությունը և չկարողացան օգտվել դրա օժանդակությունից, որովհետև հենց դա է այն առաքինությունը, որը մարդուն սովորեցնում և տրամադրում է գնալ ուղիղ ճանապարհով՝ դույզն-ինչ չշեղվելով: Եթե



մենք գնանք արքայական ճանապարհով, ապա մեր բանսարկուների կողմից երբեք չենք հրապուրվի ո՛չ աջից դեպի չափազանց ժուժկալությունը, ո՛չ ձախից դեպի անփութությունը, անհոգությունը և ծուլությունը: Դատողությունը հոգու աչքն է ու նրա ջահը, ինչպես աչքերը մարմնի ջահն են, այնպես որ եթե այդ աչքերը լուսավոր լինեն, ապա նաև ամբողջ մարմինը (մեր գործերը) լուսավոր կլինեն, իսկ եթե այդ աչքերը խավար լինեն, ապա խավար կլինի նաև ամբողջ մարմինը, ինչպես ասում է Տերը սուրբ Ավետարանում (Մատթ. 6, 22-23): Դատողությամբ մարդն ընտրում է իր ցանկությունը, խոսքը և գործը և հեռու է քաշվում այն ամենից, ինչը նրան հեռացնում է Աստծուց: Դատողությամբ նա խափանում և ոչնչացնում է թշնամու բոլոր դավերը, ճշտորեն տարբերելով, թե որն է լավը և որը՝ վատը:

15. Այդ նույն բանն է ցույց տալիս նաև հետևյալ խոսքը. «Դարբինը երկաթի կտորը վերցնելով նախապես քննում է, թե ինչ պատրաստի դրանից՝ գերանդի, սուր, թե՞ կացին»: Այդպես էլ մենք նախ և առաջ պետք է մտածենք, թե ինչպիսի առաքինութ-

*յան ձեռնամուխ լինենք, որպեսզի զուր տեղը չաշխատենք: Իհարկե, ավելի հարմար է ղեկավարվել սեփական դատողությամբ, եթե այն միշտ ամեն ինչի համար և բոլորի մոտ բավարար լիներ: Բայց քանի որ այդպես ասել չենք կարող, ապա ավելի ստույգ և անվտանգ ղեկավարությունը փորձառուների խարհուրդներն են:*

### բ) Փորձառուների խորհուրդները

*16. Այդ իմաստով սուրբ Անտոնն ասում. «Ես գիտեմ վանականների, որոնք շատ ջանքերից հետո ընկան և անմտության մատնվեցին, որովհետև հույս դրեցին իրենց գործերի վրա և արհամարհեցին Նրա պատվիրանները, Ով ասում է. «Հարցրու՛ քո հայրերին և նրանք քեզ կպատասխանեն» (Բ Օր. 32, 7):*

*17. ԵՎ նորից. սուրբ Գիրքն ասում է. «Նրանք, որ առաջնորդ չունեն, պիտի ցած թափվեն տերևների պես» (Առակ. 11, 14) և պատվիրում է ոչինչ չանել առանց խորհուրդի, այնպես որ Թույլ չի տալիս նույնիսկ մարդու սիրտը ուրախացնող հոգևոր*



*խմիչք խմել առանց խորհրդի, երբ ասում է. «Առանց խորհրդի ոչինչ մի արա» (Սիրաք. 32, 21), ու նաև գինին է՛լ խմիր խորհրդով: Առանց խորհրդի իր գործերն անող մարդը նման է անպարիսպ քաղաքի, ով ցանկանա, կմտնի և կհափշտակի նրա գանձերը:*

*18. Ուրիշներին հարցնելը սուրբ Անտոնն այնքան փրկարար գործ էր համարում, որ նույնիսկ ինքը՝ բոլորի ուսուցիչը, հարցով դիմում էր իր աշակերտին, որը, չնայած կրտսեր էր, բայց առաջադիմություն ուներ, և ինչպես նա ասեր, սուրբ Անտոնը այդպես էլ վարվում էր: Պատմում են, թե երբ Հայր Անտոնը Կոստանդին կայսեր կողմից գրավոր հրավեր ստացավ այցելել Կ. Պոլիս, ապա դիմեց Պողոս Պարզամիտին. «Հա՞րկ է, որ գնամ»: Եւ երբ նա ասաց. «Եթե գնաս, կլինես Անտոն, իսկ եթե չգնաս, ապա կլինես Հայր Անտոն», որով և հավանություն չտրվեց նման ճանապարհորդությանը, ուստի և սուրբ Անտոնը խաղաղված մտքով մնաց իր տեղում:*

*19. Նաև ուրիշներին էր խորհուրդ տալիս այդպես վարվել՝ ասելով. «Վանականը, եթե հնարավոր է, պետք է խցում իր յուրաքանչ-*

յուր քայլի, ըմպած ամեն մի կաթիլ ջրի համար հարցնի ծերերին: Ես գիտեմ որոշ վանականների, որոնք ընկան, որովհետև մտածեցին, որ իրենք միայնակ կարող են հաճո դառնալ Աստծուն:

20. Այսպիսով, սուրբ Անտոնը սեփական դատողությանը վստահելը չէր դրվատում: Արդյոք դրա համար չէր գովեստով խոսում Հովսեփի մասին, որը սուրբ Գրքից եկող մի հարցի ի պատասխան ասել էր՝ «չգիտեմ». դրանով, բացի խոնարհությունից, նա անվստահություն հայտնեց իր մտածողության հանդեպ: Դա այսպես եղավ. սուրբ Անտոնի մոտ ծերեր եկան, նրանց հետ նաև՝ Հայր Հովսեփը: Ծերը, ցանկանալով փորձել նրանց, Սուրբ Գրքից մի խոսք առաջարկեց և սկսեց յուրաքանչյուրին հարցնել՛ սկսելով կրտսերներից, թե ինչ է նշանակում այդ խոսքը: Յուրաքանչյուրն ասաց ըստ իր կարողության, բայց ծերը յուրաքանչյուրին ասաց. «Ո՛չ, չիմացա՛ր»: Բոլորից հետո նա հարցրեց Հայր Հովսեփին. «Դու՞ ինչ կասես այս խոսքի վերաբերյալ»: «Չգիտե՛մ», — պատասխանեց Հովսեփը: Հայր Անտոնն ասաց. «Հայր Հովսեփը ուղիղ ճանապարհի



վրա կանգնեց, երբ ասաց, թե չգիտի»:

21. Ի դեպ, նա խորհուրդ էր տալիս ուրիշներին էլ վստահել ոչ անվերապահորեն: Հարկավոր է նախապես համոզվել ծերի ուղղամտության և փորձառության մեջ և նոր միայն վստահել նրա խոսքին և անառարկելիորեն ընդունել նրա խորհուրդները: Նշանը, որով կարելի է այդ որոշել, դա նրա խոսքի համաձայնությունն է Աստծո Խոսքի հետ:

— Հարկավոր է նայել այն բանին, — ասում էր նա, — թե քեզ ինչ է կարգադրվում: Եթե մեկը կարգադրում է քեզ մի բան, որը համաձայն է մեր Տիրոջ պատվիրաններին, ընդունի՛ր այդ խոնարհությամբ և ջանա կատարել: Թող նաև մեր մեջ կատարվի Առաքյալի խոսքը. «Հնազանդվեցե՛ք միմյանց Քրիստոսի երկյուղով» (Գաղատ. 5, 13, Եփես. 5, 21): Ընդհակառակը, եթե մեկը քեզ մի բան կարգադրի, որը հակառակ է Աստծո պատվիրաններին, ապա խրատ տվողին ասա. «Եթե Աստծո առաջ արդար է առավել ձեզ լսել, քան Աստծուն, ինքներդ որոշեցեք» (Գործք 4, 19): «Պետք է առավել Աստծուն հնազանդվել, քան մարդկանց» (Գործք

*5, 29): Հիշենք նաև Տիրոջ խոսքը. «Իմ ոչխարները ճանաչում են Իմ ձայնը և օտարի հետևից չեն գնում, որովհետև չեն ճանաչում օտարի ձայնը» (Հովհ. 10, 5): Նույն կերպ նաև երանելի Պողոսը հորդորում է՝ ասելով. «Եթե նույնիսկ մենք կամ երկնքից մի հրեշտակ ձեզ ավելին ավետարանի, քան այն, որ մենք ավետարանեցինք քեզ, նզովյալ լինի» (Գաղատ. 1, 8 ): Հավանական է, որ նման սահմանափակման պատճառը եղել են արիոսականները, որոնք, ընդունելով բարեպաշտության կերպարանք, ոմանց հրապուրում էին դեպի իրենց կողմը և դրա համար էլ իրենց ստապատում վարդապետությունը լցնում էին թույնով: Իսկ գուցե և այն է ծառայել որպես պատճառ, որ ոմանք հանձն էին առնում առաջնորդել ուրիշներին՝ իրենք շատ բաներում փորձառություն չունենալով հանդերձ: Այս դեպքում նա սովորաբար ասում էր. «Հին հայրերը գնում էին անապատ և այնտեղ, բազում ճգնություններով բուժելով իրենց հոգիները, հասկացան, թե ինչպես կարելի է բժշկել նաև ուրիշներին: Այդ պատճառով վերադառնալով այնտեղից, դարձան մյուսների համար*



*փրկարար բժիշկներ: Իսկ մեզանից եթե մեկին վիճակվում է մտնել անապատ, ապա մենք, նախքան մեր առողջանալը մեր վրա ենք վերցնում ուրիշների հոգսը, որի պատճառով մեզ վրա վերադառնում է նախկին տկարությունը և մեր համար վերջը լինում է ավելի վատ, քան սկիզբն էր: Որի հետևանքով մեր վրա է գալիս այս խոսքը. «Բժիշկ, բժշկի՛ր ինքդ քեզ» (Ղուկ. 4 23 ):*

## 5. Ինչպես բորբոքել նախանձախնդրությունը

*Մարդու մեջ ոչ մի բան միապաղաղ չի մնում, այլ մե՛կ հզորանում է, մե՛կ տկարանում: Այդպես էլ եռանդը մե՛կ բոցավառվում է, մե՛կ մարում: Վերջինի դեպքում հարկավոր է այն բորբոքել, որպեսզի իսպառ չմարի: Ինչո՞վ և ինչպե՞ս: Առաջինը՝ մահվան մասին հիշելով: Սուրբ Անտոնը բոլորին բազմիցս հորդորում էր մտքի և սրտի մեջ դրոշմել, որ այս օրը, որ մենք ապրում ենք, վերջինն է:*

*22. Երկրորդը՝ մտաբերելով այն, ինչ կլինի մահվանից հետո: Որպեսզի իր աշակերտ-*

ների հոգիներում տպավորի այդ միտքը,նա պատմում էր, թե ինչ է իրեն բացահայտվել, ինչպես պատմում է այդ մասին նրա վարքագիրը՝ Աթանաս Մեծը: Մի անգամ՝ նախքան կերակուր ճաշակելը, ժամը իններին, աղոթքի կանգնելով, սուրբ Անտոնը զգաց,որ մտքով վերացել է, և ամենից զարմանալին այն է, որ ինքն իրեն տեսնում է ասես ինքն իրենից դուրս է և ինչ-որ մեկը կարծես վեր է բարձրացնում իրեն: Իսկ օդի մեջ կանգնել են ինչ-որ մռայլ և սարսափելի դեմքեր և փորձում են փակել նրա ճանապարհը: Անտոնին վեր տանողները դիմադրեցին նրանց, բայց նրանք մոտեցան, ասես իրավունք ունեին հաշվետվություն պահանջելու, թե արդյո՞ք Անտոնը ինչ- որ բանով ենթակա չէ իրենց իշխանությանը: Հարկավոր էր գիջել, և երբ նրանք պատրաստվեցին հաշվետվություն ընդունել սուրբ Անտոնի ծնված օրվանից սկսած, ապա սրբի ուղեկիցները դիմադրեցին դրան՝ ասելով, թե ինչ որ կար ծնված օրվանից, Աստված ջնջեց, երբ նա վանականի ուխտ արեց: Հաշվետվություն վերցրեք այն ժամանակվանից սկսած, երբ նա վանական դարձավ և ուխտ արեց Աստծուն: Բայց



այս դեպքում մեղադրողները նրան ոչ մի հանցանքի մեջ չկարողացան բռնել, ուստի նահանջեցին, և Անտոնի վեր բարձրանալու ճանապարհը դարձավ ազատ և անարգել: Դրանից հետո սուրբ Անտոնը զգաց, որ նորից մտնում է ինքն իր մեջ և այնուհետև դարձավ միանգամայն նախկին Անտոնը: Բայց նա արդեն մոռացավ ուտելիքի մասին և այդ օրվա մնացած մասը և ամբողջ գիշերն անցկացրեց հոգոցներով և աղոթքներով, զարմանալով, թե որքան շատ թշնամիների հետ է մեզ պատերազմ սպասում և մարդ ինչ դժվարությամբ պետք է վեր բարձրանա: Այդ ժամանակ նա հիշեց Պողոս Առաքյալի խոսքերը օդում տիրող իշխանի մասին (Եփես. 2, 2): Որովհետև թշնամին օդում իշխանություն ունի պայքարի մեջ մտնելու օդի միջով անցնողների հետ, ջանալով փակել նրանց ճանապարհը: Ուստի Առաքյալը առավել ևս խորհուրդ տվեց. «Առե՛ք Աստծո սպառազինությունը, որպեսզի կարողանաք չար օրում դեմ կանգնել չարին» (Եփես. 6, 13) և թող անարգվի թշնամին. «Մեր մասին ասելու որևէ չար բան չունենա» (Տիտ. 2, 8):

23. Այսպես պատմում է սուրբ Աթանասը

ու թեև այնուհետ ոչ մի տեղ չի հիշատակվում, որ սուրբ Անտոնը այդ մասին պատմել է ուրիշներին, բայց հարկավոր չէ կասկածել, որովհետև տեսիլքի մասին իմանալը ավելի շատ ուրիշներին էր պետք,քան նրան: Նույն խնդրի վերաբերյալ մեկ այլ տեսիլքի մասին ասվում է, որ սուրբ Անտոնը պատմել է նաև ուրիշներին: Սուրբ Աթանասը գրում է. «Սուրբ Անտոնը զրուցում էր իր մոտ եկած եղբայրների հետ մահվանից հետո հոգու վիճակի  և այն մասին, թե որտեղ պետք է լինի հոգու տեղը: Դրա հաջորդ գիշերը մեկը վերևից կանչում է նրան և ասում, թե վե՛ր կաց, դու՛րս արի և նայի՛ր: Անտոնը դուրս է գալիս (որովհետև գիտեր, թե ով է հրամայում իրեն) և վեր նայելով՝ տեսնում է մի ինչ-որ հսկայի՝ այլանդակ և սարսափելի, որի գլուխը քսվում էր ամպերին, իսկ այդ ժամանակ երկրից բարձրացան ինչ-որ թռչուններ, որոնցից մի մասի ճանապարհը հսկան փակեց, իսկ մյուսները թռան նրա վրայով և չդիպչելով նրան, անվնաս երկինք բարձրացան: Վերջինների վրա նա ատամներն էր կրճտացնում, իսկ առաջինների համար ուրախանում էր: Ընդ որում անտեսա-



նելի ձայնն ասաց. «Անտո՛ն, հասկացի՛ր տեսիլքը»: Այդ ժամանակ նրա միտքը պայծառացավ և նա հասկացավ, որ դա հոգին է վերանում երկրից, և որ այդ հսկան մեր թշնամին է, որը հետ է պահում անհոգներին և իր ներշնչանքներին հնազանդվողներին՝ նրանց արգելելով վեր բարձրանալ, իսկ եռանդուններին և անհնազանդներին հետ պահել չի կարող և նրանք վեր են բարձրանում թշնամուց: Այդ տեսիլքը սուրբ Անտոնն ընդունեց որպես հիշեցում իրեն և սկսեց ավելի շատ ջանքեր գերծադրել առաջադիմելու ամենայն տեսակի թշնամիներին դիմադրելու սխրագործության մեջ: Նա այս տեսիլքը ուրիշներին պատմեց հենց այդ նպատակով, այսինքն՝ մաքուր կյանքի համար ավելի մեծ եռանդ առաջացնելու համար:

Հայր Քրոնիոսն ասում է, որ մի անգամ սուրբ Անտոնը այս տեսիլքի մասին պատմեց մեծ ժողովի առաջ: Ընդ որում ավելացրեց, որ սուրբ Անտոնը այս տեսիլքից առաջ մի ամբողջ տարի աղոթել է, որպեսզի իրեն հայտնի դառնա, թե ինչ է լինում մահից հետո արդար և մեղավոր հոգիների հետ և որ այդ հսկայի ձեռքերը տարածված էին երկն-

*քով մեկ, իսկ նրանից ցած փռված էր ծովի մեծության մի լիճ, որի մեջ ընկնում էին թռչունները, որոնց հսկան հարվածում էր ձեռքերով: Լատինական «Հարանց վարք»-ի մեջ այս պատմության մասին այն միտքն է հաղորդվում, որ թռչունները այն ժամանակ էին միայն հարվածներ ստանում հսկայի կողմից և վայր ընկնում լճի մեջ, երբ օդում կանգնած էին մնում նրա ձեռքերից ներքև՝ վեր բարձրանալու ուժ չունենալով, իսկ որոնք ուժ ունեին նրա ձեռքերից և գլխից վեր բարձրանալու, նրանց վրա նա միայն ատամներն էր կրճտացնում՝ նայելով, թե ինչպես են այնուհետև երկինք սլանում և ընդունվում հրեշտակների կողմից:*

*24. Լսելով այդ մասին՝ ինչպիսի՜ բորբոքուն սարսափով լցվեցին հոգիները: Բայց ահա նաև սփոփիչ տեսիլքը, որը ի զորու է կենդանացնել լուսավոր վիճակով լիանալու նախանձախնդրությունը: Դա սուրբ Ամոնի մասին տեսիլքն է, մի մարդու, որը սուրբ Անտոնի ոչ այնքան աշակերտն էր,որքան գրուցակիցը: Սուրբ Աթանասը գրում է, որ մի օր սուրբ Անտոնը սարի վրա նստած նայում է երկնքին և տեսնում՝ մեկը հրե ժապավենի պես օդով երկինք է ելնում, իսկ վերից նրան ընդառաջ են գալիս ցնծացող հրեշտակների երգեցիկ խմբերը: Դրանից ցնցված՝ նա սկսեց աղոթել, որ Աստված բարեհաճ լինի հայտնել իրեն, թե այդ ինչ է նշանակում: Եւ նա մի ձայն լսեց. «Դա Նիտրոսի վանական Ամոնի հոգին է»: Այդ Ամոնը մինչև խոր ծերություն ապրեց խստապահանջ ճգնավորությամ մեջ: Նա եղել էր սուրբ Անտոնի մոտ, նաև սուրբ Անտոնն էր եղել նրա մոտ: Նիտրոս լեռից մինչև սուրբ Անտոնի լեռը 13 օրվա ճանապարհ էր: Երբ նրա մոտ գտնվող եղբայրները նրան հարցրին, թե նա ինչի՞ց այդքան զարմացավ, սուրբ Անտոնը ասաց, որ տեսավ և լսեց Ամոնի մասին: Երբ 30 օր հետո եղբայրներ եկան Նիտրոսից, սուրբ Անտոնի մոտ եղողները նրանց հարցրին Ամոնի մասին, իմացան, որ նա իսկապես մահացել է հենց այդ նույն օրն ու ժամին, երբ ծերը տեսել է, թե ինչպես է նրա հոգին երկինք բարձրանում:*

*25. Ծուլությունը վանելու և ջերմեռանդություն բորբոքելու ոչ պակաս զորություն ունի նաև հետևյալ տեսիլքը, որի մասին անձամբ պատմում է սուրբ Անտոնը: «Աղոթե-*

ցի ես Աստծուն, - ասում է նա, - որ ինձ ցույց տա, թե ինչ հովանի է շրջապատում և պաշտպանում վանականին: Եվ տեսա ես վանականին՝ շրջապատված հրեղեն լապտերներով և բազմաթիվ հրեշտակներ աչքի լույսի պես պահում էին նրան՝ պարսպելով իրենց սրերով: Այդ ժամանակ շունչ քաշեցի և ասացի. «Ահա թե ինչ է տրված վանականին»: Բայց, չնայած դրան, սատանան հաղթահարում է նրան և նա ընկնում է: Եվ ես ձայն լսեցի գթասիրտ Աստծուց, և նա ասաց. «Սատանան ոչ ոքի չի կարող տապալել, նա այլևս ոչ մի զորություն չունի այն բանից հետո, երբ Ես, վեր բարձրանալով մարդկային էությունը, կործանեցի չարի իշխանությունը: Բայց մարդը ինքն իրենով է ընկնում, երբ տրվում է ծուլությանը և ընդառաջում է իր ցանկություններին և կրքերին»: Ես հարցրեցի. «Յուրաքանչյուր վանականի արդյո՞ք տրվում է այդպիսի հովանի»: Եւ ինձ ցույց տրվեց վանականների մի ամբողջ հույլ ՝ պարսպված այդպիսի պաշտպանությամբ: Այդ ժամանակ բացականչեցի. «Երանելի է մարդկային ցեղը և հատկապես վանականների բանակը, որ ունի այդքան գթա-



սիրտ և այդքան մարդասեր Աստված: Ուրեմն նախանձախնդիր լինենք մեր փրկության համար և վանելով ամեն տեսակի ծուլություն, եռանդով կրենք մեր դժվարությունները, որպեսզի արժանանանք Երկնքի Արքայությանը մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհով:

26. Մի ուրիշ անգամ սուրբ Անտոնը հայտնեց, թե ինչպես է եռանդի պակասության պատճառով թուլանում վանականությունը և նսեմանում նրա փառքը: Նրա աշակերտներից ոմանք, անապատում տեսնելով այդպիսի առաքինություններով զարդարված և ճգնավորական սուրբ կյանքում առաջադիմելու համար այնքան մեծ ջերմեռանդությամբ տքնող վանականների բազմությունը՝ հայր Անտոնին հարցրին. «Հայր, արդյո՞ք երկար կտևի այս նախանձախնդրության ջերմությունը և առանձնանալու, չքավորության, խոնարհության, ժուժկալության և մյուս բոլոր առաքինությունների այս սերը, որոնց այսօր այդպիսի եռանդով փարվել է վանականների այս ամբողջ բազմությունը»: Աստծո մարդը հոգոցով և արցունքներով պատասխանեց նրանց. «Կգա

ժամանակ, իմ սիրելի զավակներ, երբ վանականները կթողնեն անապատները և դրանց փոխարեն կգնան հարուստ քաղաքներ, որտեղ այս անապատական քարանձավների և նեղ խցերի փոխարեն կկառուցեն ամբարտավան շենքեր, որոնք կկարողանան մրցել թագավորական պալատների հետ, չքավորության փոխարեն կմեծանա հարստություն կուտակելու սերը, խոնարհությանը կփոխարինի հպարտությունը, շատերը կհպարտանան գիտությամբ, որը, սակայն, կլինի մերկ, բարի գործերից հեռու, սերը կսառի, ժուժկալության փոխարեն կշատանա որկրամոլությունը և նրանցից շատ շատերը ճոխ կերակուրների մասին կհոգան աշխարհականներից ոչ պակաս և նրանցից կտարբերվեն միայն հագուստներով և գլխարկներով և չնայած կապրեն աշխարհի մեջ, բայց իրենց մենակյաց կհամարեն (վանականը հենց մենակյացն է): Բացի դրանից, նրանք կպարծենան՝ ասելով. «Ես Պողոսյան եմ, մյուսը թե՝ ես Ապողոսյան եմ» (Ա Կորնթ. 1, 12), կարծես նրանց ամբողջ վանականության զորությունը կայանում է իրենց նախնիների արժանապատվության մեջ, նրանք կպարծե-



նան իրենց հայրերով, ինչպես հրեաներն իրենց հայր Աբրահամով: Բայց այդ ժամանակ կլինեն նաև այնպիսիները, որոնք մեզանից ավելի լավ և կատարյալ կլինեն, որովհետև առավել երանելի է նա, ով կարող էր խախտել, բայց չխախտեց և չարիք գործել, բայց չգործեց (Սիրաք. 31, 11), քան նա, որին բարեգործության է մղել բարու նախանձախնդիրների մի ողջ բազմություն: Այդ պատճառով Նոյը, Աբրահամը և Ղովտը, որոնք նախանձախնդիր կյանք էին վարում չար մարդկանց մեջ, արդարացիորեն այդքան շատ են գովաբանվում Սուրբ Գրքում:

27. Այս և մյուս հիշեցումով, այսինքն մահվան մասին, և թե ինչ կլինի մահվանից հետո, բոցավառվում է Աստծո երկյուղը, որն էլ երրորդ եռանդ հարուցողն է: Ինչպես արդեն տեսանք, իր բազմաբովանդակ ասույթներում սուրբ Անտոնը փառաբանում է Աստծո երկյուղը: «Միշտ Աստծո երկյուղն ունեցեք, վախեցեք Նրանից, Ով և՛ մեռցնում է, և՛ ապրեցնում»: Մեկ այլ կարճ ասույթում նա ասում է, որ Աստծո երկյուղն է բոլոր առաքինությունների համար պատրաստ և պիտանի լինելու աղբյուրը: «Աստծո երկ-

յուղը, - ասում է նա, - բոլոր առաքինությունների և իմաստության սկիզբն է: Ինչպես լույսը մութ տան մեջ մտնելով ցրում է խավարը և լուսավորում, այդպես էլ Աստծո երկյուղը, երբ մտնում է մարդկային սրտի մեջ, ցրում է խավարը և նրա մեջ վառում բոլոր առաքինությունների նախանձախնդրությունը:

28. Դրա համար բազմիցս նախազգուշացնում էր զգոն լինել չկորցնելու այդ երկյուղը: «Դուրս մի՛ ելիր խցից, հակառակ դեպքում կկորցնես Աստծո երկյուղը: Որովհետև ինչպես ձուկը ջրից դուրս գալով մահանում է, այդպես էլ վանականի սրտում մարում է Աստծո երկյուղը, երբ նա խցից դուրս է գալիս դրսում թափառելու»:

29. Բայց եռանդի այս բոլոր օժանդակությունները գործում են հարկադրաբար, չնայած կառուցվում են ներքուստ: Պետք է ձեռք բերել եռանդի ներքին լծորդներ, որպեսզի այն բխի սրտից, ինչպես աղբյուրի ջուրը: Սիրտը այդ վիճակին հասցնում են՝ 1. Աստծով կյանքի քաղցրության զգացումը: Մեր եռանդն անհույս է, քանի դեռ չի առաջացել այդ զգացողությունը: Այդ պատճառով, երբ



մի եղբայր հարցրեց սուրբ Անտոնին, թե ինչու՞, երբ Աստված ամբողջ Սուրբ Գրքում հոգուն խոստանում է երկնային բարիքներ, հոգին միշտ ամուր չի լինում դրանք փնտրելու մեջ, այլ շեղվում է դեպի անցողիկը, ապականացուն և պիղծը: Նա պատասխանեց. «Ով դեռ չի ճաշակել երկնային բարիքների քաղցրությունը, տակավին չի փարվել Աստծուն իր ամբողջ սրտով, դրա համար էլ վերադառնում է ապականացուին: Բայց քանի դեռ որևէ մեկը այդպիսի կատարելության չի հասել, պետք է աշխատի Աստծո համար՝ Նրա սուրբ կամքին այնպես հնազանդվելով, որ Մարգարեի հետ ասի. «Ես միշտ քեզ հետ եմ» (Սաղմ. 72, 23), այսինքն ես աշխատել եմ քեզ համար ինչպես լծկան կենդանի:

30. Այստեղից՝ 2. Աստծո սերը նախանձախնդրության ավելի զորեղ բորբոքիչ է: Սուրբ Անտոնը գիտեր, որ սերը երկյուղից ուժեղ է, և ասում էր. «Ես այլևս չեմ վախենում Աստծուց, այլ սիրում եմ Նրան, այսինքն երկյուղից չեմ հարկադրվում, թե ինչպես պահեմ ինձ, այլ սիրուց, որովհետև սերը հեռու է վանում երկյուղը (Ա Հովհ. 4, 18):

31. Նաև ուրիշներին էր համոզում, որ ամենից շատ սնուցեն իրենց մեջ Աստծո սերը, ինչպես անկործանելի և անբաժանելի ուժ: Այսպես, երբ մի անգամ եղբայրները հարցրին, թե ինչպես կարելի է ավելի լավ գոհացնել Աստծուն, Նա պատասխանեց. «Աստծո համար ամենահաճո գործը սիրո գործն է: Իսկ այդ գործը կատարում է նա, ով անդադար փառաբանում է Աստծուն իր մաքուր մտածումներով, որոնք բորբոքվում են Աստծո սիրով, խոստացված բարիքները և այն ամենը հիշելով, ինչ Նա մեզ համար բարեհաճորեն անում է: Այս ամենը հիշելը լիարժեք սեր է ծնում, ինչպես գրված է. «Քո Տեր Աստծուն պիտի սիրես քո ամբողջ հոգով, քո ամբողջ էությամբ և քո ամբողջ ուժով» (Բ Օր. 6, 5) և, ինչպես գրված է. «Ինչպես եղջերուն ջրի ակունքներին է փափագում, այնպես էլ ես քեզ եմ փափագում, ով Աստված» (Սաղմ. 41 2): Ահա այն գործը, որով մենք պետք է հաճո լինենք Աստծուն, թող կատարվի նաև մեր մեջ Առաքյալի խոսքը. «Արդ, ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նքը, թե՞ անձկությունը, թե՞ հալածանքը, թե՞ սովը, թե՞ մերկությունը, թե՞վտանգը, թե՞ սուրը» (Հռոմ. 8, 35-38):

32. Դրանից կամ դրա հետ միասին գալիս է առաքինության և Աստծո պատվիրանների մեջ մնալու ուրախությունը, որն էլ իր հերթին դառնում է նախանձախնդրություն բորբոքող: Սրան է վերաբերում սուրբ Անտոնի հետևյալ խոսքը: Նրան հարցրեցին. «Ի՞նչ է նշանակում ուրախություն Աստծով»: Նա պատասխանեց. «Գործով կատարել որևէ պատվիրան ուրախությամբ, Աստծո փառքի համար: Ահա թե որն է Աստծով ուրախությունը: Որովհետև, եթե կատարում ենք Նրա պատվիրանները, պետք է ուրախանանք և ընդհակառակը, երբ չենք կատարում դրանք, պետք է տխրենք: Ուստի ջանանք կատարել պատվիրանները ուրախ սրտով, որպեսզի փոխադարձաբար մխիթարվենք Տիրոջով, միայն թե ամեն կերպ զգուշանանք, որպեսզի ուրախանալով չհպարտանանք, այլ մեր ամբողջ հույսը Աստծո վրա դնենք:

## 6. Սխրանքները և բարի գործերը մասնավորապես

*Ղեկավարվող և ջերմացող նախանձախնդրությունը այդպես մղվում է սխրագործության՝ թե՛ մարմնավոր, թե՛ հոգևոր և ամենայն բարի գործերի կատարման:*

*33. Թե որքան է պետք հյուծել սեփական մարմինը, սուրբ Անտոնը ցույց տվեց սխրագործությունների մասին ընդհանուր խրատների և կրքերի շարժման պատճառների թվարկման մեջ, որոնց թվում է նաև մարմնի գերհագեցումը, որով (որպես միջոց նման շարժման դեմ) մատնանշում է մարմնի հյուծումը պահեցողությամբ: Սուրբ Անտոնը պատվիրեց մարմնի հետ շատ խիստ վարվել և դատապարտել ամեն տեսակի ներողամտություն մարմնի պահանջների նկատմամբ, այդ պատճառով էլ անբարյացակամորեն էր վերաբերվում բոլոր նրանց, ովքեր բաղնիք էին գնում: «Մեր հայրերը, - ասում էր նա, - անգամ իրենց երեսը երբեք չէին լվանում, իսկ մենք հասարակաց բաղնիք ենք գնում»:*

*34. Մարմինը հնազանդեցնելուց հետո*



*նա մեծ նշանակություն էր տալիս լեզվի սանձահարմանը: Այս սխրագործությունը նա ուխտագնացության կարգում դրեց՝ ասելով. «Մեր ուխտագնացությունը այն է, որ մեր բերանը փակ պահենք»:*

*35. Իսկ ովքեր իրենց մտքին եկածն ասում են, նման են անդարպաս բակի, որով ցանկացողը ներս է մտնում, մոտենում մսուրին և արձակում էշին: Թեև այս միտքը սուրբ Անտոնը չի արտահայտել, բայց ասվել է նրա ներկայությամբ և, իհարկե, արժանացել է նրա հավանությանը:*

*36. Էլ ավելի մեծ նշանակություն էր տալիս խցում նստելուն: «Ինչպես ձուկը, - ասում էր նա, - կարճ ժամանակ չոր տեղը մնալով մեռնում է, այդպես էլ վանականը, երկար ժամանակ խցից դուրս գտնվելով կամ աշխարհիկ մարդկանց մեջ լինելով, կորցնում է լռության սերը: Այդ պատճառով էլ, ինչպես ձուկն է ծովը ձգտում, այդպես էլ մենք պետք է շտապենք խուցը, որպեսզի նրանից դուրս գտնվելով չմոռանանք ներսի հսկումների մասին»:*

*37. Ընդհանրապես խորհուրդ էր տալիս վանականին խցում այնքան խիստ պահել ի-*

րեն, որ խուցը դառնա բաբելոնական հնոց՝ այրելով նրա մեջ եղած ամեն մի պղծություն:

38. Սակայն սխրագործությունների ծանրության դեպքում թույլ էր տալիս որոշ զիջողություններ, ինչպես երևում է որսորդին տված պատասխանից: Պատմում են, որ մեկը անապատում վայրի գազաններ որսալու ժամանակ գայթակղվեց՝ տեսնելով, թե ինչպես է հայր Անտոնը կատակում եղբայրների հետ: Ծերը, ցանկանալով համոզել նրան, որ պետք է երբեմն եղբայրներին զիջումներ անել, ասաց նրան. «Նե՛տ դիր աղեղի վրա և լարի՛ր այն»: Որսորդը լարեց աղեղը: Ծերն ասաց. «Էլի՛ լարիր» Նա կրկին լարեց: Նորից ասաց. «Էլի՛ լարիր»: Որսորդը պատասխանեց նրան. «Եթե չափից ավելի լարեմ աղեղը, ապա այն կկոտրվի»: Այդ ժամանակ ծերն ասաց նրան. «Այդպես էլ Աստծո գործերի մեջ, եթե մենք չափից ավելի լարենք, ապա նրանք շուտով կկոտրվեն: Դրա համար էլ երբեմն-երբեմն անհրաժեշտ է գոնե որոշ զիջումներ անել եղբայրների համար»: Որսորդը, լսելով այդ, զարմացավ և ծերի մոտից գնաց խրատված: Իսկ եղբայրները, ամ-



րապնդվելով դրանով, վերադարձան իրենց տները:

Ի դեպ, ավելի շատ պահպանվել են այնպիսի խրատներ և պատմություններ, որոնցում մատնանշվում են հաջողությունը պայմանավորող հոգևոր սխրանքները կամ սրտի կամեցողությունները:

39. Համբերությունը այնքան է հարկավոր ճգնավորին, որ եթե չլինի, ապա ճգնավորը ոչ մի արժեք չի ներկայացնի: Այսպես, եղբայրները ինչ-որ առիթով սուրբ Անտոնի մոտ գովասանքով խոսեցին մի վանականի մասին: Երբ այդ վանականը եկավ, սուրբ Անտոնը ցանկացավ փորձել նրան, թե արդյո՞ք նա վիրավորանքը կտանի, և տեսնելով որ չի տանում, ասաց նրան. «Դու նման ես մի գյուղի, որը առջևից գեղեցիկ է, իսկ հետևից թալանված է ավազակների կողմից»:

40. Համբերությունը պետք է, որովհետև փորձությունները մեզ պետք են: Սուրբ Անտոնն ասում էր նաև. «Ոչ ոք առանց փորձության չի կարող Երկնքի Արքայություն մտնել, եթե փորձությունը չլիներ, ոչ ոք էլ չէր փրկվի»:

*41. Աղոթք սովորեցնում էր օրինակով, որովհետև բոլորը գիտեին, թե որքան երկար էր նա աղոթում: «Մենք գիտենք, - ասում էին Նրա աշակերտները, - որ երանելի ծերը երբեմն այնպես էր խորասուզվում աղոթքի մեջ, որ ամբողջ գիշեր հարատևում էր նրանում և երբ ծագող արևը ընդհատում էր նրա՝ վերացած մտքով բոցավառ աղոթքը, մենք լսում էինք, թե ինչպես էր նա ասում. «Ինչո՞ւ ես խանգարում ինձ, արև: Դու կարծես Նրա համար ես դուրս գալիս, որ հեռացնես ինձ աստվածային իմանալի լույսից»:*

*42.* Արցունքներ: *Այսպես, մի եղբայրը հարցնում է սուրբ Անտոնին. «Ես ինչպե՞ս վարվեմ իմ մեղքերի հետ», նա պատասխանում է . «Ով ցանկանում է ազատվել իր մեղքերից, լացով և հառաչանքով կազատվի դրանցից և ով ցանկանում է իրեն լծել առաքինություններ գործելու, աղիողորմ լացով կլծվի: Սաղմոսերգությունը հենց լաց է: Հիշիր Հրեաստանի Թագավոր Եզեկիային, որը, ինչպես գրում է Եսայի Մարգարեն (գլ. 38), լացով ոչ միայն ապաքինում ստացավ հիվանդությունից, այլ նաև արժանացավ*



*կյանքի տարիների վրա 15 տարի ավելանալու և որի վրա հարձակված թշնամական 185-հազարանոց բանակին Աստծու զորությունը մահացու հարված հասցրեց նրա հեղած արցունքների համար: Սուրբ Պետրոս Առաքյալը, որ մեղանչեց Քրիստոսի առաջ, ուրանալով Նրան՝ հետո լացով ներում ստացավ: Մարիամը Փրկչի ոտքերը արցունքներով ողողելու համար արժանացավ լսելու, որ այդ բանը ամենուր պիտի ազդարարվի Ավետարանի քարոզության հետ միասին:*

*43. Սուրբ Անտոնը վանականի կյանքում ծիծաղի տեղ չէր գտնում և երբ աշակերտները հարցրեցին նրան, թե պե՞տք է երբեմն ծիծաղել, նա պատասխանեց. «Մեր Տերը դատապարտում է ծիծաղողներին, երբ ասում է. «Վայ ձեզ, որ այժմ ծիծաղում եք, որովհետև պիտի սգաք ու պիտի լաք» (Ղուկ. 6, 25): Այսպիսով, հավատավոր վանականը չպետք է ծիծաղի, ավելին, մենք պետք է լացենք նրանց համար, որոնց միջոցով վատաբանվում է Տիրոջ անունը, որովհետև խախտում են Նրա պատվիրանը և իրենց ամբողջ կյանքը վատնում մեղքի մեջ թաղված: Ուրեմն սգանք և արտասուք թափենք Աստ-*

ծուն անդադար խնդրելով, որ Նրանց Թույլ չտա անողոքանալ մեղքի մեջ և մահը չգա նախքան ապաշխարելը»:

44. Խոնարհությունը ի վերուստ հովանավորություն է իջեցնում և զերծ պահում բոլոր հարձակումներից: «Մի անգամ, - ասում է սուրբը - ես տեսա Թշնամու բոլոր ցանցերը երկրով մեկ տարածված, և հառաչանքով ասացի, - ո՞վ կազատվի դրանցից»: Բայց լսեցի ձայնը, որ ինձ ասաց, - Խոնարհամտությունը»:

45. Դրա համար էլ հետո խրատում էր. «Եթե բարի սխրանքներ ենք գործում, ապա պետք է չափազանց խոնարհվենք Աստծո առաջ, որպեսզի Նա, տեսնելով մեր տկարությունը, ծածկի մեզ Իր ձեռքերով և պահպանի, որովհետև եթե բարձրանանք հպարտությամբ, Նա կհեռացնի մեզնից Իր հովանավորությունը, և մենք կկործանվենք»:

46. Մի ուրիշ անգամ ասում է. «Ինչպես հպարտությունը և մեծամտությունը սատանային երկնքի բարձրությունից անդունդ գլորեցին, այդպես էլ խոնարհությունը և հեզությունը մարդուն երկրից երկինք են բարձրացնում»:



47. Դրա համար, որպեսզի սխրագործությունը, օրինակ՝ լռությունը, հպարտանալու առիթ չդառնա, խորհուրդ էր տալիս նրան տալ ինքնանվաստացուցիչ իմաստ: Եթե մեկը, - ասում էր նա, - հանձն է առնում լռության ճգնությունը, թող չմտածի, թե առաքինության մի մեծ գործ է կատարում, այլ թող սրտում պահի, թե այն պատճառով է լռում, որ արժանի չէ խոսելու:

48. Սուրբ Անտոնը ներշնչում էր նաև, որ Տերն Ինքը մեզ ներքուստ այնպես է առաջնորդում, որ ծածկում է մեզանից մեր բարին, որպեսզի մեր մասին մեր մտածումներում խոնարհության մեջ պահի: Նա ասում էր. «Եթե ջրաղացպանը չծածկի անիվը պտտեցնող կենդանու աչքերը, ապա գործը հաջող չի ընթանա: Այդ կենդանու գլուխը կպտտվի, և նա կընկնի՝ ի վիճակի չլինելով աշխատել: Այդպես էլ մենք, Աստծո տնօրինությամբ քողարկում ենք ստանում, որպեսզի չտեսնենք մեր բարի գործերը և մեզ դրանով փաղաքշելով չհպարտանանք և չկորցնենք մեր ամբողջ աշխատության պտուղը: Դա լինում է, երբ մենք, բարձիթողի լինելով, փոթորկվում ենք անմաքուր

մտածումներով, որոնց մեջ չենք կարող չդատապարտել ինքներս մեզ և մեր մտքերը: Իսկ իրերի այդ վիճակում մեր բարության մասին մեր խորհելը չի կարող տեղ գտնել, հետևաբար մեր փոքրիկ բարիքը ծածկվում է և անտեսանելի է լինում այդ պիղծ խորհուրդների պատճառով:

49. Թե որքան կործանարար է մեծամտությունը, դա ակնառու կերպով հայտնի եղավ երիտասարդ ճգնավորի կատարած հրաշքից հետո նրա անկումով: Այն տեղի մոտով, որտեղ ճգնում էր այդ երիտասարդը, ծերեր էին գնում սուրբ Անտոնի մոտ և չափազանց հոգնել էին: Նա կանչեց վայրի էշերի և դրանց պատվիրեց այդ ծերերին հասցնել սուրբ Անտոնի մոտ: Երբ ծերերը այդ մասին ասացին սուրբ Ամտոնին, նա պատասխանեց. «Այդ վանականը, - ինչպես ինձ թվում է, ծանրաբեռնված նավ է. բայց չգիտեմ՝ կհասնի՞ արդյոք նավահանգիստ»: Եվ իսկապես, երևակայելով, թե ոմն մեկն է, նա որոշ ժամանակ անց ընկավ: Կռահելով այդ՝ սուրբ Անտոնը ասաց աշակերտներին. «Այն երիտասարդ ճգնավորը այս ժամին ընկավ: Գնացեք, տեսեք»: Նրանք գնացին և տեսան,



որ նստած է խսիրի վրա և սգում է իր գործած մեղքի համար:

50. Բայց որքան կործանարար է մեծամտությունը, այնքան փրկարար է ինքնանվաստացումը: Այդ է վկայում կոշկակարի օրինակը, որի մասին սուրբ Անտոնը նշան ստացավ վերից: Սուրբ Անտոնը աղոթում էր իր խցում և ձայն լսեց, որ ասաց. «Անտո՛ն, դու դեռևս չես հասել Ալեքսանդրիայում գտվող այսինչ կոշկակարի կարգին»: Սուրբ Անտոնը գնաց Ալեքսանդրիա, գտավ այդ կոշկակարին և նրան համոզեց հայտնել, թե ինչ առանձնահատուկ բան կա նրա կյանքի մեջ:

Կոշկակարն ասաց. «Ես չգիտեմ, որ երբևիցե որևէ բարի գործ արած լինեմ, այդ պատճառով առավոտյան վեր կենալով անկողնուց, նախքան աշխատանքի նստելը ասում եմ. - Այս քաղաքի բոլոր բնակիչները՝ փոքրից մինչև մեծ, կմտնեն Աստծո արքայությունը իրենց բարի գործերի համար, միայն ես իմ մեղքերի համար հավիտյանս կդատապարտվեմ տանջանքների»: Այս նույն բանը անկեղծ սրտով կրկնում եմ նաև երեկոյան՝ նախքան պառկելը»: Լսելով այս՝

սուրբ Անտոնը հասկացավ, որ իսկապես դեռ չի հասել այդ կարգին:

51. Մի՞թե դա պատճառ չհանդիսացավ, որ նա հետո հաճախ կրկնում էր հետևյալ խրատը. «Մենք պետք է միշտ ամեն ինչում ինքներս մեզ հանդիմանենք և դատապարտենք և այդ անենք անկեղծորեն, որովհետև ով ինքն իրեն հանդիմանում է, Աստված նրան արդարացնում ու փառավորում է»:

52. Փոխադարձ ծառայություն և օգնություն: Եղբայրները հարցրին սուրբ Անտոնին. «Եթե մեկը ասի, թե ես ոչինչ չեմ վերցնի եղբայրներից և ինքս ոչինչ չեմ տա նրանց, ինձ համար իմ ունեցածը բավական է, - լա՞վ է արդոք դա»: Սուրբ Անտոնը պատասխանեց. «Իմ զավակներ, ով այդպիսին է, նա դաժան սիրտ ունի և նրա հոգին առյուծի հոգի է: Նրան պետք է համարել բոլոր բարի մարդկանց ընկերակցությունից օտարացած»:

53. Մի ուրիշ անգամ նրան նորից հարցրին, թե ինչպե՞ս պետք է ծառայել եղբայրներին: Նա պատասխանեց. «Այն եղբայրները, որոնք ցանկանում են ծառայել եղբայրներին, թող ծառայեն նրանց, որպես իրենց



տիրոջ ծառաներ և ինչպես Աստված ծառայեց Պետրոսին, որին ցույց տվեց նա վերջին ծառայությունը՝ նրա Ստեղծիչը լինելով հանդերձ: Դրանով Տերը ցույց տվեց, որ եթե իրենց ցուցաբերված ծառայությունը մերժողները անբասիր չեն, ապա առավել ևս դատապարտության են արժանի նրանք, ովքեր եղբայրներին ծառայելը ցածր բան են համարում: Եթե առաջինները մաս չեն ունենա Աստծո հետ, ինչպես Տերն ասաց Պետրոսին, ապա ի՞նչ կասի վերջինների մասին:

54. Եվ ընդհանրապես նա ասում էր. «Մերձավորից են կյանքն ու մահը»: Քանզի, եթե եղբայր ենք շահում, ապա Աստծուն ենք շահում, իսկ եթե գայթակղում ենք եղբորը, ապա մեղանչում ենք Քրիստոսի դեմ:

55. Ընկնողների նկատմամբ կարեկցանք և ներողամտություն: Հայր Եղիայի վանքում մի եղբոր հետ փորձություն պատահեց: Նրան վտարեցին այդտեղից, և նա գնաց Հայր Անտոնի Լեռը: Հայր Անտոնը նրան որոշ ժամանակ իր մոտ պահելուց հետո ուղարկեց այն վանքը, որտեղից եկել էր: Բայց եղբայրները նորից վտարեցին նրան: Նա նորից եկավ Հայր Անտոնի մոտ և ասաց նրան.

«Հա՛յր, եղբայրները չցանկացան ինձ ընդունել»: Այդ ժամանակ ծերը նրան ուղարկեց հետևյալ խոսքերով. «Ծովում փոթորիկ եղավ և նավը կորցրեց իր բեռները և դժվարությամբ ափ հասավ, իսկ դուք ցանկանում եք խորտակել նրան այն, ինչ ափ է հասել»: Եղբայրները՝ լսելով, որ Հայր Անտոնն է եղբորը ուղարկել, անմիջապես ընդունեցին նրան:

56. Վանքում մի եղբոր զրպարտեցին անառակության մեջ և նա եկավ Հայր Անտոնի մոտ: Վանքից եկան նաև եղբայրներ, որպեսզի բժշկեն նրան և նորից իրենց մոտ վերցնեն: Նրանք սկսեցին մերկացնել նրան, թե ինչու նա այդպես արեց, իսկ եղբայրը պաշտպանվում էր՝ ասելով, որ ոչ մի նման բան չի արել: Պատահաբար այնտեղ էր նաև Հայր Պափնութիոս Կեփալը: Նա պատմեց հետևյալ առակը. «Գետի ափին մի մարդու տեսա, որը մինչև ծնկները ցեխի մեջ էր ընկել: Ոմանք եկան նրան օգնություն ցույց տալու, բայց ցեխի մեջ ընկղմեցին մինչև պարանոցը»: Դրանից հետո Հայր Անտոնն ասաց. «Ահա իսկապես այն մարդը, որը կարող է բժշկել և փրկել հոգին»: Եղբայրները,



ծերերի խոսքերից հուզվելով, խոնարհվեցին եղբոր առաջ և հայրերի խորհուրդներով նրան նորից ընդունեցին իրենց մոտ:

57. Հիանալի է Հայր Անտոնի այն միտքը, թե ով կարող է իսկական եղբայրասիրություն ունենալ: Նա ասում է. «Մարդ երբեք չի կարող իսկապես բարի լինել, որքան էլ ցանկանա այդ, եթե նրա մեջ Աստված չբնակվի, որովհետև ոչ ոք բարի չէ, այլ միայն Աստված:

### 7. Ամենայն ինչի վերջին նպատակը և կատարելության գագաթնակետը

58. Այդ աստվածաբնակությունը կամ Աստծու մեջ կյանքն էլ բոլոր ճգնական աշխատությունների վերջնական նպատակն է և կատարելության գագաթնակետը: Աստված Ինքը դա ցույց տվեց սուրբ Անտոնին, երբ նա անապատում հետևյալ տեսիլքին արժանացավ.

— Քաղաքում կա քեզ նման մեկը, արհեստով բժիշկ, որն իր ավելացածը տալիս է կարիքավորներին և ամեն օր հրեշտակների հետ երգում է Երեքսրբյան (այսինքն՝ մեր-

# 5.
# ՍՈՒՐԲ ԱՆՏՈՆ ՄԵԾԻ ՈՐՈՇ ԽՐԱՏՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ՆՐԱ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ԳՐՎԵՑ ՄԻ ԾԵՐԻ ԿՈՂՄԻՑ

*ճավորի նկատմամբ կատարյալ սիրով Աստծո մեջ է ապրում և Աստծո դիմաց քայլում):*

### 8. Սուրբ Անտոնի կատարելությունը և փառքը երկնքում

*59. Հայր Անտոնի մասին ասում էին, որ նա կանխատեսող էր, բայց խուսափելով մարդկային համբավից՝ չէր ցանկանում հրապարակել այդ մասին, նրան հայտնի են եղել աշխարհի և՛ ներկա, և՛ ապագա իրադարձությունները:*

*60. Մի ծեր Աստծուն խնդրեց, որ ինքը տեսնի հայրերին (փառքի մեջ) և տեսավ նրանց բոլորին, բացի հայր Անտոնից: Նա հարցրեց իրեն ցույց տվողին. «Իսկ որտե՞ղ է Հայր Անտոնը»: Նա պատասխանեց. «Անտոնն այնտեղ է, որտեղ Աստված է»:*



1. Վանականների հարցը: — *Ինչպե՞ս կարելի է հասկանալ Սուրբ Հայր Անտոնի խոսքը, որը նա ասաց իր աշակերտ Պողոսին, երբ վերջինս, թողնելով աշխարհը, խնդրեց ապրել նրա մոտ.«Եթե ցանկանում ես վանական լինել, գնա վանք, որտեղ շատ վանականներ կան, որոնք կարող են աջակցել քո տկարությանը»:*

Ծերի պատասխանը: — *Սրանից մենք սովորում ենք, որ պետք է վանք ընդունենք նաև տկար, հիվանդ, կույր և ուժաբեկ ծերունիներին, և սիրենք նրանց, երբ նրանք ուրախությամբ և եռանդով իրենց նվիրում են առաքինություններ ձեռք բերելուն, չնայած տկարության պատճառով չեն կարող կրել բոլոր դժվարությունները: Այդ պատճառով բավական կշտամբանքի են արժանի վանքերի այն վանահայրերը, որոնք չեն ընդունում*

տկար ծերերին, չնայած հայտնի է, որ նրանք շատ բարի բնավորություն ունեն, այլ ուրախությամբ ընդունում են պնդակազմ պատանիների տարբեր տեսակի սպասավորություններ կատարելու և լրատար ծառայելու համար, չնայած նրանք հանդուգն և անամոթ են: Այդպիսի վանահայրերին երանելի մեկնիչը խստորեն մերկացնում է (վանքերի) ղեկավարության կատարելագործմանը նվիրված գրքում՝ ասելով՝ նրանք իրենց աշակերտներին թույլ են տալիս անհոգ մնալ առաքինության գործերի մեջ, մինչդեռ մեծ թափով մղում են դեպի մարմնավոր և աշխարհային գործերը: Վանականություն ընդունածներին անվերջ ծանրաբեռնում են աշխարհիկ գործերով՝ չթողնելով, որ նրանք ձեռք զարկեն առաքինական գործերի և երբ նրանք մի առանձին ջանասիրությամբ չեն կատարում իրենց հանձնարարված գործը անկարողության կամ երբեմն եռանդի պակասի պատճառով, կշտամբում են նրանց, նշավակում, դատապարտում,չնայած նրանք հոգածու և ջանադիր են եղել հոգևոր գործերում. ընդհակառակը, մեծ գովեստներով մեծարում են նրանց, ովքեր իրենց ամբողջ



աշխատությունն ու հոգածությունը ուղղում են աշխարհային գործերի, չնայած շատ ծույլ են առաքինության գործերի մեջ: Եվ այդ աշխատասիրությունը գալիս է նրանց մեջ ոչ թե հնազանդությունից, այլ նրանից, որ սիրում են զբաղվել աշխարհային գործերով:

Բայց ինչն է ամենավատը. ծույլ են նրանք, թե փութաջան, նրանց որպես ծառա ունեն: Հայր Պիմենը ասել է.«Եթե երեք խցաբնակներից մեկը լավ լռություն է պահպանում, մյուսը հիվանդ է, բայց փառաբանում է Աստծուն, իսկ երրորդը սիրով հնազանդության մեջ է, ապա նրանք բոլորն էլ մեկ սխրագործության մեջ են»: Այդ խոսքերով սուրբը ցույց տվեց այն, որ վանքում, ուր շատ խցաբնակներ կան հավաքված, ոչ միայն ամրակազմ մարմիններ են պետք տարբեր տեսակի հնազանդություններ կատարելու համար, այլ նաև պետք են անդադար լռակեցության տրված տկար եղբայրներ, այլապես նրանց ամբողջ աշխատությունը ունայն է:

2. Հարց: — Ինչի համար Հայր Անտոնը իր աշակերտ Պողոսին ասաց. «Գնա՛, նստի՛ր

միայնության մեջ, որպեսզի գիտենաս դևերից ծագող պատերազմները:

*Պատասխան:* — (Կատարելություն ցանկանալով նրան): Որովհետև վանականի կատարելությունը նրա մեջ ամեն ինչ Հոգով կառավարելու հմտությունն է: Բայց այդպիսի հոգևոր ինքնակառավարումը գալիս է սրտի մաքրության հետ միասին, իսկ սրտի մաքրությունը լինում է այն ժամանակ, երբ նրան ղեկավարում է միտքը, իսկ մտքին ղեկավարում է անդադար աղոթքը: Իսկ դևերի կողմից պատերազմը լինում է մտածումների և ուրվականների միջոցով, որոնք առանձնության և լռության մեջ առավել ուժգնորեն են բորբոքվում:

*Ծանոթություն:* — Պատասխանի ուժը: Մենակեցությունը անընդհատ առիթներ է տալիս դևերի կողմից սերմանվող ամենանուրբ խորհուրդների դեմ մարտնչելու: Այդ պատերազմը մղվում է աղոթքներով, Աստծու մեջ կենող և սրտին ունկնդրող և նրա կողմից կառավարվող մտքով: Այդ հոգևոր ճգնության անընդհատությունը պատերազմի փորձառությունների բազմազանությամբ հոգևոր ինքնակառավարում է ուսու-



ցանում և ստեղծում նման կառավարման հմտություն, որի մեջ էլ կայանում է վանականի և յուրաքանչյուր քրիստոնյայի հոգևոր կատարելությունը:

*3. Հարց:* — Ի՞նչ է նշանակում Հայր Անտոնի այս ասածը՝ ինչպես ձուկն է ջրից դուրս գալով մեռնում, այդպես է պատահում նաև երկար ժամանակ խցից հեռու դեգերող վանականի հետ: Ո՞ր պարագայում է վանականը ձկան նման մահանում:

*Պատասխան:* — Հոգու կյանքը անդադրում սիրով աստվածխոհության մեջ լինելն է, որն արժանի է կոչել հոգու կյանք՝ ընդգրկելով և միավորելով իր մեջ միտքն ու սիրտը: Այսպիսով, եթե վանականը դեգերի քաղաքից քաղաք, ապա տարվելով տեսածներով և խոսակցություններով, զրկվում է հոգևոր կյանքից և մեռնում, որովհետև հեռանում է Աստծուց, մոռանում նրան և իր սրտից հանում է Քրիստոսի սերը, որը ձեռք էր բերել մեծ չարչարանքներով, երբ լռակեցության մեջ էր իր մենախցում: Բացի դրանից, նրա մեջ թուլանում է սերը զրկանքների և դժվարությունների հանդեպ և նա տրվում է մարմնի հանգստությանն ու հաճույքներին

և նրա սրտի մաքրությունը վրդովվում է պատկերների անվերջ շրջապտույտի պատճառով, որոնք ներս են խուժում և դուրս են գալիս զգայարանների՝ տեսողության, լսողության, շոշափելիքի, ճաշակելիքի և հոտոտելիքի, ինչպես նաև խոսքի միջոցով: Իսկ այդ ամենը նրան ներքաշում են շնության և մյուս կրքերի մեջ, որոնք և իրական մահ ու կործանում են վանականի համար: Հետևաբար լավ է ասել Հայր Անտոնը.«Ինչպես ձուկն է մեռնում, երբ դուրս է գալիս ջրից, այդպես էլ մեռնում է վանականը, որը, թողնելով մենախուցը, ժամանակը անցկացնում է քաղաքներում և շեներում»:

4. Հարց: – Հայր Անտոնն ասում է. «Ով ապրում է առանձնության մեջ, ազատ է երեք պատերազմներից, այն է՝ լեզվի, տեսողության և լսողության միջոցով ծագող պատերազմից: Այդ դեպքում նրա մեջ միայն սրտի պատերազմն է մնում»: Բացատրի՛ր մեզ, խնդրում ենք, սրբի այս խոսքերը:

Պատասխան: – Նա այդպես է ասել ոչ թե նրա համար, որ լռության և մենության մեջ պատերազմը պակաս ուժգին է, քան այն եղբայրների մեջ մղվող պատերազմը, ում



մտքերը զվարճանում են տեսողությամբ, լսողությամբ և լեզվով, այլ նա այս խոսքերով ցույց է տալիս, որ մենության մեջ ապրողների համար զգայարաններից եկող մարտերը օտար են, որոնցով ուրիշները առավել են խոշտանգման ենթարկվում, քան սրտի մարտերով, որոնք նրանց մեջ են դնում դևերը: Մեր Հայրերը նրա համար էին լռության մեջ առանձնանում, որպեսզի սրտի մարտերը չուժեղանան տեսողությունից, լեզվից և լսողությունից եկող մարտերով: Քանզի ինչպես դյուրությամբ են մեղքի մեջ ընկնում միաբանության եղբայրները, որոնք մե՛կ դուրս են գալիս վանքից, մե՛կ վանք են մտնում, որովհետև նրանց մեջ սրտի մարտին գումարվում է նաև մարմնի զգայարաններից կողմից ծագող մարտը, այդպես էլ դյուրությամբ ընկնում են նաև այն վանականները, որոնք ապրում են լռության մեջ և տագնապում են միայն սրտի մարտերից. եթե նրանց անգամ վրա հասնի նաև մարմնական զգայարաններից եկող մարտը: Դա ապացուցված է այն եղբայրների (մենակյացների) օրինակով, որոնց մոտ, մինչ նրանք ապրում էին մենության մեջ, ինչ-որ մի առի-

թով կանայք էին գնում և դրա համար նրանց սրտային մարտին գումարվում էր գեղեցիկ դեմք և մարմին տեսնելը, նրանք նույնժամ պարտվում էին սրտի ուժգնացած մարտից և ընկնում էին: Որ մենության մեջ ապրողների մոտ հոգուց եկող մարտը իրոք ավելի ուժեղ և անողոք է, քան մարմնից, զգայություններից եկող մարտը, դա կարելի է տեսնել նաև երանելի Եվագրի խոսքերից, երբ ասում է, որ միայնության մեջ ապրող վանականների դեմ դևերը մարտնչում են հենց անմիջապես իրենք իրենցից, առանց որևէ միջնորդության, իսկ նրանց դեմ, ովքեր ապրում են կացարաններում և նախանձախնդիր են առաքինություններում առաջադիմելու, նրանք հրահրում և ոտքի են հանում սանձարձակ վանականների, որոնցից դաժան, անախորժ և նենգավոր ոչ ոք չկա:

5. Հարց: – Ի՞նչ է նշանակում սուրբ հայր Անտոնի հետևյալ խոսքը. «Վանականի խուցը բաբելական հնոց է՝ երեք պատանիների տեղը, որոնց մեջ էր Աստծո Որդին և հրե սյունն է, որի միջոցով Աստված խոսեց Մովսեսի հետ»:

Պատասխան: – Ինչպես կրակն ունի երկու



հատկություն, որոնցից մեկը ցավագին այրող ջերմությունն է, իսկ մյուսը ուրախարար լուսավորությունը, այդպես էլ համբերությամբ մենախցի մեջ մնալն ունի երկու ներգործություն, որոնցից մեկը երբեմն սկսնակներին լռության մեջ ճնշում և անհանգստացնում է մե՛կ ծայրահեղ ուժասպառելով, մե՛կ մարտով, իսկ մյուսը ուրախացնում է առաջադիմությամբ՝ հանգստացնելով նրանց, ովքեր, ազատվելով կրքերից, լինում են մաքրության մեջ կատարյալ և արժանանում են լուսավոր տեսիլքների: Իսկ այն երեք պատանիների մասին նրա պատմելու իմաստը, որ նրանք տեսան Աստծո Որդուն, հետևյալն է՝ թե ինչպես Անանիան, Ազարիան և Միսայելը, Բաբելոնի կրակե հնոցի մեջ նետված լինելով հանդերձ, չվառվեցին և նույնիսկ այրվածքներ չստացան, որովհետև նրանց մոտ էր ուղարկվել Աստծո հրեշտակը՝ հանելու նրանց շղթաները և ազատելու կրակի ոչնչացնող գործողությունից, այդպես էլ առանձնության մեջ ապրող եղբայրների համար, սկզբից կրքերի կողմից եղող պատերազմը, հրահրված դևերի կողմից, շատ դժվար է լինում, բայց նրանց եր-

բեք չի լքում մեր Տիրոջ՝ Աստծո Որդու շնորհատու օգնությունը՝ այցելելով նրանց և ապրելով նրանց հետ, որպեսզի երբ այդ օգնությամբ նրանք հաղթեն կրքերին և թշնամիներին, նրանց արժանացնի կատարյալ սիրո վայելչությանը և Իր լուսավոր փառքին:

6. Հարց: – Ի՞նչ է նշանակում Հայր Անտոնի հետևյալ ասույթը. «Չարին չարով չպետք է հատուցել, և եթե վանականը դեռ չի հասել այդ աստիճանին, թող լռությունն պահպանի և չխոսի»: Ինչպե՞ս կարելի է դրան հասնել լռության միջնորդությամբ:

Պատասխան: – Եթե լեզվով իր եղբորը վիրավորող և նրա նկատմամբ իր սրտում ատելություն սնուցող տկար եղբայրը պահի իրեն մենախցում և հեռու մնա մարդկանց հետ խոսակցություններից՝ ընդ որում խափանելով չար մտածումները և միշտ հարատև աղոթքներով և Սուրբ Գրքի ընթերցանությամբ, ապա նրան կայցելի խաղաղության շնորհը, նրա սիրտը կլուսավորվի և նրա հոգին կցնծա Աստծո մեջ՝ ազատություն ստանալով կրքից: Որովհետև այդ մարդը, նայելով Տիրոջ խաչին, կբոցավառվի նրա սիրով և համբուրելով այն, կսկսի խորհել,



թե ինչպես Աստված, ըստ գրվածքի, այնպես սիրեց աշխարհը, որ նույնիսկ Իր Միածին Որդուն մահվան մատնեց նրա համար (Հովհ. 3, 16), որ, իհարկե, Աստված Իր սերը ցույց տվեց նրանով, որ. «Մինչդեռ մեղավոր էինք, Քրիստոս մեզ համար մեռավ» (Հռոմ. 5, 8): Իսկ եթե Աստված Իր Որդուն չխնայեց, այլ Նրան մահվան մատնեց մեզ համար և ընդ որում այդպիսի խայտառակ խաչի մահվան. «Էլ ինչպես մեզ չի շնորհելու ամեն ինչ Նրա հետ մեկտեղ» (Հռոմ. 8, 32), կամ ուրիշ ինչու՞մ կմերժի մեզ: Իսկ մեր նկատմամբ Քրիստոսի մեծ ողորմությունն ու սերը մեզ մղում են ոչ միայն մտածել, որ մենք պետք է ապրենք մեր ցանկությունների համար, այլ Նրա համար, Ով մեռավ համուն մեզ (Բ Կորնթ. 5, 14-15), այլև Հիսուսին նայենք որպես համբերության սկիզբ և օրինակ, Ով մեզ համար խաչելությամբ մահը տարավ և այդպիսի անարգանք կրելով, նորից Աստծո աջում նստեց: Հետևաբար, եթե չարչարվենք Նրա հետ, Նրա հետ էլ կփառավորվենք (Հռոմ. 8, 17), և եթե Նրա հետ համբերենք, Նրա հետ էլ կթագավորենք (Բ Տիմ. 2, 12): Դրա համար Պողոս Առաքյալը հորդորում է

մեզ՝ ասելով. «Նայեցեք, եղբայրներ, մեր Տիրոջ խաչին» (Եբր. 12, 2): Նայիր, թե որքան կրեց Նա մեղավորների համար, որոնք իրենց հոգիների թշնամիներ էին: Ուրեմն ձեր հոգիներով մի վհատվեք և մի տկարացեք այն պատճառով, որ դուք ստիպված եք լինում համբերելու նեղություն, վիրավորանք, անարգանք և մահ, որոնք ձեզ վրա են գալիս Նրան սիրելու պատճառով: Ձեր աղոթքների մեջ ներում խնդրեք նրանց համար, ովքեր ձեզ նեղություններ են պատճառում, ինչպես Աստված աղոթեց Իրեն խաչողների համար՝ ասելով. «Հայր, ներիր նրանց» (Ղուկ. 23, 34) և ինչպես երանելի Ստեփանոսը Մեր Աստծուց ներում խնդրեց նրանց համար, ովքեր քարկոծում էին նրան՝ ասելով. «Տեր, սա մեղք մի համարիր դրանց» (Գործք 7, 60): Եթե այդ վանականը իր խցում միայնության մեջ նստած այդպես մտածի, ապա հոգով կամրապնդվի, Աստծով կիշխի բոլոր կրքերի վրա և ոչ միայն չի սկսի վիրավորել որևէ մեկին, կամ բարկանալ մեկի վրա, կամ չարով հատուցել մեկի չարին, այլ անարգանք և վիրավորանք կրելիս մեծ ուրախությամբ կուրախանա և պատիվ կհամարի:



Ահա թե բարության մեջ ինչ ամրության կհասնի վանականը իր մենախցում լռությամբ, ուշադրություն դարձնելով իր վրա և համբերատարությամբ կատարելով Քրիստոսի պատվիրանները՝ պահքը, աղոթքը, աստվածային խորհրդածությունը և լռության մեջ բովանդակվող մյուս առաքինությունները: Ուրեմն շատ լավ է ասել երանելի Հայր Անտոնը. «Եթե վանականը չի կարող իր լեզուն զսպել և զերծ պահել վիրավորանք հասցնելուց, տրտնջալուց և շատախոսությունից և ի զորու չէ իր սիրտը հեռու պահելու այդպիսի անկումներից, թող գոնե, որքան կարող է, մնա լռության մեջ»:

7. Հարց: — Մի անգամ եղբայրները եկան Հայր Անտոնի մոտ և նրան ասացին. «Մեզ այնպիսի խորհուրդ տուր, որ կարողանանք կատարել»: Նա ասաց. «Ավետարանում գրված է. «Եթե մեկը ապտակի մի երեսիդ, մյուսն էլ դարձրու նրան» (Մատթ. 5, 39): Նրանք պատասխանեցին. «Մենք դա ոչ մի կերպ չենք կարող կատարել»: Ծերն ասաց նրանց. «Եթե դուք չեք կարող մյուս երեսը դարձնել, կրեք մեկի ապտակը»: Նրանք ասացին. «Դա էլ չենք կարող անել»: Նա նո-

րից ասաց նրանց. «Եթե դա էլ չեք կարող, գոնե մի՛ պատասխանեք ձեզ ապտակողին»: Նրանք ասացին. «Դա էլ չենք կարող անել»: Այդ ժամանակ մեծ ծերն ասաց իր աշակերտին. «Մի քիչ ուտելիք պատրաստիր այս եղբայրների համար, որովհետև նրանք հիվանդ են»: Ի՞նչ է նշանակում սուրբ հոր այս խոսքը:

Պատասխան: — Նա ցանկանում էր ասել, որ սրանց նմանների հետ ոչինչ չի կարելի անել, բացի նրանց կերակրելուց և բաց թողնելուց: Բայց ինչպես ծերը վերջում ասաց. «Ձեզ համար աղոթք է պետք», ապա կարելի է մտածել, որ ճաշի ընթացքում նա հիշեց ծերերի աղոթքները, կարծես թե այսպես ասեր. «Եթե չեք կարող ոչ այս, ոչ այն, ապա ձեզ համար աղոթք է պետք: Քանզի ինչպես հիվանդների համար պետք է հատուկ սնունդ՝ ստամոքսի տկարության պատճառով, որը չի կարող ընդունել ամեն տեսակի սնունդ, այդպես էլ ձեզ համար, որոնց միտքը այնքան տկար է, որ չի կարող կատարել մեր Տիրոջ պատվիրաններից նույնիսկ մի փոքր մաս, հարկավոր է հոգու բուժում ու առողջացում, այն է՝ հայրերի աղոթքը, ովքեր կարող



են այդ բուժումն ու առողջացումը հայցել ձեր համար»:

8. Հարց: — Սուրբ Հայր Անտոնն ասում է. «Ես տեսա սատանայի ցանցերը՝ տարածված ողջ երկրով մեկ, հառաչեցի դրանից և ասաց. «Վա՜յ մարդկային ցեղին, ո՞վ կարող է ազատվել դրանցից» և ինձ ասացին. «Խոնարհությունը կփրկի դրանցից, որովհետև նրանք չեն կարող կապել նրան»: Սուրբը ինչպե՞ս տեսավ դրանք՝ զգացականորե՞ն, թե՞ մտովի: Եվ ովքեր էին նրանք, ովքեր ասացին նրան. «Խոնարհությունը կփրկի դրանցից, որովհետև նրանք չեն կարող կապել նրան»:

Պատասխան: — Եգիպտացի Հայր Մակար Մեծը՝ Հայր Անտոնի աշակերտը, նույնպես խցի ամենախորը անապատում բոլոր թշնամական դավերը տեսավ այն ժամանակ, երբ դրանք տեսնում էր Հայր Անտոնը, միայն թե այլ կերպարանքով: Սուրբ Մակարը դևերին տեսավ երկու մարդու կերպարանքով, որոնցից մեկը պատառոտված շորեր էր հագել, որոնց վրա տարբեր գույների վրակարեր կային, իսկ մյուսի մարմինը ամբողջովին ծածկված էր մաշված հագուստով, վրայից ինչ-որ

մի ցանց՝ բոլոր տեղերից տոպրակներ կախված, նրանց մոտեցավ ևս մեկը՝ ծածկված էր ծածկոց հիշեցնող թևերով: Ահա այս մարմնավորներին մարմնավոր աչքերով տեսավ Հայր Մակարը, իսկ սուրբ Հայր Անտոնը մտքի աչքերով տեսավ սատանայի բոլոր այն ցանցերը, որոնք նա միշտ սարքում է վանականների համար և որոնցով ջանում է խճճել, բռնել և խանգարել նրանց բարեհաջողությամբ ավարտել իրենց երթը առաքինությունների ճանապարհով, ինչպես գրված է. «Ամբարիշտներն իրենց որոգայթը թաքցրին ինձնից, թակարդի լարեր ձգեցին ոտքերիս» (Սաղմ. 139, 5): Եւ այսպես, նա տեսավ, որ սատանայի որոգայթները երկրի վրա սարքված են նույն ձևով, ինչպես գազանորսներն են դնում իրենց թակարդները: Այս տեսնելով՝ նա զարմացավ և սարսափեց որոգայթների և դավերի բազմազանության պատճառով, որոնց մեջ եթե որևէ գազան էլ ընկեր, չէր կարողանա ազատվել՝ տարբեր թակարդների և կապանքների բազմության պատճառով: Հայր Անտոնին այս կերպարանքով երևացին մարմնի և հոգու բոլոր տեսակի կրքերը, որոնցով դևերը գայթակ-



ղում են վանականներին: Նա տեսավ նաև սուրբ հրեշտակներին, որոնք անուն առ անուն նշում էին յուրաքանչյուր կրքի թակարդը, այն է՝ որկրամոլության կամ շատակերության թակարդ, արծաթասիրության թակարդ, անառակության, փառամոլության, հպարտության և մնացած կրքերի թակարդները: Բացի դրանից, նրանք ցույց տվեցին նրան բոլոր փորձություններն ու խորամանկությունները, ինչպես է թշնամին սարքում իր թակարդներն ու դարանները, որպեսզի խափանքի մեջ գցի, մոլորեցնի նրանց և կասեցնի Աստծո մեծ սիրո ճանապարհով նրանց ընթացքը: Երբ նա, թակարդների տեսքի սարսափից ապշած, ոտքի կանգնեց և ասաց. «Վայ մեզ՝ վանականներիս: Ինչպե՞ս կարող ենք ազատվել և փրկվել այս թակարդներից, որպեսզի չմոլորվենք դրանց մեջ»: Հրեշտակներն ասացին նրան. «Խոնարհությունը կփրկի այդ ամենից, և ով ունի այդ շնորհը, նա երբեք դրանց մեջ չի մոլորվի և չի ընկնի»: Բայց նրանք չասացին, որ կրքերին և դևերին կհաղթեն միայն խոնարհությամբ: Խոնարհության հետ մեկտեղ պահանջվում են նաև մյուս գործերն ու

սխրանքները: Խոնարհությունը սոսկ ինքն իրենով ոչ մի օգուտ չի բերի, ինչպես գործերը առանց խոնարհության ոչինչ չեն նշանակում, որովհետև առանց դրա նույնն են, ինչ որ աղը չդրած միսը, որը դյուրությամբ փչանում է և կորչում: Այսպիսով մարմնավոր ջանքերը, մտքի ներքին ճգնությունը, լռությունը և անդադար աղոթքը կատարյալ խոնարհությամբ հաղթահարում են բոլոր կրքերին և դևերին, այնպես որ այս վերջինները անգամ հասնել չեն կարող այդ շնորհներն ունեցող վանականին, ինչպես հրեշտակներն ասացին Հայր Անտոնին:

9. Հարց: – Հայր Անտոնն ասում է. «Եթե աշխատում ենք բարի սխրագործությամբ, պետք է սաստիկ վախենանք և չափազանց խոնարհվենք Աստծո առաջ, որպեսզի Նա, տեսնելով մեր տկարությունը, հովանի լինի Իր աջով և պահպանի, որովհետև եթե բարձրանանք հպարտությամբ, Նա մեզանից կվերացնի Իր հովանավորությունը և մենք կկործանվենք»: Ի՞նչ է նշանակում երանելու այս խոսքը:

Պատասխան: – Մենք պետք է միշտ խոնարհվենք ինչպես նեղության, վշտի և



մարտնչումների ժամանակ, այնպես էլ խաղաղության և մարտերից հետո հանգստանալու ժամանակ: Ամեն ժամ մենք խոնարհության կարիք ունենք, որովհետև նա պատերազմի ժամանակ մեզ օգնություն է ցուցաբերում և զորություն է տալիս համբերությամբ դժվարություններին դիմանալու, իսկ խաղաղության և հանգստի ժամանակ պաշտպանում է հպարտությունից և հետ է պահում կործանումից: Մենք պետք է խոնարհ լինենք նաև մեր ծուլության և մեզ գերեվարող աստվածմոռացության պատճառով, որովհետև այդ պարագայում մեր ակնհայտ անկարողությունը մեզ տանում է խոնարհության և պարտադրում է վանել ամեն տեսակի հպարտություն: Աստված չի կամենում, որ մենք միշտ գտնվենք վտանգների և տառապանքների մեջ, այլ Իր ողորմության և մարդասիրության պատճառով հովանի է լինում մեզ և դադարեցնում կրքերի պատերազմը և դևերի մոլեգնությունները: Հետևաբար, եթե մենք մարտնչումների և սխրագործությունների ժամանակ ապավինենք խոնարհությանը վտանգի և դժվարության պատճառով, իսկ մարտնչումներից

*Հետո՝ խաղաղության և անվտանգության ժամանակ, մոռանանք Աստծուն և բարձրանանք հպարտությամբ, ապա Նա, անկասկած, մեզանից կվերացնի Իր հովանավորությունը և մենք կկործանվենք սնանկության և հուսախաբության մեջ: Այդ պատճառով էլ չկա մի այնպիսի ժամանակ, երբ մեզ հարկավոր չլինի խոնարհությունը, քանի որ ամեն տեղ և բոլոր գործերում մենք բոլորս էլ, իհարկե, Նրա կարիքն ունենք:*

10. Հարց: — *Հայրերից մեկը Աստծուն աղոթեց, որ ցույց տա բոլոր Հայրերին և նրան թույլ տրվեց տեսնել նրանց բոլորին, բացի ասուրբ Հայր Անտոնից: Նա, ով ցույց տվեց, ասաց. «Որտեղ Աստված է, այնտեղ էլ Հայր Անտոնն է»: Ինչպե՞ս տեսավ նա բոլոր Հայրերին և ինչո՞ւ չտեսավ Հայր Անտոնին:*

Պատասխան: — *Կա՛մ ծերի միտքը տարվեց դրախտ և այնտեղ տեսավ ծերերին, կա՛մ Հայրերն անձամբ եկան նրա մոտ, կա՛մ էլ Հրեշտակը ցույց տվեց տեսիլքի միջոցով: Իսկ Հայր Անտոնը նրան չերևաց երկու պատճառով: Սուրբ Հայր Անտոնի մեծ փառքը ցույց տալու և ծերին խոնարհեցնելու համար, որպեսզի նա չհպարտանա, որ տե-*



*սել է բոլոր Հայրերին: Որովհետև կատարելով նրա խնդրանքը՝ Աստված Հայրերի այդ տեսիլքով նրան պարտավորեցրեց նմանվել Հայրերին, իսկ նա չարժանացավ տեսնելու սուրբ Անտոնին, դրանով զգուշացվեց, որ ծերը այդքան զորություն չունի նրան նմանվելու, դրանով նրան թելադրվեց ճնշել հպարտությունը և խոնարհվել:*

11. Հարց: — *Մի անգամ Հայր Անտոնի մոտ եկավ Հայր Ամոն Ողջախոհը և ասաց նրան. «Տեսնում եմ, որ ես ավելի շատ բան եմ անում, քան դու, իսկ ի՞նչ պատճառով քո անունը ավելի շատ է փառաբանվում, քան իմը»: Սուրբ Անտոնը պատասխանեց նրան. «Դա նրանից է, որ ես ավելի շատ եմ սիրում Աստծուն, քան դու»: Ի՞նչ մտքով է դա ասված:*

Պատասխան: — *Ոչ Հայր Ամոնն էր պարծենում իր գործերով, ոչ էլ Հայր Անտոնն իր սիրով, բայց նրանց խոսքի նշանակությունն այսպիսին էր: Ինչպես որ այդ սրբերը վանականության կարգի առաջին հիմնադիրներն էին և անապատաբնակության սկզբնավորողները, ապա նրանք նկատի ունեին փոխադարձ համաձայնությամբ հաստատել և*

բոլոր վանականներին ցույց տալ, որ մտքի ներքին շինությունը մարմնավոր ճգնություններից առավել է, քանզի մտքի այդ ներքին շինությունը վանականի հոգին ուղղում է դեպի Աստծո կատարելագույն սիրուն, որը նրան արժանի է դարձնում Աստծո փառքի տեսության ու հայտնությունների: Մարմնավոր սխրագործությունները վանականին ազատում են մարմնավոր կրքերից, հաստատում առաքինությունների մեջ, զորություն են տալիս վանելու ցանկությունները և մարմնին մաքրություն են պարգևում: Իսկ մտքի սխրագործությունը հոգուն զինում է դևերի և նրանց խորհուրդների դեմ և տալիս է սրտի մաքրություն, որը սիրուց ամրություն է ստանում և արժանանում է այն բանին, որ նրան կառավարի Հոգին: Առաքինությունների մեջ առաջադիմողներից և Աստծուն սիրողներից ոչ բոլորի փառքը պետք է տարածվի մարդկանց մեջ, որովհետև ահա հայր Պողոսը՝ վանականության կյանքի սկիզբը և վանականների մեջ առաջնեկը (որին հայր Անտոնը) երբեմն կոչում էր Եղիա Մարգարե, երբեմն՝ Հովհաննես Մկրտիչ, երբեմն՝ Պողոս Առաքյալ, քանի



դեռ կենդանի էր, ընավ հայտնի չէր մարդկանց մեջ: Բայց, ինչպես արդեն ասացի, այդ երկու հայրերն էլ ցանկանում էին փոխադարձաբար ամրապնդել և մեզ սովորեցնել, թե ճգնավորության ո՞ր կարգն է գերազանց մյուսից՝ մարմնավորը, թե՞ հոգևորը, որը բաղկացած է մտքի ներքին ծածուկ մարտից, անդադար աղոթքից և աստվածախոհությունից, որոնք, հասնելով կատարելության, վեր են բարձրացնում վանականի միտքը հոգևոր կարգի մեջ, որն էլ կայանում է հոգևոր աղոթքի, Աստծով հափշտակվելու, Նրա հայեցման և մեր Տեր Աստծո փառքի հայտնության մեջ, Որին փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:

12. Հարց: – Սուրբ հայր Անտոնն ասում է, որ Աստված սատանային թույլ չի տալիս սաստիկ պատերազմ հարուցել մարդկային ցեղի դեմ, որովհետև վերջինս տկար է: Դա ինչպե՞ս հասկանալ:

Պատասխան: – Աստված խղճում է մարդկային ցեղին, թույլ չի տալիս,որ սատանան խիստ շատ նեղի նրան, քանզի մեր մեջ Աստծո սիրո ջերմությունն ու բարի գործերի նախանձախնդրությունը շատ քիչ է:

*Այսպիսով, սատանան մեզ վրա ուժգին չի հարձակվում մեր տկարության և ծուլության պատճառով:*

13. Հարց: – *Ի՞նչ է նշանակում Հայր Անտոնի հետևյալ խոսքը. «Եթե ջրաղացպանը չփակի ջորու աչքերը, ապա ոչինչ չի կարող ստանալ, որովհետև ջորին գլխապտույտի պատճառով կընկնի, իսկ աշխատանքը կդադարի: Ճիշտ այդպես մենք էլ պաշտպանվում ենք Աստվածային կարգավորությամբ, քանզի սկզբում մենք էլ բարիք ենք անում՝ չտեսնելով այն, որպեսզի չսկսենք մեզ երանելի համարել և այդ պատճառով չոչնչանան մեր ջանքերը, դրա համար երբեմն ընկնում ենք անպարկեշտ մտքերի մեջ, որպեսզի, տեսնելով այդ, հանդիմանենք ինքներս մեզ: Հենց այդ ամոթալի մտածումներն էլ մեր կատարած փոքրիկ բարի գործի քողարկումն են, այնպես որ իրեն կշտամբող մարդը չի կորցնի իր պարգևը»: Բացատրի՛ր մեզ, թե ի՞նչ օգտակար բան կա այս խոսքերի մեջ:*

Պատասխան: – *Ոչ բոլոր սրբերն են արժանանում տեսիլքներ տեսնելու: Նրանք չեն տեսնում նույնիսկ այն բարին, որ*



*կատարում են և իրենց համար պատրաստված երանությունը, թեև կատարել են բարի գործեր և առաքինություններ: Դա այդպես է ոչ այն պատճառով, որ Աստված չի ուրախանում նրանց առաքինություններով և չի գոհանում նրանց բարի գործերով: Ամենաբարին ինչ-որ բա՞ն պակասեցնի բարիների համար պատրաստված պարգևներից: Քա՛վ լիցի: Այլ դա անում է նրա համար, որ առաքինի մարդիկ չբարձրանան հպարտությամբ և որպեսզի դրանից հետո իսպառ չոչնչանա նրանց առաքինությունների արժեքը, որպեսզի նրանք չզրկվեն իրենց համար պատրաստված բարիքներից և անմասն չմնան Աստծո բարիքներից: Ուստի և չնայած Աստված պահպանում է նրանց, որովհետև բարու մշակներ են և առաքինությունների մեջ են կենում, սակայն երբեմն թույլ է տալիս, որ դևերը ծաղրեն նրանց, նրանց մեջ անպարկեշտ խորհուրդներ սերմանեն կամ էլ սարսափ առաջացնեն, կամ վերքեր հասցնեն, որպեսզի նրանք իմանան իրենց տկարությունը և միշտ զգույշ և անվստահ լինեն, որովհետև քանի դեռ մնում են աշխարհում, կյանքը փոփոխական է և անկայուն:*

*Բայց, ինչպես բարիքի մասին խորհելը, որը պատրաստված է նրանց բարի գործերի համար, նրանց մեջ պահպանում է մշտական բարեգործությունների նախանձախնդրությունը՝ բարիքը ստանալու համար, այնպես էլ սեփական արատները և տկարությունը ճանաչելը նրանց զերծ է պահում հպարտությունից և այնպես է անում, որ նրանք պատրաստ են լինում ամեն տեսակի խոնարհությունների և ամեն կերպ զգուշանում են, որ չկորցնեն իրենց առաքինությունները այն ժամանակ, երբ պիտի կրկնակի ուրախություն ստանան մեր Տեր Հիսուս Քրիստոսից Երկնային անվախճան Թագավորության մեջ:*

14. Հարց: – *Երբ հայր Ելլենիոսն եկավ հայր Անտոնի մոտ, հայր Անտոնը, նրան տեսնելով, ասաց. «Բարո՛վ եկար, վաղ առավոտյան ծագող արշալույս»: Իսկ հայր Ելլենիոսը պատասխանեց նրան. «Ո՛ղջ եղիր նաև դու, տիեզերքը զարդարող լուսավո՛ր սյուն»: Ո՞վ էր Ելլենիոսը և ինչո՞ւ երանելին այդպես կոչեց նրան:*

Պատասխան: – *Այդ Ելլենիոսն ապրում էր հայր Անտոնի ժամանակաշրջանում և հավասար էր նրան կատարելության և գործերի*



*կարգով: Նրան գովեց Կոնստանդին Ամենահաղթ կայսրը՝ ասելով. «Շնորհակալ եմ Տեր Հիսուս Քրիստոսին, որ իմ օրերում երեք լուսավոր ջահեր կան՝ երանելի հայր Անտոնը, հայր Ելլենիոսը և հայր Եվխինը»: Նա այսպես ասաց, որովհետև նրանք անհամեմատ գերազանցել էին բոլոր վանականներին, որոնք ապրում էին այդ ժամանակ և հայտնի էին: Իսկ հայր Անտոնը նրան արշալույս կոչեց, որովհետև ինչպես արշալույսը մեծությամբ և լուսավորությամբ գերազանցում է բոլոր աստղերին, այդպես էլ հայր Ելլենիոսը շնորհալի լույսով գերազանցեց իր ժամանակի բոլոր մյուս վանականներին: Իսկ նա էլ իր հերթին, ցանկանալով ցույց տալ հայր Անտոնին, որ իրեն անհայտ չէ նրա կատարելության բարձրությունը և նրան տրված շնորհի մեծությունը, նրան անվանեց տիեզերքը զարդարող լուսավոր սյուն:*

15. Հարց: – *Հայր Անտոնն ասում է. «Մենք չենք առաջադիմում այն պատճառով, որ չգիտենք մեր աստիճանը և մեր դիրքը և չենք հասկանում, թե ինչ է պահանջում այն գործը, որին ձեռնամուխ ենք լինում, այլ ցանկանում ենք առանց դժվա-*

*րության հասնել առաքինության: Այդ պատճառով էլ հենց որ մի տեղում փորձության ենք հանդիպում, մի ուրիշ տեղ ենք գնում, կասկածելով, թե որևէ մի տեղ սատանա չկա: Բայց ով հասկացավ, որ պատերազմ կա, նա ամեն տեղ մարտնչում է Աստծո օգնությամբ, որովհետև մեր Տերն ասում է. «Աստծո արքայությունը ներսում, ձեր մեջ է» (Ղուկ. 17, 21): Նա ի՞նչ է ցույց տալիս այս խոսքերով:*

Պատասխան: - *Նրա խոսքի իմաստը հետևյալն է՝ տեղից տեղ են գնում՝ ակնկալելով գտնել մի տեղ, որտեղ սատանա չկա, բայց այդտեղ էլ փորձության հանդիպելով,հեռանում են մի այլ տեղ: Բայց ով գիտե, որ պատերազմ կա, նա Աստծո օգնությամբ պայքարում է այնտեղ, որտեղ ապրում է և ուրիշ տեղ չի փնտրում: Իսկ մեր Տիրոջ ասածի նշանակությունը, թե Աստծո արքայությունը ներսում, ձեր մեջ է, այն է, որ մենք՝ վանականներս, դուրս գալով աշխարհից, վերցնելով մեր խաչը մեր Տիրոջ պատգամի համաձայն և Նրա հետևից գնալով, պետք է մնանք նույն տեղում և հոգալով միայն մեր հոգու փրկության համար, այնտեղ մղենք*



*մեզ պատահող ամեն տեսակի պատերազմները: Հանուն Աստծո սիրո և Նրա կամքի, այսինքն՝ Նրա պատվիրանների կատարման, ուր էլ որ լինենք, մենք պետք է համբերատարությամբ մղենք բոլոր պատերազմներն ու կրենք փորձությունները, որտեղից էլ դրանք գան՝ կրքերի՞ց, դևերի՞ց և թե՞ մարդկանցից: Բայց պատերազմի մեջ փորձ չունեցողները, սովոր չլինելով կրել դժվարությունները, շտապում են ուրիշ տեղ՝ հույս ունենալով հանգիստ գտնել պատերազմից և պատսպարվել խորհուրդներից՝ տեղից տեղ, երկրից երկիր գնալով: Այդ պատճառով պետք է մնանք մեր տեղերում և եթե մեր դեմ մարտ կամ փորձություն է լինում, սկսենք պահք պահել, աղոթել, ծնկի գալ, Տիրոջ խաչի առաջ մեր կուրծքը ծեծենք արցունքներով և սրտի ցավով, օգնություն և փրկություն խնդրենք Նրանից, որովհետև Նա ամենագո է և բնակվում է մեր մեջ, ինչպես գրված է. «Տերը նրանց կողքին է, ովքեր սրտամաշ են եղել և Նա փրկում է հոգով խոնարհներին» (Սաղմ. 33, 19) և ինչպես Աստված Ինքն ասում է. «Աստծո արքայությունը ներսում, ձեր մեջ է» (Ղուկ.*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*17, 21), այսինքն՝ «Ես ձեր մեջ եմ բնակվում», որովհետև Աստծո արքայությունը Քրիստոսն է, Որը միշտ մեր մեջ է բնակվում: Երանելի Պողոսը նույնպես ասում է. «Զգիտեք, որ Քրիստոսը բնակվում է ձեր մեջ» (Ա Կորնթ 3, 16): Եվ միայն Նա չի բնակվում մեր մեջ, այլ մենք էլ Նրա մեջ ենք կենում, ինչպես Նա Ինքն է ասում. «Մնացեք իմ մեջ, և ես՝ ձեր մեջ» (Հովհ. 15, 4): Ուրեմն, եթե մենք բնակվում ենք Աստծո մեջ և ինքներս ենք Նրան բնակարան, ապա մեր Տիրոջը չլքենք փորձության, դժվարության ու մարտերի ժամանակ և տեղից տեղ գնալով օգնություն և ապաստան չփնտրենք երկրներից և տեղերից, այլ մնանք մեր տեղերում՝ մեր մեջ բնակվող Տիրոջից խնդրելով մեզ օգնություն տալ և ազատել մեզ: Դրա հետ մեկտեղ պետք է մեր խորհուրդները հայտնենք մեր հայրերին և խնդրենք նրանց աղոթքը՝ մեզ օգնելու համար: Համբերելով մեր տեղերում, միշտ ապավինենք մեր Փրկիչի պաշտպանությանը և Նա անկասկած մեզ հաղթող կդարձնի մեր բոլոր պատերազմների մեջ:*




*Սուրբ Անտոն Մեծի կյանքի և գրվածքների մասին ....................................5*

*Մեր սուրբ հայր Անտոն Մեծի՝ Քրիստոսով ապրելու խրատները ......19*

*Բարեպաշտության և սուրբ կյանքի խրատներ 170 գլուխներով ..................122*

*Անապատական կյանքի կանոնադրություն ..................................192*

*Սուրբ Անտոն Մեծի ասույթներ և պատումներ նրա մասին ..................236*

1. *Աշխարհից հրաժարվելու մասին ...........236*
2. *Ընդհանուր պատասխաններ այն հարցին, թե ինչ անել ..................240*
3. *Այն զորությունը, որը մղում է սիրանքների և օժանդակում դրանց ....................................................243*
4. *Նախանձախնդրության ղեկավարները......................................246*
5. *Ինչպես բորբոքել նախանձախնդրությունը....................255*
6. *Սիրանքները և բարի գործերը մասնավորապես ................................270*

*7. Ամենայն ինչի վերջին նպատակը
և կատարելության
գագաթնակետը.....................................283*
*8. Սուրբ Անտոնի կատարելությունը
և փառքը երկնքում...............................284*

*Սուրբ Անտոն Մեծի որոշ խրատների
մեկնությունը, որը նրա մահից
հետո գրվեց մի ծերի կողմից ...............285*



Թարգմ. ռուսերենից՝
Ա. Ջոհրաբյանի

**Խմբագիր՝ Աստղիկ եպիսկոպոս**
**Գեղ. խմբագիր՝ Ղևոնդ քահանա**
**Շապիկը՝ Ա. Օհանջանյանի**
**Սրբագրիչ՝ Յու. Հովհաննիսյան**